

ՌՅՂԹ

Է. ՏԱՐԻ

Տարր-Ապրիլ



ՏԱՐՐԱՊՐԻԼ

ՊԱՆՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. Է. ՋԱՐԻԱՆՈՒՆԻ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ

Որոշում Ամենայն Հայոց Հայրապետության՝ Խաղաղության կողմնակից- ների Համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտեի Ստոկհոլմի սեսիայի որոշումներին միանալու մասին	3
Ռուսական Ուղղափառ եկեղեցու հոգևոր պետերի կոմյունիկեն՝ Խաղա- ղության կողմնակիցների Համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտեի Ստոկհոլմի սեսիայի որոշումներին միանալու մասին	4
Հայ եկեղեցին խաղաղության կողմնակից է	5
Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Ք	7
ՌՈՒԲԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Ս. Տ. Գեորգ Զ.ի կենսագրությունը	10
ԲԱՆԱՍԵՐ, Պատմական երկու վավերագրեր	15
ՃԵՄԱՐԱՆՅԻ, Քրիստոսի Հարությունը	17
ՀՐԱՆՏ ՀՐԱՀԱՆ, Կոմիտաս	20
Ե. ՇԱՀԱԶԻԶ, Նորայր Բյուզանդացին և նրա գրական ժառանգությունը	26
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ, Հայկական առակը ակադեմիկոս Մառի լուսաբա- նությանը	32
Հ. Ա. ԱՆԱՍՅԱՆ, Իրական նմուշներ Գրիգոր Ղըքայակից	39
Յ. Բ. ԲՈՒՉԱՆՅԱՆ, Մի ակնարկ Տայոց հտտորջրի անցյալից	47
Ա. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ, Հովհաննես Սարկավագի մաթեմատիկական աշխա- տությունը	52
Ա. ՊՈՂՈՍՅԱՆ, Լեզվագիտական մի շուտամնասիրված հարցի շուրջը	59
ՍԱՀԱԿ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ, Ավագ շաքաթը և Հարության տոներ Մայր Արոտում ՍԱՐԿԱՎԱԳ, Համաժողովրդական տանի օրը Ս. Էջմիածնում	63
ՓԱՅԼԱԿ ՄԻԱՄԱՆ, Նոր կյանք	65
Ռ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Էփեսոսիսի դեպի մի ֆանի տեսարժան պատմական վայրեր	67
Լ. ԱՃԵՄՅԱՆ, ՍՍՏՄ Բերազույն Սովետի ընտրություններուն անդի	71
Ս. ՍԱՐԳՍՅԱՆ, Ստալինյան մրցանակի լաուրեատները	73
Արմեն Տիգրանյանի մահը	76
Հ. ԱՐԱՄՅԱՆ, Ժողովրդի էությունական բարեկեցության հարանուն վերելքը Հ Ա Մ Ա Ռ Տ Լ ՈՒՐԵՐ	77
Մեծի Տանն Կիլիկիո նորին Ս. Օծություն Ս. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսը Երուսաղեմում	80
Գամբանական, խոսված նորին Ս. Օծություն Ս. Տ. Գարեգին Ա. Կաթողի- կոսի կողմից, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Ս. Կյուրեղ Բ.ի դագաղին վրա	85
ՎԱԶԳԵՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ, Մեր հարազատ լեզուն	86
Կոմիտասի ծննդյան 80-ամյա գերեկույթը Սորբոնի մեջ	88
Դոկտոր Ասատուր Ալթունյանի մահը	88
Խաղաղության պաշտպանությունը և Հայ եկեղեցին	88
Ա. ՄԻՆԱՍՅԱՆ, Բարկեե Առաքելյան, Հայկական պատկերաբանականները 4—7-րդ դարերում	90
Սփյուռֆից ստացված նոր հրատարակություններ	94
Գիտական և գեղարվեստական հրատարակություններ	95

ԽՈՐԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱՆՍՏԱՆԻ ՍՍՌ, ԷՋՄԻԱՇԻՆ

«ԷՋՄԻԱՇԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин“

Redaction of the magazine „Etchmiadzin“, Armenia, USSR

Պատկեր № 345

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Զ.

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՆՈՐԻՆ Ա. ՕՇՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.
ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՎ ԽԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Անցյալում անհամար վիշտ ու դառնություն տեսած ըագմաշարչար հայ ժողովրդի համար չի եղել նվիրական ավելի ըարձր երազանք, քան տեվական խաղաղությունը: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, որ հնագույն եկեղեցիներից մեկն է աշխարհում, մշտապես աղոթել է աշխարհի խաղաղության եվ մարդկանց ըարօրության համար:

Քաղաքական ներկա խառնակ իրադրության մեջ, երբ մարդկությունը կանգնած է միլիոնավոր նոր զոհեր կլանող համաշխարհային նոր պատերազմի սպառնալիքի մղձավանջի առաջ, Հայոց Եկեղեցին՝ հավատարիմ իր ավանդական սկզբունքին, իր ծայնն է ըարձրացնում խաղաղության օգտին եվ անվերապահ միանում է Խաղաղության Կողմնակիցների Համաշխարհային Վեհաժողովի Մշտական Կոմիտեի Ստոկհոլմի նստաշրջանի ըանաձեւերին:

95-19 20

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ—ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱՄԵՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԻ

12-ին ապրիլի 1950 թ.
Ս. Էջմիածին





**ՌՈՒՍԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԻԱՆՈՒՄ Է ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻ ՄՇՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՍՏՈԿՀՈԼՄԻ ՍԵՍԻԱՅԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՆ**

**ՌՈՒՍԱԿԱՆ ՈՒՂՂԱՓՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ԿՈՄՈՒՆԻԿԵՆ**

„Մեր մեծ Հայրենիքի սահմաններում՝ եղած Ռուսական Ուղղափառ Եկեղեցու ըլլող թեմերի եպիսկոպոսության, հոգեվորականության եվ հավատացյալների կողմից մենք հայտնում ենք մեր միահամուտ համաձայնությունը Խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտեի Ստոկհոլմի սեսիայի քանաձեռնի հետ:

Համոզմունք հայտնելով, որ այդ որոշումների կենսագործումը կնպաստի ամբողջ աշխարհում խաղաղության հետագա ամրապլնդմանը, մենք դիմում ենք ըլլող եղբայրական ինքնագլուխ Ուղղափառ Եկեղեցիներին՝ կոչ անելով միանալ վերոհիշյալ որոշումներին եվ առավելագույն ջանքեր գործադրել հավատացյալների մեջ խաղաղությունը պաշտպանելու գործը ուժեղացնելու նպատակով:

ԱԼԵՔՍԻ, Մոսկվայի և համայն Ռուսիայի Պատրիարխ

Ս ր ք ա զ ա ն Ս ի ն ո ղ ի ա ն դ ա մ ե ե ր՝

ՆԻԿՈԼԱՅ, Կրասնոգորսկի և Կոլոմենայի միտրոպոլիտ:

ԻՈԱՆՆ, համայն Ուկրաինայի էպարխ, Կիևի և

Գալիցիայի միտրոպոլիտ:

ԳՐԻԳՈՐԻ, Լեհիգրադի և Նովգորոդի միտրոպոլիտ:

ԻՈՍԻՖ, Վարնեժի և Օստրոգոժի արքեպիսկոպոս:

ԱՐՍԵՆԻ, Ուֆայի և Բաշկիրիայի եպիսկոպոս:

ՏԻՒԱՐԵՏ, Ռյազանի և Կասիմի եպիսկոպոս:





ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑ Է



Մառ ժամանակ յի անցել էրկ-
րորդ համաշխարհային պա-
տերազմից: Նրա զարհուրելի
հետևանքները այժմ կգաց-
վում են ամենուրեք. դեռ միտում են պատե-
րազմի ընթացում հրդեհված ֆաղափներն
ու գյուղերը, դեռ շեն ամոփվել միլիոնա-
վար որդեկորույս մայրերի սրտի խոր խո-
ցերը, դեռ քարմ են տասնյակ միլիոն ան-
մեղ զոհերի գերեզմանները... Մակայն ար-
յունարբու հրձիգ ուժերը դեռ ծարավի
են արյան և այժմ տենդագին պատրաստ-
վում են նոր պատերազմի ընդդեմ խաղա-
ղասեր Սովետական Միության և դեմոկրա-
տական Երկրների: Մարդկային սեռի այս
դանիները հրահրում են համաշխարհա-
յին նոր պատերազմ, ցանկանում են նոր
սպանդ պատրաստել և մարդկությունը նո-
րից արյան ծովի մեջ փայել:

Նոր պատերազմի դավադիր այս ուժերը,
իրենց հանցապարտ ծրագրին իրագործելու
համար, զենք են սրում և հասարակական
կարծիք պատրաստում: Նրանք աշխատում
են իրենց ռազմականֆին լծել իրենց համա-
կիր բոլոր տեսակի ֆաղափական, հասարա-
կական և կրոնական կազմակերպություն-
ները:

Մակայն ֆեաձ շեն նաև խաղաղության
կողմնակիցները: Նրանք, իրենց հերքին,
պայքարում են խաղաղության համար, աշ-
խատում են հասարակական լայն շրջան-
ների առջև մերկացնել հրձիգների բոլոր
տեսակի դավերն ու խարդավանքները:

Ողջ մարդկությունը այժմ, փաստորեն,
բաժանվել է երկու ընդդիմադիր ճա-
կատների: խաղաղության կողմնակիցնե-
րի և պատերազմի կողմնակիցների: Սահ-
մանազատումը կատարվում է շատ սուր
ձևով. միջին օղակներ այլևս գոյություն
չունեն: Բոլոր տեսակի կազմակերպություն-
ների առջև այժմ խնդիր է ծառայած՝ որի

կողմը պիտի կանգնել, խաղաղությանն թե
պատերազմի կողմնակիցների:

Այսպիսի խնդիր ծառայել է նաև Հայոց
Եկեղեցու առաջ: Այդ հարցին, բնական է,
պիտի պատասխանի նաև Հայոց Եկեղեցին:

Ամենայն Հայոց Հայրապետի խաղաղու-
թյան կողմնակիցների համաշխարհային
կոնգրեսի Մշտական կոմիտեին ուղղած
ներկա համարում տպագրվող որոշումը
պատասխանն է ահա այդ հարցումի:

Հայաստանյայց Ս. Եկեղեցու ծերունա-
գարդ Հայրապետը, իր այդ որոշման մեջ,
պարզ հայտարարում է ի յուր ողջ աշխար-
հին, որ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄՆԱԿԻՑ Է ԵՎ ԱՂՈՒԹՅՈՒՄ Է ԱՌԱՍՏ-
ՎԱԾ՝ ԽԱՓԱՆՆՆՈՒ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀՐԶԻԳՆԵ-
ՐԻ ՆՆՆԳ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱ
ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏՆՆՈՒ ՀԱՄԱՐ:

Հայոց Եկեղեցին, որ ֆրիստոնյա հնա-
գույն Եկեղեցիներից մեկն է, իր գոյության
ողջ ընթացքում, միշտ էլ խաղաղության
կողմնակից է եղել: Նա երբե՛ք կռիվ և սպա-
նություն չի ֆարոզել:

Քրիստոնեությունն ինքը խաղաղություն
ֆարոզող վարդապետություն է: Փրկչի ծնուն-
դը, նրա մարմնակալը ավետվել է խա-
ղաղությամբ. «Փա՛ռք ի բարձունս աստուծոյ,
եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հանու-
թիւն»: Ինքը՝ Փրկչը, իր հիմնած Եկեղեցուն
խաղաղություն է ավանդել. «Սաղաղութիւն
բողոմ ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ»:

Հայոց Եկեղեցին, հավատարիմ փրկչա-
կան այս ավանդին, իր բեմից դարեր շա-
րունակ խաղաղություն է ֆարոզել: Հայոց
Եկեղեցիներում, Ս. Պատարագի արարողու-
թյան ժամանակ, պատարագիչը ամեն ան-
գամ դառնում է դեպի հավատացյալ աղո-
թողները և խաղաղություն մաղթում աշ-
խարհին. «Սաղաղութի՛ւն ամենեցուն»:

Սաղաղությունն է եղել դարեր շարու-
նակ նաև հայ ժողովրդի իդձն ու երազան-
քը: Նա ամենից շատ է սիրել և փայփայել
խաղաղությունը, որովհետև ամենից շատ է

պատերազմների հետևանքը հաշակել: Փոփոխիկ, անպաշտպան մի ժողովուրդ, գտնվելով Արևելքի ռազմա-ստրատեգիական կարևոր մի հանգույցում, հանախ է ենթարկվել նվաճողների հարձակումներին և կամայականություններին: Նա անցյալում ծանր տառապանքներ է տեսել և բազմաշարժար մականունը ստացել: Ո՞ւմ հայտնի չէ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում մեկ միլիոնից ավելի անմեղ հայ բնակչության մասսայաբար սրախողխող լինելը թյուրփայլում: Քանի՜ քանի՜ նվաճողներ են ռոտ դրել հայոց հողի վրա, և քանի՜ քանի՜ տեսակ վիրտ պատճառել ստեղծագործ հայ ժողովրդին: Հայաստանի անցյալ ծանր դրության պատկերավոր բնորոշումը տվել է արարական պատմիչներից մեկը՝ Իբն-Ալ-Ֆակիհ Ալ-Համադանին. «Մահկոպ սիրիացին ասաց. Հայաստանը մշտապես ավերակներով է ծածկված: Հարցրին. ո՞վ է նրան ֆանդողը: Պատասխանեց. Հեծյալների ձիերի սրբակները»:

Հայ ժողովուրդը սիրելի և փայփայելի է խաղաղությունը: Նա այդ խաղաղ ժամանակաշրջաններում է որ իր ստեղծագործական համեստ մոծումներն է արել մարդկային մշակույթի գանձարանում:

1920 թվականին հայ ժողովրդի պատմությանը մեջ տեղի ունեցավ խոշոր բեկում: Սովետական կենսատու արևի տակ, ստեղծվեց հայրենի պետականությունը, որը օրը օրին, հսկայի ֆայլերով, զարգանում և բարգավաճում է: Ռուս մեծ և ազնիվ ժողովրդի և դրացի մյուս ժողովուրդների գործուն օգնության շնորհիվ, անցյալում ֆրոնտանդ երկիրը նա այժմ արդյունաբերական, զարգացած երկիր է դարձել: Սովետական Հայաստանը այժմ իրավահավասար

սար անդամն է Սովետական Միության փառավոր բնուանիքի: Հայ ժողովուրդը այլևս անպաշտպան չէ և ո՛չ մի շարձեմ չի կարող այլևս հեշտություն մը խախտել նրա հանգիստը և իր կամայականությունը քննադրել: Երկրորդ համաշխարհային պատերազմի ծանր փորձը լիովին ապացուցեց այդ:

Ցավայի է միայն, որ՝ ստատասմանում, օտար զոներում դեռևս քրե են գալիս Հայաստանից փախած և հայ ժողովրդի և Մայր Արոտ Ս. էջմիածնի դեմ անվերջ դավեր նշուրող հայանուն մարդիկ, որոնք ինչպես միշտ, այնպես և այժմ, լծվել են ռազմավոյների կառնին և ջանք չեն խնայում հայ համայնքներում մտեր պղտորելու համար: Սակայն այդ մարդիկ վաղուց են մերկացված. նրանք հայ ժողովրդի հաշվի մեջ չեն, և ո՛չ մի հայրենասեր մարդ չի կարող համակիր լինել նրանց:

Ամենայն Հայոց Հայրապետի Խաղաղության կողմնակիցներին ուղղված ներկա սրոշումը մի նոր ապացույց է Հայոց եկեղեցու պարզ կողմնորոշման: Քաղաքական ներկա պղտոր իրադրության մեջ, երբ մարդկությունը կանգնած է պատերազմի մղձավանջի սարսափների առաջ, ծերունագարդ Հայրապետը յուսավորյանքում Ս. էջմիածնից հայտարարում է ի լուր աշխարհի, որ նա խաղաղության կողմնակից է:

Կասկած չի կարող որ հավատացյալ բոլոր համայնքները, որոնք համոզված են որ իրենց սիրելի և նվիրական Ս. էջմիածնի երբեք սխալ կողմնորոշում չի տվել և չի տա, առանց տատանվելու, միասնաբար կկանգնեն Խաղաղության կողմնակիցների շարժում և կպայքարեն խաղաղության և արդարության համար:





Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Ք

**ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐԸ ՓՐԿՁԻ ՀՐԱՇԱՓԱՌ
Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ**

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ՇՆՈՐՀԱԶԱՐԴ ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ԱՆԹԻՒԻԱՍ, ԲԵՅՐՈՒԹ

Սիրո ողջունիվ շնորհավորում եմք Փրկչի Ս. Հարության տոներ. խղորենք,
որ հարուցյալ Փրկիչը իր խաղաղությունը պարզեց աշխարհին, որը գիտության,
գեղարվեստի, կուլտուրայի հիմքն է և մարդկային կյանքի երջանկության
աղբյուրը:

Եղբայրական սիրով՝

ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐԲ ԱԼԵՔՍԻՆ**

ՄՈՍԿՎԱ

Սիրո ողջունիվ շնորհավորում եմք Փրկչի Ս. Հարության տոներ. աղորենք,
որ հարուցյալ Փրկիչը իր խաղաղությունը պարզեց աշխարհին:

Եղբայր ի Քրիստոս՝

ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Նույն բովանդակությամբ հեռագրեր են առավձած նաև Համայն Վրաս-
տանի Պատրիարխ-Կաթողիկոս Կալիստոսաթին և Միաբնակաբնակ Նիկոլային:

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՇԵՆՈՒՄՆԵՐ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԵՎ Կ. ՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀՆԵՐԻՆ ԵՎ ԲՈԼՈՐ ԹԵՄԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԳՆԵՐԻՆ

Սիրո ողջունելի շնորհավորում եմք Փրկչի Ս. Հարություն տոնը. աղոթեմք, որ հարուցյալ Փրկիչը իր խաղաղությունը պարզեց աշխարհին, որը գիտության, կուլտուրայի հիմքն է և մարդկային կյանքի երջանկության աղբյուրը:
Սիրով և օրհնությամբ՝

ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՍՐԲԱՋՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի
ԱՆՈՒՆՈՎ ՍՏԱՅՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ
ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌՔԻՎ**

Քեյրութից

Մեծի ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ՎԵՀԱՓԱՌ ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՑ

ԷՋՄԻԱՍԻՆ, ԳԵՈՐԳ Զ. ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Մեծ տոնի առթիվ շնորհավորություններ, ցանկանալով Ձեզ երկար կյանք:
ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Պոլսից

**ՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ՝ ԳԵՐԱՊԱՏԻՎ Տ. ԳԵՈՐԳ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐՍԼԱՆՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՇԵՆՈՒՄՆԵՐԸ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ
ԷՋՄԻԱՍԻՆ, ՎԵՀԱՓԱՌ ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՈՐՈՒՄԿԱՆ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ՉԵՐՄ ՄԱՂՔԱՆԵՐԸ Զատիկի տոնի առթիվ:
ԳԵՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐՍԼԱՆՅԱՆ**

Երուսաղեմից

**ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ՝ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԵՂԻՇԵ
Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՇԵՆՈՒՄՆԵՐԸ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ**

ԷՋՄԻԱՍԻՆ, ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՈՐԳ Զ.ԻՆ

Հոգեվորական դասի և համայնքի կողմից ընդունեցեմք մեր շնորհավորու-
թյունները Զատիկի տոնի առթիվ: Ցանկանում եմք Ձերդ վեհափառության եր-
ջանիկ և երկար կյանք, բարգավաճում Հայրենիքին և սիրելի ժողովրդին:

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ՝ ԵՂԻՇԵ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ

Փրկչի հրաշափառ Ս. Հարություն տանի առօրիվ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ նորին Սրբազնություն Ս. Տ. Գեորգ Զ.ի անունով ստացված են բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ, ինչպես Սովետական Միության հայ համայնքներից և Սովետական Հայաստանի ժողովրդից, նույնպես և Սփյուռքի հայությունից, բեմերից, կրոնական-բարեգործական հաստատություններից և մասնավոր անհատներից:

Ստորև տալիս ենք միայն պաշտոնական բնույթ կրող հեռագրերի ցանկը, հայտնելով միաժամանակ Վեհափառ Հայրապետի գոհունակությունը ստացված բոլոր ողջույնների առթիվ:

Մոսկվայի և Համայն Ռուսիո Սրբազնագույն Պատրիարք Ալեքսիից,

Համայն Վրաստանի Սրբազնագույն Կաթողիկոս Կալիստրատից,

Կոստանդնուպոլիս Սիբուրայից,

Փարիզից.— Եվրոպայի Հայոց Կաթողիկոսական Պատվիրակ՝

Գեորգ Ս. Արտավազդ Արքեպիսկոպոս Սյունիքյանից,

Բուենոս-Այրեսից.— Հարավային Ամերիկայի Հայրապետական պատվիրակ՝

Գեորգ Ս. Գարեգին Արքեպիսկոպոս Խաչատրյանից,

Աթենքից.— Հունաստանի Հայոց բեմի Առաջնորդ՝

Գեորգ Ս. Կարապետ Արքեպիսկոպոս Մազլըմյանից,

Գանիթից.— Եգիպտոսի Հայոց բեմի Առաջնորդ՝

Գեորգ Ս. Մամբրե Արքեպիսկոպոս Սիրունյանից,

Ֆրեզնոյից.— Կալիֆորնիայի Հայոց բեմի Առաջնորդ՝

Գեորգ Ս. Վարդան Արքեպիսկոպոս Գասպարյանից,

Բուխարեստից.— Ռումինիայի Հայոց բեմի Առաջնորդ՝

Հոգեշնորհ Ս. Վազգեն Մ. Վարդապետ Պալեյանից,

Թբիլիսիից.— Թեմական և Եկեղեցական Խորհուրդներից,

Բաքվից.— Ադրբեջանի Հայոց բեմի Առաջնորդ՝

Գեորգ Ս. Սուրեն Եպիսկոպոս Թորոսյանից,

Ռոստովից.— Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի Հայոց բեմի

Առաջնորդական Փոխանորդ՝ Հոգեշնորհ Ս. Կարապետ Վարդապետ Ասլամազյանից և Թեմական և Եկեղեցական Խորհուրդներից:

Երևանից.— Թեմական և Եկեղեցական Խորհուրդներից և բազմաթիվ անհատներից,

Վենիեականից.— Շիրակի բեմի Առաջնորդական Փոխանորդ՝

Հոգեշնորհ Ս. Գարեգին Մ. Վարդապետ Հոկոբյանից,

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունից,

Թեհրանից.— Քահանայական Դասից և Եկեղեցական Խորհրդից,

Թավրիզից.— Ս. Կարապետ Ավագ Քահանա Մանուկյանից և


Թեմական Խորհրդից,

Բաղդադից.— Բաղդադի Հայոց բեմի Առաջնորդական Տեղապահ՝

Արժ. Ս. Գրիգոր Քահանա Հակոբյանից և համայնքից,

Բոմբեյից.— Հայ համայնքից և Եկեղեցական Վարչությունից:

ԱՆԿԱՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԹՈՒՐԵՆ ԱՐԿԵՊԻՍԿՈՊՈՍ





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ (Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ¹)



մենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հետ օծման ժամանակաշրջանը՝ 1945-ից մինչև 1950 թիվը, Հայ Եկեղեցու պատմության մեջ նշանավորվում է և ուրույն, աղքատու արժեք է ստանում Հայաստանյայց Ս. Եկեղեցու, Մայր Աթոռի զարթոնքի և վերակառուցողական աշխատանքներով:

Վեհափառ Հայրապետը, հավատարիմ իր դավանած և քարոզած սկզբունքներին, նոր եռանդով ու թափով ձեռնամուխ եղավ Հայոց Եկեղեցու և Մայր Աթոռի առջև ծառայած անհետաձգելի և կարևոր հարցերի լուծմանը:

Նորին Ս. Օծուխյան առաջին աշխարհաբար կոնդակը, ուղղված համայն հայության և հոգևոր դասին, բովանդակում է հիմնական այն խնդիրները, որոնք ծառայած են Հայաստանյայց Ս. Եկեղեցու առաջ: Այստեղ շոշափված հարցերը, հիմնականում, Հայոց Եկեղեցու պայծառության, զարթոնքի և կազմակերպության հարցեր են — Մայր Տաճարի վերանորոգությունը, տեսական բարձր ունակություններ ունեցող հոգևորականների պատրաստելը, թեմերի կազմակերպչականորեն ամրացումը, թեմերի և Մայր Աթոռի փոխհարաբերությունների սերտացումը և այլն:

Վեհափառ Հայրապետի անդրանիկ աշխարհաբար կոնդակը, փաստորեն նախագիծ-ծրագիր է այն գործունեության, որ պիտի կենսագործվեր Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Հայ Եկեղեցու կողմից:

Վեհափառ Հայրապետը իր այս կոնդակում, պարտքի լրիվ գիտակցությամբ, նշում

է այն ծանր պատասխանատվությունը, որ իրեն վիճակվեց 1945 թվի հունիսի 22-ի կաթողիկոսական ընտրությամբ: Պատասխանատվության այդ ծանր գիտակցությամբ են պայմանավորված այն բոլոր խնդիրները, որոնք առաջ են բերված կոնդակում և հանձնված հավատացյալների ուշադրությանը: Վեհափառ Կաթողիկոսը, դնելով այդ խնդիրները իրենց սպառելի պարզությամբ, ցանկություն ունի իրեն բաժին ընկած պատասխանատվության մասնակից դարձնել բովանդակ հայության համախորհուրդ կերպով լուծելու և վերացնելու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու առաջ կանգնած դժվարությունները: Եվ քանի որ նա չի տարակուսում իր ժողովրդի համախորհուրդը և միապիստ պատասխանատվության և գործակցության մասին, ուստի և խնդիրները դնում է կանխատես վճարահատությամբ և իմաստուն հետետեսությամբ:

Վեհափառ Հայրապետը իր ուխտն ու երդումը, հետևապես իր ծանր պատասխանատվությունը, սրբատառ առաջին կոնդակում ձևակերպում է այսպես. «Հայ Եկեղեցու հնավանդ սովորության և կանոնների թելադրությամբ, նախ քան օծումս, ծոնր դրի Իջման Սեղանի առաջ և ուխտեցի ցմահ հավատարիմ մնալ Հայ Եկեղեցուն, անխախտ պահպանել նրա կանոնները, դավանանքն ու ավանդությունները և անձնվիրությամբ ծառայել հայ ժողովրդին և Հայրենիքին»: Այս իսկ հակիրճ նախադասությամբ ասված է ամեն ինչ: Այս սքանչելի բացատրականի մեջ խոսում է մեծապարծ Կաթողիկոսի հայրենասեր ոգին. նրա բերանով խոսում է ինքը՝ հավատացյալ ժողովուրդը:

Այսպիսի մեծ պատասխանատվության առջև լիովին հասկանալի է դառնում Վեհափառ Հայրապետի հուզմունքն ու ապրումները:

1) Սկիզբը նախորդ համարում:

որն իր արտահայտությունն է գտել նշված կոնդակում: Ամենայն Հայոց Հայրապետի կոչումս, Ազգային-Եկեղեցական ժողովի կատարյալ վստահությունը և հավատացյալ ուտիս ոսկեկետակն ակնկալությունները խորապես հուզում են սիրտս և ենշում հոգիս՝ զգացնելով ինձ պարտականության և պատասխանատվության ծանրությունը (ընդգծումները մերն են): Ինքնին հասկանալի է, թե ի՛նչպիսի պայծառատեսությունք և ի՛նչպիսի խոր ու գիտակցական ապրումներով է մտածում նա իր պատասխանատվության հարցին, հետևյալս և իր հետագա անելիքներին, քանի որ նա ունի արդեն «Ազգային-Եկեղեցական ժողովի կատարյալ վստահությունը և իր հավատացյալ հոտի ոսկեկետակն ակնկալությունները», որոնք պետք է կենսագործել և արդարացնել՝ կյանքի կոչելով Հայաստանյայց Եկեղեցու լիակատար զարթոնքը:

Ամենայն Հայոց Հայրապետության առաջին և անհետաձգելի հարցերից մեկը Մայր Տաճարի վերանորոգման խնդիրն է: Այդ խնդիրը մեր ժողովրդի արժանապատվությունն ու նրա ինքնասիրությունը շողափող հարց է: Վերանորոգել պատմական այդ խոշոր հուշարձանը, այն փրկել կորստից, այդ նշանակում է փրկել մեր հնադարյան անցյալի պայծառ կոթողը, կանգուն պահել հայ ժողովրդի Սրբություն Սրբոցը:

Կատարելապես ըմբռնելով խնդրի ծանրությունը, անհետաձգելիությունը և բարոյությունը, Վեհափառ Հայրապետը դարձնում է այն իր մտահոգության գլխավոր խնդիրներից մեկը: Իզուր չէ, որ Վեհափառ Հայրապետն իր անդրանիկ կոնդակում խորհրդածում է. «Պիտի կարողանա՞մ արդյոք, ծերությանս հասակում, խղճի մտոք կատարել պարտքս, պիտի հաջողվի՞ արդյոք ինձ, ներքնապես ու արտաքնապես ճիմնովին վերանորոգել այս հնադարյան թանկարժեք կոթողը՝ Ս. Էջմիածնի Մայր Տաճարը»:

Եվ, ճիշտով, տեղին ու արդարացի են Վեհափառ Հայրապետի հուզումն ու մտահոգությունները: Մայր Աթոռ Ս. Էջմիածինն իր պատմական գոյության ընթացքում, եղել է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ապրումների աղբյուրը: Ի՛նչ հոյակապ հիշատակներ է նա թողել մեր ժողովրդին՝ գրականության, արվեստի, ճարտարապետության և այլ բնագավառներում: Ի՛նչպիսի հզոր խթան է հանդիսացել նա մեր մշակույթի վերելքի, զարգացման և պահպանման գործում: Մխիթարության, հույսի, դիմադրականության ի՛նչպիսի հոյակապ էջեր է թողել նա մեր պատմության լուսաշող գրքում: Միշտ ժողովրդի հետ և նրա կողքին, հանուն նրա երջանիկ ապագայի, հանուն նրա իրավունքների և գո-

յությունների, հանուն նրա ազատագրության և անկախության— այս է կազմել Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատմական ուղին: Այսպես է անցել Ամենայն Հայոց Հայրապետությունը իր բազմադարյան ուղին, սկսած Տրդատ Թագավորի և Ս. Գրիգոր Լուսավորչի օրերից: Մայր Աթոռը չի ընկճվել դարերի փոթորիկների առաջ, գլուխ չի ծռել, այլ հավատարիմ իր ուխտին ու կոչումին, քայլել է անսայթաք իր ժողովրդի հետ, իր ժողովրդի և իր Հայրենիքի համար, շնայած աննկարագրելի դժվարություններին ու տառապանքներին, որ պատմությունը և ժամանակները անցյալում բաժին են հանել իրեն և իր ժողովրդին:

Վերոհիշյալ հանգամանքներից իսկ բխում է Ամենայն Հայոց Կաթողիկոսության, Մայր Աթոռի պատշաճ պահպանումը, ընդ որում և Մայր Տաճարի վերանորոգումը:

Հայ հավատացյալ ժողովուրդը դարերի ընթացքում մարմնավորել է Ս. Էջմիածնի—Մայր Տաճարի հավատամքը, որպես իր կրոնական, հոգևոր ապրումների աղբյուր, որպես պատմա-ազգային խոշորագույն ավանդ, որպես իր տենչերի և ձգտումների խորհրդանիշ: Նա անբակտեղի կերպով կապված է Մայր Տաճարի և Մայր Աթոռի հետ իր հույզերով, զգացմունքներով, իր հավատքով և ակնկալություններով: Պատմական ծանր դեպքերի և վյանքի խոռվահույզ օրերին, այնտեղ է գտել նա իր հոգեկան անդորրը, իր սրտի մխիթարությունը: Ուտի և բնականաբար հատկանալի է, որ ամեն մի հավատացյալ հայ մարդ իր սրտի խորքերում փայփայում է այն, որպես իր էություն գերագույն սրբությունը, իր ազգային խորհրդանիշը և իր պատմության հաղթանակ կոթողը:

Այստեղից էլ, բնականաբար, բխում է արն, որ Մայր Տաճարի վերանորոգումը կամ վերակառուցումն ըստ պատշաճի, համազգային գործ է, այն հավատացյալ հայության խղճի ու պատվի գործ է:

Ու միանգամայն հասկանալի է, թե ինչու է գտնվեցին հայ մարդիկ որոնք արձագանքեցին Տաճարի նորոգման գործին, տրամադրելով խոշոր գումարներ:

Վեհափառ Հայրապետը Տաճարի նորոգման խնդիրը դարձրել է իր մտահոգությունների և տենչերի կենտրոնական առարկա: Այդ իսկ հանգամանքով, նա իր տեղակալության ժամանակ և դեռ նրանից առաջ ևս զբաղվել է այս խնդրով և որոնել գործնական միջոցառումներ: Նա Մայր Աթոռում հրավիրել է բազմաթիվ խորհրդակցություններ, ուր մասնակցել են մեր անվանի ճարտարապետները, պատմագետները, հնագետ-

ները, նկարիչներն ու գեղարվեստագետները, հաջողվել է բնորոշել տալ նորոգման ձևը, Տաճարի ինքնուրույնը և յուրօրինակությունը, նրա բնույթը և կառուցողական նույնությունն ու ինքնատույնությունը ապահովել, պահպանել, ընդ որում ոչ մի շեղում, ոչ մի փոփոխություն, որը այս կամ այն կերպ կարող է ստվերել նրա հնամյա ճարտարապետական ձևը, նրա կառուցվածքը, գեղարվեստական դրվածքը ու կերտվածքը, կազմվել են հանձնախմբեր, որոնք տվել են արդեն իրենց ուսումնասիրությունները, նշելով ամեն մի մանրույթ, որոշելով ամեն մի ծեփն ու քարը, որով և շատ լուրջ աշխատանք է կատարվել կառուցումը նախապատրաստելու համար:

Նախապատրաստական այս աշխատանքները, ուրվագծումներն ու նախագծերը քանիցս քննարկվել են մասնագետների կողմից, սրբազանվել են և հաստատվել նորոգման վերահսկողությունը ստանձնող կենտրոնական հանձնաժողովի կողմից, ստացել նաև հավանությունը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, որով և նորոգման նախապատրաստությունը ավարտված է արդեն, հետևապես և հնարավոր է նորոգումն սկսել: Անշուշտ նախ քան նորոգումն սկսելը, անհրաժեշտ պիտի նկատվի ստուգատեսի ենթարկել նախագծած պրոեկտներն ու ծրագրերը, նրանց կատարման նյութական-դրամական հարցերը, ինչպես նաև բոլոր այն գործնական միջոցառումները, որոնք պիտի հնարավորություն ընձեռեն շինարարությունն սկսելու և այն ըստ պատշաճի՝ ավարտելու:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի այժմեական կարևորագույն խնդիրներից է հոգևորական պատրաստված կադրեր ստեղծելու հարցը: Այդ խնդիրը Վեհափառն առաջ քաշեց Ազգային-Եկեղեցական ժողովում, ներկայացրեց իր ծրագիրը Հոգևոր Ճեմարանի վերաբացելու խնդրում և արժանացավ հավանության:

Ճեմարանի վերաբացումով, բնականաբար, Վեհափառ Հայրապետը նպատակ ուներ կրթված, լուսավոր եկեղեցականներ պատրաստել, տալ հայ ժողովրդին ժամանակակից գիտությունը գինված, հոգևոր բարձր առաքինություններով օժտված հոգևորականներ, որպեսզի Հայ Եկեղեցին կարողանա սպասարկել ժողովրդի հոգևոր գործին, որպեսզի քրիստոնեական առաքինություններով և լուսավոր գաղափարներով գինված լինի հայ հավատացյալ ժողովուրդը, որպեսզի օտար միջավայրում մղու չգնա, չլուծվի և չփոշիանա:

Այս իսկ առնչությամբ, մտահոգիչ հանգամանք է ստանում Մայր Հայրենիքի և արտա-

սահմանյան թեմերը բանիմաց ու կարող առաջնորդներով ապահովելու խնդիրը, որպիսին զուգակցվում է երկու հիմնական գործոնների հետ — Հոգևոր Ճեմարանի բացումն ու ապահովումը և «Էջմիածին» ամսաթիթի հրատարակությունը:

Հոգևոր Ճեմարանն արդեն թևակոխում իր գոյության 6-րդ տարին: Դասարանական բաժնին կից բացված է լսարանական բաժինը: Ներկայումս ունենք Ա. և Բ. լսարանները, հառաջիկա ուսումնական տարում կունենանք նաև Գ. լսարանը, որով Ճեմարանի դասընթացը, որպես կրթական բարձրագույն հաստատության, ավարտած կլինենք. Ճեմարանը տվել է արդեն Հայ Եկեղեցուն հինգ երիտասարդ և աշաղուրջ ու պատրաստված սարկավազներ: Կան նաև հոգևոր կոշում ստանալու մի շարք դիմումներ: Այս եռանդուն և կորովի երիտասարդները տողորված են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու վերելքով ու կենսունակությամբ, ծախվի են է՛լ ավելի բարձրագույն և մասնագիտական կրթության, որի համար խորհել ու ծրագրել է մեր ծերունագարդ Հայրապետը: Ճեմարանի ծրագիրն ըստ ամենայնի ընդգրկում է կրոնական-եկեղեցական, հայագիտության և աստվածաբանության բնագավառները: Դասակոսները առանց բացառության բարձրագույն կրթության տներ են և փորձառու ու հմուտ մանկավարժության բնագավառում. մի բան, որ ապահովում է արդյունավետ դաստիարակությունը: Ցավոք սրտի, մեր թեմերը ըստ մեծի մասին չկարողացան իրագործել իրենց խոստումներն ու հանձնառությունները, Ճեմարանի նյութականը ապահովելու տեսակետից: Խոշոր գումարներ կլանող այս մեծ և արժեքավոր հաստատությունը Մայր Աթոռը հարկատրված է տանել իր ուսերին ողջ ժամրությունը:

Անկապած մեր թեմերի այսպիսի անփութությունը չի զուգակցվում և երբեք չի զուգակցվի մեր ժողովրդի և Կաթողիկոսության իղձերի ու պահանջների հետ:

Մեր եկեղեցիները կարիք ունեն ժամանակակից փրտությամբ. զինված կադրերի, և մենք պարտավոր ենք այդ կարիքը հոգալ: Ճեմարանի գոյությամբ և աշխատանքներով միայն կարող է լուծվել այս անհետաձգելի հարցը, Ողջ հավատացյալ հայությունը պարտավոր է իր ուշադրության կենտրոնում պահել Ճեմարանի պահպանման և նրա օրավուր զարգացման ու բարգավաճման հարցը:

Ինչպես հայտնի է, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, դեռևս իր տեղակալության ժամանակ, 1944 թվին, ձեռնարկեց «Էջմիածին» ամսագրի հրատարակմանը: «Էջմիածին»ը հանդիսացավ նախկինում հրա-

տարակիղո «Արարատ» ամսագրի շարունակությունը: Երկու ամսագրերի նպատակն էլ նույնն է— հոգևոր սնունդ մատակարարել հայ հավատացյալներին, կապ պահպանել թեմերի հետ, համայն հայությունը իրազեկ պահել Մայր Աթոռում տեղի ունեցող անցուղարձե-րին և հանդիսանալ Ամենայն Հայոց Հայրապետության պաշտոնական օրգանը: Ամսագրի հրատարակման յոթնամյա փաստը լիակատար կերպով արդարացրեց Հայոց Հայրապետության ակնկալությունները: Այն, իր բովանդակության ճոխությամբ ու բազմազանությամբ, գերազանցեց իր նախորդին՝ «Արարատ» ամսագրին: «Էջմիածին» ամսագիրը հնարավորություն ընձեռեց պաշտոնական հրահանգների ու կոնդակների կողքին որոշ տեղ հատկացնել նաև հայագիտական-կրոնական ուսումնասիրություններին, և լուսաբանել հայրենադարձի հետ կապված խնդիրները: Այնտեղ տպագրվեցին և տպագրվում են Ճեմարանի հոգևոր սաների և նորընտիր սարկավազների հոդվածներն ու ուսումնասիրությունները, որոնք վկայում են նրանց խոստամնալից լինելու հանգամանքը և ևս առավել Հոգևոր Ճեմարանի արդյունքների մասին: Խիստ հուսադրել է նաև «Էջմիածին» դերը որպես հոգևոր կապ Սովետական Հայաստանի և մեր Սփյուռքի տարագիր եղբայրների ու քույրերի միջև: Այս հանգամանքը ինքնին նշանավորում է «Էջմիածին» ամսագրի պատմական դերն ու նշանակությունը:

Նորին Ս. օծություն Գեորգ Զ. Կաթողիկոսի գահակալության շրջանում հուզող համազգային նշանակություն ունեցող կարևոր խնդիրներից մեկը հայկական հարցն է, նրա արժարժումը միջազգային արդարադատության առջև և պահանջը նրա արդարացի լուծման, մեր Հայրենիքն ամբողջացնելու, մեր բռնագրավված հողերը մեր պայծառ Հայրենիքին միացնելու և մեր պատմական իրավունքները լիակատար կերպով վերականգնելու վճռական ցանկությունը: Ամբողջ աշխարհի հառաջադեմ մարդկությանը, պատմական կաճառներին և գիտական մտքին հայտնի են հայ ժողովրդի անցյալի տառապանքներն ու ողբերգությունները, նրա հերոսական ընդվզումներն ու պայքարները հանուն իր երկրի անկախության, հանուն հայ ժողովրդի ազատության և իրավունքների, հանուն իր հողերի ամբողջականության ու պետականության: Ամենայն Հայոց Հայրապետը, ելնելով հայ ժողովրդի շահերից, միջազգային արդարադատության առջև դրեց հայկական հարցը և պահանջեց նրա լուծումը: Նա դիմեց հաղթող երեք մեծ պետություններին, այլ և հատուկ

կոնքակ ուղղեց Նյու-Յորքում դրամաված համազգային կոնգրեսին:

Կոնգրեսին ուղղած կոնդակում, ծերունազարդ Հայրապետը նշում է. «Հայ ժողովրդի առաջ աչսօր հրամայաբար կանգնած են երկու ճակատագրական խնդիրներ— ա. Հայության ազդահավաքումն իր նվիրական հայրենի հողի վրա և բ. վերատիրացումը մեր Հայրենիքի բռնագրավված հողերի»:

Նույն հոդվածում հայ դատի արդարացումը պատճառաբանված է հետևյալ ձևով. «Սեփրի դաշնագրով սրբազորված միացյալ Հայաստանը, դա արդար հատուցումն է ո՛չ միայն միլիոնավոր հայ նահատակների անմեղ արյան, այլ և օրինական վարձահատուցումը այն անօրինակ հերոսական պայքարի, որ հայ ժողովուրդը ազգովին մղել է 1914—1918 թվերին ընդդեմ թրքական դահճապետության»:

«Այս դատը հին է,— ավելացնում է մեր իմաստուն Հայրապետը,— բայց նա կա և կմնա միշտ նոր, քանի չի ստացել իր վերջնական օրինական և արդար լուծումը»:

Պետք է իմանալ, որ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը խորպայես ըմբռնել է հայ դատի վերաբերմամբ հայ ժողովրդի ունեցած դիրքավորումը: Այո՛, Քժանի այն էլ լուծվել, կմնա միշտ նոր» հայ ժողովրդի համար և նա ո՛չ մի նահանջ չի կատարի իր արդար իրավունքի պահանջից: Հերոս ժողովուրդը դարերով պայքարել է իր դատի համար, զոհվել և զոհաբերել, ու նույնը պիտի շարունակի, մինչև նրա վերջնական լուծումը: Այս արդեն մեր ժողովրդի հոգեբանությունն է, իր իրավունքների պատմական ըմբռնումը: Ճիշտ է ճանաչել Վեհափառ Հայրապետը իր ժողովրդին և լավ է ուսումնասիրել նրան:

Բայց Վեհափառ Հայրապետին քաջածանոթ են նաև հայ դատի լուծմանը խանդարող միջազգային դավերը, օտար պետությունների ոտնձգությունները, ուստի իրավացիորեն նա այդ դատի լուծումը սպասում է Սովետական Միությունից և նրա հանձարեղ Առաջնորդից. «Հայ ազգը և նրա ծերունազարդ Պատրիարք-Կաթողիկոսը— եզրափակում է — իրենց հույսն առաջին հերթին կապել են Սովետական Մեծ Միության հզոր ու արդարամիտ կառավարության հետ, որի հանձարեղ Առաջնորդը միշտ պաշտպան ու ապավեն է եղել հայ ազգի, հայ Հայրենիքի»:

Վեհափառ Հայրապետի այս ակնկալությունն ու հույսը բխում են այն գործնական աջակցությունից, որով Սովետական Միության Մեծ Առաջնորդը, ճնշված ժողովուրդների ազնիվ ու անկեղծ բարեկամը, արդեն

իրագործել է հայ ժողովրդի մի հատվածի ազատութիւնն ու պետականութիւնը և բաց է արել նրա առջև վերելքի ու զարգանալու անթիվ և անհամար ուղիներ, տվել է ամենալայն հնարավորութիւնները ինքնուրույն կյանքի և մշակութի համար:

Հայ ժողովուրդը Սովետական Հայրենիքում վերածնվել, զարգացել է ապշեցուցիչ հառաջդիմութեամբ և արդեն իսկ ստեղծել է հայ ժողովրդի ազգապահպանման, հայրենադարձի և հայ պետականութեան հաստատուն և անխորտակելի պատվանդաններ: Եվ քանի որ նրա հոյակապ վերելքը շարունակվում է, հետևապես և լավատեսութեան բոլոր տվյալները կան Սովետական Հայրենիքի լուսապայծառ ապագայի վերաբերմամբ և մեր հայրենական դատի լավագույն լուծման համար:

Ամենայն Հայոց Հայրապետի հայ դատի պաշտպանութիւնը բխում է մեր պատմական անցյալի տրադիցիաներից: Հայ Եկեղեցին և Կաթողիկոսութիւնը, ինչպես անցյալում, նույնպես և ներկայում, կանգնած են ժողովրդի, Մայր Հայրենիքի կողքին: Սա մեր Եկեղեցու հոգեբանական ասանձնահատուկ կողմն է: Բնականաբար, հայ դատը Հայ Եկեղեցուց չի կարելի անջատել, ինչպես որ չի կարելի անջատել հայ ժողովրդին իր Հայրենիքից: Սրա փայլուն ապացուցն հանդիսացավ հայ ժողովրդի մարտիրոսացումը Մեծ Ծղեռնի օրերին: Նա մերժեց ուրացումը և իր պատմութիւնը զուսազարդեց իր ազգային հայրենասիրական առաքինութեամբ: Այս ըմբռնելի է բոլոր ազնիվ հայերի համար:

Ինքնին հասկանալի է՝ թե ինչո՞ւ հայ դատի համար իրենց ձայնը բարձրացրին մեր բոլոր եկեղեցիները, մեր կրօնական համայնքները: Նույնպես հասկանալի է, թե ինչպես իր ժամանակին նույն ձայնը բարձրացրել են մեր բոլոր կաթողիկոսները, և բնականաբար այդ ձայնը է՛լ ավելի հուժկու պիտի բարձրացնէր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ՝ Նորին Սրբութիւն Տ. Տ. Գեորգ Զ-ը, որը կաթողիկոսներից ամենաերջանակազունն է, քանի որ տեսավ իր ժողովրդի մի մասի ազատագրումը, նրա պայծառ պետականութիւնը, ազգահավաքի առաջին կարավանները:

Սակայն այդ երեք չի նշանակում, որ Հայոց Հայրապետութիւնից պիտի ակնկալւեր հայ դատի լուծումը: Նա ապրում է և եթե միջազգային բարդ իրադրութեան մեջ չի լուծվում այդ արդարացի դատը, դրա հա-

մար մեղավոր է Ամենայն Հայոց Հայրապետը:

Մի՞թե դեռ Իսրայել Օրու ժամանակաշրջանից և այնուհետև հայերը իրենց ազատագրութիւնը չէին ակնկալում ուս մեծ և ազնիվ ժողովրդից: Այդ ուղղութեամբ չէին տարվում Հնդկահայերի աշխատանքները, Ղարաբաղի մելիքների պայքարները, Ներսես Առաքարակեցու ջանքերը և այլն և այլն. մի՞թե նույն ակնկալութիւնը չէր իշխում Սան Ստեֆանոյի և Բեռլինի վեհաժողովներին առաջ, և միթե ուս ժողովուրդը չէ՞ր, որ իր հերոսական զավակների արուեստով, Հոկտեմբերյան ռեյոլուցիայի փրկարար ալիքներով լվաց Մասիսի խորշոմած այտերն ու լանջերը, բերելով մեզ փրկարար նյւթերը: Ի՞նչ զարմանք և ի՞նչ ալլալում էրք այսօր հայ մարդը այդ նույն դատի լուծումը ակնկալում է կրկին նույն ժողովրդից, ուս ժողովրդից: Այս բոլորը չեն ըմբռնի և շլիտի կարողանան ըմբռնել հայրենադավները, որոնք ամեն տեսակ ստոր միջոցներով փորձում են անվանարկել Ամենայն Հայոց Հայրապետի բռնած դիրքը հայկական հարցում: Այդ մարդկանց մոտ ազգային խիղճը չէ խոսողը, այլ իրենց վարձած տերերի թելադրանքը, որոնք հազար անգամ խաբել են խոստումներով հայ ժողովրդին և կուզենան նորից խաբել:

Որ հայրենադավները պայքարել են և պայքարում են Հայոց Հայրապետութեան, Սովետական Հայաստանի, ներգաղթի, հայ պետականութեան դեմ, այսօր ոչ ոք չի տարակուսում այդ մասին: Բայց դրա համար տրորել մեր միլիտնավոր նահատակների ճշյունները, արհամարհել նրանց սուրբ և անմահ հիշատակը, խարդալանել հայ դատին և նետվել թրքամոլութեան և թրքասիրութեան գիրկը, այս արդեն ո՛չ միայն ներքի չէ, ո՛չ միայն հանդուրժելի չէ, այլև սա այն նողկանքն է, որով խանգարվել է մեր դատը, որով մեր ժողովուրդը մատնվել է կոտորածի:

Այս է, որ չպիտի վրիպի և ո՛չ մեկ հայի ուշադրութիւնից: Միջոցների մեջ խորութիւն չընող հայրենադավների համար ո՛չ Հայրենիք գոյութիւն ունի, ո՛չ ժողովուրդ և ո՛չ էլ որեւէ համոզմունք ու դավանանք, նրանց համար կա ստրկական կամակատարութիւն օտարներին և անհատական շահ: Փրկչի Վլա՛յ ձեզ դպրաց եւ փարիսեցուց կեղծատրուաց» սասցվածքը ճիշտ և ճիշտ այսպիսիների համար է:

(Շարունակելի)

ՔԱՆԱՍԵՐ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Ե Ր Կ ՈՒ Վ Ա Վ Ե Ր Ա Գ Ր Ե Ր

Հայտնի է, որ Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Ս. Օծուկուն Ս. Տ. Գեորգ Զ. սուլորել է էջմիածնի Հոգևոր Ճեմարանում, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ս. Տ. Գարեգին Վեհապետի հետ: Նրանք միասին են ալարտել Հոգևոր Ճեմարանը և միասին էլ սարկավազ ձեռնադրվել Կարապետ Ս.-Մկրտչյանի հետ (հետագայում եպիսկոպոս): Նրանց հետ է եղել նաև իրենց տեսուչը:

Նրանց ձեռնադրության կապակցությամբ իրենց ուսուցիչներին մեկը՝ Մ. Արքեպիսկոպոս Օրմանյանը, որ Հայաստանյայց Եկեղեցու հեղինակավոր դեմքերից մեկն է, երկտող-շնորհավորական է ուղարկել Գարեգին Կաթողիկոսին (այն ժամանակ սարկավազ)՝ մեծ նշանակություն տալով այս եղյակի, իրենց տեսչի հետ, եկեղեցական ասպարեզ մտնելուն: Օրմանյանը, իրեն հատուկ խորաթափանցությամբ, գուշակել է այն մեծ հեռանկարը, որ ունի նորոճա սարկավազները եկեղեցական ասպարեզում: Ստորև բերում ենք Օրմանյանի շնորհավորական երկտողը:

Մյուս վավերագիրը, որ նմանապես հրատարակում ենք ներկա հոդվածում, այդ Գեորգ Կաթողիկոսի (այն ժամանակ վարդապետ) մի բացիկն է ուղղված Գարեգին Կաթողիկոսին (այն ժամանակ վարդապետ): Գեորգ վարդապետն իր այդ բացիկում խորհուրդ է տալիս իր մտերիմ ընկերոջը՝ Գարեգին վարդապետին, չհրաժարվել ընդունելու Հոգևոր Ճեմարանի տեսչությունը: Նա միաժամանակ հայտնում է իր հայեցակետը՝ Ճեմարանի վերակառուցման խնդրում:

Հրատարակվող երկու փաստաթղթերն էլ գալիս են նորից հաստատելու այն իրողությունը, որ Հայ Եկեղեցու ներկա երկու հովվապետները, իրենց բացառիկ ընդունակություններով և անբասիր վարքագծով, մեծ հեղինակություն են ունեցել իրենց երիտասարդ շրջանից: Այդ փաստաթղթերը միաժամանակ ցույց են տալիս, որ Հայ Եկեղեցու այդ աչքի ընկնող դեմքերը, ակաժ իրենց ուսանողական շրջանից, բացառիկ մտերմական կապերով են կապված եղել իրար հետ:

Քերիա

29 յունիս 1889

ՍԻՐԵԼԻԿ ԻՄ ԳԱՐԵԳԻՆ
ԱՄԱՐԵՇՆՈՐԶ ՍԱՐԿԱՒԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՒՅ

Ապրիս Գարեգինս.

Գուն ալ եկար լրացնելու խորհրդատր քիւր և խորհրդատր խումբը: Իմ աշխատութեան ժամանակին երեք խումբեր կամ դասեր ունեցայ ինձ աշակերտ, և որոց վրայ ջանացի գործել ինչ որ կարող էի, ինչ որ պարագաները կը ներէին: Առաջին խումբը — երրորդ լսարանցոցն էր և անոցմէ չորսը ընդունեցան ուստի պահպանիչը: Այլ պարագայ փոխունեցան, միտեր փոփոխութեան և գործեր այլափոխունեցան: Վերջին ժամանակ երեք էիք, որ Ձեր արժանապատի տեսչին շուրջ բոլորեալ, ոչ պահպանիչը. այլ «Աստուածային և երկնային շնորհք կ'ընդունիք» և երեք խորհրդատր քիւր կը կազմեք երեք խումբերէ մի մի նախընձաներ, Կարապետն ու Գեորգը և գուն: Երեք խումբերն ալ կը մտնեն ուրեմն գործոյն, և ես

վստահ եմ թե իւրաքանչիւր խմբի նախընձաներն ալ հետևողներ պիտի ունենան:

Գալով քո խմբիդ, ո՞հ, կը յիշեմ նախ և առաջ Տէօվլէթեանի և Թառուեանի վաղահաս վախճանը: Աստուած լուսավորէ նոցա հոգին: Սակայն մնացելոց մէջ ալ հոգով կը տեսնեմ դիմողներ և առաջին կը ներկայանայ իմ մտաց աչիք Տէր Յովնանիսեանը և ոչ հետո՝ Համբարձումյանը, և այլն ըստ կարգի: Սակայն եթէ երրորդ լսարանցիքն ալ աւարտելով ընդունին ուրարին լծանձաներուփունը, ոչիւնչ չունիմ ըսելիք:

Առաջին առթիվ ձեզ երիցունցոց մի մի լուսակար կը յղեմ, շուտով և ձեր ունենալու փափագանօք:

Ողջոյն ամենայն սիրելիաց և առաջին լսարանցոցդ, որոց դու պետ, աստիճանալ ալ գլուխ ես նշանակուած:

Համբուրիս նակատուդ մնամ
Մ. Արքեպիսկոպոս Օրմանեան

(Հայկ. ՍՍՌ Մատ. Արխիվային բաժին, քղբ. № 95, վավ. № 2):

31 մարտի 1915 թ.
Նոր-Նախիջևան

ՍԻՐԵԼԻ ԳԱՐՆԳԻՆ.


Իմացայ, որ քեզ առաջարկում են ձեմարանի տեսչութիւնը. ինձ քսում է, քէ անպայման պիտի առնես, եթէ առողջութիւնդ ներում է աշխատել: Էջմիածնի կարիքները մենք անլի մօտ ենք ըմբռնում, քան որքէն այն պատրաստութիւն ունեցող աշխարհական: Այլ հարց էր, եթէ ունենայիք ըստ ամենայնի պատրաստի պրոֆեսօրներ, որոնք, յիրաւի, ձեմարանը ընդունակ լինէին դարձնելու բարձրագոյն դպրոց:
Եթէ յանձն առնես, շնոհանա երկու քան,

Ֆակուպտեաներ դարձնել՝ փակելով դպրոցական բաժինը, և երկրորդ՝ նորա իրական գոյութեան խնդիրը: Դժբախտութիւն է, որ մենք պատրաստի ուսուցիչներ չունենք և առանց օտար ուժերի անկարող ենք կառավարուել:

Առանց տեսնելու հեռանալու պատճառով եմ ուղարկած գրքերդ էին, և այն լուրը, որ դու այդ օրը գնացած ես եղել Երևան: Գրքերիդ համար շնորհակալութիւն, իսկ շտեմուելու համար ներողութիւն:

Քն Գէորգ վարդապետ

(Հայկ. ՍՍՍՒ Մատ. Արխիվային բաժին, թղթ. № 95, վավ. № 452):



Օրմանյան Սրբազանի Գարեգին Մարկավագին ուղարկած համակի առաջին էջը



ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Քրիստոս յարեալ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն խոյով մեզ զկեանս պարզեաց: նմա փառք յաիտեանս, ամէն:

(ԺԱՄԱԳԻՐԲ)

«Քրիստոս յարեալ ի մեռելոց...» այսպես է ավետում Հայաստանյայց Ս. Եկեղեցին Քրիստոսի հրաշափառ հարությունը Ավագ շաբաթի ճրագայուլցի Ս. Պատարագին, Մեծի Պահոց ապաշխարութեան օրերից հետո հավատացյալ հայ ժողովրդին, որի անդամները ճշմարիտ հոգեկան բերկրանքով լցված, հրնթացս քառասուն օրվա, մինչև Հիսուսի համբարձումը, միմյանց հանդիպելիս նույն ավետիքն անդադար կրկնում են ու իրար հաղորդում: Հարության գաղափարն այնքան է զողված հավատացյալ հայ ժողովրդի սրտի, խղճի, խորը զգացմունքի ու մտքի հետ, որ քրիստոնեական վարդապետութեան այս վսեմ ու բազմախորհուրդ տոնը միշտ լցրել է նրա հոգին և համակել հոգեկան ամենաբարձր ապրումներով: Քրիստոսի հարության պայծառ գաղափարը աննպաստ լուսո փարոսս, առաջնորդող ստող է եղել նրա համար իր բազմադարյան արհավիրաց պատմության ընթացքում: Եվ նշյալս շփարփի նա այս վեհ գաղափարին, որն անմիջապես կապված է մեր Տիրոջ սուրբելություն, ամբողջ գործունեության և յոյր քարոզությունների հետ:

Ի՞նչ էր Հիսուսի անցրած եռամյա երկրափոր գործունեության բովանդակությունը կսած Բեթղեհեմի համեստ մտուրից, մինչև Բողոքոթայի կառավարանը:

Մովեց Բեթղեհեմի այրի անշուք մտունում՝ հովիվների անզարդ բնակարանում, նմեղ ոչխարների կացարանում, սրանով երազույն խոնարհություն օրինակ տալով ժամանակվա ամբարտապան ու մեղկ շխողներին, որոնք բացի նյութական, արմատական վախելքներից, հոգեկան բարձր մի ապրում չունեին:

Մեծացավ մարմնավոր ծնողների անմիտական հսկողության տակ, միշտ մնալով

նրանց հնազանդ ու կամակատար և հոգով ու մարմնով զարգանալով Աստծու և մարդկանց կողմից՝ անձամբ օրինակ տարով Աստծու շնորհած երկրավոր կյանքը բովանդակայից ու բեղմնավոր անցկացնելու, օգտվելով այն ժամանակվա հրա ժողովրդի ձեռք բերած մտավոր ու հոգևոր պաշարից, ի հակադրություն հասարակության ծուրաբարո և քարացած կետի վրա կանգ առած խավերի— փարիսեցիներին ու դպիրներին:

Ուռճացած երեսնամյա կյանքում՝ ձեռք բերած հոգևոր ու մարմնավոր գիտելիքներով, ամբարած կյանքի փորձը և աշխարհի ծանոթությունը, հավատարիմ մնալով այն ժամանակվա ընդունված սովորությունը, քնաց Հովհաննես Մկրտչի մոտ Հորքանան գետում մկրտվելու և այս ծեսից հետո իր քարոզությունն սկսելու, ինչպես շարականն է ասում. «Ե՛րու, Աստուած, ի յերկրի երևեցար եւ ընդ մարդկան շրջեցար»:

Եվ սկսեց շրջել մարդկանց մեջ ու Աստծու ավետարանը քարոզել. «Հոգի տեսան ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ դիս, աւետարանեց աղքատաց առաքեաց դիս, բժշկել զբեկեալս սրտիւ...» (Ղուկ., Դ, 18): Եվ ամբողջ երեք տարի իր կոյման բովանդակությունն այս սրտով բեկյալներն էին կազմում, բառիս ամենալայն իմաստով վերցրած, հոգով ու մարմնով աղքատները, կյանքից ծեծվածները, զրկվածները, մխիթարության, սփոփանքի կարիք ունեցողները, նոր մտքի, նոր խոսքի, սրտի՝ խոսքի տենչ ունեցողները:

Իր գործունեությունն ավելի մեծ ժավալով առաջ տանելու համար, Հիսուսն իր համար երկոտասան աշակերտներ-առաքյալներ ընտրեց, պատրաստեց, որոնք նրան ամենուրեք ուղեկցում էին և իրենց Տիրոջի գործնականապես սովորում ժողովրդին քարոզելու արվեստը:

Իր քարոզի ամենազվեամբ նյութը սիրովարդապետութիւնը դարձրեց. մարդիկ ապրում էին շահած ու ձևած օրենքներով, սահմանված կանոններով, արտաքին անբովանդակ ծեսերով և... իրենց արդար համարում, Աստուծոն հաճելի, բայց զուրկ աշխարհի ամենանվիրական զգացմունքից՝ սիրուց: Ահա այդ համապարփակ սերն էր կազմում մեր Տիրոջ քարոզութեան ուղին ու ծուծը: Մարդը մարդ է սիրով. մարդը գազան է առանց սիրո. մերկացրո՛ւ մարդուց սերն ու գուժը, և նա կդառնա մի պղնձե ծնծղա, որ դողանջում է: Ըստ նմանութեան ու ըստ պատկերի Աստուծու ստեղծված մարդը պետք է սիրող լինի, «զի Աստուած սէր է», այսպե՛ս է քարոզել մեր Տերը:

Նրա ամբողջ գործունեությունը սիրով է ոգեշնչված. յինի այդ գործունեությունը Գալիլիայում, թե՛ Հրեաստանում, լեռան վրա, թե՛ Տիբերական ծովի ափին, Բեթանիայում, թե՛ Նրուսաղեմում, ժողովրդի մեջ, թե՛ իր աշակերտների նեղ շրջանում, մաքսավորների, թե՛ փարիսեցիների մեջ, հեթանոսների, թե՛ ընտրյալ բուն հրա ժողովրդի մեջ, Զիթենյաց լեռան վրա, թե՛ Գեթսեմանի պարտեզում և վերջապես, Պոնտացի Պիլատոսի առաջ, թե՛ Գողգոթայի ճանապարհին, միևնույն է, ամենուրեք մարդն է նրա քարոզի բուն առարկան, մարդն է նրան հետաքրքրում, իր բարոյական ու հոգևոր կողմերով, և նրան հղկելու, բարձրացնելու, աստվածային շնորհներին արժանի անելու բուն տենչը: Այս գթասիրտ, աստվածային վարդապետությունը հասկացնելու համար, բացի իր անձնուրաց կենդանի օրինակից, նա հաճախ առակներով է խոսում ժողովրդի հետ, բնութագրելից, անմիջական առօրյա կյանքից վերցրած օրինակներով է բացատրում իր վե՛հ մտքերը, որոնք իրենց նորութեամբ հանդերձ շատերի համար, որոնք տհաս էին ու անգետ, գայթակղության աղբյուր էին ծառայում: Այսպես, օրինակ, դատապարտելով շահույթի, նյութական հարստության հետևից՝ ընկնելը, նա ասում է. «Մի՛ գանձէք ձեզ գանձս յերկրի, ուր ցեց և ուտի՛ճ ապականեն, և ուր գողք ական հատանեն և գողանան: Այլ գանձեցէ՛ք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ ցեց և ոչ ուտի՛ճ ապականեն, և ոչ գողք ական հատանեն և գողանան: Զի ուր գանձք ձեր են, անդ և սիրտք ձեր եղիցին» (Մատթ., Զ, 19—20): Մի այլ օրինակ. երբ երիտասարդ հարուստ մի մարդ մոտենում է նրան ու հարցնում, թե՛ ինքն ի՛նչ պիտի անի, որ հավիտենական կյանքին արժանանա, Հիսուսը նրան հիշեցնում է թե՛ բարին մի հատ է՝ պետք է պահես տասնաքանյա բոլոր պատվիրաննե-

րը և սիրես ընկերոջդ անձիդ պես. հարցնողը պատասխանում է, թե՛ մանկությունից այդ բոլորն արել է, էլ ի՛նչն է պակաս: Հիսուսը նրան ասում է. «Եթե կամիս կատարեալ լինել, ե՛րթ, վաճառեա՛ զինչս քո և տո՛ւր աղքատաց, և ունիցիս գանձս յերկինս և ե՛կ զինի իմ: Իբրևս սուա պատանին զբանն, գնաց տրտմեալ, զի ունէր ստացուածս. բազումս» (Մատթ., ԺԹ, 21—22): Ահա այս դեպքն առիթ ծառայեց Քրիստոսի համար այն նշանավոր դարձվածքն ասելու, որը հետո համաշխարհային հոշակ ստացալ, թե՛ ուղտն ավելի հեշտ կանցնի ասելի ծակով, քան մեծատունն արքայություն կմտնի:

Աշխարհը լի է հոգսերով. մարդիկ այդ հոգսերն իրենց համար նպատակ են դարձրել: Լեռան քարոզում Հիսուսը գեղեցիկ օրինակներով հասկացնում է, որ մարդս շալիտի ամբողջովին կլանվի այդ հոգսերով, դրանք մարդուն չափազանց նյութապաշտ, եսասեր են դարձնում, այլևս տեղ և ժամանակ չի մնում հոգևոր, բարոյական կյանքով ապրելու, Երկնքի թռչուններին օրինակ բերելով, նա ասում է չափավորել տենչիդ՝ հետևից ընկնելու հոգսը. վայրի շուշանին օրինակ բերելով, նույնն է ասում հագուստի տեղենի հոգսի մասին: Վերջը պատմիրում է. «Ենդրեցէ՛ք նախ զարքայութիւնն Աստուծոյ և զարդարութիւնն նորա, և այդ ամենախնայաւեցի ձեզ» (Մատթ., Զ, 33): Մի այլ տեղ ասում է. «Զի՛նչ օգտիցի մարդ, եթէ՛ զաշխարհս ամենայն շահեսցի և զանձնձեռն իւր տուժեսցի» (Մատթ., ԺԶ, 26): Նույնը իսկ իր բարեկամ քնտանիքում, Ղազարոսի մեջ և նրա երկու քույրերի՝ Մարիամի և Մարթայի նեղ շրջանում հաճախ լինելով, Հիսուսը նկատում է, որ Մարթան շատ է զբաղվածու լինում քնտանեկան մանրիկ հոգսերով և ժամանակ չի գտնում ներկա յինեյ իր քարոզություններին և Աստուծու խոսքը լսել, ինչպես անում է իր քույր Մարիամը: Հիսուսը նրան էլ է հորդորում տնտեսական հոգսերով չափավորել և որոշ ժամանակ աստվածային խոհերով զբաղվել:

Իր եռամյա գործունեության ընթացքում ժողովրդի, հասարակ ժողովրդի՝ բոլոր տառապալայների, հիվանդների, ախտաժետնների, ճնշվածների ու հարստահարվածների համակրանքն իր կողմն ունենալով, Հիսուսն իր համարձակ քարոզություններից ժամանակ ընականաբար ընդհարվում է այն ժամանակվա տիրող դասերի մարդկանց քահանայապետների, փարիսեցիների, ծերերի վրա՝ զպիտանելի հետ, որոնց աղաղակող պակասությունները Հիսուսը միշտ նրանց երեսողութեամբ է տալիս եղել՝ նրանց կեղծավորությունը:

ընթացողությունը, գոտոգամտությունը և այլն. բայց հակառակորդները դեմ հանդիման ուլինչ չէին կարողանում անել, վախենալով ժողովրդից, որը Հիսուսին մեծ մարգարեի տեղ էր ընդունում:

Երբ Զատիկ տոնին Հիսուսն իր աշակերտների հետ Երուսաղեմ եկավ, առավել ևս սուր ընդհանրումներ տեղի ունեցան նրա և իր հակառակորդների միջև: Այն սարսափելի հանդիմանություններ, որոնք «Վա՛յ ձեզ դպրաց եւ փարիսեցոց կեղծաւորաց»ի ձևով կարողաց Հիսուսը նրանց, թշնամիներին առիթ տվին որոգայթ լարել նրան դեմ և ջանալ մեջտեղից բառնալ նրան: Կաշառելով Հիսուսի աշակերտներից մեկին՝ Հուդա Իսկարիոտացուն, նրանք պատրաստություն տեսան Հիսուսին ձերբակալելու:

Իր երկրավոր կյանքի վերջին երեկուն Հիսուսն անցկացրեց իր աշակերտներին հետ վերնատանը՝ Զատիկ տոնն ակնուղև կատարելու: Նախ քան ընթրիքը, դարձյալ ծաշրագուն խոնարհության մի օրինակ ևս տվեց Հիսուսն իր աշակերտներին, նրանց ոտները լվանալով, որից հետո բազմերով սեղանի շուրջն իր աշակերտների հետ միասին, առաջինը կատարեց ու սահմանեց հաղորդություն՝ ահաղ խորհուրդը, ուներով անխմոր բաղարջ հաց և ըմպելով անապական գինի, նույնը և հորդորելով անել աշակերտներին: Ծաշակելուց և ըմպելուց հետո, պատվիրեց իր հիշատակի համար այդ խորհուրդը պահել, որը և մեր Եկեղեցին մինչև այժմ անաղարտությամբ ու երկյուղածությամբ պահում է:

Այս խորհրդավոր ընթրիքին Հիսուսն իր վերջին խրատներն էր կարդում իր աշակերտներին, խրատներ, որոնք գլխավորապես դարձյալ սիրո շուրջն են պտտում. «Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրիցէք զմիմեանս, որպէս սիրեցի ես զձեզ, զի եւ դուք սիրեսցիք զմիմեանս: Յայսմ գիտասցեն ամենեքեան, եթէ իմ աշակերտք էք, եթէ՛ սիրիցէք զմիմեանս» (Հովհ., ԺԳ, 34—35): Կամ «Մեծ եւս քան զայս սէր սչ ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ ի վերայ բարեկամաց իւրոց» (Հովհ., ԺԵ, 13):

Խորհրդավոր ընթրիքը վերջացավ. Հիսուսն իր աշակերտների հետ մտավ Գեթսեմանի պարտեզը, որտեղ և ձերբակալվեց: Այսքանը միայն Հիսուսը կարողացավ ասել. «Երբեւ ի վերայ աւագակի՞ ելէք սուսերօք եւ բքօք: Հանապազ ընդ ձեզ էի ի տաճարին եւ ոչ ձգեցիք ձեռս յիս. այլ այս է ձեր ժամ եւ իշխանություն խաւարի» (Հովհ., ԻԲ, 52—53): Հիսուսին տարան դատելու. դատողներն իշխանավորներ էին, որոնց համար շատ հեշտ էր մի արդարի մեղապարտ

զուրս բերել: Լուս էր Հիսուսը հրեից քահանայապետի, ծերերի ու դպիրների, ինչպես և Հրեաստանի կառավարի Պոնտացի Պիղատոսի առաջ, հանգիստ էր հոգով, անդորր՝ խղճով, քարոզեց աշխարհին, իր առաքելությունը կատարեց և, ինչպես ինքն է ասում, «Ելի ի Հօրէ եւ եկի յաշխարհ, դարձեալ թողում զաշխարհ եւ երթամ առ Հայր» (Հովհ., ԺԶ, 28):

Մյուս օրը տարան նրան կառափնարան, Գողգոթայի բարձունքը. հետևից ահագին բազմություն էր գնում, որի մեջ և լաց ու կոծ անող կանաչք: Վերջին անգամ դիմելով սրանց, Հիսուսն իր մարգարեական անգին խոսքերն ասաց. «Դստե՛րք Երուսաղեմի, մի՛ յայք ի վերայ իմ, այլ յացէք ի վերայ անձանց եւ ի վերայ որդւոց ձերոց... զի եթէ ընդ փայտ դալար դայս առնեն, ընդ շորն զի՛նչ լինիցի» (Հովհ., ԻԳ, 28—31): Մերկացրին, խաչ հանեցին և նրա երկրավոր կյանքին վերջ դրին:

Բայց... անգոր եղան հակառակորդների ճիղերը. նա, մեր Փրկիչը, չմեռավ, այլ երրորդ օրը հարություն առավ, ի մեծ նախատինս իր թշնամիների, և ի՛նչպես կարող էր նա մեռնել, մարդկության այդ մեծ բարեարք, սիրո մեծ վարդապետը, գթառասուկուսցիչը, վեհ ճշմարտությունների քարոզիչը: Նրա աշակերտները, հետ հարության, նրա Հոգեգալստից հետո, ժողովրդին քարոզելով նրա հարության մասին, ասում էին. «Զի Աստուած յարոյց, լուծեալ զերկունս մահու, քանզի ոչ էր հնար ըմբռնել նմա ի նմանէ» (Գործք Առ., Բ, 24), կամ՝ «... Զայս Հիսուս յարոյց Աստուած, որում ամենեքին մեք վկայ եմք» (Գործք Առ., Բ, 33):

Հարության այդ մեծ զաղափարը ոգեշնչեց Հիսուսի աշակերտներին՝ առաքյալներին, որոնք աշխարհն աշխարհ ընկնելով, քարոզեցին իրենց մեծ Վարդապետի մարդասեր ուսմունքը և առանց զենքի, զուրկ խոսքի զուրությամբ ու խորին համոզմունքով այն տարածեցին աշխարհի մեծ մասում, իրենք էլ իրենց Տիրոջ նման զոհվելով նրա ուսմունքին:

Հավատացյալ հայ ժողովուրդը աշխարհի ամենաառաջին ժողովուրդներից մեկն է, որ ազգովին շատ կանուխ ընդունեց քրիստոնեական վեհ կրոնը, անաղարտ պահեց այն իր նախնական պարզությամբ և նրա հուժկու զորությամբ յցված, հասավ մինչև մեր լուսավոր օրերը: Եվ պաշտելով Հիսուս Քրիստոսին, հրձվելով նրա հրաշափառ հարությունամբ, ջերմեռանդ սրտով և ուղիղ հավատով, նրա յուրաքանչյուր անգամը, ողջագուրելով մյուսին, ասում է. «Զեզ և մեզ մեծ անտիս, Քրիստոս յարեալ ի մեռելոց»:



Հ Ի Ծ Ո Ղ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՐԱՆՏ ՀՐԱՀԱՆ

Կ Ո Մ Ի Տ Ա Ս Ի

3. ԿՈՄԻՏԱՍՆ ԻՐ ԾՆՆԴԱՎԱՅՐՈՒՄ



Կոմիտասը էջմիածին ճամբորդելուց հետո, երեք անգամ այցելել է իր հայրենի քաղաքը: Նա, իր ծննդավայրում եղած ժամանակ, հայրենակիցներին միշտ խորհուրդ է տվել՝ շանալ ուժ տալու հայրենի լեզվին դպրոցներում և ընտանիքներում:

Շատ հաճելի ու սրտագրավ հիշատակներ ունի Կոմիտասի առաջին աշակերտուհիներին մեկը և ազգականը՝ տիկին Զարուհի Սիմիթյանը, որ այժմ իր գեղարվեստասեր զավակների հետ Ֆրանսիայի Մարսիլիա քաղաքում է ապրում: Նրանք քսան տարի է ինչ ղեկավարում են «Արմենիա» երգչախումբը, օտարներին ծանոթացնելով Կոմիտասի ու հայ ժողովրդական երգերի հետ: Տիկին Սիմիթյանը ազգայինների նկատմամբ սրտացավություն ցուցաբերող հազվագյուտ այն հայուհիներից է, որը համաշխարհային առաջին պատերազմի ծանր տարիներին օգնեց ու պատսպարեց Քյոթահիա քաղաքում ապաստան դոած տարագիրներից շատերին:

Ահավասիկ բարեգործ այս տիկինը, մեզ ուշարկած 1949 թվի ապրիլի 20-ի նամակով, պատմում է իր մեծանուն ուսուցչի և ազգականի կյանքի հետաքրքիր մի քանի դրվագները, որոնք անհրաժեշտ ենք համարում բեռնի ստորև:

«...Սողոմոնը ինձմե տասներհինգ տարով մեծ էր, երբ առաջին անգամ այցելեց մեր քաղաքը 1893 հոկտեմբերին և սկսավ ինձ և քույրերուս երգի դաս տալ: Մենք ազգական էինք անոր հետ իմ հոր՝ Տեր-Արթիսյաններու կողմից: Ես շատ ուրախ էի այն ատեն, որ նոր Կոմիտասի վերածված (1893 սեպտ. 11-ին Երիմյան կաթողիկոսը նրան արեղա ձեռնադրելով Կոմիտաս կոչեց) և այնքան գեղեցիկ ձայն ու շնորհք ունեցող ազգականի մը աշակերտուհին եմ: Ան այնքան ուշադիր և հոգածու էր մեզ հանդեպ՝ որ կարելի չէ պատկերացնել, մանավանդ այնքան բարի էր, անկեղծ և հայրենասեր: Ես երբեք չէի երևակայած, որ օր մը մեր փոքրիկ քաղաքի եր-

բմնի այս որբ պատանին, ոչ թե միայն իր ծննդավայրին, այլ ամբողջ հայ ժողովրդի պարծանքը պիտի ըլլար և պիտի հիացներ աշխարհն իր տաղանդովը:

Ես այսօր՝ իմ ծերության տարիներուն, շափազանց հպարտ եմ, որ անոր հայրենակից աղգականն եմ: Ես սիրով և շնորհակալությամբ կհիշեմ անոր կյանքի մի քանի դրվագները, որոնք մեր անմահ վարդապետի բնավորության ու նկարագրի հատկանշական գծերը կկազմեն:

Անգամ մը, Քյոթահիա գալուն, մեր Զակոյան Մարիենց տունը ճաշի հրավիրվեցավ: Այնտեղ կատակեց ան, երգեց, խոսեցավ և շատ մեծ ախորժակով ճաշեց, բայց ոչ ծխեց և ոչ ալ ըմպելի խմեց: Ու երբ պնդեցին, ան նեղված պատասխանեց.

— Մի՛ կարծեք, սիրելիներ՛ս, որ ես չեմ ծխեր ու չեմ խմեր եկեղեցական ըլլալուս համար. ո՛չ. պարզապես խմիչքն ու ծխախտը իմ ձայնիս թշնամին են: Իսկ իմ ձայնս ինձ հարկավոր է ավելի կարևոր նպատակներու համար:

Երբ կես գիշերին ննջասնյակ առաջնորդելով ներկայացուցին իր պանկելիք փափուկ և բարձր անկողինը, ան սկսավ ծիծաղել:

— Շո՛ւտ վերցուցեք այս փափուկ բաները, ասոնք ինձ համար չեն. միայն երկու սավան փոսեցեք, բավական է:

Ու քնացավ սետիրին վրա:

Իր կատակասիրությունը երբեմն շափազանց աստիճանի կհասներ: Կոմիտաս Զամրջայի մայրիներու անտառը շատ կսիրեր, ու նկարիչ Փանոս Թերլեմեզյանի հետ այնտեղ միշտ վրան կսարքեր, իր սիրած մեկ ծառին տակ...

Ինձ համար իրական սուրբ էր Կոմիտասը. աշխատասեր, համբերատար, մարդասեր, անձնվեր և միայն ժողովրդի շահերը մտածողը:

Տիկին Սիմիթյանի հիշատակած Զամրջայի եղևնիների անտառը ուխտատեղի էր ո՛չ միայն Քյոթահիացիների, այլ նաև 1915-ի շարդերին այնտեղ ապաստան գտած հազարավոր տարագիր հայերի համար:

Ես 1917 թվի ամռանը պատահույթով եմ

1) Սկիզբը նախորդ համարում:

սնեցել իմ տարագիր ընկերների հետ այցելել Քյոթահիայի Զամլըջայի բարձունքները և տեսնելու նվիրական եղևին, որի վրա Վարպետի ձեռքով քանդակված «ԿՈՄԻՏԱՍ»-ը տարիների ընթացքին մեծացել էր և ամեն

և ջերմեռանդ զգացումով հպում էր քանդակին, ուզելով կարծես հաղորդակից լինել անմահ Վարպետի հիշատակելի գործին և սրբազան անունին։
Բայց Կոմիտասի բովանդակ կյանքումը



ԿՈՄԻՏԱՍԸ 1913 թ.

մի գրի տակ եղևնի յուշոտ հյուսիս կանթեղի նման երկարել էր դեպի վար՝ ծառի բունը։ Արդեն այդ թվականին լսել էինք Կոմիտասի ենթարկված դժբախտությունը, և ավելի քան նվիրական էր թվում մեզ այս տխուր քանդակը, որ կարծես անդարձ մեկնող սիրելու հիշատակարանի վրա փորագրված մահերգի էր նմանում։ Ու ամեն այցելու անխոս և հուզված խոնարհվում էր այս անվան առաջ

պատահած դեպքերի մեջ չէ հիշատակված սրտաշարժ և հուզիչ մի դեպք՝ նրա առաջին վերադարձը էջմիածնից դեպի ծննդավայրը և երկար տարիների պանդխտությունից հետո իր մուտքը հայրենի կիսավեր տնակը և ազգային դպրոցի սրահը։

Տարիների բացակայությունից հետո, Կոմիտասը երբ փառքով և հաղթանակով վերադառնում է Քյոթահիա, պատիվներով ու

հարգանքով շրջապատված իր հայրենակիցներին, որոնք տեսել էին իր անբախտ մանկությունը և որբի տառապանքը փողոցներում թափառական միճակի մեջ, հուզված փափագ է հայտնել այցելել նախ իր հայրենի տունը: Ականատեսները պատմում են՝ թե այդ հանդիպումը այնքա՛ն սրտաճմլիկ ու ցնցող է եղել, որ ներկաները շեն կարողացել զսպել իրենց արցունքները:

Կոմիտասը ողջագուրվում է իր հարազատների հետ՝ ազգական, հորեղբորորդի և ապա մտնում իր հորենական սենյակը ու սկսում նախ լուռ և գլխիկոր շոշափել ու փայփայել պատերն ու լուսամուտները, և հետո մատերի մեջ գտրգտրանքով սեղմել այն փոքրիկ գամը, որից իր սիրաառն մոր կենդանագիրն է կախված եղել տասնհինգ տարի առաջ: Ու անկարող այլևս զսպել իր պոռթկացող հուզումը, բարձրաձայն հեկեկում է:

Կոմիտասը այդ փայտաշեն ու կիսափուլ սենյակի մեջ է ծնվել. այնտեղ են հաջորդաբար մահացել իր նորատի բանաստեղծ մայրն ու երգիչ դժբախտ հայրը:

Դուրս գալով հայրենի տնից, Կոմիտասը հուզված գնում է դեպի վարի թաղի Ազգային Ս. Էջմիածնի անվան դպրոցը, ուր ինքը շորս տարի աշակերտել էր: Սրահ մտնելիս, նա բնագրական մղումով, վազում է դեպի ձախ անկյունը և ծալապատիկ նստում փոշոտ ու

կեղտոտ տախտակամածի վրա, մճռականապես մերժելով խուճապահար թաղականների խնդրանքը՝ թիկնաթոռի վրա նստելու...

Տխուր, բայց անողոք շեշտով նա պատասխանում է.

— Տարիներ առաջ ոչ ոք չգուրգուրաց իմ վրա՝ երբ ես նստում էի ճիշտ այստեղ առանց բազմոցի, մինչ ուրիշներ զույգ բազմոցների վրա էին նստում: Ես երկու անգամ ծանր հիվանդացել եմ այստեղ: Այժմ թույլ տվեք ինձ, իմ հոժադ կամքով, նստել ու հիշել իմ անցյալ դժբախտ օրերը և այս շոր տախտակները...¹⁾

Արդարև, նա երբեք փափուկ անկողնի վրա չէ պառկել, իր հայրենի բնակարանից սկսած մինչև Էջմիածին, Բեռլին, Փարիզ ու Պոլիս՝ ուր իր Բանկալթիի տան մահճակալը ծանոթ էր ամենին: Բայց այդ շարքաշ ու կարծրացած մարմնի մեջ բնակվող սիրտը շափազանց զգայուն էր ու փափուկ:

Կոմիտասի ծննդավայրում, ուր շորս տարի իբր տարագիր պարեցի, հիշատակելի վայրեր մնացին ինձ Կոմիտասի խարխուլ տնակը, ուր քանիցս այցելեցի, Ջամլըջայի անտառը, «Կոմիտաս» քանդակը, և Ագ՝Սուկոչված ստան ու զուլալ ափնաղբյուրը, որի բխած լիտան ստորոտում մի վիթխարի քարաժայռի վրա Կոմիտասը երգել էր «Հո՛ւ՛մ արե՞ք, սարե՛ր ջան՞ք»:

4. ԿՈՄԻՏԱՍԸ ՏԱՌԱՊԱՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Հայ ժողովրդի ահավոր ողբերգության շարաշուք թվականն էր 1915-ի ապրիլի 11—24-ը: Պատմությունը այդպիսի զարհուրելի թվական էր արձանագրած դեռ հայ ժողովրդի համար:

Վեց հարյուր տարվա ընթացքում, ծանր պայմանների մեջ, իր ազգային դիմագիծը պահպանող ստեղծագործ հայ ժողովրդի մի զգալի հատվածը բռնի քշվեց իր հայրենի տնից դեպի Միջագետքի անապատները, անհնարին տանջանքների մեջ, ջարդի, համաճարակի ու քաղցի հետևանքով զոհ տալով իր հարյուր հազարավոր զավակներին:

Տաճիկ կառավարությունը առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում (1914) որոշեց բնաջնջել Արևմտյան Հայաստանի մոտ երկու միլիոն աշխատասեր ու կենսունակ հայ ժողովուրդը: Այդ դիվային ծրագրի գործադրության նախերգանքն սկսում էր ապրիլի 11—24-ին՝ Պոլսի հայ մտավորականության անակնկալ ձերբակալումով:

1915 ապրիլ 24-ի շաբաթ կես գիշերից մինչև կիրակի առավոտ, ամենավայրագ կերպով ձերբակալվեցին երկու հարյուր հիսուս մտավորականներ և ուղարկվեցին դեպի Այաշ ու Ջանգրը, անժանոթ ուղու-

թյամբ: Ներքին գործոց նախարարի՝ ոճրագործ Թալիադ փաշայի և իր համատեսներին հրեշային մտահղացումն էր այդ անջատել նախ հայ ժողովրդի մտավորական ընտրանին և ապա ջարդով ու բռնազաղթով ոչնչացնել հայությունը:

Հայ մտավորականների այդ դժբախտ կարավանի մեջ գտնվող առաջին ձերբակալյալը հայ ժողովրդի հանճարեղ զավակ Կոմիտասն էր:

Աքսորական հայ մտավորականները, առաջին իսկ օրից, նախազգացել էին իրենց եղբրական վախճանը: Նրանց պարագլուխները՝ Վարուժանը և մյուսները դեռ Պոլսի բանտից, իրենց գուրգուրանքի՝ և հոգածության առարկա էին դարձրել Կոմիտասին, ամեն կերպ աշխատելով ապահովել նրա հանգստությունը:

Ամիսներ տևող այդ տառապանքի ընթացքում Կոմիտասը ֆիզիկական և հոգեկան

1) Այս տեղեկությունը հաղորդել է մեզ Կոմիտասի հասակակից քրոթահոացի Սահակ Երեմյանը, որ այժմ ապրում է Երևանի Նոր Բյուրճանիա թաղամասի 6-րդ փողոցում: Նա անցյալ տարի ներգաղթել է Հունաստանից:

երեք անավոր ցնցումներ է ունեցել: Եվ այդ ցնցումները բավական էին խանգարելու Կոմիտասի նման զգայուն մի մարդու իմացական հավասարակշռությունը, որը երաժշտությունից և արվեստից դուրս ուրիշ աշխարհ չէր ճանաչել:

Կոմիտասի առաջին ցնցումը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ նա երգեցողություն միջոցով, իրենց սպառնացող վտանգը իր ընկերներին հասկացնել փորձելիս, մի հրեշ ոստիկան, անակնկալ կերպով, Տրա հետևից խոյացել և ծոժրակին բռունցքի մի սոսկալի հարված է իջեցրել, որի հանկարծական թափից և ուժգնությունից Կոմիտասը շարժել, մնացել է:

Այդ վայրագ հարվածը նա չի մոռացել նույն իսկ իր մեկազճոտության քտան երկար տարիների ընթացքին՝ Փարիզի «Վիլ ժյուլի» հիվանդանոցում և հիշել է այն:

Մյուս ցնցումները ֆիզիկական ցայլ չէին պատճառել նրան, բայց հոգեկան աշնպիսի խորունկ ալեկոծության էին ենթարկել, որ նա կարելի է ասել, այդ ցնցումների ծանրությունը տակ կգեղ ու ջախջախվել էր վերջնականապես:

Այսպես, հազարավոր դիակների և մահամերձների միջից կարավանն անցնելիս, նա ակնատես է լինում Գոնիայի մոտ մի սըրտաճմիկ տեսարանի, որին պիտի չկարողանար դիմանալ քուցե նույնիսկ ամենից պաղարյուն և անտարբեր սիրտն իսկ: Կոմիտասը սարսափով տեսնում է, թե ինչպիսի՜ վայրագություն մի ոստիկան, սվինի մի հարվածով ձեռքում է փոքր երկունքի ցավերի մեջ տեսնալով մի դեռատի հայուհու, որի նորածին երեխայի առաջին ճիշդ խնդրվում է հրեշի հարվածի տակ: Կոմիտասը մոր ու երեխայի այդ զեհենային տանջանքն ու սըրտակեղեք մահը տեսնելով, մի րոպե արձանացած մնում է գոճատ և այլայլված...

Երբորըը՝ պատահում է Ջանգըրըլի ճանապարհին, Թավլիի հանգրվանում, ուր հասնում են հայ մտավորականները հետիոտն ճամբորդությունից հետո, հոգնած, ուժասպառ ու ծարավի: Ամենքը փոշիների մեջ թաթախված, քաղցած ու ոտից-գլուխ կեղտոտած, մի խանի մեջ հանգստանում են: Մի քանի ընկերներ գնում են դուլլով ջուր ձարելու, որ իրենց ծարավը հագեցնեն: Կոմիտասը այդ պահին խանից դուրս ելնելով, տեսնում է ջուրը և սկսում ձեռները շփել, ինչ որ Տրա սովորությունն էր բոլոր ուրախառիթ պարագաներին: Բաժակի ղզոյությունը ստիպում է նրանց ուղղակի դուլլով խմել: Վարուժանն ու Սիամանթոն առաջին անգամ դուլլը բերում են Վարպետին, ու երկու

հոգի խնամքով այնպես են բռնում դուլլը նրա շրթունքների առաջ, որ նա կարողանա հանգստությամբ խմել և ծարավն հագեցնել: Բայց հազիվ նա շրթունքները դուլլին մոտեցրած, մի հրեշ ոստիկան զինվոր գալիս է շտապ, և դուլլը ուժով քաշելով դեն է շարժում և ջուրը գետին թափում: Կոմիտասը այլայլված, անմիջապես, թև գլխին շուրջ տանելով, ծածկում է դեմքը և անշարժ մնում այնպես, մինչ թրջված դեմքից և միտոքից ջուրը կաթիլ կաթիլ թափվում է նրա փեշերի վրա:

Վարուժանն ու Սիամանթոն ծայր աստիճան հուզվում են: Անկարող լինելով ոստիկանին պատժելու, նրանք իսկույն հանում են իրենց թաշկինակները ու սրբում սարսափից անշարժ գամված Վարպետի դեմքն ու միտոքը: Վերջապես, թևը գլխիցը վար առնելով, դանդաղորեն և մարած նայվածքով, նորից խան է մտնում Կոմիտասը, մեղրամոմի նման դեղնած: Այդ պահին բոխիկ թորգոմյանն է գալիս, իմանալով թե ի՞նչ է պատահել, որ Կոմիտասը չի խոսում, ինչու՞ նրա այնքան վառ ու կենդանի աչքերը այժմ մարած են այսպես: Նրա դեմքի հանկարծական փոփոխությունը և մեռելական կերպարանքը մեծ հուզում և խուճապ է առաջացնում մտավորականների ամբողջ կարավանի մեջ: Ամենքը սիրում և հարգում են նրան: Նրանք հավաքաբար քանիցս դիմում են կատարում ու խնդրում՝ որ ազատ արձակեն այս անմեղ մարդուն, որը միայն երաժշտությունը, երգը ու դաշնամուրն է ճանաչել: Բայց՝ իզուր...

Մի ժամից հետո Կոմիտասը կրկին դուրս է գալիս խանից և միանում իր ընկերներին, որոնք այս անգամ նոր ջուր են դտած լինում և իսկույն մի բաժակ ձարելով բերում Կոմիտասին: Բայց նա մի դառն ժպիտ դեմքին, շարժում է գլուխը դանդաղորեն և մերժում խմել: Ու սկսում է շրթունքների արանքից ինչ որ բռեքր ասել, բորբոքովին անհասկանալի: Գիշերը շատ անհանգիստ է անցկացնում:

Հետևյալ առավոտ, ըստ հրամանի, կարավանը ճանապարհ է ընկնում դեպի Ջանգըրը՝ հայ մտավորականների անավոր գերեզմանը:

Կարավանն անցնում է ձորերի միջից, արևի տակ, քաղցած ու հոգնած: Ընկերների գուրգուրանքի միշտ առարկա դարձած Կոմիտասը, ինքնիրեն խոսում է, բայց ոչ ոք բան չի հասկանում նրա անկապ խոսքերից:

Մի բլրի դառիթափին, կարավանի կողքից, այդ պահին անցնում է մի քոսոտ էջ: Կոմիտասն անմիջապես հանգրիճում է վերարկուի ծալքերը փոքրի վրա, աչ ձեռքով

բարև է բռնում և ձախ՝ ձեռքով խոնարհու-
թյան նման մի նշանով թեքվում է իշու ա-
ռաջ և բարձր ձայնով գոչում:

— Մի՛ շտապեցեք, ընկերներ՛ս, թողե՛ք որ
ոստիկանն անցնի:

Բնականաբար, շատերը հանաք են կար-
ծում, ինչպես հաճախ նա այդպիսի հանաք-
ներ էր անում:

Բայց բժիշկ Թորգոմյանը, Վարուժանն ու
Սիամանթոն, որոնք իբրև սերտ մտերիմներ
լավ ծանոթ էին նրա հոգեկան աշխարհին,
արդեն լրիվ հասկանում են, որ Կոմիտասի ի-
մացական տագնապը սկսած է ծայր տալ:
Ու այդ տագնապի երկրորդ հայտարար փաս-
տը որոշակի հայտնվում է Զանգրըջի մեջ:

Հայ մտավորականները, զգալով իրենց
մոտավուտ եղերական վախճանը, խնդրում
են Կոմիտասից երգել իրենց համար վերջին
անգամ: Կոմիտասը չի մերժում և սկսում է
երգել իր հայտնի ստեղծագործությունը՝
«Տէ՛ր, ողորմեա՜ն: Ոստիկանները նախ ու-
զում են արգելել՝ նրան, բայց նրա ձայնի
մոգական ազդեցությունից խորապես տպա-
վորված, ունկնդրում են հետաքրքիր ու հիա-
ցած:

Հրաշքով վերապրող մի քանի մտավորա-
կաններ, ինչպես և Թորգոմյանը, վկայում են
որ Կոմիտասն այդ վերջին երգը երգել է բա-
ցառիկ զգալականությամբ, արվեստի և
զգացումի գերազանց ներդաշնակությամբ,
բոլորովին վերացած կարծես նյութական աշ-
խարհից:

Այդ տղերքի կերկերուն վանկերից ուժքնու-
րեն թրթռում է Կոմիտասի խորունկ վշտի ճիշը
որը գիտցել է թե բոլորն էլ դատապարտված
են քիչ վերջը գառնուկի նման մորթիվելու: Ի-
րենց մոտավուտ մահվան հոտն զգացող թըշ-
վառ աքսորյալները այնպիսի հուզման մեջ
են ապրում, որ բոլորն էլ, առանց բացառու-
թյան, հեկեկագին արտասվում են:

Ու երբ ընդհանուր հուսաբեկության և հա-
ռաչների մեջ վերջացնում է Կոմիտասն իր եր-
գը, տեսնելով իր գլխահակ ընկերների ար-
ցունքն ու հոգեկան տառապանքը, անօրինակ
բոցով վառվում է, աչքերը մեծանում են, և
անսպասելիորեն հանկարծ խուլական քրթ-
քիջով քահ քահ ծիծաղում է: Մտահոգության
և սարսափի մատնված իր ընկերները անմի-
ջապես շրջապատում են նրան, վշտալից ու
գորտփափն, և ուզում են հանգստացնել
նրան: Բայց Կոմիտասը շարունակում է իր
խելազար ծիծաղը՝ շլթալազերծված այնպի-
սի մի վայրենի ծիծաղ, որ նրա դեմքի
վրա դրոշմում է հետզհետե հոգեկան տան-
ջանքի և ներքին ալեկոծության մոռյլ կնի-
քը:

Կոմիտասն արդեն կորցնում է իր բնական
վիճակը:

Իսկ վերջին բաժանումը իր ընկերներից,
ամբողջովին խախտում է նրա իմացակա-
նության հիմքերը:

Այլևս հայտնի է հայ քաղաքական մտավո-
րականների տխուր ճակատագիրը՝ շարչարա-
գին մահ...

Բարեբախտությունն պետք է համարել լի
դժբախտություն, մետասաներորդ ժամին
հասած այն հրամանը, որով մայրաքաղաքից
տրված հեռագրի վրա, Կոմիտասը պետք է
ողջ առողջ Պոլիս վերադարձվեր, այնպիսի
մի պահի, երբ արդեն կացիկներն ու դաշույն-
ները փայլատակում են թշվառ դատապարտ-
յալների գլուխների վրա:

Կարելի չէ նկարագրել մահվան սեմից մա-
զապուրծ Կոմիտասի և մահվան ահավոր
մղձմանջից տառապող հեք մտավորական-
ների բաժանումի սրտակեղեք պատկերը:

Ամենքը ընկճված և հեկեկագին համբու-
րում են վերապետի ձեռքերը և վերջին ան-
գամ խնդրում երգել ու աղոթել: Առանձնա-
պես հուզիչ ու սրտաճմիկ է լինում Վարուժա-
նի և Սիամանթոյի հրաժեշտը Վարպետին:
Բիրտ ոստիկանների մտրակն իսկ ի զորու չէ
եղած բաժանելու մտքով, սրտով ու արվես-
տով իրարու շողկապված երեք անկեղծ հո-
գիներին:

— Մի՛ մոռանա խոստումդ, Կոմիտաս՛ս
չան, եղանակավորելու «Առկայծ ճրագ», իմ
սգալոր մոր վիշտը եղբերգող,— խնդրում է
վերջին անգամ Վարուժանը, որ իր բանա-
ստեղծի խորունկ հոգու մեջ դրացել էր ահա-
վոր սարսուռը մոտեցող մահվան:

«Առկայծ ճրագը մեծատաղանդ բանա-
ստեղծի եղբրական մահվան նախազգացումն
էր հաղթանակի նախօրյակին, ուժգին մի
ներշնչում՝ իր անգութ նահատակության ա-
ռիթով: Այս երգն էր, որ Կոմիտասը խոստա-
ցել էր եղանակավորել, մի սրտառուչ երգ՝
որ այժմ այնքան եղբրականորեն պատշա-
ճում էր Վարուժանի մոր բերանին:

... Ու ծանոթ է ամենքին, թե ինչպե՛ս եր-
կու հարյուր հիսուն մտավորականները Զան-
գրըջի մոտակա արյունոտ ձորի մեջ մոր-
թոսվեցին կացիկներով:

Գոնիայի ճանապարհով Պոլիս վերադար-
ձրին ո՛չ թե Կոմիտասին, այլ նրա կենդանի
մարմինը: Երեք ամսվա ֆիզիկական և հոգե-
կան տանջանքները խախտել էին մեծ նրգա-
հանի պայծառ իմացականության հիմքերը և
նրա տարտամ ու անորոշ նայվածքի մեջ
երևում էր արդեն ահավոր եղեռնի թողած
շարագույն հետքերը:

Պոլիս վերադառնալույց մի քանի ամիս հե-

տո, առաջին ուժեղ տագնապը նա ունեցել է մի գիշեր հանկարծ, թափահարելով մինչև լույս դաշնամուրի ստեղնաշարի վրա, պոռալով անվերջ:

— Ինչու՞ եք ինձ ձերակալում: Ի՞նչ եք ուզում ինձանից:

Հրաշքով ազատվող աքսորակից բժիշկ Թորգոմյանը հաստատում է նրա մեջ երևան եկած խելագարական առաջին նշանները: Կոմիտասը նրա երեսին գոռում է սրտաճմլիկ սարսափով.

— Ինչու՞ եք շարձարում ինձ:

Տխուր պարտականություն է անշուշտ կանգ առնել Կոմիտասի ողբերգական կյանքի վախճանի վրա: և փոխադրվել Ֆրանսիայի մայրաքաղաքի «Լիլ ժյուվիվ» կոչված հոգեբուժարանի այն անսանձասենյակը, ուր քսան երկար տարիներ Կոմիտասը միայնակ հառաչեց իր պաշտելի դաշնամուրի մոտ: Նրա ալեկոծ հոգին թափառեց մերթ հայրենի արգավանդ դաշտերում ու էջմիածնի վանքի լուռ խցիկը, մերթ աշխարհի մայրաքաղաքների բնմերը և մերթ իր որբ ու թշվառ մանկությունն օրրան հանդիսացող ծննդավայր քյոթահանն:

Այս բոլորը խաչաձևում էին իրար նրա խանգարված երևակայությունը և խավարած իմացականությունն աղջամուրջի մեջ: Նա ո՛չ մեռած էր, ո՛չ էլ կենդանի: Երբեմն պայծառանում էր նրա մտքի հորիզոնը և փարատվում նրա հոգին ճնշող թանձր մշուշը: Խաղաղություն այդ բացառիկ պահերին, Կոմիտասը իր երբեմնի հանճարեղ գլուխը հակած դաշնամուրի վրա, հնչեցնում էր հայ ժողովրդի սիրո և աշխատանքի երգը Հայրենիքի հանդեպ, երբեմն երգում էր, ինչպես հավաստում են փարիզաբնակ հայրենակիցները, իր հռչակավոր «Անտունի»-ն, որով նա իր հավերժական տառապանքի ողբն էր երգում.

«Միրտըս նման է էն փրլած տըներ,—

Կոտեր գերաններ, խախտեր են սրներ.

Բո՞նս պիտի դընեն մեջ վայրի հավերժ...»

Անտունի սիրտն է պըղտոր ու մոլոր:

Ախ՛, իսկի մի՛ ընիք սըրտիկ սևավոր:

Ա՛յ, տո լաճ տընավեր...»

Արդարև, ո՛չ միայն նրա սիրտը, այլև միտքն էլ «պղտոր էր ու մոլոր» ու «կոտրվել էին գերանները և խախտվել սյուների» իր երբեմնի պայծառ իմացականությունը:

Այժմ նա իրեն համար էր երգում, իր թափառական ու դժբախտ «Անտունի»-ի պղտոր ու մոլոր սրտով և խախտված մտքով:

Որքա՞ն կորովի ու համառ ջանքեր թափ-

վեցին վերադարձնելու համար նրա իմացական լույսը, փարատելու նրա մտքի խավարը և վերստին տեսնելու նրան հայ երաժշտական արվեստի նվիրական ասպարեզի մեջ: Քանի՞ անգամ նրա աշակերտները առանձին կամ խմբովին երգեցին իր սիրած երգերը՝ հանկարծական սթափում առաջ բերելու, և հայ ժողովրդական երգերի թուլջանքով շրջադարձ կատարելու նրա խանգարված ուղեղի վրա: Ու, վերջապես, ինչքա՞ն այլազան միջոցներ կիրառվեցին վերադարձնելու համար նախկին Կոմիտասի, գիտուն, բանաստեղծ և արվեստագետ Կոմիտասի հանճարեղ շունչը: Ափսո՛ս, բոլոր ջանքերն իզուր անցան:

Ու մի աշնան երեկո, 1935 թվի հոկտեմբերի 22-ին, նա մարմնով էլ կնքեց իր մահկանացուն:

Մարդասպաններն ուղեցին Կոմիտասով սպանել ու խեղդել հայ երաժշտական արվեստի վերածնունդն ու զարթոնքը իր սաղմի մեջ: Հաջողվե՞ց նրանց արդյոք իրագործել այդ հրեշտային մտահղացումը:

Այս հարցումի միակ և պարզ պատասխանը՝ մեր Սովետական ազատ և հզոր Հայրենիքի պայծառ իրականությունն է, ստեղծագործ և արդյունաշատ աշխատանքը սովետահայ մեր շնորհալի կոմպոզիտորների, որոնք աննախընթաց չափով զարգացրել են հայ երաժշտական ինքնատիպ արվեստի դարավոր կուտուրան:

Սովետական Հայրենիքը, որ արժանավորապես գնահատում է Կոմիտասի կատարած պատմական օգտաշատ գործը, թույլ չտվեց, որ իր հարազատ զավակի աճյունը օտարություն մեջ մնա, և 1936 թվականին, մեծ պատիվներով ու հարգանքով, բերեց ու հանձնեց նրան հողին:

Այժմ նա հավիտենական քնով հանգչում է Երևանի հին գերեզմանատան Պանթեոնի, իր սիրած, երազած ու երգած Հայրենիքի հարազատ հողի մեջ:

Այսօր, ողջ Սովետական Հայաստանում և Սփյուռքում, նվիրական է դառել Կոմիտասի անունը: Ամեն օր նրա երգերն են շրթունքների վրա: Երևանի ձայնասփյուռք ամեն առիթով հաղորդում է նրա ստեղծագործությունները և պանծացնում նրա կատարած գործի մեծ նշանակությունն ու արժեքը:

Կոմիտասն անմահ է իր թողած բազմաբեղուն և թանկագին ժառանգությամբ:

Հարգանք՝ բազմավաստակ ու անմահ Կոմիտասի անմոռաց հիշատակին:



ՆՈՐԱՅՐ ԲՅՈՒՋԱՆԴԱՑԻՆ ԵՎ ՆՐԱ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ



յուզանդացու իսկական ա-
նունը և ազգանունն եղել է
Ստեփան Գաղեզյան-Ճիզմեճ-
յան-Թերզյան: Նա ծնված է ե-
ղել Կ. Պոլսում, հայ կաթողիկ ընտանիքում,
1845 թվին: Երբ նա մեծացել, հասել է իր
ուսանելու տարիքին, ծնողները նրան ու-
ղարկել են Վենետիկի Մխիթարյանց Ս. Ղա-
զարու վանքի վանական դպրոցը:

Ստեփանը ընդունակ, աչքաբաց տղա է
եղել: Նա անսայթաք սովորել է և ավարտել
իր ուսման ընթացքը, և, ընտելացած լինե-
լով վանական կարգերին և հոգևոր ուղղու-
թյան, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:
Նա հենց սկզբից աչքի է ընկել իր հայ լեզվի
և հայագիտական առարկաների գիտու-
թյամբ:

Ինչ փոխհարաբերության մեջ է եղել նա
վանքի միաբանության հետ, մենք չգիտենք,
բայց գիտենք, որ մի փոթորիկ է պատահել
նրա կյանքում, և նա ստիպված է եղել
վանքից դուրս գալ և աշխարհական դառնալ:
Առաջ կարծվել է, որ նա սիրահարված է
եղել և դուրս է եկել վանքից որ ամուսնանա,
բայց հետո պարզվել է, որ նա բանադրված
է եղել ժամանակի Պիոս պապից, այդ պատ-
ճառով թողել է Ս. Ղազարի վանքը և դարձել
է նոր մարդ—Նորայր Բյուզանդացի: Բայց թե
ինչո՞ւ համար է բանադրված եղել, մեզ ան-
հայտ է: Նա վերադարձել է Կ. Պոլիս և ըզ-
բաղվել բանասիրության: Կարծում ենք, որ
նա մի ժամանակ էլ ուսուցչություն է արել:

Անցել է ժամանակ. Պոլիս է եկել Սելմա
Յակոբսոնը, Շվեդիայի արքայական գլխա-
վոր շուսանկարչուհին: Նա եկած է եղել այն
նպատակով, որ ամուսնանա իր հավանած
մի արևելացու հետ: Նա իրեն անծանոթ քա-
ղաքում դիմել է Շվեդիայի դեսպանի օգնու-
թյան: Իսկ դեսպանը, որ արևելագետ մեկն
է եղել և լավ ծանոթ Նորայր Բյուզանդացու
հետ, մատնացույց է արել Բյուզանդացուն,
որ բոլոր պահանջված պայմաններն էլ ունե-
ցել դուր գալու Ֆրյու Սելմային: Բյուզան-
դացին և՛ կրթված, լեզուներ իմացող էր և՛
արտաքին գեղեցկության տեր: Նա երկարա-
հասակ էր և սովորականից ավելի մեծ, սև-
րակ աչքեր և թանձր մազերով ընչացք և հոն-
քեր ուներ: Տեսնվում են, և Սելման համա-
նում է: Բյուզանդացին իր կողմից մի պայ-
ման է միայն առաջարկում՝ հարգել իր հա-
յագիտական մասնագիտությունը: Ամուսնա-
նում են, և Բյուզանդացին իր պատահական
կնոջ հետ փոխադրվում է Ստոկհոլմ. մի
անսեր, պատահական ամուսնություն, որ
հետագայում փոխվում է ջերմ, սիրային հա-
րաբերության, իրար սիրող և հարգող ա-
մուսինների միջև: Այդպիսի հարաբերու-
թյունը առաջին հերթին հենց հայտնում է
Սելման. նա մի քանի տասնյակ հազար
ֆրանկ է ծախսում նրա ֆրանս-հայերեն
բառգրքի տպագրության վրա:

Բյուզանդացու կենսագրության նյութի
պակասության հետևանքով, մենք ստիպ-
ված ենք այստեղ մի քանի քաղվածք անել

Այլ Արեւլյանի «Հիշողութիւններ»ից նրա մասին՝ Ստոկհոլմում և Վենետիկում¹։

Ճիւղ պարթև հասակով՝ Նորայր Բյուզանդացին հենց առաջին պատահածովս թողեց իմ վրտ մի շատ խոհեմ, զգաստ ու վերին աստիճանի բարեկիրթ մարդու տպավորութիւնը։

«Ճիւղ Սելմա Յակոբսոնը դեպի մեր մեծ քերթողը տանում էր մի քնքուշ, հոգատար և խնամող սիր։ Մի ամուսնական առաքինութեան, որը հատուկ է ընդհանրապես բոլոր շվեդուհիներին և որը նրանք արտահայտում են ամեն անգամ, երբ պետք է լինում, առանց քաշվելու օտարների ներկայութեանից։ Իր հերթին Նորայր Բյուզանդը՝ փոխադարձաբար արտահայտում էր դեպի ազնիւ տիկինը մի խորին հարգանք։ Այդ հարաբերութիւնները, բխած անմիջական, իրար բարոյական արժանավորութեան հասկացողութիւններից, զարգանում էր երկուստեք մի զարմանալի բարեկիրթութեան արտահայտութեամբ։

Անդույ, համբերատար, և միևնույն ժամանակ համեստ մի քերթող, որ հոգով ու սրտով, ամբողջ էութեամբ տասնյակ տարիներ նվիրված էր իր սիրած նախնայց մասնազտութեանց ուսումնասիրութեան և գլխավորապես նրանց բնագիտական արտագրողների պատճառով գործած սխալների ուղղման։

«Խոսելով նրա հետ, դուք ստանում էք այն տպավորութիւնը, որ գործ ունեք ո՛չ թե մեր ժամանակում և մեզ հետաքրքրող հասարակական և ազգային հրատապ խնդիրներով տարված մի մտածողի հետ, այլ մի խորնացու, մի Եզնիկի, մի Փալստոսի, վերջապես, մի մտազդաթյա պատմական նյութերով լի գրվածքի հետ։

«Կարոտ եմ Հայրենիքի արևին», ասաց ինձ մի օր Ն. Բյուզանդը։

1. Այլ Արեւլյանը շամախցի էր, հայտնի դերասան Հովհաննես Արեւլյանի մոտ ազգականը։ Նա առաջին տարիները Բագով պարապելով նավթի գործերով, շահել էր բավարար կարողութիւն, հետո վերջացնելով գործերը, փոխադրվել էր Նոր-Նախիջևան, որտեղ ամուսնացել էր և պարապում էր իր սիրած գրականութեամբ։ Նա սիրում էր հայ թատրոնը, հաջող գրում էր թեթև ժանրի թատերական երկեր գավառական լեզվով և գավառական կյանքից, ինչպես, օրինակ, «Պըլը Պուզին» և մյուսները։ Սիրում էր նա հասարակական կյանքը, հասարակական գործերը և օգտավետ անդամ էր հասարակութեան։

(Տե՛ս նրա «Հիշողութիւններ Նորայր Բյուզանդացու մասին, Ստոկհոլմում և Վենետիկում», տպագրված Նոր-Նախիջևանի «Հայ Համայնք» շաբաթաթերթում, Երկրորդ տարի, 1919 թ., № 17)։

«Արդարև, ի՞նչ նրա տեղն էր, թեև մաքուր, գեղեցիկ, բայց տարվա տասը ամիսը արևի երես շտեմնող Ստոկհոլմը, որտեղ ամառվա ամիսներին անգամ նա հագնում էր տաք վերարկու։

«Կամենալով մի բանով օգտավետ լինել Ստոկհոլմում վերջին մեր տեսութեան, խոսք վերցրի, որ անպատճառ գա էջմիածին։ Նա խոստացաւ։ Վերադառնալով Կովկաս, այդ մասին մի գրութեամբ դիմեցի արև ժամանակվա Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմյան Հայրիկին։ Վեհափառը բարեհաճեց պատասխանել դրականապես, բայց նա չեկավ։

Սելմա Յակոբսոնը 1899 թվին վախճանվում է և Նորայր Բյուզանդացին նրա մահից հետո երեք տարի ևս մնում է Ստոկհոլմում և հետո փոխադրվում է Վենետիկ։ Թե նա ի՞նչ է արել այդ երեք տարվա ընթացքում մեն-մենակ, Ստոկհոլմի պես ցուրտ քաղաքում, չենք կարող ասել։ Բայց մեզ թվում է, որ նա դժվարացել է իսկույն թողնել իր սիրած կնոջ գերեզմանը, որի վրա, ինչպես երևում է, հենց այդ ժամանակներն էլ նա շինել է տվել այն ճաշակավոր դամբարանը, որի մեջ տեղ է պատրաստել տվել և իր համար։

1905 թվին իր կնոջ հետ կատարած ճանապարհորդութեան ժամանակ, հիշյալ Արեւլյանը վերստին տեսնվել է Նորայր Բյուզանդացու հետ Վենետիկում, որտեղ նա ապրելիս է եղել 1903 թվից ի վեր։ Նրա հարցին, թե ի՞նչ հանգամանքների շնորհիվ է, որ նա փոխադրվել է և ապրում է Վենետիկում, նա պատասխանում է. «Եվեդիայում եկամտի հարկ վճարելով, ինձ այնքան չէր մնում, որ բավական լիներ իմ ապրուստի համար, իսկ այստեղ, Իտալիայում, այդպիսի հարկ չկա»։

«Երեկոյան նա մեզ սուրճի հրավիրեց Մ. Մարկոսի հրապարակի վրա գտնվող իր սիրած սրճարանը։ Երբ սրճարանից ելնում էինք, նա ուզում էր վճարել, զարմացած նայեց աչքերիս. տպասավորը հայտնել էր, որ արդեն ես վճարել եմ։ «Եթե այդպես է, ես կինդրեմ վաղը շնորհ բերել ինձ մոտ» — ասաց նա։ Մյուս օրը մենք քանի՞ կամուրջներով անցնելով, քանի՞ նեղլիկ փողոցներ կտրելով, հասանք նրա բնակարանը։ Խոսում էր նա վիրավորված սրտով. նրա արդար գանգատի մեջ հնչում էր իր ժամանակակիցներից հալածված քերթողահայր Մովսես Խորենացու ձայնը։ Եթե նրա 45 տարվա անխոնջ աշխատանքի պտուղը զնահատվեր ամենափոքր մասշտաբով, նա պիտի ունենար ապրուստի լավ միջոց։ Նա մեռավ լքված, մոռացված և ատելութեան հանդիպած նույն իսկ իր ամենամոտիկներից...»։

Ի՞նչ եղան բազմավաստակ քերթողի 50 տարվա աշխատությունները: Այս հարցմունքին ճիշտ պատասխան տալու համար, մենք պետք է որոշ շափով երկարացնենք մեր ասելիքները:

Մահից առաջ նա ֆրանսերեն լեզվով մի կտակ է գրել իր թողած ժառանգության մասին, թե նա ի՞նչ է թողնում և ո՞ւմ է թողնում: Նա ժառանգ չէր թողել, այլ կարգադրել էր, որ իր բոլոր ունիւմ-շունիւմ հանձնվի շվեդական «Ֆրեդրիկա-բրեմեր Ֆորբունդեդ» կանանց բարեգործական ընկերության, որի կենտրոնը գտնվում էր Ստոկհոլմում: Նա ի՞նչ է ունեցել և ի՞նչ է թողել:

1.— Իր անձնական գրական-գիտական գրադարանը, բաղկացած հազարից ավելի հայագիտության վերաբերյալ ընտիր հատորներից— հայերեն, շվեդերեն, ֆրանսերեն, իտալերեն, անգլերեն, տաճկերեն, հունարեն, ասորերեն և այլ լեզուներով:

2.— Դրամապոլիս մեկ հարյուր քսանհինգ հազար շվեդական կրոն, որը այսօր վերոհիշյալ կանանց ընկերության բերում է հինգ հազար կրոնից ավելի տոկոս-եկամուտ:

3.— Իր հեղինակած հայտնի ֆրանսերեն-հայերեն բառագրքից մեկ հազար օրինակ:

4.— Իր բոլոր ձեռագրերը, գրեթե, բացառապես հայերեն և հայ գրականության վերաբերյալ:

Արդ, ի՞նչպես է վերաբերվել շվեդական կանանց բարեգործական ընկերության կենտրոնը Ստոկհոլմում: Նա, հայտնի բան է, շատ ուրախ է եղել այդ կտակի համար, որ երկնքից կաթած բարիք լինելով հանդերձ, նույն ժամանակ է մի խոշոր բարեգործություն է հանդիսացել ընկերության համար իր դրամապոլիսով: Կենտրոնը, հարգած լինելու համար բարեգործի հիշատակը, նրա մահից 7—8 տարի անցնելուց հետո, նրա աճյունները փոխադրել է Ստոկհոլմ և մոտացել է ամենապատվոք խնամքով պահպանելու նրա ամենաթանկարժեք ձեռագրերը, որոնց վրա բարեգործը 50 տարի անդուլ աշխատանք, մինչև աչքի կուրություն ուժգին եռանդն է գործադրել: Հեշտ է ասել. նա հայ բոլոր մատենագրությունը, թե՛ ինքնուրույն, թե՛ թարգմանական, թե՛ տարագրված, թե՛ անտիպ, սկսած հինգերորդ դարից մինչև տասնյոթերորդ դարը, քրքրել է, համեմատել, ուսումնասիրել և հայտնաբերել տասն հազար սխալ, որ մոռվել են բնագրերի մեջ տգետ և անշնորհք արտագրողների ձեռքով, սխալներ, որոնք աղավաղել են բնագրերի բուն իմաստը, տեղ տեղ դժվար հասկանալի դարձ-

րել, տեղ տեղ էլ բոլորովին անհասկանալի կամ սխալ հասկանալի:

Այժմ մենք հրավիրում ենք մեր ներողամիտ ընթերցողների ուշադրությունը այն հանգամանքի վրա, թե մեր Սորայր Բյուզանդացին ի՞նչ համբերության տեր է եղել, ի՞նչ աշխատանքի ընդունակ և ի՞նչ հսկայական գիտության տեր, որքա՞ն սիրող մեր նախնյաց մատենագրությունը և որքա՞ն ժամանակ է նա գործադրել, մինչև որ կարողացել է հասնել իր նպատակին, մաքրել, պարզել, պատրաստել ու դրել մեր առաջ և հրավիրել է մեզ վայելելու:

Ահա այսպիսի թանկարժեք ձեռագրերից են բաղկացած եղել այն հսկայական թիվ ձեռագրերը, որ մեր հանճարեղ հայրենակիցը կտակել է շվեդական կանանց բարեգործական ընկերության: Բայց ի՞նչ է արել ընկերության Ստոկհոլմի կենտրոնը, նա օգտը վել է բարեգործի դրամի տոկոս-եկամուտից, իսկ ձեռագրերի կույտը անարգաբար նետել է նկուղը ի կերակուր ցեցերի, իբրև «ֆրատորա դե պապիե»: Ի՞նչպես պետք է որակել ընկերության կենտրոնի արարմունքը. ի՞նչ մտեսակետից էլ նայելու լինենք, չենք կարողորդարացնել, ա՛յնքան կոպիտ, ա՛յնքան զեհակական վարմունք է եղել այդ:

Այժմ գանք մեր հանճարեղ հայրենակցի արած կտակին: Ի՞նչ է մտածել նա, որ այդպիսի կտակ է արել, այդպիսի անխորհուրդ անմիտ կտակ: Դեռ հասկանալի կլիներ, եթե նա ի սեր իր Սելմայի, իր բոլոր դրամական կարողությունը բաշխած լիներ նրա հայրենիքին, բայց մի պարզ բարեգործական ընկերության, որ ո՛չ մի անշնորհություն չի ունեցել գիտության հետ, տալ իր գուտ հայտգիտական, թանկարժեք գրադարանը և շափազանց զեհատելի բացառապես հայերեն ձեռագրերը... Այլ հետո, մենք չենք հասկանում, թե՞ նա ինչո՞ւ մեռած պիտի լիներ ատելություն հանդիպած նույն իսկ իր ամենամոտիկներին, ինչպես ասում է Ալ. Աբելյանը, մենք ուժվարանում ենք հաշտեցնել և նրա ունեցած գրամական կարողության հանգամանքը նրա պարուստազուրկ կացության հանգամանքից հետ...

Սխալ է, սխալ է, որ նրան չեն սիրել, չեն ուզեցել ձանաչել նրա արժանավորությունը: Մենք նրա ժամանակակիցն ենք եղել. ճանաչել ենք մեր գործիչներին, մեր գրականաաշխարհը: Նրա անունը տարածված է եղել մեր շրջաններում: Հին դարի վերջին քառորդը էր, նոր դարի առաջին քառորդը, մեղմ կյանքի փոթորկալից տարիները, և մեր ամենքիս շունչը, հոգին և սիրտը ուղղված է եղել դեպի մեր Հայրենիքի արևմտյան թըր-վառ մասը և այնտեղ գտնվող աչքի ընկնողո՞ւմ

մտավորականները, որոնց թվում և Նորայրը, ճանաչվել և մեծարվել են:

Զգիտեմ, ո՛ր թվին էր, որ նա հայտնել էր, թե ուզում է ունենալ մեր միջնադարյան տաղարանների լավ օրինակներ. մենք ունեինք մի այդպիսի ձեռագիր, և ամսիջապես ուղարկեցինք նրան, և նա, որոշ ժամանակ անցնելուց հետո, հետ ուղարկեց այն մեզ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի ձեռքով: 1900 թվին տպագրվեց Նորայր Բյուզանդացու աշխատասիրած գիրքը՝ «Վորյուն վարդապետ և ետրին քարգամետրյունեհ» խորագրով, Առաքել Ապերի «Ապեր» Մատուրյանի ծախսով և հակոդովթյամբ Տեր Գյուտ քահանա Աղանյանի, որի համար նրան ուղարկված է եղել հազար ֆրանկ վարձատրուվյուն, որ նվիրած է եղել նույն Մատուրյանը, Կարապետ Եղյանի ձեռքով: Գիրքը նվիրված է Սելմա Յակոբսոնի հիշատակին:

«Օրհնեալ եղիցի յիշատակ Տիկին Սելմա Յակոբսոնի: Նորայր»:

Այս գիրքը մի անգամ էլ համոզեց, որ նա գործ չունի անելու օտար, հեռու Շվեդիայում, որ նա այնտեղ միշտ պետք է կարոտի հայրենիքի արևին, որ նրա ապրելու և աշխատելու տեղը էջմիածինն է:

Եվ մեր ամենքիս այսպիսի ցանկություն արձագանք հանդիսացավ հայ ժողովրդի սիրած Ամենայն Հայոց Վեհափառ Տեր Մկրտիչ «Հայրիկ» անվանված կաթողիկոսը: Նա երկու անգամ հրավիրեց նրան գալու՝ առաջին անգամ, 1899 թվին, երբ նա դեռ Ստոկհոլմում է եղել, երկրորդ անգամ 1903 թվին, երբ նա արդեն փոխադրված է եղել Վենետիկ, և ոչ մի բան արգելք չէր նրա գալուն, բայց նա երկու հրավերքին ևս բացասական վերաբերմունք ցույց տվեց: Վեհափառը հրավիրել էր նրան գալու էջմիածին և ձեռնամուկ լինելու հայ մատենագիրների հրատարակության գործին, սկսելով Աստվածաշնչի գիտական հրատարակությունից՝ էջմիածնի մատենադարանում գտնված Աստվածաշնչի քառասուն հին ձեռագիր օրինակների համեմատության հիմունքով:

Նորայրի այդպիսի բացասական վերաբերմունքը մեզ ամենքիս միանգամայն զարմացրեց: Հայ Եկեղեցու գլուխ Ամենայն Հայոց կաթողիկոսը, ի սեր գիտության և հանուր ցանկության՝ մեր մեջ տեսնելու նրան, հրավիրում է նրան գալ էջմիածին և գլուխ կանգնել Աստվածաշնչի գիտական հրատարակության և մյուս մատենագրության նոր և սխալներից մաքրուած հրատարակության, խոստանալով նրա տրամադրության տակ դնել վաճառի բազմաթիվ ձեռագրերը, որոնց մեջ քառասուն Աստվա-

ծաշունչ—ձեռագիր, և՛ վաճառի տպարանը, և նա հրատարակում է... Չէ՛ որ այդ նրա բոլոր վատ հույսերի և ջերմ ցանկությունների լիակատար լրացումը և կատարումն էր:

Մենք նրա հրատարակելու բուն պատճառները չգիտենք, բայց կարծում ենք, որ նրա կնոջ մահից հետո, այլ ևս մի ուրիշ արգելիչ հանգամանք չէր մնացել, որ կարողանար կապած լինել նրա ոտքը՝ վերադառնալու իր Հայրենիքը, որի արևին կարոտած է եղել նա: Մեզ թվում է, որ Նորայր Բյուզանդացին պատկանել է մեր վաղ գաղութահայրության այն սերնդին, որի սրտի մեջ պահպանված է եղել միայն պատմական Հայրենիքը, այն է փոշիացած հիշատակը, վերացականացած Հայրենիքը, իսկ իրական, այսօր էլ գոյություն ունեցող իրական Հայրենիքից նա արդեն խորթացած է եղել: Այդպես են եղել և Մկրտիչ էմինը, Քերովբե Պատկանյանը, Գաբրիել Այվազովսկին, Վեվոնդ Ալիշանը և ուրիշ շատերը:

Մեզ թվում է դարձյալ, որ եթե Նորայրը բարի ցանկություն ունենար գալու, կգար, իսկ ծագած խնդիրները հեշտովյամբ կլուծվեին տեղն ու տեղը փոխադարձ համաձայնություններով: Եվ, վերջապես, ո՛վ և ի՛նչը կարող էր արգելք հանդիսանալ, եթե նա ուզենար վերստին վերադառնալ արտասահման, իր սիրած Վենետիկը կամ Ստոկհոլմը: Իսկ նրա գալը այն մեծ օգուտը կունենար, որ, բուցե, նա այն կտակը շաներ, որ արել է ի մեծ վնաս իր թանկարժեք ձեռագրերի:

Մի հանգամանք էլ մենք կուզեինք պարզած լինել այստեղ: Այ. Աբելյանը իր երկրորդ տեսության ժամանակ Վենետիկում 1905 թվին, ասում է նրա մասին. «Եստույն էր նա վիրավորված սրտով: Նրա արդար գանգատի մեջ հնչում էր ժամանակակիցներից հալածված քերթողահայր խորհնացու ձայնը»: Արդ, խորհնացուն հալածել են իր ժամանակակից տգետ արեղաները: Իսկ Բյուզանդացուն ո՛չ ոք չէր հալածում:

Նորայր Բյուզանդացին վախճանվել է 1915 թվին Վենետիկում: Դրա վրա անցել է ինը տարի և նրա մարմինը 1924 թվի սեպտեմբերին փոխադրվել է Ստոկհոլմ և ամփոփվել է նրա կնոջ՝ Սելմայի մոտ, իր կառուցած ճաշակավոր դամբարանում:

Անցել է երեսուներկու տարի, և անհայտ է եղել թե ո՞րտեղ է մնացել նրա հայերեն գրած անտիպ թանկարժեք գրական ժառանգությունը: 1945 թվի նոյեմբերին Շվեդական Ոսպասալա քաղաքն է եկել Ս. Լորենլի ավգանունով հայ մարդ, տեղի հայտնի համալսարանի գրադարանում իր գրական գրադմունքը շարունակելու համար: Նա իր մանկությունից ծանոթ լինելով Նորայրի գրական գործունեու-

Յիանը, հետաքրքրվել է, ցանկացել է իմանալ, թե նա ի՞նչ հայերեն ձեռագրեր է թողել և ո՞րտեղ են նրանք գտնվում, ի՞նչ է արել և ի՞նչ են մտադիր անելու նրանց նկատմամբ: Շնորհիվ համալսարանական գրադարանի տեսուչ, փիլիսոփայություն գոկտոր Անդրեաս Գրապեի, հաջողվել է նրան պարզել Նորայրի գրականագիտական ամբողջ ժառանգության մեծությունը և դրա պահպանման անմխիթար վիճակը:

Այդ թանկարժեք ժառանգությունը 1915-ից մինչև 1922 թվի վերջը պահվել է կանանց բարեգործական ընկերության նկուղներում, իսկ 1923 թվից մինչև 1945 թիվը Գեոտեբորգ քաղաքի նկուղներում, առանց որևէ ցուցակագրություն և դասավորման, որպես թղթերի մի կույտ, արկղները լցված: Թե քանի՞ արկղ ձեռագրեր է թողել Նորայրը, հայտնի չէ. մի բան միայն պարզ է, որ բոլոր ձեռագրերը չեն գտնված և զգալի կորուստներ կան: Նույն իսկ այն ձեռագրերի ու արկղների մասին, որոնք նրա բուն բողոքներից հետո, գտնվել են Գեոտեբորգում, տեղեկություն չի ունեցել գրադարանի վարչությունը: Գեոտեբորգ քաղաքի գրադարանի վարչությունը ո՛չ միայն գաղափար չի ունեցել այն ձեռագրերի արժեքի մասին, այլև մոռացած է եղել նրանց գոյության մասին:

Նորայրի ձեռագրերի ողբալի վիճակը միանգամայն անաշուտ կերպով ներկայացնելու համար, նա 1946 թվի հոկտեմբերին իրեն հասցեագրված պաշտոնական նամակից մի փոքրիկ հատված է մեջ բերում.

«Սեպտեմբերի 1-ին թե 2-ին, ստացել եմ ձեր ապահովագրայն նամակը, որին ես չեմ պատասխանել մինչև այժմ: Իհարկե, ես չպետք է սպասեի յաքան երկար, և ես խնդրում եմ ինձ ներել: Ըիշտ սասած, ես գտնում էի ձեր նամակի մեջ որոշ մանրամասնություններ, որոնք ինձ զարմացնում էին սկզբում և որոնք մի փոքր վորցնել տվին իմ սառնասրտությունը, հակառակ իմ ցանկություն. այժմ ես ուզում եմ խնդրել ձեր ներողամտությունը: Դժբախտաբար, թղթերի մեծադույն մասն այն ժամանակ գտնվում էր վերնահարկի անկյունում, զրքերից մեծ տարածություն հետո Դարակներում գտնվում էին շատ քիչ ձեռագրեր: Ձեռագրերի մեծագույն մասը գտնվում էր արկղի մեջ, որի գոյության մասին ես գաղափար չունեի:

Այս բոլորը չի արդարացնում այն, որ ես գործել եմ մի խոշոր սխալ, ենթադրելով, թե շատ քիչ ձեռագրեր կան, Եվ հավատացնում եմ, որ ես ուրախությամբ իմացա ձեռագրերի մեծ քանակության գոյության մասին, ինչ-

պես նաև այն արժեքի մասին, որ դուք տալիս էք այդ ձեռագրերին:

Ինձ անհրաժեշտ է հաղորդել ձեզ դարձյալ մի զարմանալի բան: Ձեռագրերի այն հավաքածոն, որ այժմ գտնվում է Ուպսալայում, բնավ լրիվ չէ, քանի որ վերջերս գտնվել է մի մեծ արկղ, ամբողջապես լի Նորայրի թղթերով: Ես այն ուղարկել եմ տվել Ուպսալա, որտեղ նրանք կդրվեն ձեր տրամադրության տակ»:

Ջրանսերեն լեզվով գրված այս նամակի հեղինակը Պ. Սեթ Հալբերգն է, հաղորդում է Լորելին, Գեոտեբորգ քաղաքի գրադարանի քսան տարվա (1927—1947) վարիչը, որը տեղակալ չէ, թե իր հաստատության մեջ ի՞նչ է կատարվում:

Կետև 1883 թվին, ասում է Լորելին, Նորայր Բյուզանդացին իր մտերիմ բարեկամ Չվեդ հայտնի գիտնական Մաք Վիստին, որ Ուպսալայի համալսարանի համեմատական լեզվագիտության պրոֆեսոր է եղել, Ստոկհոլմից գրելիս է եղել, թե հասունացել է ժամանակը Ուպսալայի համալսարանում ստեղծելու հայագիտության ու հայ լեզվի ամբիոն: Պետք է ցավել միայն, որ Նորայրն իր խոշոր նյութական միջոցները չի նվիրել Ուպսալայի համալսարանին փր տենչացած նպատակին:

Այստեղ, մենք մեր այս գրվածքը վերջացրած լինելով Նորայր Բյուզանդացու մասին, կնքում ենք այդ մի քանի խոսքը տխուր խորհրդածությամբ:

Նորայր Բյուզանդացին, անկասկած, մեծ տաղանդ է եղել, ուստի և նրա անունը արժանավորապես էլ տարածված է եղել, բայց վերոհիշյալ Ս. Լորելու շնորհիվ նոր հայտնաբերված նրա ձեռագրերը, իրենց քանակով և որակով, մեզ իրավունք են տալիս ավելի հռչակելու նրա անունը ի սփյուռս, որ նա ո՛չ միայն սովորական տաղանդավոր անհատ է եղել, այլ և հանճարեղ գիտության տեր հայագիտության ասպարեզում, զարմանալի ջանասիրության օրինակ, բարավամիտ, երկարամիտ և կորովի համբերատար: Այս այսպես լինելով հանդերձ, նա բախտավոր չեղավ իր կյանքում. «Նա մեռավ,— ասում է Ալ. Աբելյանը,— լքված, մոռացված և ստեղծության հանդիպած նույն իսկ իր ամենամոտիկներից»: Ի՞նչն էր այդ բոլորի պատճառը, մենք չգիտենք, բայց կարծում ենք, որ նա ինքն է եղել մեղավորը, նա խորթացած լինելով իր Հայրենիքից, երբեք էլ իրեն հարազատ ոք չի որոնել իր Հայրենիքում, այլ խռով է եղել և՛ ազգից, և՛ Հայրենիքից, և՛ հայ գործիչներից, և՛ հայ հաստատություններից: Եվ այդ բոլորն էլ նրա անհիմն երևակայության հետևանքն է

եղել, և կարծել է տվել նրան, թե հայ գործիչները և հաստատությունները չեն սիրում իրեն, չեն հարգում և չեն ուզում ճանաչած լինել իր արժանավորությունը:

Նորայր Բյուզանդացու այդ լքված կացություն հետևանքն է եղել և նրա այդպիսի անհարիր կտակ անելու պատճառը:

Ս. Լորելլին, իբրև մի սրտացավ մտավորական հայ մարդ, ստանալով շվեդական կանանց ընկերության կենտրոնից կտակի պատճենը, կարդացել և հասկացել է, որ Նորայրի կարողությունից հայերին կարող է պատկանել միայն նրա անտիպ գրական ժառանգությունը, ուստի և աշխատել է, հավաքել, բերել տալ Գեոտեբորգից Ուպսալայի համալսարանի գրադարանը մնացած բոլոր ձեռագրերը, որտեղ նրանք կարող էին ավելի ապահով պահպանված լինել ապագայի համար, քան մի ուրիշ տեղ:

Նորայրի անտիպ գրական ժառանգությունը, Լորելլու ասելով, այսօր մի ձեռագրահույս է, առանց դասավորման. մատիտով գրված դիտողություններն արդեն անընթեռնելի են դառնում, թերթերը չորանում ու փշրվում, ձեռագրերից ավազի անձրև է տեղում, երբ ձեռքը ես առնում թերթելու, կարդալու համար: 1923 թվին հրավիրվել է տեղական համալսարանից մի շվեդ ուսանող, որ հայերեն շիմանալով, փոխանակ կարգի բերելու, մի այնպիսի ապուր է պատրաստել Նորայրյան ձեռագրերից, որ այսօր այդ ձեռագրերը կարգի բերելու ու դասավորելու համար, պահանջվում է գրեթե մի ամբողջ տարվա աշխատանք:


Ս. Լորելլին այդ մասին ասում է. «Ուպսալայի համալսարանական գրադարանում, ուր իմ պահանջով Գեոտեբորգից փոխադրվել էին Նորայրի ձեռագրերը, ես ամիսներ շարունակ գրադվել եմ դրանց ուսումնասիրությանը, թերթի եմ մոտ քսան հատոր, յուրաքանչյուրը 325—1400 էջից բաղկացած, մաքուր արտագրված Նորայրի ձեռքով և կազմված: Այդ ձեռագրերը նվիրված են հայ հին մեծ ու փոքր մատենագիրների գործերին և պատրաստված են ուղղակի տպարան ուղարկելու համար: Ամիսներ շարունակ մի առանձին սիրով ես ուսումնասիրել եմ Նո-

րայրի ձեռքով արտագրված և հայ նշանավոր բանաստեղծների—Քուչակի ու մյուսների գրչին պատկանող տաղերի տասնյակ վարիանտները, որոնց հավաքման ու խմբագրման վրա նա աշխատել է 20—25 տարի, ամենուրեք ժողովելով միջնադարյան հայ տաղերի անտիպ, տպագիր բոլոր վարիանտները: Ես թերթի եմ Նորայրի 130 անուն զանազան խորագիր կրող մեծ ու փոքր ձեռագրերը և չեմ կարողանում հաշտվել այն մտքի հետ, թե նրան մինչև կուրության հասցնող այս ձեռագրերը պետք է կորչեին նրա մյուս ձեռագրերի նման, եթե պատահաբար միայն չպահվեին, որպես «Ֆրատրա տե պապիե»:

Ս. Լորելլու գլխավոր նպատակն եղել է ապահովել այդ կարևոր ձեռագրերի գոյությունը ապագայի համար, որի համար նա ստիպողաբար հավաքել, բերել է տվել բոլոր ձեռագրերը, որքան պահպանվել ու գտնվել է Ուպսալայի համալսարանական գրադարանը, որտեղ նրանք կարող էին ավելի ապահով պահվել, քան մի ուրիշ տեղ: Ուզում է, որ ստացված լինեն այդ ձեռագրերը շվեդական կանանց բարեգոգրծական ընկերության Ստոկհոլմի կենտրոնից, որին կտակած է եղել իր բոլոր կարողության հետ միասին և իր այդ հայերեն գրված ձեռագրերը Նորայր Բյուզանդացին, և որ ինքն չկարողանալով պահել, հանձնել է անօրինաբար Գեոտեբորգ քաղաքի գրադարանին, իսկ այնտեղ, գրադարանի վարչությունը, չհասկանալով ձեռագրերի արժեքը, ձգել է վերնատան մի անկյունը և մոռացել նրա գոյությունը: Անցել է երեսուներկու տարի. հասկանալի պիտի լինեն դրա հետևանքը:

Արդ, ի նկատի առնելով, որ սեփականատերը չի կարողացել ինքը պահել ձեռագրերը և հանձնել է մի ուրիշին պահելու, և այդ մի ուրիշը չհասկանալով ձեռագրերի արժեքը, վարվել է դրանց հետ իբրև անպետք թղթերի հետ, ուստի և, կարծում ենք, որ արդարացի կլինի, եթե ձեռագրերը հանձնվեն Սովետական Հայաստանի Գիտությունների ակադեմիային, իբրև իրենց հարազատ տիրոջը, որ լավ կհասկանա դրանց արժեքը և գործադրության տեղը:





Պ Ա Տ Մ Ա - Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԱՌԱՔԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱԿԸ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՄԱՌԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ



արկական առակն առաջին անգամ գիտական լուրջ և մանրազնին ուսումնասիրության առարկա է դարձրել ակադեմիկոս Մառը:

Ակադեմիկոս Մառի ուսումնասիրությունն ընդգրկում է մի խոշոր և պատկառելի աշխատանք, որ նվիրված է հայ առակախոս Վարդան Այգեկցուն և կրում է «Сборник притч Вардана» վերնագիրը: Մեծանուն գիտնականն այդ երկու հատորանոց ստվար աշխատության մեջ ո՛չ միայն շարադրում է իր հետաքրքրական ու լուրջ գիտական դիտողությունները հայ առակախոս Վարդան Այգեկցու կյանքի և վերականգնողական մասին, այլև առաջին անգամ ուսումնասիրության ու գիտական հետաքրքրության առաջ է դնում հայ գրականության պատմության մեջ մինչ այդ չհարուցված գիտական այն հարցը, թե ի՞նչ աղբյուրակետում կա հայ առակախոսի և հունական առակագրի ստեղծագործության միջև և թե ի՞նչ շարժում կամ ո՞ր ժամանակից է դրսևորվել հայկական և հունական առակների աղբյուրակետ-ցությունը հայ գրականության մեջ:

Ակադեմիկոս Մառի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առակն առաջին անգամ հայ գրականության մեջ երևում է 4-րդ դարում (մ. թ.), իսկ թե մինչ այդ ժամանակ հունական առակը դրսևորվե՞լ է հայ գրականության մեջ կամ բանավոր կերպով հայ կյանքում, թե ոչ, պատմությունը լուրջ է դրա մասին: Միակ պատասխանը, որ կարող է տրվել այդ հարցին, միայն ենթադրությունը կարող է լինել, որովհետև կատարելապես բացակայում է ամեն տեսակ վկայություն կամ գրական ու պատմական որևէ կոթող դրա մասին:

Հունական առակագիրը Եզոպոսն (Այսոպոս) է: Ինչպես հայտնի է, Եզոպոսը կիսալեգենդար դեմք է: Նրա կենսագրությունը գրվել է շատ ուշ, մեր թվականության 14-րդ դարում, բայց նրա մասին առաջին անգամ հիշում է Հերոդոտոս պատմաբանը, որ ապրել է մեր թվականությունից առաջ 5-րդ դարում: Կենսագրական տեղեկություններից երևում է, որ Եզոպոսը Փոքր Ասիայից է, Փոյուզիայի Ամորիոն քաղաքից: Ապրելով Փոքր Ասիայում, նա ճանապարհորդել է Պարսկաստան, Բաբելոն, Եգիպտոս և այլն: Այդ նշանակում է, որ նա քաջ ծանոթ է եղել այդ երկրների ժողովուրդների կյանքին, ըմբռնումներին ու նրանց կենցաղին: Եզոպոսի ստեղծագործության ակունքը հանդիսանում է ո՛չ միայն Փոքր Ասիայի հունական ժողովուրդը, այլև առաջավոր Ասիայի, Բաբելոնի, Ասորեստանի, Պարսկաստանի և այլն ժողովուրդները, որոնց ծանոթ է եղել առակագիրը: Առակն, ընդհանրապես, որպես կենդանական վեպի մնացորդ, ժողովրդական ստեղծագործություն է, բայց ոչ առանձին առակների: Առակագիրները գրի են առել ժողովրդական ստեղծագործությունը, մշակել այն և իրենց կողմից էլ կատարել որոշ ավելացումներ: Դատելով հունական առակի մեջ դրսևորված կենցաղային երևույթներից, որոնք էպոսն արևելյան են և երկար դարեր պահպանվել են արևելյան ժողովուրդների, սրանց թվում և հայ ժողովրդի մեջ, հիմք կա ենթադրելու, որ Եզոպոսի առակների ստեղծագործության մեջ մեծ չափով մուտք է գործել արևելյան, ինչպես և հայկական տարրը: Դրան պետք է ավելացնել նաև այն, որ Եզոպոսին վերագրված առակները ի հայտ են եկել նրա մահից հետո, շատ ուշ ժամանակաշրջանում: Երկրորդ վերամշակումը եղել է մեր թվականության 3-րդ դարում, իսկ երրորդը՝

մեր թվականության 4-րդ դարում, այսինքն՝ այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ հայերը սերտ տնտեսական ու քաղաքական հարաբերության մեջ են եղել հունական ժողովրդի հետ, և փոխադարձ կուլտուրական հաղորդակցության ավելի նպաստավոր պայմաններ կային նրանց համար:

Հայ գրականության մեջ առակը, ինչպես ցույց է տալիս Մառը, առաջին անգամ արձանագրում է Փավստոս Բյուզանդը: Իր պատմության 3-րդ դրոսության Գլ. 3, էջ 28—29-ում, Փավստոսը գրում է.

«Նմանեալք լինէին այնմ հօտի խաշանց, որք զպահպանութիւն շանցն պահողաց պահպանացն ի բաց մերժեցին և կամօք իւրեանց կերակուր գէշ թշնամութեան գալլոցն մատնեցան, ըստ նմանութեան մեծին ակննացուց քաղաքին»:

5-րդ դարում առակն օգտագործում է Դավիթ փիլիսոփան, որը իր «Գիրք Սահմանաց» փիլիսոփայական աշխատության մեջ գրում է հետևյալը.

«Գտանեմք երբեմն և զսուտն և բարի, որպէս զոր ասելոցս եմք: Ետ ոմն ցոմն յաւանդ սուսեր և ի ժամանակի բարկութեանն շոգաւ խնդրել, որպէսզի զսպանտմն արասցէ. իսկ նա ուրացաւ, թէ ոչինչ ետուրցի և ստեաց. Եւ ահա սուտ, որ բարի գոյ» (Գիրք Սահմանաց Դավթի փիլիսոփայի, պրակք ԺԵ):

Անուհետև առակը տեսնում ենք հաջորդ դարերի գրականության մեջ: Այսպես, 9-րդ դարի պատմաբան Թոմա Արծրունին գրում է.

«Առ սա ինձ ի ճախ ելանէ քերթողական արուեստն, որ ասէ. «Բագում անգամ աղուէսք թագատրեւ խորհեցան, բայց շունք ոչ առին յանձն». կամ՝ «Ե՛ր դէպ երանէ և հին առասպելն Ոլոմպիանու փիլիսոփայի, որ վասն առիժուն և քուարակացն են բարառնութիւնք. տեղեակ են այսմ ուսումնաւէր անձինք» (Պատմ. Թովմայի վարդ. Արծրունույ, երրորդ դար., Գլ. Ա., Թիֆլիս, 1917 թ., էջ 206):

Մառի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ոլոմպիանոսի անունով գոյություն ունի առակների ժողովածու հայ հին գրականության մեջ և Ոլոմպիանոսի անունը հիշվում է հայ մատենագրության մեջ և այդ Ոլոմպիանոսը ո՛չ այլ ոք է, եթե ոչ Եզոպոսը: Մառը գրում է, որ Ոլոմպիանոսի մասին առաջին անգամ հիշում է Թոմա Արծրունին իր պատմության մեջ:

Առակի մասին ակնարկում է Մովսես Խորենացին Սահակ Բագրատունուն ուղղած իր խոսքի մեջ.

«Բայց զի՛նչ արդեօք տարփանք քեզ և

Բիւրասպեայ Աժդահակայ փժոնն և անճոռնի առասպելքն իցեն. և կամ է՛ր սակա զմեզ պարսից անյարմար և անոճ բանից, մանաւանդ թէ առաւել վասն անբանութեան առնել աշխատ... զի՛նչ քեզ այսոքիկ կարօտութիւն առասպելք սուտք, կամ զի՛նչ պէտք անմիտ, և անհանճար բանից յարմարանք: Մի՛ արդեօք յունական պերճ և ողորկ առասպելքն իցեն հանդերձ պատճառաւ, որք զճմարտութիւն իրաց այլաբանաբար յինքեանս ունին թարուցեալ» (Մովս. Խորեն., Պատմ. Հայոց, Տիֆլիս, 1913 թ., էջ 89—90):

Առակը 11-րդ դարում, Գրիգոր Մագիստրոսի ժամանակ, որպես դպրոցական գիտելիք նույնիսկ ավանդվել է դպրոցներում, «առասպելավարժութիւն» անվան տակ: Գրիգոր Մագիստրոսն իր աշակերտներին՝ Բարսեղին և Եղիսեին գրած նամակում («Յաղագս խնդրոյ գրոց Արիստոտէլի» թղթում) նշում է այդ հանդամանքը: Մառը գրում է, որ հունական ճարտասանական դասագրքերի մեջ հատուկ գուլիս է հատկացված եղել առակներին, որը կոչվել է *περὶ μύθου*. սակայն այդ գուլիսը, ինչպես գրում է Մառը, հայերեն թարգմանված միակ հունական ճարտասանության գրքի մեջ բացակայում է (Марр, Сборник прѣг Вардана, էջ 435):

Ո՛վ է Ոլոմպիանոսը, որին հիշել է Թոմա Արծրունին և որո՞նք են նրան վերագրված առակները:

Այս հարցով զբաղվել է Մառը: Նրա ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հույները չեն ունեցել Ոլոմպիանոս անունով առակագիր: Այդ անունով հայտնի է հույն հեռատոր, որի մասին հիշել է Սվիդասը. բայց հայերենում կան Ոլոմպիանոսի առակները: Այս առակների լիակատար ժողովածուն հրատարակել են Մխիթարյանները 1842 թվին իրենց մատենադարանի ձեռագրից: Ժողովածուն վերահրատարակել են 1854 թվին նույն Վենետիկի Մխիթարյանները: Ոլոմպիանոսի առակները հրատարակվել են նաև Բաքվում, 1878 թվին (Գոշ Մխիթարյայ) «Ոլոմպիանու և Եզովպոսի ընտիր առակները» վերնագրի տակ:

Ոլոմպիանոսի առակների քանակի մասին ակադեմիկոս Մառը գրում է, որ դրանք քանակով անպայման ավելի քիչ են, քան Եզովպոսի առակները: Եզովպոսի առակների թիվը հաշվվում է 500-ից ավելի, մինչդեռ Ոլոմպիանոսի անվան հետ կապված է ընդամենը 15 առակ, որից մեծ մասը մեզ հասել է Վարդան Այգեկցու առակների հետ, որպես Այգեկցու առակ: Ոլոմպիանոսի առակները հետևյալներն են՝ «Մծմալլը և գալլը»,

«Կրիան և ձին», «Առյուծը և գեղեցկուհին», «Աթիսը և պատանին», «Մերացած արյուծը և աղվեսը», «Եղջերուն և ձագուկները», «Ճայն ուրիշի փետուրներով», «Նապաստակները և գորտերը», «Ագռավը և կարպազը», «Էշն առյուծի մորթով», «Գորտը և աղվեսը», «Ոչխարները և գայլերը», «Արջանները և առյուծը», «Ագռավը պանրով և աղվեսը», «Կապիկը քաղաք կառուցող» (Մառ, նույն, էջ 456): Վենետիկի հրատարակության մեջ Ոլոմպիանոսին վերագրված է 23 առակ:

Ոլոմպիանոսի առակների մասին, ինչպես գրում է Մառը, «ավելի պարզ ու ավելի արդարացի» կարծիք է հայտնում Նորայր Բյուզանդացին, որը գրում է.

«Ենտքիս կարգն կբերե, որ այսպիսի դիտողություն մընեմ նաև Ոլոմպիանոս առակաց թարգմանության վրա, որ հրատարակյալ են Մխիթար Գոշի առակաց հետ: Այս թարգմանության ժամանակն հայտնի չէ, բայց կրնանք կարծել, որ Թ. դարեն առաջ է, վասն զի Թովմար Արծրունի յուր պատմության մեջ (Գ. ա. էջ 137) կհիշե ԺԳ առակը. վայելչություն դարձվածոց, ընտրություն բառից, համառոտ և կոշտի ոճ մը, մասնավոր համեղություն մը կընծայեն հնգետասան առակաց. հնգետասան կըսեմ, վասն զի ակայալ վեշտասաներորդեն հայերեն լեզուն բողոքովին կփոխվի, կանգարգանա, կանշքի, պարզ կրսեմ՝ կոամկանա: Այդ ԺԶ-ԻԳ առակը մասն են Աղվկպագրաց կամ Վարդանա առակաց» (Նորայր Բյուզանդացի, «Հայկական Բառաքնություն», Կ. Պոլիս, 1880, էջ 51):

Եզոպոսի առակները հայ գրականության մեջ մուտք են գործել Վարդան Ալեկցու առակների միջոցով: Ալեկցին Եզոպոսի առակներին տվել է կրոնական գունավորում և քրիստոնեական-բարոյական՝ իմաստավորում, մինչդեռ Եզոպոսի առակներն աշխարհիկ են, շոշափում են սոցիալական կյանքի բազմազան կողմերը և զերծ են կրոնական բնույթից: Այս դիտողությունից բացառություն են կազմում հետևյալ առակները՝ ԽԲ, ԽԳ, ԽԵ, Ծ, ԾԹ, ԿԶ, ԿԹ, Է, ԷԵ, ՂԱ, ՂԳ, ՂԵ, ԾԲ, ԾԶ, ԾԺ, ԾԺԱ, ԾԺԲ, ԾԺԳ, ԾԺԴ, ԾԺԵ, ԾԺԶ, ԾԺԸ, ԾԻԳ, ԾԻԷ, ԾԼ, ԾԼԱ, ԾԼԳ, ԾԼԴ, ԾԼԵ, ԾԼԶ, ԾԾ, ԾԿ, ԾԿԱ, ԾԿԴ. որոնք կրոնա-բարոյական, եկեղեցական բնույթ չունեն:

Մառը հայտնում է այն կարծիքը, որ Եզոպոսի առակները մուտք են գործել հայկական գրականության մեջ ոչ միայն անմիջականորեն հունականից թարգմանվելով, այլև սիրիական ու արաբական աղբյուրներից: «Կան, սակայն, լեզուներ,—գրում է Մառը,—

բացի հունարենից, որոնցից հայերը թարգմանել են գրական կոթողներ: Դա արաբական և մանավանդ ասորական լեզուն է: Որովհետև այդ լեզուներով գոյություն ունեն Եզոպոսի առակները, բնականորեն հարց է ծագում՝ հայերը փոխ չեն առել հունական առակները, թեևուզ և մասամբ, ասորիների և արաբների միջոցով» (Մառ, նույն, էջ 466—467):

Ի՞նչն է հիմք ծառայում Մառի համար այդ ենթադրությունը կատուցելու: Մառն իր ենթադրությունը հիմնում է Լոխմանի վրա, որին վերագրված առակները, ըստ Մառի, մուտք են գործել հայ ժողովրդի մեջ: Լոխմանն արաբական իմաստուն է, որի հռչակը տարածված է եղել ամբողջ Արևելքում. նրա անունը և իմաստության հռչակը մինչև վերջին ժամանակներս հիշվել է անդրկովկասյան հայ և աղբյուրական ժողովուրդների մեջ: Մառը գրում է, որ Եզոպոսի առակներն արաբական ժողովրդի մեջ տարածվել են Լոխմանի անունով, որ արաբական տառադարձությամբ արտաբերվել է Լուխման: «Լոխմանին վերագրված առակների մինչև այսօր մեզ հայտնի խմբագրումները,—գրում է Մառը,— շարադրված են ուշ շրջանի, համենայն դեպս, վոլգար խոսքին ավելի մոտ լեզվով և հեղինակի նկատմամբ հիմք են ընձեռնում ենթադրելու, որ քրիստոնյա է, որ ապրել է Սիրիայում կամ Եգիպտոսում: Արաբների մեջ ժողովրդական իմաստուն Լոխմանի անունը ծանոթ է նաև հայերին 13-րդ դարից. Խաչատուր Կեչառեցին իր «Բարաոնությունք»-ի մեջ նրան անվանում է Լոխման: Մակայն հայերեն լեզվով պահպանված Եզոպոսի առակների մեջ չկա մի առակ, որ անմիջական կախում ունենա արաբական տեքստից: Եթե առանձին առակների մեջ մենք մատնացույց չենք անում արաբական զուգահեռները, ապա այդ կախված է նրանից, որ արաբական խմբագրությունն առանձին մերձակցություն չունի հայկականի հետ» (Մառ, նույն, էջ 467):

Ասորական աղբյուրությամբ հունական առակների մուտքը հայ գրականության մեջ Մառը հիմնավորում է մի շարք եզրահանգումներով:

Մինչև 10-րդ դարը, ըստ Մառի, հայկական գրականությունն ունեցել է զարգացման երեք էտապ: Այդ էտապներից առաջինը Մառի տեսության մեջ կոչվում է ասորական-քրիստոնեական, երբ հայոց գրականության մեջ իշխել է ասորական կուլտուրական ժառանգությունը, երկրորդը՝ հունական-բյուզանդական, որը «մի ժամանակ ամբողջովին ընդգրկել է հայերին», երրորդը՝ ինքնուրույն

գարգացման ուղին, որով ընթանալու փորձերն արվել են վաղուց (Մառ, նույն, էջ 505, 511):

Առաջին երկու էտապում, ըստ Մառի, սկիզբ է առել և զարգացման առանձին թափ ընդունել թարգմանական գրականությունը Հայաստանում: Եզոպոսի առակների հայերեն թարգմանությունը համընկնում է առաջին էտապին, ասորական-քրիստոնեականին: «Մեր եզոպոսյան առակները,— գրում է Մառը,— մոտենում են հունական բնագրերին: Իհարկե, դրանով դեռ չէր բացառվի նրանց թարգմանության հնարավորությունն ասորականից: Ինչպես հայտնի է, այդպիսի կողմնակի ճանապարհով հայերեն են թարգմանվել շատ կոթողներ, ինչպես, օրինակ, Եվսեբիոսի «Եկեղեցական պատմությունը» (Մառ, նույն, էջ 505—506): Ընդունելով հանդերձ, որ չի բացառվում Եզոպոսի առակների հայերեն թարգմանությունն ասորականից, Մառն անմիջապես այդ տողերից հետո ավելացնում է. «Սակայն ոչ մի քանի մեջ չի արտահայտվում ասորական լեզվի ազդեցությունը մեր հայկական թարգմանական տեքստի վրա: Երբեք առիթ չհանդիսացավ հաստատելու առակների հայկական խմբագրումների առանձին մոտիկություն ասորականին: Եզոպոսյան առակների հայերեն տեքստն անմիջականորեն մոտենում է հունական տեքստին: Այդ է վկայում հայկական առակների տեքստերի, երբեմն նույնանման, առկայությունը հենց հունական գրականության մեջ: Այդ են վկայում հայկական տեքստի մի քանի լեզվաբանական առանձնահատկություններն առակների մեջ: Վերջապես, այդ է վկայում Եզոպոսյան առակների խմբի խմբագրի հունական Ոլոմպիանոս անունը, եթե նույնիսկ հավանական չընդունենք, որ այդ խումբն ամբողջովին վերցված է հեռոտորության հունական դասագրքի հայերեն թարգմանությունից: Բացի դրանից, հենց առակների կիրառումը դպրոցում, հույներից փոխառնված մանկավարժական ձև է: Անկասկածելի է Եզոպոսյան առակների նըշված նպատակադրումը հույների մեջ: Սակայն Եզոպոսի առակը հայերեն թարգմանությամբ կարող է պահպանվել անձեռնմխելի անաղարտության մեջ և, այնուամենայնիվ, բոլորովին չհամապատասխանել հունական ոչ մի խմբագրման, բայց այդ նշանակում է, որ հայերեն թարգմանության հունական իսկական բնագիրը կորել է կամ մեզ հայտնի չէ» (Մառ, նույն, էջ 506—507, § 512):

Եզոպոսի առակների հայոց գրականության մեջ մուտք գործելու մասին Մառի վերը բե-

րած վկայությունները միաբերան հաստատում են, որ արաբացիներից առաջ հայկական գրականությանը ծանոթ են եղել Եզոպոսի առակները դարեր առաջ, այն է, մեր թվականության 4-րդ և 5-րդ դարերում: Մառը գրում է. «Մի խոսքով, մենք հակամետ ենք Եզոպոսյան առակների թարգմանությունը վերագրել հունական ազդեցության հայոց գրականության մեջ գերիշխելու ժամանակին, այսինքն մոտավորապես 6-րդ և 7-րդ դարերին» (Մառ, նույն, էջ 506—507):

Մառի այս դրույթը հաստատվում է պատմական այն իրողությամբ, որ արաբները 6-րդ դարում շեն ունեցել այն կուլտուրան, որը ի վիճակի լիներ հայերի վրա ազդելու այն աստիճան, որ կուլտուրայի բարձր աստիճանին վաղուց հասած հայ ժողովուրդը նրանցից փոխ առներ Եզոպոսի առակները, և այն էլ արաբականից թարգմանելով այն ժամանակ, երբ արաբական գիրն ու գրականությունը դեռ սաղմնավորման մեջ էին հենց իրենց՝ արաբների մեջ: Մյուս կողմից, արաբները 7-րդ դարի երկրորդ կեսին, տիրելով Անդրկովկասին մինչև 8-րդ դարը, մեր երկրից միայն ստացել են հարկ և շեն խանութել ներքին գործերին, կուլտուրական հաղորդակցության և շփման մեջ չեն եղել Անդրկովկասյան ժողովուրդների հետ այնպես, ինչպես ասորիները և հույները՝ հայերի հետ: Հայաստանը և Վրաստանը իրենց ներքին կյանքով, իրենց կուլտուրայով, կենցաղով ու կառավարման եղանակով եղել են ինքնուրույն, միանգամայն անկախ արաբացիներից: Սրանք այնպիսի պայմաններ են, որոնք մերժում են արաբական 6—7-րդ դարաշրջանում ազդեցության ենթադրությունը հայ գրականության վրա:

Հարց է ծագում, թե քանի՞ առակ է թարգմանվել հունարենից և ե՞րբ են թարգմանվել դրանք հայերեն: Այս հարցերի պատասխանը նույնպես տալիս է Մառը:

Վարդան Արզեկցու առակների ընդհանուր թիվը 380 է, որից 73-ը, ինչպես գրում է Մառը, Եզոպոսի առակներն են, իսկ սրանցից 15-ը Ոլոմպիանոսինն են: Մառը, ինչպես վերը տեսանք, առակների հայերեն թարգմանության հնագույն ժամանակը համարում է 6—7-րդ դարը: Չնայած առակների թարգմանության ժամանակը չի կարելի որոշակիորեն սահմանել, սակայն և այնպես, հնարավոր է համարվում ընդունել, որ Եզոպոսի առակների մեծ մասը հայ գրականության մեջ մուտք են գործել մեր թվականության 10-րդ դարում: Մառը գրում է, որ բացի առակներ պարունակող հեռոտորական դասագրքի թարգմանությունից և Խորենացու

ակնարկներից, Եզոպոսի առակները հիշվում են, իհարկե, մեջբերումների ձևով, նաև Ստեփանոս Ասողիկի, Թոմա Արծրունու և Գրիգոր Մագիստրոսի երկերի մեջ: Գրիգոր Մագիստրոսի թղթերից երևում է, որ նրա օրով առակները հայկական դպրոցներում դասավանդվել են որպես առանձին առարկա: Մյուս կողմից, գրում է Մառը, եթե շհաստատվի, որ 15 Եզոպոսյան առակների ժողովածուի հեղինակ Ոլումպիանոսը նույն անձն է, ինչ որ Սվիրասի հիշած հույն ստիստոս Օլումպիանոսը, և որ հայերեն թարգմանված այդ 15 առակները պատկանում են ո՛չ թե հայ, այլ հույն Օլումպիանոսին, ապա դժվար կլինի հերքել այն իրողությունը, որ Օլումպիանոսի կողմից հայերեն թարգմանված Եզոպոսյան 15 առակի այդ ժողովածուն Հայաստանում կազմվել է հելլենիստական ժամանակաշրջանում և հայերը ծանոթացել են Եզոպոսյան առակների այդ խմբի հետ հենց այդ ժամանակամիջոցում:

Մառին չի զբաղեցնում այն հարցը, թե հայկական ֆոլկլորի մեջ, մինչև գրերի գյուտը, կարո՞ղ էին գոյություն ունենալ Եզոպոսի առակները, թե ոչ: Մառն առանձին կարևորություն չի տալիս այն հանգամանքին, որ Այգեկցուց առաջ, հիշյալ հայ գրական կոթողների մեջ, հիշվել են Եզոպոսի առակները և որ նույնիսկ դասավանդման նյութ են դարձել հայկական դպրոցներում 10—11-րդ դարերում: Մառը կարևորագույն շնանակություն է տալիս Վարդան Այգեկցու կատարած դերին Եզոպոսի առակները հայոց գրականության մեջ փոխադրելու գործում: Վարդան Այգեկցու նշանակությունն այն է, որ նա առաջինը 12-րդ դարում քարոյախոսական երանգավորում մտցրեց Եզոպոսյան առակների մեջ, առակներն արմատավորեց իր ժամանակի գրականության մեջ և ինքը հանդիսացավ գրական այդ ժանրի հիմնադիրը հայ գրականության մեջ:

«Մինչև 12-րդ դարի վերջը, — գրում է Մառը, — մինչև Վարդան Այգեկցու երևան գալը, մեզ չհաջողվեց հայ գրականության մեջ հանդիպել առակների քարոզիչների կողմից բարոյախոսական նպատակով օգտագործելու որևէ հետքի: Եթե, սակայն, որևէ անհայտ քարոզչի մոտ առակը պատահաբար գործադրված էլ լինի, դրանով չի նսեմանա Վարդանի նշանակությունը: Վարդանը նրանց մեջ հանդիսանում է քարոզների նոր տեսակի ստեղծող, նրանց մեջ ձեռք է բերել տաղանդավոր քարոզչի բացատրիկ համբավ, սկիզբ դնելով առակը բարոյախոսական նպատակով լայնորեն օգտագործելուն: Ո՞րքան պարզ են այն եղանակները, որոնց օգնությամբ հե-

քիաթներն ու զրույցները դառնում են առակ: Հայ գրականության մեջ առ այժմ Վարդանին ենք ճանաչում առակի հիմնադիր, և հենց այլաբանությունները կարող են ծառայել որպես լավագույն օրինակ գրական այս տեսակի համար հայերի մեջ» (Մառ, նույն, էջ 368, § 382):

Ակադեմիկոս Մառին զբաղեցրել է նաև «Բարոյախոս»ի (Ֆիզիոլոգ) հարցը, որը հանդիսացել է աղբյուր Վարդան Այգեկցու համար:

«Ֆիզիոլոգ» (Physiologus) անվանվել է այն ժողովածուն, որ կազմվել է մեր թվականության 2—3 դարում, համանորեն Ալեքսանդրիայում: Այս ժողովածուի մեջ գետեղվել են հատվածներ անտիկ աշխարհի խոշորագույն գրողներից՝ մեծ մասամբ Արիստոտելից, Պլինիոսից և ուրիշներից: Ժողովածուն կազմել են քրիստոնեական կրոնի հետևողներ, որոնք հին գրողների ժողովածուի հատվածները կազմում են 50 գլուխ, որոնք վերաբերում են բացառապես կենդանիներին, թռչուններին, միջատներին, հանքերին և թվարկում են նրանց հատկությունները ու տալիս նրանց սիմվոլիկ մեկնաբանությունները: Բացի իրական կենդանիների ներկայացուցիչներից, այստեղ տեղ են գտել նաև երևակայական կենդանիներ՝ ինչպես ֆենիքսը (փյունիկը), միակելջուրը, կենտավրոսը և այլն: Այսպիսով, ժողովածուի հեղինակների համար, բիրյուական ուսմունքը հիմք է ծառայել կենդանական, բուսական և հանքային աշխարհների մեկնաբանման համար:

«Ֆիզիոլոգ» բառը հայերենում թարգմանվել է «Բարոյախոս»: Հայկական «Ֆիզիոլոգ»ը այս անունն ստացել է այն կենդանական առակներից, որ կազմում է հայկական «Ֆիզիոլոգ»ի բովանդակությունը: Այդ առակների թիվը հասնում է 60-ի (Մառ, նույն, էջ 424): Հայտնի է, որ «Ֆիզիոլոգ»ը վերագրվում է Եպիֆանոս Կիպրացուն, որը թարգմանվել է հայերեն, շնայած, ինչպես գրում է Մառը, հայկական ձեռագրերի մեջ չի պահպանվել Կիպրացու անունը: Հայաստանում ո՛չ միայն թարգմանվել է հունական «Ֆիզիոլոգ»ը, այլև Հայաստանն ունեցել է իր «Ֆիզիոլոգ»ը, որ գրել է 60 առակ, որոնք գրեթե բոլորը, կենդանական վեպ են, ինչպես՝ «Վասն բորենոյ», «Վասն քարադողոչի», «Վասն արջոյ», «Վասն տատրակի» և այլն (տես Մառի նույն գրքի հավելվածը):

«Ֆիզիոլոգ»ի բնագրում կան գլուխներ թանկագին քարերի մասին, գրում է Մառը: Հայկական ժողովածուի մեջ կան մի քանի առակներ, որոնց մեջ տեղ են գտել զանազան քարերի փակական կամ կեղծ հատկու-

թյուններ: Սակայն այս առակները կազմելու ժամանակ, ժողովածուի հեղինակները օգտագործել են հատուկ շարադրություններ թանկագին քարերի մասին, ըստ որում, այս շարադրություններից վերցրել են նկարագրական մասը և իրենց կողմից այվելացրել բարոյախոսական մեկնաբանությունները» (Մառ, նույն, էջ 427):

«Ճիզիոլոգ»ը ոչ միայն թարգմանվել է հայերեն, այլև նա հանդիսացել է աղբյուր վարդան Այգեկցու համար: Այգեկցու ժողովածուի մեջ «Ճիզիոլոգ»ից մուտք են գործել մի շարք առակներ, որոնք նշված են Մառի աշխատության մեջ:

«Ճիզիոլոգ»ի նշանակությունն այն է, որ նա ծառայում է որպես աղբյուր վարդան Այգեկցու համար: Թե՛ վարդան Այգեկցին և թե՛ նրան հետևողները, ըստ Մառի, իրենց առակների մեջ նույնիսկ նրանից են վերցրել: «Ճիզիոլոգ»ը վարդանի առակների ծագելուց առաջ հանդիսացել է մի անոթ, գրում է Մառը, որի մեջ պահպանվել են օտար տարրերը. «Մեզ հայտնի է Ճիզիոլոգի խառն տեսակների գոյությունը,— գրում է Մառը,— որոնց մեջ «Ճիզիոլոգ»ի հոդվածներին միահյուսվում են նոսրացրած առակները կամ վարդանի այլաբանությունները, այսինքն որոնց մեջ ունենք «Ճիզիոլոգ»—նոսրացրած և «Ճիզիոլոգ»—վարդան ժողովածուն» (Մառ, նույն, էջ 427):

Մառը հայկական «Ճիզիոլոգ»ի ժամանակը սահմանում է 6—7 դարերը: Կենդանական վեպի զննությունը ցույց է տալիս, ասում է մառը, որ «Ճիզիոլոգ»ը համանորեն վայելի է մեծ հեղինակություն կլասիկ շրջանի հայկական գրականության մեջ և հայկական գրագետ հասարակության մեջ: Մառը ցույց է տալիս, որ «Ճիզիոլոգ»ն օգտագործել են նզնիկը և Դավիթը, ինչ որ նշանակում է՝ «Ճիզիոլոգ»ը հայերին հայտնի է եղել դեռ 5-րդ դարից:

«Ճիզիոլոգ»ի հայկական տեքստը թարգմանվել է հունարենից: Այդ թարգմանությունը, ինչպես կարդում ենք Մառի ուսումնասիրության մեջ, բնորոշ է նրանով, որ հարազատորեն չի արտահայտում հայերեն լեզվով հունական բնագրի ո՛չ միայն բառերը, այլև դարձվածքները: Ուշագրավ է, ասում է Մառը, այն հանգամանքը, որ հայերեն թարգմանության մեջ մուտք են գործել գաղանների անուններ հունական լեզվով. դրանք են՝ ալթորոփոս (ալթորոփոս)*, պանթեր (պանթեր), կետ (կետոս), կաստորիոս (կաստորիոն), կոկորդիլոս (կոկոդիլոս), փյունիքս (ֆոնիքս), ինքնիմոն (ինքնիմոն),

պերիդեքսիոն (պերիդեքսիոն), քաղանդոս (խալանդրիոս)** և այլն:

Հունական «Ճիզիոլոգ»ը հայերեն թարգմանվել է ըստ վաղ ժամանակ: Մխիթարյանները հունական «Ճիզիոլոգ»ի հեղինակ համարում են, նպիսիանոս Կիպրացուն և գրքի վերնագիրը թարգմանել են այսպես՝ «Սրբոյն նպիսիանու Կիպրացույ արքեպիսկոպոսի խօսք բարուախօսին» (նօ ֆիզիոլոգս ա՛րխետայ լեգո՛ն Պերի՛ տո՛ն Լե՛ոնտոն): Հունական բնագիրը ցույց է տալիս, որ Մխիթարյանների թարգմանությունը հունարենի բառացի և ճշգրիտ թարգմանությունը չէ: Բառացի թարգմանությունը կլինի՝ «Բարոյախօսի ասացեալ յաղագս առիւծոն», Մյուս կողմից, «բարոյախօս» բառը Մխիթարյանների կողմից ճիշտ չէ գործածված. դա, ինչպես նկատում է Մառը (հիմնվելով Գալուատ Տեր Մկրտչյանի դիտողությունների վրա), վուլգարիզմ է, որ հետագայում մտել է ձեռագրերի մեջ արտագրողների անդրագիտության հետևանքով: Գալուատ Տեր Մկրտչյանը ճիշտ թարգմանություն համարում է ո՛չ թե «բարուախօս», այլ «բարոյախաւս» (բարոյախօս): Մառը ճիշտ է համարում Գալուատ Տեր Մկրտչյանի ենթադրությունը և հիմնավորում է գիտական-լեզվաբանական փաստարկումներով: Ճիզիս (ֆոնիս) բառը, գրում է Մառը, թարգմանվում է բնություն, «բուն» արմատից, բայց հունական ֆոնիս (φῶνις) բառը ֆոնիտոլոգոս (φουσιολογος) բարոյության մեջ թարգմանի մոտ ստացել է ոչ թե «բնություն» իմաստը, այլ «բարք», «կենցաղաձև» և այստեղից հունական ֆոնիտոլոգոս բառը թարգմանում է «բարոյախօս» (сказатель нравов): Մառը հայերեն թարգմանի այդ բանը բխցնում է հունական վերնագրից, որ հետևյալն է. էկ տու ֆոնիտոլոգու, պերի Ֆո՛ւսեոս կա՛յ ե՛յրուս ձո՛նե կա՛յ երպեաո՛ն: Հայերենը կլինի՝ «Ի բարոյախօսէ յաղագս բնութեան և բարուց կենդանեաց»: Հայ թարգմանիչը հունական ֆոնիսը թարգմանել է «բարք»՝ հետևելով ֆոնիսին հաջորդող εἶδος (ե՛յրոս) բառին, որ հունարեն նշանակում է տեսակ, գործողության կերպ (Մառ, «Ճիզիոլոգ», էջ XXXVIII, § 12):

«Ճիզիոլոգ»ի հայերեն այս թարգմանության բնագիրը թարգմանվել է վրացերեն, Մառը մի շարք փաստերով հաստատում է, որ իսկապես վրացերենը թարգմանվել է հայերենից, իսկ հայերենը՝ հունարենից, ընդ որում, վրացական թարգմանությունը, որ

** Н. Я. Март, Тексты и разыскания по армяно-грузинской филологии, кн. VI.

*) Փակագծերում հունարեն բառեր են:


կատարվել է հայերեն բնագրից 10-րդ դարում, «լավագույն կերպով պահպանել է հին հայկական «Ֆիզիոլոգ»ը, քան մեզ հասած հայկական օրինակները» (Մառ, նույն, էջ VIII): Հայկական թարգմանությունը հունարենից, որ վրացերենի համար հանդիսացել է վրացականի համար տեքստ, կատարվել է, ըստ երևույթին, 6-րդ կամ 7-րդ դարում: Մառը վրացական 10-րդ դարի թարգմանություն օրինակը համարում է Շատրերտի ձեռագրերը, իսկ հայկականի ձեռագրերը՝ Խորենաշատինը: Խորենաշատի այս օրինակը, ըստ Գալուստ Տեր Մկրտչյանի (որի հետ համաձայն է և ինքը Մառը), հունական թարգմանությունների ժողովածու է և ոչ թե ամբողջովին նպիսիանոս Կիպրացունը, ինչպես ընդունել են Մխիթարյանները: Համաձայն Գալուստ Տեր Մկրտչյանի Մառին ուղղած նամակի, այդ ժողովածուն պարունակում է հատվածներ թարգմանված հունարենից՝ նպիսիանոսից, Նոննոսից, «Ֆիզիոլոգից, Արիստոտելից և Պլատոնից» (Մառ, նույն, էջ XLVII, § 18):

«Բարոյախոս»ի հունարենից թարգմանված հայերեն տեքստը, ինչպես և այս վերջինից

թարգմանված վրացերենը, պարունակում է հետևյալ առակները՝ Վասն մողէզի, Վասն առիւծու, Վասն ալթողոփու, Վասն քարանց հրահանաց, Վասն սղոցի, Վասն քաղանդրի, Վասն հաւալւան, Վասն բուռլ, Վասն արծուռ, Վասն փիւնիրս թռչնոյ, Վասն յոպոպոյ, Վասն ցոռ, Վասն իժի, Վասն աւձի, Վասն մրջման, Վասն յուշկապարկաց և իշացլուց, Վասն ոզնույ, Վասն աղուխու, Վասն յովազի, Վասն վահանակրէի, Վասն կարաւոյ, Վասն անգեղ, Վասն մրջինատեւծու, Վասն աքսոյ, Վասն մթեղչերի, Վասն կաստորի, Վասն բորենոյ, Վասն շնչուոյ, Վասն ինքնիմոնի, Վասն պերիդիքսոն ծառոյ, Վասն պառաւոյ, Վասն տատրակի, Վասն ծիծուան, Վասն եղջերուի, Վասն արջոյ, Վասն ժրահաւու, Վասն մեղուի, Վասն ագռաւու, ընդամենը՝ 38:

Վարդան Այգեկցին անդրանիկ առակագիրը հանդիսացավ հայկական գրականության մեջ, որ իր փայլուն տաղանդով, առակների մեջ արտացոլեց իր ժամանակաշրջանի սոցիալական տրամադրություններն ու ձրգտումները:





ԳՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ ԳՐԻԳՈՐ ՇՂԹԱՅԱԿՐԻՑ

Գրիգոր Շիրվանցին, որ 1715 թ. Երուսաղեմի պատրիարք ընտրվելով ավելի է հայտնի դարձել Շղթայակիր մականունով, անգնահատելի ծառայություններ է մատուցել Երուսաղեմի աթոռին, իր եռանդուն ջանքերի շնորհիվ նրա ծանրաբեռնված պարտքերը մաքրելով, որով և նշանավոր անուն է թողել պատմության մեջ:

Այս ականավոր մարդու կյանքի մասին նախքան նրա պատրիարքությունը՝ մինչև այժմ գրեթե ոչինչ ծանոթ չի եղել մեր պատմական գրականության մեջ բացի այն դույզն տեղեկություններից, թե նա Ամրտուլի միաբան էր և պատիարքության կոչվելուց առաջ եղել էր Գլտի, այն է՝ Մուշի Ս. Կարապետի փանահայր: Սակայն Հայկ. ՍՍՌ Պետական Մատենադարանի գրչագրերում կան անտիպ նյութեր, որոնք ո՛չ միայն լույս են սփռում այս անվանի հասարակական գործչի կյանքի այդ անծանոթ շրջանի վրա, այլև ցույց են տալիս, որ նա այդ շրջանում տվել է նաև մի շարք գրական արտադրություններ:

Նպատակ ունենալով ի մի ամփոփել և առաջիկայում հրատարակել Գրիգոր Շղթայակիրն վերաբերող այդ նյութերը, որոնք, համոզված ենք, մեծ շահեկանություն կներկայացնեն մեր մտավորական հասարակության համար, այս անգամին ուղարկություն ենք հանձնում նրա գրչին պատկանող երեք տաղեր, որոնք միամանաբար մի առանձին խումբ են կազմում նրա թողած գրական երկերի մեջ, իրենց ներկայացրած լեզվական և ոճական առանձնահատուկ նկարագրով:

Հիշյալ երեք տաղերը գտնվում են Հայկ. ՍՍՌ Պետական Մատենադարանի № 737

ձեռագրում: Հեղինակի մյուս արտադրությունների նկատմամբ այս երեք կտորների ներկայացրած առանձնահատկությունն այն է, որ սրանք գրված են խրթին լեզվով: Գրիգոր Շիրվանցին, ցանկանալով նմանող լինել իր հուշակալի ամուլանալցին՝ Գրիգոր Մագիստրոսին, որը, ինչպես հայտնի է, նույնպես խրթնաբան գրվածքներ է թողել ՃԻ դարից, լայն շափերով արտասովոր բաներ է գործածել այս տաղերի մեջ, ինչպես և փոխ է՝ առել նրա գործածած շափերը: Բայց այս տաղերի լուծումը այնպիսի մեծ դժվարություն չի ներկայացնում, ինչպես ներկայացրել են Գրիգոր Մագիստրոսի գրվածքները, որովհետև այստեղ օգտագործված խրթին բառապաշարի հիմնական մասը նրեմիա վարդապետի բառարանից է. մնացածը բաղկանում է հայերեն լեզվի թեև ընդհանրապես արտասովոր, բայց ծանոթ բառերից. իսկ մի քանիսը ուղղակի հունարենից են առնված:

Գրիգոր Շղթայակիր այս տաղերը գրական տեսակետից թերևս աչքի ընկնող մի արժեք չունեն, թեև այնտեղ պակաս չեն գեղեցիկ ու հաջող պատկերներ, փոխաբերություններ, դարձվածքներ, որոնք հեղինակի գրական վիրթ ճաշակն են արտահայտում: Բայց այս տաղերի իրական արժեքը նրանց բովանդակության մեջ է, որը պատմական է:

Առաջին երկու տաղերը ներբողներ են, նվիրված՝ ոմն Հովհաննես Փաղեբաշի (Հովհաննես վարդապետի): Այդ անունը մեզ հայտնում են առաջին տաղի տների սկզբնատառերը, որոնք հողում են. ձՏԵՐ ՅՈՏՎԱՆՆԵՍ Փաղեբաշ, Գրիգորիսն է քո ծառայ:

Նույն տաղի վերջին տները մեզ տալիս են և տաղի հորինման թվականը.

«Այս ծիր ի թիւ միջի գորով երև ծրբեալ. Երկ և մու թըտով յանկիւ առաւելեալ.

Յօգստոսի հրնկիւ հրնգեակ ատորքք չափեալ,

ՅԱփրողիտեայ օրն վեցշաբթի բօթ անուանեալ:

Որ է՝ 1694 թ. օգոստոսի 10-ին, ուրբաթ օրը ¹⁾:

Ո՞վ է հիշյալ Հովհաննես Փաղերան:

Այդ անունով նշանավոր անձնավորութիւն մենք չենք տեսնում Ամբուղի վանքում, որտեղ գտնվում էր այդ ժամանակ տաղի հեղինակը: Եւ առհասարակ այդ անունով աչքի ընկնող անձնավորութեան չենք հանդիպում այս շրջանում հայ հոգևորականութեան մեջ, բացի Հովհաննես Կոստանդնուպոլսեցի վարդապետից, որը Երուսաղեմի պատրիարք էր: Կարո՞ղ են արդո՞ք Գրիգոր Շղթայակրի այդ երկու ներբողականները նվիրված լինել այդ անձին, որի անհատական և հասարակական արժանիքները շատ սակավ են ծանոթ այրուտ: Եթե այո՞, ապա մենք այս տաղերով կտանանք ստույգ ծանոթութիւններ Հովհաննես Կոստանդնուպոլսեցու անձնավորութեան մասին և հենց դրանով էլ այս տաղերը կունենան պատմական լուրջ արժեք:

Վերլուծելով երկու ներբողականների բովանդակութիւնը, մենք տեսնում ենք, որ նրանք իսկապես նվիրված են Երուսաղեմի պատրիարք Հովհաննես Կոստանդնուպոլսեցուն: Հեղինակը խոսքն ուղղելով փր գովաբանած անձին, ասում է.

«Նադարի դշխոյին նադամեցեալ.
Շահապետ գանձուց նորին գքեզ կարգեցեալ» (Ա, 2):

Այսինքն թե՛
«Ռու հարսնացած սուրբ դշխոյին հաճոյանալով,
Նա քեզ պետ. (կամ իշխան) կարգեց իր գանձերին»:

Այստեղ արաբաձևորեն նշվող հարսնացած սուրբ դշխոն՝ Երուսաղեմն է, որի գանձերին, այսինքն՝ ազգային հարստութիւններին և պատրիարքական աթոռին տեր է կարգվել գովաբանվողը:

1) Թիվ «միջի», թվական արժեքներով՝
200+20+900+20=1140
Թիվ «երկ և մու»՝ 2+1= 3
Քրիստոնեական թվականի տարբերութիւնը՝ 551
1694

Օգոստոսի «հրնկիւ հրնգեակ»ը, այն է՝ 5+5, կրկին 10, քի իսկապես 1694 թվի օգոստոսի 10-ը ընկնում է ուրբաթ օր, որ հեղինակն անվանում է «վեցշաբթի»: (Տե՛ս նաև բնագրի համապատասխան մասի ծանոթագրութիւնները):

Հեղինակը նրան տալիս է նաև մի շարք վերադրումներ՝ որոնք քաջահայտ են դարձնում այդ և հաստատում: Այսպես՝ նա երկու անգամ նրան անվանում է սեղենիտար (Ա, 3, Բ, 12): Հոնարներից առնված սեղեն կամ սելին բառը (σελιον «գահ, աթոռ») նշանակում է պատրիարքական աթոռ, առաջնորդական գահ: Ռուստի՝ սեղենիտարը տար («կրող, ունեցող») բարբոթյամբ, նշանակում է պատրիարքական՝ առաջնորդական աթոռի տեր, պատրիարք, առաջնորդ: Հեղինակը նրան անվանում է նաև ճակերտ «Տովվապետ» (Ա, 1) եւի «դիտապետ» (Ա, 15), կաճիտ պետ, «սուր պետ» (Ա, 25, Բ, 12), էպապոնեալ, «առաջնորդի պատիւ՝ աստիճան ունեցող» (Ա, 10), բարձրագույն տէր (Ա, 8), գերամաբուր և հոգելի տէր (Ա, 13), և այլն:

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ Հովհաննես Փաղերան Երուսաղեմի հայոց պատրիարքներից մեկն է և, հետևաբար, նույնինքն Հովհաննես վարդապետ Կոստանդնուպոլսեցին է: Այս նույնացումը ավելի է ամրանում, եթե մենք ներբողագրի կողմից բերված որոշ նշումներ կամ ավանդակութիւններ համեմատութեան դնենք Հովհաննես վարդապետ Կոստանդնուպոլսեցու պատրիարքութեան պատմութեան որոշ անցքերի հետ:

Հովհաննես Կոստանդնուպոլսեցին, որ Նոխուշի մականունն էր կրում և Աստվածատուր Տարտնեցու աշակերտն էր, Երուսաղեմի պատրիարք է եղել 1685 թ. և մահացել 1694 թ.¹⁾, կամ 1697 թ.²⁾:

Հովհաննես Կոստանդնուպոլսեցին փր պատրիարքութեան սկզբնական շրջանում տնաբուլս հակառակորդներ էր ունեցել իր իշխանութեան դեմ: Ինչպես կարդում ենք Երուսաղեմի պատմութեան մեջ, նրա դեմ «անպակաս էին հակառակութիւնք ումանց, զի հանապազ նիւթէին նմա շարփս, իրնկենուզ զնա յաթոռոյն»³⁾: Այսպիսիներից մեկն էր եղել ոմն Սիմոն եպիսկոպոս, որ 1687 թ. ձեռք ի Դրանտէ զիշխանութիւն պատրիարքութեան Երուսաղեմի, ... և եկեալ ի բաց վարեաց անտի զՅովհաննէս և ինքն կայալ զաթոռն զամս իբր 4», բայց «ապա ընկեցաւ յաթոռոյն հնարիւք նախորդին իւրոյ»⁴⁾: Վաներով, ուրեմն, իր հակառակորդին՝

1) Բառնաբաս Վրդ. Գանձակեցի, Յաջորդութիւն պատրիարքաց Երուսաղեմի, Կ. Պոլիս, 1872 թ., էջ 57:
2) Աստվածատուր եպսկ. Տեր-Հովհաննեսյանց, Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղեմի, հտ. Ա, Երուսաղեմ, 1890 թ., էջ 414:
3) Անդ, էջ 404:
4) Անդ, էջ 405:

Հովհաննես Կոստանդնուպոլսեցին վերականգնել էր իր իշխանությունը և վերաբազմել իր գահի վրա 1691 թ., մեր ներդրողների իմականից երեք տարի առաջ: Այս դեպքին են ակնարկում հետևյալ բառերը.

«Տարուն ի տարբիրոնդ վերաբազմեալ» (Ա, 1):

Այսինքն՝ «Տարարուն եղած (հալածված), բայց դարձյալ գահիդ վերաբազմած»¹⁾:

Մենք այնտեղ ուրիշ արձագանքներ էլ ենք գտնում Հովհաննես Կոստանդնուպոլսեցու դործունեությունից: Այսպես՝ նա Կ. Պոլսից կայսերական հրովարտակ բերել տալով կարևոր վերանորոգություններ և կատարել Ս. Փրկչի վանքում, որը քաղաքի պարիսպներից դուրս էր գտնվում: Բայց, ըստ սովորության, այս շինարարությունը տեղական թուրք պաշտոնեությունից և ձեռքին առիթ էր ծառայել կեղեքելու համար հայոց վանքը. «զի բազում անգամ քննություն արարեալ, հրաման տալին նորոգութեան՝ այլ ի ձեռնարկելն հայոց փարձ՝ յարուցանելին վէճս և խռովութիւնս, պատճառելով պատճառս, և խափանելին զգործն, որպէս յայտ առնեն բազմաթիւ դրեանք դատաստանի և այլոց վասն այսր»²⁾: Ու թեև ի վերջո՝ հրահրուց զկամս նոցա՝ և անարտաք զնորոգութիւնն, կրելով վիրշտս և զեղեքութիւնս», սակայն խնդիրը քիչ հետո կրկին է արժարձվում նույն ձևով. «Թսկ այլազգիք Երուսաղեմի, որոց երկրորդ բնութիւն լեալ էր ագահութեամբ և պէսպէս բարբառօք կորզել զդրամս ի քրիստոնէից, դարձեալ բռնացան ի վերայ միաբանացն Հայոց ի պատճառս նորոգութեան Ս. Փրկչի վանաց՝ զի ոմանք ասէին թէ ավելի քան զհրամայեալն շինեալ են զակնորդ իրս, ոմանք թէ հակառակ է օրինաց մերոց, կամ զայլ իմն բանս յօդէին»³⁾: Ս. Փրկչի այս խնդիրը տեւեց մինչև Հովհաննեսի մահը, և նա մինչև վերջն էլ արիարար պաշտպանեց հայոց շահերը, հաղթահարելով դժվարությունները, ոչ միայն կաշառի ուժով, որ, իհարկեւ, անխուսափելի էր, այլև գազանաբարո, վայրենաբարո մարդկանց հանդեպ իր ունեցած շնորհալի և իմաստուն վերաբերմունքով:

1) Մենք վերաբազմեալը թարգմանում ենք (վերաբազմած, կրկին բազմած): Մեր հեղինակն այստեղ վեր գործ է ածել որպես մասնիկ, «վերստին, կրկին» էջանակութեամբ, թեև արտասովոր է այդ, բայց նա սիրով է արդեն շատ ծանոթ բառեր գործածել արտասովոր առումով, ինչպես արել է և Գրիգոր Մազիստրոսը:

2) Աստվածատուր եպսկ. Տեր-Հովհաննեսյանց, Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղեմի, հտ. Ա, էջ 411:

3) Անդ, էջ 411-412:

Ահա այդ մասին են, մեր կարծիքով, հետևյալ տողերը.

«Ապետափառ միշտ դու սաղործ տեսողն եղեալ, Սրբտացուցեր ըղձառադէմս յոյժ կաթողնեալ» (Ա, 11):

Այսինքն՝ «Թո գործերով տիրոջ նման դու միշտ փառավոր լինելով, խոժոռադեմ մարդկանց զմայլեցրիր սրբտապին սիրով»:

Հովհաննես Կոստանդնուպոլսեցին իր պատրիարքությունը շրջանում պայթած էր ունեցել նաև լատինների և հույների ոտնձգությունների դեմ: Լատինները, որոնք, անտարակույս, դեր էին ունեցել և Ս. Փրկչի վանքի վերահիշյալ դժվարությունների հարուցման խնդրում, կաթողիկ պետությունների դեպանների և նրանց ազդեցությունը շնորհիվ, 1691 թ. հակառակություն էին սկսել հայերի դեմ, «զի խորհէին մերժել և խաբար զրկել զնոսս ի տնօրինական Ս. Տեղեաց և յսփշտակել զբաժինս նոցա, յօդէ օր սաստկացուցանելով զկոնն և զվէճն»¹⁾: Իսկ հաջորդ տարին հույները վերսկսել էին իրենց սովորական վեճերը հայերի հետ: Նրանք լուր էին տարածել Պիբրու թէ պատրիարքն Յունաց անեալ իցէ հրովարտակալ զՍ. Յակոբ ի ձեռաց Հայոց», որ թեև ճիշտ չէր, ինչպես պարզվել էր հետո, բայց այնուհանդերձ դա մի հրովարտակ էր, որով հրամայվում էր «չերեկոյի ճրագալուցի Չատկին միայն պատրիարքն Յունաց և կամ փոխանորդ նորին մտցէ ի գերեզմանն Քրիստոսի, և այլք կացցեն արտաքս»²⁾: Հովհաննես Կոստանդնուպոլսեցին լատինների և հույների այս անիրավ ոտնձգությունների դեմ արիարար պաշտպանել էր հայոց իրավունքները Երուսաղեմի դատավորի առջև վավերագրերով և իր պերճաբան լեզվով: Նրա այս գործերը հանդիսանում էին Հայաստանյայց Եկեղեցու և նրա ունեցած դարավոր իրավունքների պաշտպանության ցայտուն փաստեր՝ ընդդեմ այլադավան քրիստոնյա համայնքների և իրավամբ նկատվում էին հայ քրիստոնեությունը պաշտպանող և նրա հավատի հիմքերն ամրապնդող գործեր: Այդ մասին են ներբողագրի հետևյալ տողերը.

«Իմանի դու հաստատող եղեր ընտրեալ, Ո՛վ մեղարդ լուսով փառաց փայլատակեալ» (Բ, 9):

Այսինքն՝ «Թու ընտրվեցիդ որպես հավատի հաստատող»:

1) Անդ, էջ 409:
2) Անդ, էջ 411:

Ո՞վ լուսին, որ փառքի լուսով ես փայլատակում»:

Եվ կամ՝ «Գամզազարիչ և ջատագով տէր դու յայտնեալ,

Գրտար պայծառ քան զարուսեանին արփափեղեղեալ» (Ա, 19):

Այսինքն՝ «Տեր, դու հայտնվեցիր որպես հավատի հաստատութիւն և ցատագով, եվ գտնվեցիր ավելի պայծառ քան լուսափեղ արուսայկը»:

Նշենք, որ այն հոգեմէկեր շահագործութիւններ, որ մենք տեսնում ենք Երուսաղեմի պատրիարքի և նրա գործունեութեան վերաբերմամբ Ամրտոլի միաբան Գրիգոր Շիրվանցու մոտ իր այս տաղերում, բնավ արւատաւոր երևույթ չէ, որովհետև Ամրտոլցիները միշտ էլ մոտիկ են վանդնած եղել Երուսաղեմի գործերին: Այսպես, օրինակ, դեռ 1679 թ. Ամրտոլի առաջնորդ հռչակավոր վարդապետ Բարդիւղեցին, որ և մեր հեղինակի ուսուցիչն է, Երուսաղեմի համար նվիրակութեամբ Սպահան էր փնտրել¹⁾: Նրա աշակերտ Նուրման հռչակավոր Հովհաննես Կոլտոր, որ և մեր հեղինակի սիրասուն ընկերն էր և նրանից անբաժան է եղել Ամրտոլում և հետագայում, իր մասին խոսելով գրում էր, թե Երուսաղեմի աթոռի սերը ամբողջ կայր սեւեռեալ յոգի խոյս անարժանութեան... , որ այն գրեթէ ի մանկութենէն²⁾: Եվ մենք կարծում ենք, որ 1694 թ. գուցե և մի խմբակայն աշցելուքիւն կատարած լինեն Ամրտոլցիները Երուսաղեմ, որ առթիվ և շարադրած լինի Գրիգոր Շիրվանցին իր երկու ներբողները: Այս ենթադրութեանը տեղի են տալիս երկրորդ ներբողի տների սկզբնատառերը, որոնք հորում են. «Ի ծառայիցս լու...»:

Տարարախտարար այս տաղի արտագրութիւնը թերի է մնացել, բայց այդքանն էլ բավական է տեսնելու համար, որ հեղինակն այդ շարադրել է ի դիմաց իր հոգեկից, աննդակից ընկերների, որպես ուղերձ՝ Երուսաղեմի պատրիարքին, նման առաջինին, որ իր կողմից էր:

Գրիգոր Շիրվանցու ներբողների մեջ դեռ կան մի շարք մասեր, բայց ուշագրտով, տեղեկութիւններ Հովհաննես Կոստանդնուպոլսեցու կրանքի և վարքի մասին:

Ներբողագրի խոսքերից մենք տեսնում ենք, որ այդ ժամանակ արժանավոր պատրիարքը առաջացած հասակի մեջ էր գտնվում:

1) Տե՛ս Հայկ. ՍՍՌ Պետ. Մատենադարանի № 7364 ձեռագրի հիշատակարանը, թղ. 324ա:

2) Գիրք պատմութեանց երկրին Տարմուլ, որ կոչի Ջենոբ, Կ. Պոլիս, 1719 թ., տեսնել հիշատակարանը:

«է՛ ծեր գերէրունակ յոյժ պաարովրեալ» (Ա, 2):

Այսինքն՝

«Ո՞վ ծեր գերիմաստուն, մեծապես փառաւորոված»:

Նրա անբասիր կյանքը, նրա հոգեկան ու բարոյական արժանիքները հիացմունք են պատճառում հեղինակին: Ներբողագիրը նրան անվանում է այնու՝ «սուրբ» (Ա, 5), ովփաղ՝ «սուրբ» (Ա, 24), անգեղոս՝ «հրեշտակ» (Ա, 7), վերկեղալիակ՝ «երկնաբնակ» (Ա, 6), մաքուր հոգի մեծ փաղերայ (Ա, 10), և այլն: Գովերգուն նրա առաքինութիւնների և բարեմասնութիւնների պովարբանման համար համեմատութեան եզրեր է փնտրում թանկագին և ազնիվ բարերի մեջ, մեկ առ մեկ. սարդիոն, տպագիոն, դահանակ, կարկեհան, շափուղա, հասպիս, լիգրիոն, գոճագմ, հակինթ, ոսկեքար, եղնազնաքար, բլուրեղ (Ա, 3—14): Նրան նմանեցնում է խոշոր գետերի, որպիսիններ են Նեղոսը, Տիգրիսը, Սփրատը (Ա, 22, 29, 30): Բացի սրանցից՝ նա խոշոր գրվատիքներ ունի Երուսաղեմի պատրիարքի մտավորական արժանիքների և կարողութեան մասին. բեմաբան՝ «հետոր» (Ա, 3), հետոր կարո՝ «մեծ հետոր» (Բ, 1), վարժապետ բարգաւաճեալ (Ա, 32), դարբնոս՝ «իմաստասեր» (Ա, 14), իրքինոս՝ «իմաստասեր» (Բ, 1), պարմագոյն ալէլէո արի՝ «հզորագույն և արի գլուխ իմաստասերների» (Ա, 1), պարմինոս քաջ պարուգտան՝ «հանճարեղ քաջ գիտնական» (Ա, 1), յայք յարա հուն յանգարաճող՝ «կատարաւ և խորքնաղ ջերթող» (Ա, 4), քերտաղան յոյժ քանգեղէն հանճարեղեալ՝ «հոյժ բանխոն և հանճարեղ վերծանող» (Ա, 15), խորին ճառից վիպարան քերտաղան՝ «խորիմաց ճառերի վիպարանող և վերծանող» (Բ, 3), լէթթէ ծայրազնեղ բառից բանից շարամանեալ՝ «գրվածքների մեջ բառերի անքննելի մասերը վերծանող» (Բ, 8):

Ահա այն թանկարժեք պատմականը, որ գտնվում է Գրիգոր Շիրվանցու երկու ներբողական տաղերի մեջ:

Գալով երրորդ տաղին, պետք է ասել, որ սա ավելի խրթին է քան նախորդները: Սրա տների սկզբնատառերը հորում են՝ «Գրիգոր»:

Հայտնի չէ, թե ե՛րբ և ի՛նչ առիթով է գրվել այս տաղը: Թվում է, թե սա նուրման մի ուղերձ է, որ հեղինակի կողմից կարոտով և խոնարհական շեշտով ուղղված է այն վարդապետներին, որոնց ցանկալի խմբից ինքը զատվել է բախտի դժբախտ բերումով: Այդ միտքն են արտահայտում 2-րդ և 5-րդ

տները: Մյուս կողմից 1-ին տան մեջ հեղինակին ասում է, թե ինքը այս տաղը գրում է պանդխտության մեջ, յոյժ գեղումնալ: Նա 4-րդ տան մեջ իր մասին ասում է գալղութեամբ պանդխտած, նժդեհացած»։ Իսկ 6-րդ տունը նույնպես ցույց է տալիս, որ նա գտնվում է պանդխտության մեջ, բայց պարտոսս բահաւետեալ՝ «նվաստ վարդպետս, որ հեռվից է հիանում»։

Իրոք մենք գիտենք, որ Վարդան Բաղլիշեցու մահից հետո (1705 թ.), Գրիգոր Շիրվանցին Ամրտոլից հեռացել է Հովհաննես Կոլոտի և ուրիշների հետ, «հողմավարմամբ իբրու եղեալ տարաքեցիկ»¹⁾, և այնուհետև շատ երկար տարիներ գտնվել է թափառական պանդխտության մեջ: Հայկական ՍՍՏՊ Պետ. Մատենադարանի անտիպ նյութերից մեզ հայտնի է, որ նա մինչև իսկ գտնվել է Ղրիմում, 1712—13 թվականներին, գուցե դեռ այդ թվականներից մի քիչ առաջ էլ, ինչպես և մի քիչ հետո: Նույնիսկ անհայտանական չէ, որ Շիրվանցին այս տաղը շարագրած լինի հենց Ղրիմում, որտեղ, մեզ հայտնի է, նա գրել է ուրիշ տաղեր ևս: Մեր այս ենթադրությունը հիմնվում է նրա գործածած բահաւետեալ «հեռվից հիացած» արտահայտության վրա:

Այսպիսով, ուրեմն, Գրիգոր Շիրվանցու այս երրորդ տաղը, որի բովանդակությունը հեղինակի կյանքի մի դժբախտ շրջանին է վերաբերում և այդ տեսակետից էլ շահեկան է, նախորդ երկուսի համեմատությամբ ավելի ուշ ժամանակի արտադրություն է, գրված, համեմալն դեպս, 1705 թվից հետո և առաջ քան 1715 թվականը, երբ նա կոչվեց Երուսաղեմի պատրիարքության:

Այս երեք խրթնաբան տաղերը, որոնք ձեռագրում խորագիր չունեն, հետևյալ սկզբնավորությունն ունեն.

(Ա տան) «Տաբուն ի տաբիրունդ վերաբաղմեալ» (թղ. 173ա—174բ):

(Բ տան) «Իրբինոս հոետոր կաթուր փարթամացեալ» (թղ. 175ա):

(Գ տան) Գորգ քորգաստիս գաղտ դաթգաթեալ» (թղ. 183բ—184ա):

Հրատարակում ենք այս տաղերից առաջինը, նպատակ ունենալով նմուշներ ներկայացնել Երուսաղեմի անվանի պատրիարքներից Գրիգոր Շիրվանցիի մինչև այժմ անծանոթ մնացած գրական գործերից, նմուշներ, որոնք, ինչպես տեսանք, միաժամանակ ուշագրավ են իրենց պատմական բովանդակությամբ:

Տաղերը ձեռագրում չունեն ինչպես խորագիր,

գիր, այնպես և տների համարակալում: Մենք մեր կողմից խորագրել ենք ըստ առաջին բաների և համարակալել ենք յուրաքանչյուր տաղի տները: Բնագրերը տալիս ենք առանց որևէ փոփոխության: Ուղղել ենք միայն անսովոր վանկատումները:

ՏԱՐՈՒՆ Ի ՏԱՐԻՐՈՒՆԻ

(Հայկ. ՍՍՏՊ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 737):

1. Տաբուն¹⁾ ի տաբիրունդ²⁾ վերաբաղմեալ. Ո՞վ պարմինոս³⁾ քաջ պարուզտան⁴⁾ ճախարանեալ, Պարմագոյն⁵⁾ տէլէտ⁶⁾ արի պարիզացեալ⁷⁾. Նակետ⁸⁾ նամեստական⁹⁾ գեղիս պլճնեալ:

2. Է՞ ծեր գերէրունակ¹⁰⁾ յոյժ պասքովրեալ¹¹⁾. Գեղուշէշ¹²⁾ ծառ խընկաբեր գերազարդեալ. Մըխեալ ի քէն հոտ կընդըրկի մաքրասընեալ. Յորմէ գմալիմ ես քո՞ ծառայս յոյժ ներգեալ¹³⁾:

3. Բափաեալ¹⁴⁾ բափաթդ¹⁵⁾ ընտիր գեղազանեալ. Իբր զՍարգիտն¹⁶⁾ շիկազունակ շնորհիւ լըցեալ. Գերյարգանօք պայծառութեամբ վեհ երևեալ. Սեղենիտար¹⁷⁾ և բեմաբան¹⁸⁾ բարգաւառեալ:

4. Յայթ¹⁹⁾ յարագուն²⁰⁾ յանգաբանօղ²¹⁾ փարթամացեալ. Վեհազնէից և դիւցազանց դու ճոխ գրտեալ.

1) Տաբուն, իբր արտաբուն, տարաբուն, «տարաբունակ, տարագիր»։ 2) Տաբիրուն, «գահավանդ»։ 3) Պարմինոս, «հանճարեղ»։ 4) Պարուզտան, «գիտնակառ»։ 5) Պարմագոյն, «հզորագոյն»։ 6) Տէլէտ, տէլէտիս, «գլուխ իմաստասերների»։ 7) Ուղղելի՛ պարիզացեալ, «բարձրացած»։ 8) Ուղղելի՛ եակետ, «հովվապետ»։ 9) Ուղղելի՛ եամեստական, «շնորհալի» կամ եամեստական, «հավերժական»։ 10) Գերէրունակ, «գերմաստուն»։ 11) Պաքովրեալ, «փառավորված»։ 12) Գեղուշէշ, «գեղեցիկ ոստեր ունեցող»։ 13) Ներգեալ, «տեղար, խոնարհ»։ 14) Բափաեալ, «Աստուծով զորացած»։ 15) Սարգիտն, «մի տեսակ ազնիվ քար»։ 16) Սեղենիտար, «գահակալ, պատրիարքական աթոռ ունեցող»։ 17) Բեմաբան, «հետոր», տվյալ դեպքում վարդ է և նշանակել «բեմից (գահից) պատգամող»։ 18) Յայթ, «կայտառ, իմաստուն»։ 19) Յարագուն, «ուղղելի՛ յարանուն, «խօրաքննող»։ 20) Յանգաբան, «տաղաշափ, քեր-

1) Գիրք պատմութեանց երկրին Տարօնոյ, որ կոչի Զինօք, տեսնել հիշատակարանը:

- Տըպագիոն²²) դու Վուսափայլ
 պայծառացեալ.
 Եգուսենուս²³) ոգույս մըթին եթի²⁴)
 լըցեալ:
 5. Ո՛վ այիոս²⁵) միշտ ուրգացող²⁶) վեհ
 պանծացեալ.
 Ուղբամածիս²⁷) յարաբեթեր²⁸) միշտ
 երևեալ.
 Դու Դահանակ²⁹) կաճաշագոյն յար
 փըթըթեալ.
 Մըշտասաղարթ բանիւ բազմաւ միշտ
 ուռճացեալ:
 6. Վախնախի³⁰) վերնուշական³¹)
 վերաթեալ.
 Վարսանաւետից³²) դու յաղթող միշտ
 երևեալ.
 Ո՛վ Կարկեհան³³) գեղիւ գունով յուժ
 կարմրացեալ.
 Հոգին ի քեզ ազդէ ըզշնորհս
 յորդորեցեալ:
 7. Անգեղոս³⁴) ամենագան հրաշագարդեալ.
 Ալոցագոյն³⁵) երկրի բերրոյ
 գերբարստանեալ.
 Դու Շափիւղայ³⁶) ծիրանագոյն
 արտափայլեալ.
 Վարփեռոն³⁷) տէր բարիի
 բարձրագարդեալ:
 8. Նէհեմիաս³⁸) և նաբութէ³⁹) դու նէբ⁴⁰)
 եղեալ.
 Ըրգոտեալդ մեծ Կիպրացոյն
 գոտարթադիմեալ.
 Կերպդ Յասպիս⁴¹) է յուժ սարասիւ
 քաստակեցեալ⁴²).
 Բարձրագոյն տէր բաղձալի
 մաքրագարդեալ:
 9. Նադարի⁴³) սուրբ դըշխոյին
 նադամեցեալ⁴⁴).

- Շահապեմ⁴⁵) գանձուց նորին զքեզ
 կարգեցեալ.
 Ո՛վ Լիգրիոն⁴⁶) ճոխափարթամ
 ակներևեալ.
 10. Տարիքէ⁴⁷) ծառայ բարի տեան երևեալ:
 Էարգնապէս⁴⁸) դու էաստող⁴⁹)
 էաստուեալ⁵⁰).
 Թեուփիզ⁵¹) մըտօք մաքուր միշտ
 պատուեցեալ.
 Գոճագմ⁵²) ընտիր պայծառափայլ
 շնորհագարդեալ.
 Մաքուր հոգի մեծ փաղերայ⁵³) յուժ
 բարձրացեալ:
 11. Սպետափառ⁵⁴) միշտ դու սագործ⁵⁵)
 տեանըն եղեալ.
 Սըրտացուցեր⁵⁶) ըզճառադէմս⁵⁷) յուժ
 կաթոգնեալ.
 Ո՛վ ակն Յակիմթ⁵⁸) կարմիր գունով
 գեղեցկափայլ.
 Պարզ և մաքուր սուրբ հայելի
 գերագարդեալ:
 12. Փաթուր⁵⁹) յորդահոսան
 վայլակնեցեալ.
 Մէտ առ մէտ ծիծաղախիտ
 փատողացեալ⁶⁰).
 Յոսկեակն⁶¹) նըման դու ես փատօք
 յուժ փայլեցեալ.
 Ըոխապատիւ և գերունակ շնորհիւ
 լըցեալ:
 13. Աստուածակերտ այր պատուելի
 աստուերեալ⁶²).
 Արնօնակից⁶³) մեծ արաստու⁶⁴) վերնոց
 եղեալ.
 Յեղունկն⁶⁵) նմանիս հրովն երկնայնով
 դու յուժ շիկեալ.
 Գերամաքուր և հոգեկի տէր
 բաղձացեալ:

Թողոյ:— 22) Տպագիոն, մի տեսակ ազնիվ քար:—
 23) Եգուսենուս, ազաշնորդ:— 24) Եթի, տարա-
 կուսանքով:— 25) Այիոս, սուրբք. հուն. «ՃՅՐՕՏ»:—
 26) Ուրգացող, ուղղիչ:— 27) Ուղբամած, սխալա-
 բամած:— 28) Յարաբեթեր, լույս:— 29) Դահանակ,
 մի տեսակ ազնիվ քար:— 30) Վախնախի, խիսկա-
 պեան:— 31) Ուղղելի՛ վերկեռչակաւ, շերկնաբնակ:—
 32) Վարսաւետեա, սասնդարամտական:— 33) Կար-
 կեհան, մի տեսակ ազնիվ քար:— 34) Անգեղոս, հրեշ-
 տակ:— 35) Ալոցագոյն, մի տեսակ ազնիվ
 քար:— 36) Շափիւղայ, մի տեսակ ազնիվ
 քար:— 37) Վարփեռն, զարդարուն:— 38) Նէհե-
 միաս, ամիթարութիուն:— 39) Նաբութէ, սրբիչ:—
 40) Նէբ, ներ, ամբոյ:— 41) Յասպիս, մի տեսակ ազ-
 նիվ քար:— 42) Քաստակեցեալ, նմանեցված:—
 43) Նադար, հարսնացած:— 44) Նադա-
 մեցեալ, հանձնացած:— 45) Շահապեմ, պետ, իշ-

խան, պահապան, վերակացու:— 46) Լիգրիոն, մի
 տեսակ ազնիվ քար:— 47) Ուղղելի՛ տարբէ, ազ-
 նիւն:— 48) Ուղղելի՛ էարդեալեա, արդարապեան:—
 49) էաստող, ժողովարար:— 50) էաստուեալ, ա-
 ռաշնորդի պատիվ՝ աստիճան ունեցող:— 51) Թեու-
 փիզ, աստվածասեր:— 52) Գոճագմ, մի տեսակ
 ազնիվ քար:— 53) Փաղերայ կամ փաղերեայ, ար-
 զապեան:— 54) Սպետափառ, սխալալուր, պայծառ:—
 55) Սագործ, սնմանագործ:— 56) Մտացուցանել,
 սարտագին սիրով զմայլեցնել:— 57) Ջարաղէմ, սխ-
 ժուսողեմ, անշնորհք դեմքով:— 58) Յակիմթ, մի
 տեսակ ազնիվ քար:— 59) Փաթուր, գետն:— 60) Փա-
 տողացեալ, բարձրացած:— 61) Ոսկեակն, մի տեսակ
 ազնիվ քար, ասկեքար:— 62) Աստուերեալ, զորա-
 ցած, ամրացած:— 63) Արնօն, սցծացող, խայտա-
 ցողք բառից:— 64) Արաստու, շատ հաստատուն,
 գուցե և՛ շատ առաքինի:— 65) Եղունկն, եղունգն,

- 14. Ղաբանոս⁶⁶) ղայագ⁶⁷) ընտիր
փարթամացեալ.
Հանդիճեալի⁶⁸) մաքրազունից պետացն
ընտրեալ.
Բիւրեղ⁶⁹) օդանըման պարզ երևեալ.
Գերազով հայր պարչալի⁷⁰) յոյժ
պանծացեալ:
- 15. Եսի⁷¹) դու ետինոյ⁷²) վարփեռացեալ⁷³).
Քերետդան⁷⁴) յոյժ քանօրէն⁷⁵)
հանճարեղեալ.
Յերկ վէշ⁷⁶) ակունք նմանեցուցի զվեհի
մեծարեալ.
Ես քո ծառայ ցիծին⁷⁷) ոգով
փերեետեալ⁷⁸):
- 16. Բարբայ⁷⁹) րասքով⁸⁰) ոգոյս վիրօք
խըղիսայթեցեալ⁸¹).
Պայծառագարդ և ճոխաբան
բարովեցեալ⁸²).
Դու ես հանգոյն մեծի աղբերն
յորդահոսեալ.
Որ յադինէ առ մեզ հոսի
քառավտակ լեալ:
- 17. Արեգովթ⁸³) հրաշատեսակ լուսաճեմեալ.
Ակն արևու ճոխ և փարթամ լուսով
լըցեալ.
Դու ես Փիսոն⁸⁴) լայնատարած
յոխորտացեալ.
Բերանդ հըրով սըրբոյ հոգոյն միշտ
առլըցեալ:
- 18. Յաքարէ⁸⁵) ըզարիոնս⁸⁶) սէր քո գովեալ.
Առ ի պատուել ըզքեզ բանիւ
զանազանեալ.
Սակայն մըտօք եմ յոյժ մըթին
անկղիտացեալ⁸⁷).
Այլ աղբերսմ զքեզ արտասուօք
զլոմայս⁸⁸) ընկալ:

- 19. Գամղագարիշ⁸⁹) և ջատագով տէր դու
յայտնեալ.
Գըտար պայծառ քան զարուեսեակն
արփագեղեալ⁹⁰):
- 20. Բահդոն⁹¹) էին մեսիայի
բարձրագարդեալ.
Գիշերավար⁹²) լուսաղբար⁹³) կերպիւ
լըցեալ:
- 21. Իէասաք⁹⁴) իէրրացար⁹⁵)
պատուասիրեալ.
Չըկայ Բաղդատ քեզ և նըման զարմէս
ծընեալ:
- 22. Գեհոնեան⁹⁶) ջըրոյ սարաս պիտոյ
եղեալ.
Ջովացուցիչ ալունթորիս⁹⁷)
գէեղադրեալ⁹⁸):
- 23. Ո՛վ ովսադ⁹⁹) յոյժ բարձրագոյն
սաառնացեալ.
Ի քէն սարսի փոքրիկ թըռչունս
ովրէացեալ¹⁰⁰):
- 24. Բուպս¹⁰¹) յոյժ ահիւ է մեծապէս
բահաւետեալ¹⁰²).
Ընդ ովփազիդ¹⁰³) մեծագունոյ
յառաջանալ:
- 25. Իմունախոհ¹⁰⁴) քաջ կաճիտ¹⁰⁵) պետ
ուրփափունեալ¹⁰⁶).
Տէր այս անուն մեծ վարդապետ բարեօք
լըցեալ:
- 26. Ստորփայացեալս¹⁰⁷) եղջերօրէն¹⁰⁸) է
տապացեալ.
Սակս այնորիկ զտոդ համբուրէ յոյժ
տոշորեալ:
- 27. Ներդաշնական ձայնիւ ուժգին դու ես
պատուեալ.
Ըզտէրունեան աւանդն ողջոյն տէր իմ
ընկալ:

մի տեսակ ազնիվ քար, «եղնզեաքար»։— 66) Ղաբանոս, «իմաստասեր»։— 67) Ղայագ, «բարեկամութիւն»։— 68) Հանդիճեալ, հաճութեալ, «համեմատված»։— 69) Բիւրեղ, մի տեսակ ազնիվ քար։— 70) Պարչալի, «պանծալի»։— 71) Եսի, «գիտապետ»։— 72) Ետին, «հավատ»։— 73) Վարփեռացեալ, հավանաբար «զարդարված», հմմտ. «վարփեռոն, «զարդարուն»։— 74) Քերետդան, հավանաբար նույն՝ քնտրողն, «վերծանող»։— 75) Բանօրէն, «քաջարան, բանիրուն»։— 76) Երկ վէշ, «տասերկու»։— 77) Ցիծին, «չոր»։— 78) Փերեետեալ, փերեեիւ, «փերպով ձեացեալ որ ոչ է» (ըստ Երեմիա վարդապետի բացատրութեան)։— 79) Բարբայ, «մեր հայր»։— 80) Բասով, «հմուտ»։— 81) Խղիսայթեցեալ, «թարախակալած, վիրավորված»։— 82) Բաճովեցեալ, «զորավոր դարձած, զորացած»։— 83) Արեգովթ, «երանություն, գովութիւն»։— 84) Փիսոն, եղեմական դրախտի շորս գետերից մեկի անունն է։— 85) Յաքարէ, «հոգարեալ»։— 86) Արիոն, «աղբատ»։— 87) Անկղիտեալ, «վատ բանի սեր կապել»։— 88) Լոմայ, լումայ, «մանրագուն դրամ», փո-

խաբերաբար գործածված իբր «շնչին տուր»։— 89) Գամղագարիշ կամ զամղագարիթ, «հավատի հաստատութիւն»։— 90) Արփագեղեալ, «լուսավոր աստղերի գեղեցկութիւն ունեցող»։— 91) Բահդոն, «օրհնող»։— 92) Գիշերավար, «լուսնեմար»։— 93) Հավանորին պետք է կարգալ՝ լուսագուար, «լուսավոր»։— 94) Իէասաք, «լուսին»։— 95) Իէրացար, «ընտրույալ»։— 96) Գեհոնեան, «Գեհոնի, այսինքն՝ Նեղոս գետի»։— 97) Ախըբուր, «անպիտան»։— 98) Գէեղադրեալ, «վրիպած»։— 99) Ովսադ, «քաղե»։— 100) Ովրէացեալ, «ոչինչ դարձած, ոչինչ հավասար»։— 101) Բուպ, «տրուպ, փանաք»։— 102) Բահաւետեալ, «հեռուից հիացած»։— 103) Ովփազայ, «չոր»։— 104) Իմունախոհ, «անծանոթ բան»։— 105) Կաճիտ, «ուրբ»։— 106) Ովփափունեալ, «լուսադիմել» (ըստ Երեմիա վարդապետի բացատրութեան), կարող է «զեպի լուսոյ որմել» նշանակութիւնն ունենալ։— 107) Ստորփայացեալ, «նվաստացած, նվաստ»։— 108) Եղջերօրէն,



ՄԻ ԱԿՆԱՐԿ ՏԱՅՈՑ ԽՈՏՈՐՋՐԻ ԱՆՅՅԱԼԻՑ

Խոտորջուրը Տալոց պատմական աշխարհի մեջն է: Նա երկու մասի է բաժանվում՝ Տալոց Ոթաղե (այժմյան Թորթումը) և Ճորոխի հովիտը, որ Պարխար լեռներով է անջատվում: Այս լեռները իրենց շղթայով պար են բռնած Խոտորջրի շուրջը, և Հարկեվոր լեռը, որ Պարխարի շարունակությունն է, բաժանում է Թորթումը:

Խոտորջուրը զուտ հայաբնակ մի վայր էր էրզրումի նահանգում: Նրա կենտրոնատեղիներն էին Կիսկիմը և Արսիսը. (հին Արսյաց Փոր), ուր նստում էին դավառապետները: Հայաստանի տիրապետության ժամանակ գտնվել է այստեղ մի ավան Որջընհաղ անունով, որ այժմ փոքր մի գյուղ է Ճորոխի աջ ափին: Այստեղ նահատակվել է Հմայակ Մամիկոնյանը՝ քաջ Վարդանի եղբայրը: Այս գյուղում, մի թյուրք պառավի մոտ, արծաթե տփի մեջ մի ձեռք կա, որի համար ասում են թե Հմայակի կամ Համազասպի ձեռքն է լինելու: Որջնհաղից աջ ու ձախ, Ճորոխի ափերին, քարաժայռերի վրա, երկու բերդեր կան ավերակ, հին օրերից մնացած:

Որջնհաղից վեց ժամ հեռավորությամբ, Ճորոխ գետի ձախ ափին, գտնվում է Խոտորջրի Ձոր-դուռ կոչված վայրը, ուր կաթնափրփուր մի գետ, խոտորնակի ճանապարհով ու մեծ շառաչումով Ճորոխին է խառնվում: Այս գետի ընթացքից էլ վայրը առել է Խոտորջուր անունը: Այս գետի հետ մանվածապտույտ ընկել են Խոտորջրի յոթուկ գյուղերը: Սա՛ տեղի մեծ գետն է: Կան նաև մանր մունր գետակներ, որոնք գյուղերի մոտից անցնում են և խառնվում մեծ գետին:

Խոտորջրի սահմաններն են՝ արևելքից Մոխրակույտը, արևմուտքից՝ Հունուտ գյուղը, հյուսիսից՝ Համշենը (Լազիստան), հարավից՝ Ճորոխը, որի ափերի այգիները պատկանում էին մոխրակուտցիներին և Խոտորջուրցիներին: Մոխրակույտը նույնպես հայաբնակ գյուղ էր, որ կապված էր Խոտորջրին, իր սովորութիւններով և տարազով: Մոխրակույտը բաժանվում է՝ Վարի Մոխրակույտ և Վերի Մոխրակույտ, որին Ազրակ էլ ասում էին: Սրանց թաղերն են՝ Գորքանց, Նուրանա և Արեգին: Ավանդութիւնն ասում է, որ Մամիկոնյանների կոնիւնքի ժամանակ, պարսիկները այս գյուղը հրդեհեցին, այդտեղից էլ՝ Մոխրակույտ անունն է ստացել: Վերի Մոխրակույտի արևելյան կողմը, գյուղի դեմ, անտառապատ լեռան գլխին, բարձրաբերձ և ահուկի քարաժայռի կատարին, հին օրերից մնացած ավերակ բերդի պատերն են փլատակ: Աստվածամայր բերդ է կոչվում: Այս քարաժայռն անմատչելի է, միայն մի ճանապարհ ունի վեր բարձրանալու: Միմյանց ձեռքից բռնած վեր են ելնում. փոքրիկ մի մատուռ կա ուխտավորների համար և մի պահեստատուն: Այս քարաժայռի վրա երկու մեծ փորվածքներ կան, որոնցից մեկի միջից ջուր է բխում: Այստեղից երևում է Ճորոխ գետը իր այգիներով և գյուղերով: Այս բերդը ապաստարան հանդիսացավ 1918 թվին Խոտորջրի և Մոխրակույտի երիտասարդներին, որոնք որպես պարտիզաններ, շատ երկար կռվեցին թրքական զորքերի դեմ:

Խոտորջուրը ճամբորդի աչքին ներկայանում է որպես քաղաք, շորահարկանի տներով, սպիտակ քարից շինված, մեծ լուսա-

մուտներով, բարձրաշուք ընկուզենիների և թիթենիների տակ: Քաղաքը մրգատու ծառերով լիքն է, իսկ լեռները ծածկված են խիտ անտառներով: Նշանավոր է լեղանու անտառը, ինչպես նաև՝ հանդածոր և Կրման գյուղերի անտառները:

Նոտորջուրը հին ժամանակ յոթ գյուղերի էր բաժանված, իսկ հետագայում բազմանալով, մի գյուղ էլ միացել էր Վերի Խանդածորին, Գուլոշինց դովին կոչվածը, որը առանձին գյուղ եղավ, ինչպես Միջնթաղը կամ Վարի Խանդածորը: Ըստ այսմ, հետևյալներն են՝ Ճիճապաղ, Կրման, Գիսապ, Խանդածոր՝ Վերի և Վարի, Սյունինց, Կաղմախուտ, Քեղուտ և Վահնա:

Այս գյուղերը իրարից կես ժամ, և ոմանք էլ՝ մեկ-երկու ժամ հեռավորություն ունեն: Գյուղերը ունեն առանձնացած ստորաբաժանումներ կամ թաղեր, որոնք բլրակների և լեռնալանջերի վրա են և կապված են գյուղերին: Դրանցից կարելի է թվել հետևյալ թաղերը.

ա) Պալեա քաղը, որ Կրմանից անշտված Պալճյանց ազգատոհմից մեկը իրեն ամառանոց հիմնելով, նրա անունով հետագայում Պալճա թաղ կոչվեցավ: Սրանց աղանուն եղել է խուրսյան կամ Ռատինց: «Իշխանն Գարդանայ, որում անուն էր խուրս», ապավինել է այստեղ (Խորենացի, Գիրք Գ., Տփղիս, 1888 թ., էջ 388): խուրս տոհմը մինչև մեր օրերն էլ կար: Տոհմերի այս բաժանումը հետագայում «գանաղոր» կոչվեցավ, որոնք զանազան ճյուղերով միևնույն արմատին էին պատկանում:

բ) Ֆինտա քաղը, բարձունքի վրա, Ֆինտյան ավազանու հիմնադրածն է: Այս մարդը իր անունով յայլա ուներ: Տարվա որոշ օրերին, թաղի երիտասարդները հանդիսով առաջնորդում էին նրան իր ամառանոցը: Այս գյուղի պատավանդները ավանդաբար հիշում էին, թե ի՞նչպես պարսիկները այդտեղ թոնիրների մեջ հաց են թխել, Մամիկոնյանների հետ կռվելու ժամանակ:

գ) Գայինեց քաղը, Կրմանու գետակի ձախ ափին, Պալճա թաղի դեմ:

դ) Խիզկանց քաղը, Գիսակու տակ, դաշտավայրի մեջ: Պալճյան Աստվածատուրը այդտեղ տնփեսա գնալով, որպես խիզախ մարդ, իբրև թե թաղն էլ այդպես է կոչվել: Այստեղ հազիվ շորս-հինգ տուն կար, որոնք գրազետ լինելով, հետագայում Յաղիճյան կամ Մոլլյան էլ կոչվեցին:

ե) Յուզուլա քաղը, Քեղուտի վերև, սարի լանջին: Այստեղ ապրում էին Փաթոսյան և Փաքարյան տոհմերը, որոնցից և փոխադրված են էրզրում:

զ) Վահնա քաղը կամ գյուղը: Տեղական ավանդությունն ասում է, թե իբր Վահան Մամիկոնյանն այստեղ բնակվել է միառժամանակ: Այս գյուղում ապրում էին Մանտալյան եղբայրները, Եզեկյան և Սանուսյան:

Այս բոլոր գյուղերը և թաղերը միացել են Նոտորջուր անվան տակ, և բոլորի բաշբառներն էլ միատեսակ են, միայն Կրմանու բարբառը մոտենում է հայոց հին դրական լեզվին¹⁾:

Նոտորջուրը ասպարեզ է իջնում իր մի շարք քաղաքական և կրոնական անցյալներով երբե հարյուր տարիների ընթացքում: 17-րդ դարից առաջ շենք տեսնում մի որևէ տեղ հիշատակված իր անունը:

Պատմականորեն այս երկիրը մտնում է ընդհանուր Տայքի պատմության մեջ, և հինգերորդ դարից սկսած, Մամիկոնյանների ապաստարան է եղել իր անառիկ բերդերով, որոնք այժմ կիսակործան են: Նշանավոր է Մրարա բերդը, հսկայական մի քարաժայռի մեջ փորվածքներով և սանդուղքներով, ինչպես նաև Գիսակ գյուղի մոտ Սոխի օղ կոչված բարձունքի վրա կա ավերակ մի բերդ, որը տեղացիք Ոսկակալ են անվանում:

Սյունինց գյուղի դեմ եղած քարաբերդը ստորձերկրյա ճանապարհներով ապավինած էին 1915 թվի համահայկական կոտորածի և գաղթի միջոցում մի քանի գերդաստաններ, որոնք հետագայում ազատվեցին և եկան Ռուսաստան: Այս բերդերի մասին Ղազար Փարպեցին ասում է. «Այս յամուր Տայոց առ լեռամբ, որ կոչի Պարխար, մերձ առ սահմանակցութիւն Խաղտեաց ի յամրոցաց լեռին Պարխարու մղէին ճակատամարտ ի գիւղն, որ անուանի Որջնհաղ ի գաւառին Տայոց» (Ղազար Փարպեցի):

Այստեղ նահատակված է Համազասպ Մամիկոնյանը: Այս երկրի ամրոցները 5-րդ դարում շեն են եղել և Նոտորջուրում եղուշտ ավայրեր պահել են իրենց պատմական անունները, ինչպես օրինակ՝ Ճիճապաղ գյուղի անունը, Ճիճրակա յայլն, Կրմանու Ճիճկին, որը հիշված է խորենացու մոտ. «Իսկ ի ձեռն քաջին և բարբախտին Ներսիսի Ճիճրակեցույ զօրագլուխ եղելույ... յամենայն լեռինս եւ յամուրս շրջէին» (Խորենացի, Գիրք Գ., Տփղիս, 1888 թ., էջ 377): Իրենց անցյալի պատմական անունները

1) Այս մասին տես իմ ձեռագիր «Ուսումնասիրություն Նոտորջուր բարբառի», որը 1948 թվին հանձնված է Հայկ. ՍՍԻ Գիտությունների Ակադեմիային:

պահել են՝ Որջնահղ, Արսլայց Փոր, Իշխան գյուղերը և այլն:

Այս և ուրիշ շատ հիշատակութուններով ապացուցվում է, որ այս երկիրը Մամիկոնյանների բնակավայր է եղել, շնայած թե գյուղերից շատերի անունները մեր պատմիչները չեն հիշել, որովհետև Տայքում գյուղեր շատ կան:

Մամիկոնյաններից առաջ այստեղ բնիկ ժողովուրդ եղել է դեռ նախաքրիստոնեական շրջանից, որի ապացույց են կոսպաշտություններից մնացած գործիքներն ու սովորությունները: Կաղմախուտ գյուղի ծալրին, անտառի մեջ, Մ. Հովհաննու անունով մի մատուռ կար որպես ուխտատեղի, ուր պահվել էին կոսպաշտությունից մնացած գործիքներ:

Ժողովուրդի մեջ սովորություն կար, որ դիհի (մի տեսակ եղևնի) ծառի մոտ շինում էին փոքրիկ աղոթատներ, ծառի տակ զոհում էին կենդանիներ և իրենց շորերից էլ կտրատում և կախ էին անում ծառի ճյուղերից, որ նշանակում էր, թե իրենց ցավերը կախում, թողնում են այնտեղ: Այդ սովորությունները հետագայում վերացվեցին, բայց Տայցոց հայ մահմեդականների մեջ մինչև վերջերս էլ պահվել էին: Գիհի ծառի մոտից անցնելու, նկատում էիր վերից վար շորի կտորներ վախված:

Խոտորչուրը դարերի ընթացքում երկրաբանական մեծ փոփոխությունների է ենթարկված: Վերջերս նոր տուն շինողները հողի տակից հանում էին կճուճներ, քարացած կերակրով: Մի քանի անգամ ժանտախտ եղել է, որը տեղացիները հիշում էին «Մահի տարի» անունով: Բազմաթիվ անգամ եղել է բծավոր տիֆի համաճարակ, որին «վար ցավք» էին ասում: Մի քանի անգամ գաղթ է եղել: Սրա ապացույցն է Կրմանու և Հունկամբի միջև գտնվող սարը, որին «Քոչին սար» էին ասում:

Ժամանակակից պատմաբաններից մի քանիսի այն կարծիքը, թե խոտորչուրցիները Անի քաղաքից են գաղթական գնացել, թի ապացուցվում ո՛չ լեզուների և ո՛չ էլ տարազների միջոցով: 18-րդ դարից սկսած, Խոտորչուրից արհեստով շատ հացագործներ և բաղրերդեն շինողներ գաղթել գնացել են Պարս, էրզրում, Կաղզվան, Թբիլիսի և Ռուսաստանի գաղազան քաղաքներ: Ամեն տեղ էլ նրանք բնորոշվում են իրենց լեզվով, արտաքինով ու սովորություններով: Առանձնապես յուրահատուկ է նրանց լեզուն, օրի-

նակ՝ օյթո՞ւ ա, օյմա՞ն ա, այսինքն՝ ո՞ւր է, ի՞նչպես է:

Խոտորչուրի տների թիվը հասնում էր յոթ հարյուրի, շորս հինգ հազար բնակչությունով, թաղերն էլ հետը հաշված:

Մինչև 17-րդ դարը, խոտորչուրցիները եղել են քրիստոնյա և հայ առաքելական: Այդ դարի տխուր դեպքերը հայտնի են բոլորին: Ինչպես Հակոբ Կարնեցին իր 1643 թվի հիշատակարանի մեջ գրում է թե՛ «Ջաֆար մուլա աշխարհագիր անելով արար դաֆտար եւ կապեաց խարաճ. ի հարկէ խարաճին դարձան յօրէնս Մահմէտի: Էին բնակիչք երկրի կէան հայ ազգաւ եւ կէսն կրոնիք վրացի, բայց հայի լեզուվ խօսէին» (Հակոբ Կարնեցի, էջ 17—18): Մինևուչն ժամանակ, Կարնեցին հիշում է այն մեծ սուզը, որ արել են նրանք երբ լսել են Տայցոց աշխարհի մահմեդականությունը ընդունելու: Առաքել Դավրիժեցին 1659 թվին գրում է նույնպես լալա Մուստաֆա բաշայի կոփաների անցքերի և կատարած խժոժությունների մասին: Թորթումի հները պատմում էին, որ հայերեն խոսողների լեզուները կտրում էին:

17-րդ դարի վերջերը Պահմեդականություն էին ընդունած համընցիք:

Ահա այս ժամանակամիջոցում տեղի է ունեցել խոտորչուրցիների կաթոլիկ դավանանք ընդունելը, ինչպես նաև մերձակա մի քանի գյուղերի, օրինակ՝ Մոխրակույտ, Գորքանց, Արեգին, Կարմիք և Խևակ: Այս դավանափոխությունը կապված է այն ժամանակվա սարսափների հետ: Լատին կրոնավորները՝ Հիսուսյանները, իրենց գործն սկսել են Վերի Խանդաձորից. մինչև վերջերս էլ այնտեղ կային Այլից խաչ եվ Այլից բաղ կոշվածները, այլադավան իմաստով:

Տեղական ավանդությունն հետեվյալն է ասում.— Խանդաձորի Թաթմանյան տոհմից մի քահանայի որդին գնալով Հոռո, վարդապետ է եղել ու վերադարձել իր հայրենիքը՝ հայրենակիցներին նշանադրի անելու: Բայց այս՝ իրականության չի համապատասխանում. քիչ հավանական է, որ հայ առաքելական մի քահանա իր տղին Հոռո ուղարկեր սովորելու:

Կաթոլիկությունը քարոզել են ճիզվիտները, որոնք բույն դրել էին Բաբերդ քաղաքում, և մինչև վերջերս նրանց վանքը կոշվում էր «Ճիզվիտ գալխի»: Գիսակ գյուղում դեռ պահվել էին լատինական պատարագի հանդերձները, արարողություն կատարելու համար: Սրանց ապացույց կարող է ծառայել հետևյալ փաստը: Կրմանցի վաճառական Պալճյանը, Լոռուտնից և Մուսկվայից վերադարձին, էջմիածին է այցելել և մի

ավետարան նվիրել: Այդ միևնույն Պալէյանը, համարյա երկու հարյուր տարի առաջ, Արդվինում գրած մի գրութեան մեջ կոչ է անում իր հայերնակիցներին՝ զգուշանալ լատին քարոզիչներին:

Հոռվմի դավանանքը պառակտեց հայ համայնքը, կտրեց ուժացողներին Մայր Հայրենիքից և Մայր Աթոռից ու կաթոլիկ վարդապետներին մոլորութեամբ ճանապարհ բաց արեց այլասերման համար:

Տայոց աշխարհում, ինչպես և Արդվինի շրջանում լատինականութիւնը երբեք չի եղել, և ո՛չ մի հայ կաթոլիկ կրօնապետ չենք հիշում, որովհետև էրզրումում հարյուր տուն հայ կաթոլիկ կար, որոնց կեսը խոտորչուցիներ էին, բայց ո՛չ մի եպիսկոպոս չեն ունեցել: 1855 թվին, Հատունյանից ձեռնադրվում է Միլիան Հ. եպիսկոպոսը, էրզրումի և Արդվինի համար: Սա եղել է հայ հոռվմեան դավանանքի առաջին եպիսկոպոսը, որ ֆրանսիական դեսպանի և Հատունի միջոցով, արտոնագիր է առնում Սուլթանից և դալիս է էրզրումի և շրջանի վրա իշխելու: Իսկ մինչև այդ ո՛վ է եղել կառավարողը. պարզ բան է, որ Ֆիզվիտների կողմից Մշակված տեղապահները, որոնք «Ֆրանկ» անվան տակ, եվրոպական դեսպանների միջոցով, պաշտպանել են հայ հոռվմեան դավանանքին՝ թյուրք կառավարութեան առաջ: Այն ժամանակվա օտար պաշտպանութեան ուժեղ ազդեցութեան պայտւոյն է այն, որ, օրինակ, երբ 1872 թվին հոնոուցի Շերիֆ բեկը խոտորչի Միլենթալ գյուղը հրդեհեց, առաջնորդ Տեր Կարապետ Չախալյանը դիմեց Պոլսի յոթ եվրոպական դեսպանութիւններին, որոնց միջոցով ազդեցութեամբ, էրզրումի կուսակալի կողմից թրքական զորքեր եկան, Հոնուտ գյուղը շրջապատեցին, Շերիֆին ձեռքակալեցին և տարին էրզրում, դատի ենթարկելու:

Հոռվմեան դավանութեան բույնը, ուրեմն, խոտորչուրն է եղել, սակայն դավանափոխութիւնը խոտորչի գյուղերում միանգամից չի անցկացվել: Եղել են շատ մեծ խոռվութիւններ և իրարանցումներ: Կրման գյուղացիք յոթ տարի հետո են ընդունել կաթոլիկութիւնը. դրա համար էլ տեղացիք դրանց անվանել են «կաղնի կոպալ արջ կըրմանցիք», այսինքն՝ կաղնի փայտի պես հաստատուն: Տեղական ժողովրդական այս անձներին շատ բան կարելի է գուշակել: Կրման գյուղի Ս. Հակոբի անունով հին մայր եկեղեցին, որը կառուցվել է 1627 թվին, շինված է գետնափոր և սանդղղքներով ու շատ ցած դռնով, իբրև այդ ժամանակվա սարսափների արդիւնք, որպեսզի

ձիեր ներս չըջնն: Մինչդեռ կաթոլիկութեան շրջանում սկսեցին շքեղ եկեղեցիներ և երեք հարկանի տներ շինել: Բայց և այնպես խոտորչուրը կաթոլիկութեան տակ հարատև խաղաղութիւն չունեցավ: 1886 թվին, երբ վերին համընցի Թուլլ օղլու Տուրսունն իր ավագակախմբովը քալեց խոտորչի վրա ո՛չ մի դեսպան օգնութեան չեկավ: Տեղացի վերի խանդածորցի մի երիտասարդ՝ Ոսկանյան Քերոբ, որ Թբիլիսիում հացագործ էր, գնալով երկիր, սպանեց Թուլլ օղլուին: Բայց ինքն էլ սպանվեց այդ կռիւմ: Դրանից հետո ցրվեց Թուլլ օղլուի ավագակախումբը և նրա թիկնապահներից մեկը՝ Մամուշ օղլու Աբդուլան, դարձավ խոտորչուրի շարքիների բարեկամը և Լազիստանի ընդ տիր երիտասարդներից մի խումբ կազմեց լով փող և մարդիկ էր փոխադրում Ռուսաստանից, երբ Համիդի օրով ճամբանեմքը փակվել էին և երթևեկելու հնարավորութիւն չկար: Իսկ Ռուսաստանում բնակվող խոտորչուրցիները, որոնց բոլորն էլ հացագործներ էին, իրենց կենսական շահերու կապված էին ռուսական միջավայրի հետ և վերահիշյալ հայ մահմեդական համընցի մեծ դյուրութիւններ և աջակցութիւն ցույց տվեց խոտորչուրցիներին:

1895—1896 թվերին խոտորչուրցի ազատութեան հայրական կոտորածներից՝ կաթոլիկութեան անվան տակ: 1915 թվին, համահայկական գաղթի և կոտորածի ժամանակ, Հոնուտ դավանանքը այլևս չկարողացավ նրան փրկել: Թե՛ թյուրք կառավարութիւնը, և թե՛ շրջակա հարևան թյուրքերը հարձակվեցին այնպիսի անօրինակ բռնաբարութիւններով, կողոպուտներ և սպանութիւններ արին, որ վերի խանդածորցի Զմմառցի Թաթմանյան վարդապետը երկնքին էր բողբոռում հետևյալ խոսքերով. «Աստիճ, եթէ կաս, ո՛րտեղ ես ինչու չես երևում, ժողովուրդն արձան դարձել, համահայկական մի մեծ սև դաբաղատաց ենք կանգնած»:

Ահա այսպես, ո՛չ մի մարդ կենդանի չմնաց, բացառութեամբ Ռուսաստանում ապաստողներին: Գաղթի մանրամասնութիւններն սարսափները մանրամասն գրված են: Այսօր, այդ կոտորածներից ազատված Սովետական Հայաստանում ու Ռուսաստանում բնակութիւն հաստատած խոտորչուրցիները ամոթով և զգվանքով են լսում կարդուր նալ Աղաջանյանի և նրա հետևողների գործունեութեան մասին, որոնք թյուրք ապկարին են զոյբերում և մութ երազներով օրորվում:

խոտորչուրը ունեցել է բանաստեղծներ, թյուրք

տղամարդկանց և թե՛ կանանց մեջ, ինչպես նաև առակներ, հանելուկներ և այլն, որոնք առաջին անգամ հավաքեց տեղացի Վիեննայի Մխիթարյան մի վարդապետ՝ Հ. Մ.՝ Հաճյան, և 1904 թվին տպել տվեց Թբիլիսիում, «Գավառացի» անվան տակ: Խոտորըրի բոլոր անցքերը, ընդարձակ և լիովին, հավաքած է նաև Մ. Գ. Բազարատյան (անտիպ):

Խոտորըրի սերունդը ակնբախ ընդունակություններ է վեր հանել իր մի շարք գրական դեմքերով, որոնք հայագետներ են, հայկական մասշտաբով: Դրանցից առաջինն է՝ Հ. Հակոբոս Տաշյանը, իր գրական և հնագիտական հետազոտություններով: Բնիկ Խոտորըրի Կրման գյուղից են նրա ծնողները: Այա գալիս են Հ. Կետիկյանը՝ «Հանդես Ամսօրյա»-ի երեմնի խմբագիր, Հ. Ոսկյանը՝ վերին խանդածորցի, Հ. Ա. Մատիկյանը՝ գրական դեմք և գիտությունց ղոկտոր, կրմանցի:

Գեղարվեստական ուղղություններ, Խոտորըրը տվել է հուշակավոր մի ծովանկարիչ՝ Արսեն Շապանյանը, Ալվազովսկու աշակերտ, ծագումով Սունինց գյուղից:

Սովետական հասարակարգում, խոտորըրցի համբավվոր դեմքեր կան, որոնցից ամենահայտնին՝ օդաչու Սերյոժա Բուռնազյանն է, որ Ստալինգրադի կռիվներում ստացավ Սովետական Միության հերոսի կոչում: Մարգիս Կարապետի Բուռնազյանը՝ ծնված Խոտորըրի Սունինց գյուղում, պարգևատրե-


ված է «Պատվո նշան» շքանշանով և Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ է ընտրված 1947 թվին: Կան և այլ հայտնի դեմքեր: Կան բազմաթիվ պետական, հասարակական և ուղղական ասպարեզներում աչքի ընկնող գործիչներ՝ Մ. Գ. Բազարատյանը (գիտական աշխատող), Հ. Հ. Բոկսյանը (գինվորական), Հ. Թառամյան (բժիշկ), Լուսիս Ուզունյանը (հարկով քաղաքի գլխավոր ճարտարապետ) և ուրիշները:

Խոտորըրը նախ քան գաղթը, ուներ մի տպարան, Կրման գյուղում, «Տալոց աղավնի» անունով կրոնական մի թերթ, ուներ և դպրոցներ, որոնք ոչինչ չէին տալիս, բացի աղոթքներից և ընթերցանություններից:

Առաջին անգամ 1895 թվին Սունինց գյուղում մի վարժարան բաց արավ սունցի Վահան Շապանյանը, որը կրոնական կրթություն էր ստացել: Ութը թաղերից էլ սկսեցին հաճախել այդ դպրոցը, որ տեղական վարժարաններից շատ բարձր էր:

1908 թվից սկսվում է մեծ բեկում: Չարթնում է ազգային գիտակցությունը խոտորըրցիների մեջ. նրանք սկսում են զգալ, որ իրենք ևս հայեր են, կազմակերպվում են ներկայացումներ տեղական ուժերով, Մ. Գ. Բազարատյանի ձեռնարկով:

Խոտորըրում ո՛չ մի քաղաքական կուսակցություն գոյություն չունեի, ամեն ինչ կառավարվում էր տեղական և կրոնական պայմաններով:



ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ



արյուր երեք տարի առաջ, Հ. Ղ. Ալիշանը, «Բազմավէպ» ամսագրում տեղավորված «Հովհաննես Սարկավագ վարդապետ» խորագրով մեզ ծանոթ աշխատության մեջ, առաջին խնդրամ, Հովհաննեսի երկասիրության շարքում, հիշել է նրա «Մեկնութիւն տամարի եւ Յաղագս անկիւնատը բուց» աշխատությունը, որից, ըստ նրա տեղեկության, «միայն քանի մը հատուածը ունինք»¹։ Հ. Ղ. Ալիշանը նույն տեղեկությունը, առանց փոփոխության, կրկնել է «Յուշիկք»ում տեղավորած իր «Սարկավագ Սոփեստես» վերնագրով տառամասիրության մեջ»²։

Ալիշանը, ինչպես երևում է, մոտից ծանոթ չի եղել Հովհաննեսի նշված աշխատության հետ, որովհետև Հովհաննեսի այս երկը, ինչպես հետո կտեսնենք, նախ՝ Հովհաննեսի ո՛չ թե մեկ, այլ երկու տարբեր աշխատություններն են (նրանցից մեկը՝ «Մեկնութիւն տամարի», տոմարական բովանդակություն ունի, իսկ մյուսը՝ «Յաղագս անկիւնատը բուց»ը՝ մասթեմատիկական) և ապա՝ նշված աշխատությունները մեզ հասել են ո՛չ թե հատվածներով, այլ ամբողջական բնագրերով։

Ալիշանի վերև բերված հիշատակությունից օգտվել և նրան տառացի կրկնել են Հովհաննեսի երկերի տառամասիրությամբ հետազոտում զբաղվող բանասերների մեծ մասը, ընդօրինակելով նաև Ալիշանի սխալը՝ տոմարի մեկնությունը անկյունավոր

թվերի հետ նույնացնելու խնդրում։ Որպես օրինակ կարելի է մատնացույց անել Հ. Գ. Զարբհանեկյանին, որն իր «Հայկական եին դպրության պատմության» մեջ, տոմարի մեկնությունը նույնացնելով «Յաղագս անկիւնատը թուց» աշխատության հետ, նրանք դասում է Հովհաննեսի այն աշխատությունների շարքը, որի «ամբողջը մեր ձեռքը հասած չէ»³։

Հովհաննեսի նշված աշխատությունները իրար հետ շփոթել են նաև դոկտ. Հ. Ոսկյանը⁴ և ուրիշները։

Հովհաննես Սարկավագի «Յաղագս անկիւնատը թուց» աշխատության հետ, ինչպես երևում է, ծանոթ են եղել «Հայկազյան բառարան» կազմողները և նրա տեքստից որոշ քաղվածքներ արել։ Այդ քաղվածքներից «Հայկազյան բառարան»ում կարելի է մատնացույց անել հետևյալները.

«Սառնակիւնի» բառի համար բերված քաղվածքը. «(Թիք) եռանկիւնի. Ա. Գ. Զ. Ժ. ԺԵ. ԽԱ. ԽԷ. Եւ այլն։ Սոսնակիւնույն արմատն մի մի աճէ. իսկ չորեքանկիւնին երկու երկու Սարկ. Տոմ.»⁵։

«Հինգանկիւնի» բառի համար բերված քաղվածքը. «Աւելորդ հինգանկիւնի. Ա. Գ. Է. Ժ. ԺԳ.։ Ուղղորդ հինգանկիւնի. Ա. Ս. ԺԲ. ԼԵ. ՄԱ. Հ.։ Աճէ հինգանկիւնին (արմատն) երեք։ Սարկ. Տոմ.»⁶։

3. Հ. Գ. Զարբհանեկյան, Հայկական հին դպրության պատմություն, 3-րդ տպագրություն, Վենետիկ, 1897 թ., էջ 613։

4. Հ. Ոսկյան, Հովհաննես Սարկավագի գրությունները (տև՝ «Հանդէս Ամսօրհայ», 1925 թ., էջ 238)։

5. Նոր բառագիրք Հայկազյան լեզվի, Վենետիկ, 1836—1837 թ. թ., 1-ին հատոր, էջ 662—663։

6. Նույնը, 2-րդ հատոր, էջ 99։

1, Բազմավէպ, 1847 թ., էջ 219։
2. Ղ. Ալիշան, Հուշիկք հայրենյաց Հայոց, հատոր Բ, Վենետիկ, 1870 թ., էջ 300։

«վեցանկիւնի» բառի համար բերված քաղվածքը. «Աւելորդ վեցանկիւնի. Ա. Ե. Թ. ԺԳ. ԺԷ. ԻԱ. եւ այլն: Ուղղորդ վեցանկիւնի. Ա. Զ. ԺԵ. ԻԲ. ԽԵ. ԿԶ. եւ այլն: ԱՏԷ վեցանկիւնին շորս շորս: Սարկ Տսմ.»⁷:

«Քառանկիւնի» բառի համար բերված քաղվածքը. «Ի թիւս՝ աւելորդ (իմա կոճատ) քառանկիւնի. Ա. Գ. Ե. Է. Թ. ԺԱ. եւ այլն: Ուղղորդ քառանկիւնի. Ա. Դ. Թ. ԺԶ. ԻԵ. ԼԶ. եւ այլն: «Սարկ. Տսմ.»⁸:

«Հայկազյան բառարանի» հեղինակները, սակայն, այս քաղվածքները բերել են ո՛չ թե որպէս Հովհաննեսի «Յաղագս անկիւնաւոր թուոց» աշխատութիւնից վերցրած քաղվածքներ, այլ՝ նրա տոմարի, օգտագործած գրականութեան ցանկում տվյալ հատվածների աղբրուր հիշելով «Սարկ. Տսմ.», այսինքն՝ Սարկաւագի տոմարական աշխատութիւնը:

«Հայկազյան բառարանի» հեղինակներից հետո, Հովհաննեսի «Յաղագս անկիւնաւոր թուոց» աշխատութեան մասին հիշատակութիւն ունի Բ. Վ. Կյուլեներյանը, իր 1911 թվին գրած «Հայ տղու առաջին դասագիրքը» վերնագրով հոդվածում: Հովհաննեսի այդ աշխատութեան լրնորինակութիւնները նա տեսել է Կ. Պոլսի Ազգային Մատենադարանի № 69 և № 254 ձեռագրերում: Սակայն, Կյուլեներյանը, ինչպէս երևում է, մոտից չի ուսումնասիրել այդ աշխատութիւնը և վերջնականապէս չի ճշտել նրա բովանդակութիւնը. ընդունելով այդ աշխատութեան թվաբանական տեսքատ լինելը, միաժամանակ նա ենթադրում է, որ կարող է այն և «քերական» լինել. «Ազգային Մատենադարանի թիվ 69-ը (Փիլոն Եբրայեցի) — գրում է նա — իր 601—611 երեսներուն մեջ կրովանդակե թվաբանական գործ մը, որ կարծես քե ընդարձակ քերական մըն է, (ընդգծումը մերն է—Ա. Ա.) և կկրե սախորագիրը. «Յովհաննեսու քահանայի Յաղագրս անկիւնաւոր թուոց...» (Հմմտ. նույն Մատենադարանի թիվ 254 ձեռագրի (վեցհաղարեակի) հետ, եր. 44—49»⁹):

Հովհաննեսի Անկյունավոր թվերի մասին վերև բերված հիշատակութիւններն միջանկյալ և կցկտուր հիշատակութիւններ են, ուստի և զարմանալի չէ, որ ոչ ոք նրանց վրա առանձին ուշադրութիւն չի դարձրել: Այնպիսի վուրջ և մանրակրկիտ կովկասագետ, ինչպիսին Պրոֆ. Լ. Մելիք-

սեթ-Բեկովն է, ուսումնասիրելով Հայաստանի և Վրաստանի դրական գիտութիւնների պատմութիւնը, տեղեկութիւն չի ունեցել, և ոչինչ չի գրել Հովհաննեսի նշված աշխատութեան մասին իր «Հայաստանի և Վրաստանի դրական գիտութիւնների շուրջ» վերտառութեամբ արժեքավոր ուսումնասիրութեան մեջ¹⁰:

Հովհաննեսի «Յաղագս անկիւնաւոր թուոց» աշխատութիւնը, որպէս մաթեմատիկական գործի, առանձնահատուկ ուշադրութեան արժանի է սկսել դառնալ միայն վերջին տարիներս Մայր Հայրենիքի հայագետների կողմից՝ բնական գիտութիւնների պատմութեան ուսումնասիրութեան կապակցութեամբ. մի բան, որ բոլորովին աչքաթող է արված եղել անցյալում:

Հովհաննեսի նշված տեսքատի վրա որպէս մաթեմատիկական աշխատութեան, առաջին անգամ կանգ է առել տողերիս հեղինակը 1939 թվին, իր «Յոթերորդ դարի հայ գիտնական Անանիա Շիրակացու թվաբանութեան դասագիրքը» վերնագրով հոդվածում: Խոսելով Հայկ. ՍՍՌ Մատենադարանի № 1770 ձեռագրի պարունակած երկրաչափական բովանդակութիւնն ունեցող մի պատմիկի մասին, տողատակ ծանոթութեան մեջ մենք նշել ենք, որ՝ ա) հիշված պատմիկը Հովհաննեսի «Յաղագս անկիւնաւոր թուոց» աշխատութեան պատմիկն է, բ) որ Հովհաննեսի «Յաղագս անկիւնաւոր թուոց» աշխատութիւնը ունի ո՛չ թե տոմարական, այլ մաթեմատիկական բովանդակութիւն և գ) որ այդ աշխատութեան ամբողջական տեսքսը հայտնաբերված է Հայկ. ՍՍՌ Մատենադարանում¹¹:

Երկու տարի հետո, 1941 թվին, Հովհաննեսի «Անկյունավոր թվեր»ի այդ նույն պատմիկի վրա կանգ է առել դոցենտ Տ. Գ. Հարությունյանը, իր «0 таблице полигональных чисел А. Шпракци» վերնագրով հոդվածում: Սակայն, նա պատմիկը համարել է ո՛չ թե Հովհաննեսի աշխատութեան հատվածը, այլ՝ Անանիա Շիրակացու¹²:

Հետագայում, Հովհաննեսի այս աշխատ-

10. Л. М. Меликсет—Беков, К истории точных наук в Армении и Грузии, Тифлис, 1930 г. Հովհաննեսի այս աշխատութիւնը չի հիշված նաև պրոֆ. Մ. Արեղյանի «Հայոց հին գրականութեան պատմութեան» մեջ, Հովհաննեսի երկերի թվաշարքում (Բ հատորում):

11. «Երևանի Պետ. համալսարանի գիտական աշխատութիւններ», հատոր 11-րդ, էջ 249:

12. Հայկ. ՍՍՌ Մատենադարանի «Գիտական նյութերի ժողովածու» հատոր 1-ին, էջ 53—59:

7. Նույնը, էջ 817:
 8. Նույնը, էջ 992:
 9. Բ. Վ. Կյուլեներյան, հայ տղու առաջին դասագիրքը (տե՛ս «Անահիտ», 1911 թ., № 3—4, էջ 76):

տուվյանը մենք վերադարձել ենք նորից մեր «Անահիտ Շիրակացու մատենագրությունը» աշխատության մեջ, «Անկյունավոր թվերը» ենթադրյալի տակ, և ցույց տվել, որ այդ երկը, ճիշտ է որ գալիս է հնից, սակայն այն կցված է Հովհաննեսի Անկյունավոր թվերին և նրա օրգանական մասն է կազմում¹³:

Հովհաննեսի «Անկյունավոր թվեր»ի վրա, վերջերս, ավելի համադամորեն, նրա մասնատրական արժեքը վեր հանելու տեսանկյունով, կանգ է առել դոց. Գ. Պետրոսյանը իր «Հովհաննես Սարկավագի Անկյունավոր թվեր» վերնագրով հոդվածում, որը տպագրվել է Հայկ. ՍՍՏ Գիտությունների Ակադեմիայի տեղեկագրի մեջ: Դոց. Գ. Պետրոսյանը, ռատամասիրելով նշված երկը, եկել է այն եզրակացության, որ ա) նշված տեքստը, անվիճելի, պարզապես է Հովհաննեսին, բ) նրա պարունակությունը թվերի տեսությունն է, և որպես դասագիրք, դասական դպրոցներում, գ) Հովհաննեսի տվյալ աշխատության հասկանալի աղբյուրն է հանդիսացել Նիկոմախը, կամ նրա սկզբունքով կազմված Բոյեցու և ուրիշների աշխատությունները և դ) Հովհաննեսի այս, և ճշգրիտ գիտությունների զծով գրած մի քանի այլ աշխատությունները ապացուցում են, որ նա «իր ժամանակի խոշոր գիտնականներից է ո՛ր միայն պատմության և դրականության բնագավառում, այլ նաև ճշգրիտ գիտությունների բնագավառում»¹⁴, Դոց. Գ. Պետրոսյանն իր հոդվածի հավելվածում հրատարակել է Հովհաննեսի նըշված աշխատության աղյուսակները, վերցնելով այն Հայկ. ՍՍՏ Մատենագրանի № 1770 ձևագրից:

Հովհաննեսի Անկյունավոր թվերի ուսումնասիրության պատմությունն ամբողջացնելու համար ասենք, որ այդ տեքստը տոմարի հետ միասին հիշատակված է դուկտ. Ե. Տեր-Մինասյանի «Հաղբատի դպրոց և Հովհաննես Սարկավագ վարդապետ» վերնագրով հոդվածում¹⁵, Մելիքսեթ-Բեկովի «Վարդապետք հայոց հյուսիսային կողմանց» վրացերեն գրած աշխատության մեջ¹⁶ եվ

մեծանուն ակադ. Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարան»ի մեջ¹⁷:

Նախ քան նշված աշխատության պարունակության մասին խոսելը, անհրաժեշտ ենք համարում համառոտակի կանգ առնել նրա ձեռագիր ընդօրինակությունների վրա:



Հովհաննեսի Անկյունավոր թվերի ձեռագիր ընդօրինակություններից մինչև այժմ խոսվել է Հայկ. ՍՍՏ Մատենագրանի երեք ձեռագրի մասին — № 1770, № 4150 և № 8973: Առաջինի վրա խոսել ենք մենք, իսկ մյուս երկուսի մասին՝ դոց. Գ. Պետրոսյանը:

Հայկ. ՍՍՏ Մատենագրանի ձեռագրերում մեր կատարած ուսումնասիրություններից պարզվեց, որ մեզ են հասել Հովհաննեսի «Յաղագս անկիմաւոր թուոց» աշխատության ոչ թե երեք, այլ ավելի քան տասը ձեռագիր ընդօրինակությունները, որոնցից երկուսն ամբողջական են, իսկ մնացածները՝ թերի կամ առանձին հատվածներով:

1944 թվին, Երուսաղեմում մեր գտնված ժամանակ, Ազգային Պատրիարքարանի Մատենագրանի մեզ հետաքրքրող մի քանի ձեռագրերը նայելիս, պարզվեց, որ այնտեղ ևս կա Հովհաննեսի «Յաղագս անկիմաւոր թուոց»ի մի ընտիր ընդօրինակություն, որը գրանցված է 157 թվահամարի տակ¹⁸:

Հետագա ուսումնասիրողների գործը հեշտացնելու համար, անհրաժեշտ ենք համարում ստորև բերել Հայկ. ՍՍՏ Մատենագրանում եղած Հովհաննեսի «Յաղագս անկիմաւոր թուոց»ի ձեռագիր ընդօրինակությունների համառոտ նկարագրությունը, դասավորված համարական կարգով. —

1. — № 437, թ. 126ա—127ա: Չունի հեղինակի անվան հիշատակությունը: Վերնագրված է «Խրատ եռանգլինեացն»: Սկսում է «Անկիմաւոր թուոցդ վախճան է երեւակն է...»: Վերջանում է «...Ե միջինն սոցա հարիւրն է: Եւ այսպէս. Ա ժ ը Ի և հազարն բիւր: Եւ միջինն սոցա հարիւրն է»: Տեքստը թերի վիճակում է: Չունի հեղինակի ներածականը և աղյուսակները: Վերջում Հովհաննեսի «Յաղագս անկիմաւոր թուոց»ի բացատրական տեքստի վրա կատարվել է որոշ ավելացում, Չեռագիրն ընդօրինակվել է Եսայի Նչեցին (մահացել է 1338 թ.) Գլածորում:

17. Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Գ հատոր, էջ 571—572:

18. Նշված տեքստը մեզ համար արտագրեց Նրուսաղիմի Ժառանգավորաց վարժարանի մի պատվական կրթասարդ՝ Վարդավառ Սիմոնյանը:

13. Ա. Աբրահամյան, Անահիտ Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944 թ., էջ 68—71:

14. Գ. Պետրոսյան, Հովհաննես Սարկավագի «Անկյունավոր թվեր» (տե՛ս «Տեղեկագիր Հայկ. ՍՍՏ Գիտությունների Ակադեմիայի» (հասարակական գիտություններ), 1945 թ., էջ 341:

15. Տե՛ս «Արարատ», 1901 թ., էջ 341:

16. Լ. Մեղուկյան-Նեցի, «Իրազեղում մեծագույն սոցալոգիկա մոնոլոգ»² և մատի ծննդաձև, տեղի ունեցավ 1928, էջ 150—151:

Գրիչը խնդրում է հիշել համշխրակ Ստեփանոսին, որից ստացել է ընդօրինակութեան նախագաղափար օրինակը:

2. — № 1672 (1775), թ. 159ա—159բ: Հովհաննեսի աշխատութեան վերջին աղյուսակին է, շարադրված ուղղահայաց և հորիզոնական շարքով: Աղյուսակի ներքին լուսանցքում բերված է մի քանի տող անկյունավոր թվերի աստիճանական մեծացման մասին. «Նուանգիւնույն արմատն մին մին աւել, իսկ քառանգիւնին՝ Բ. Բ. ...»: Չեռագրի հիմնական մասը 12—13-րդ դարու ընդօրինակութիւնն է, իսկ Հովհաննեսի աղյուսակը նոր գրչութեամբ է, հավանական է 17-րդ դարու: Մեջ առ մեջ աղյուսակները գրված են կարմիր թանաքով, որոնք ջնջվել են: Համեմատվում է № 5619 ձեռագրի ընդօրինակութեանը:

3. — № 1711 (1875), թ. 17ա: Հովհաննեսի տեքստի վերջին պատահիկը միայն: Չեռագիրն ընդօրինակել է Դավիթ արեղան ԶԺԲ (1463) թվին:

4. — № 1716 (1889), թ. 347ա—բ: Համեմատվում է № 4150 ձեռագրի բնագրին: Միայն «բողոք» թվերն են և նրան կցված «կոճատք», «ղարք» և «կրկնապատք» թվերը: Շունի անկյունավոր թվերի վերջին պատահիկը: Չեռագիրն ընդօրինակել է Ստեփանոս քահանան ՉԻԵ (1276) թվին:

5. — № 1743 (1882), թ. 463բ—464ա: Հովհաննեսի աշխատութեան վերջին երկու աղյուսակներն են: Տեքստի թվերը եղծված են և վատ է կարդացվում: Չեռագիրը 13—14-րդ դարերի ընդօրինակութիւնն է: Համեմատվում է № 5619 ձեռագրի ընդօրինակութեանը:

6. — № 1770 (1708), թ. 390ա—391բ, 345ա—բ, 351ա—բ, 484ա: Անկյունավոր թվի պատահիկը սխալմամբ ընդօրինակված է, կամ, գուցե, սխալմամբ կազմված է Շիրակացու թվաբանական աղյուսակին նախորդող ներածութեան և «ընդունելութեան» (գումարման) աղյուսակների միջև: Վերնագիրը՝ «Հովհաննու քահանայի Յաղագս անկիւնաւոր բրոց»: Սկիզբը՝ «Ձի ի յուսումնասէր մանկանց...»: Կամեցիսն և ակործանն զվարժումն...»: Ամբողջական տեքստն է. պակասում է միայն ներածականի երկրորդ մասը՝ «Յորժամ բազմապատկել սկսանի...», մինչև աղյուսակները: Թերթերը խառնված են ձեռագրում կազմելու ժամանակ. թ. 390ա—391բ-ի շարունակութիւնը ընկել է թ. 345, 351բ և 484ա-ում: Չեռագիրն ընդօրինակել է Աստվածատուր գրիչը Հայրապետ Զուղայեցու պատվերով, 1598 թվին:

7. — № 2595 (299), թ. 236բ: Վերնագիրը՝ «Հովհաննու քահանայի Յաղագս անկիւնա-

ւոր բուց»: Սկիզբը՝ «Ձի ի յուսումնասէր մանկանց...»: Տեքստն ու աղյուսակներն ամբողջական վիճակումն են: Վերջանում է թ. 240բ, Ընդօրինակել է Բրաբրոն գրչուհին, 1786 թվին: Ըստ ընդօրինակված նախորդ հիշատակարանի, նախագաղափար օրինակն ընդօրինակել է Չե (1298) թվին Արմենի Աստվածածին անապատում Վահրամ գրիչը իր ուսուցչի՝ Ստեփանոս Գույնի-րիցանցի հանձնարարութեամբ, «անբարի» մի ժամանակ, երբ «ազգն իսմայելացոց... յափշտակեաց զյուսթի և զպարարտ մասն երկրիս մերոյ... և բազումք անկան ի սուր սուաների... Եկեղեցիք քակեալք և քահանայք խողխողեալք, վանորայք ապականեալք և միանձնուք ցրուեալք, մանկուք գերեալք և աղջկուք վաճառեալք ի ձեռաց անօրինաց...» (թ. 240բ—241ա):

8. — № 4150 (Տաթևի № 22), թ. 23ա—27բ: Վերնագիրը՝ «Հովհաննու քահանայի զանկիւնաւոր բուցն ի փոխաբերութենէ երկրաչափութեան ձեւոց»: Թերթի է. շունի հեղինակի ներածականը և բացատրական տեքստը: Աղյուսակները շարադրված են ո՛չ թե ըստ երկարութեան, ինչպես մյուս ընդօրինակութիւնների մեջ են, այլ՝ ըստ լայնութեան: Անկյունավոր թվերը մեկով ավելի է. փոխարեն տասնչորսի, տասնհինգ է: Վերջում ավելի ունի «կոճատք», «ղարք» և «քուլայք» թվերը, որոնք շարադրված են դարձյալ լայնութեամբ: Թ. 26ա-ում որոշ աղյուսակները սխալմամբ կրկնվում են: Վերջում ունի հետևյալ վերջաբանը. «Անկիւնաւոր թուոցը վախճան եկեղեցեական է համար, իսկ այլքը աւելորդ գրեցան յաղագս կրթութեան մանկանց և վարժման յարուեստ, որպէսզի անցեցեն յորժամ և կամեցին ըստ արուեստին խնդրոյ»: Չեռագրի գրիչը՝ Ղազարն է, ստացողը՝ Հակոբոսը: («Ձստացող գրոցս զՅակովբոս յիշեսցիք տերամբ ընդ նմին և զտառապեալ տարաշխարհիկ գրիչս Ղազար յիշեսցիք ով եղբարք սիրելիք» թ. 5բ): Գրչութիւնը 14-րդ դարու է:

9. — № 5254, թ. 125բ—127ա: Ընդօրինակված են աղյուսակներն առանց վերնագրի և ներածականի: Բացատրական տեքստը համեմատվում է № 437 ձեռագրի ընդօրինակութեանը: Ունի ճիշտ այն հավելումները, ինչ որ № 437 ձեռագրումն են: Ընդօրինակել է ՉԻԹ (1280) թվին Գեորգ գրիչը, խաչենցի Մահկանաբերդի Դեղձուտի վանքում, ուր եկած է եղել սովորելու: Չեռագրի նախագաղափար օրինակը տրամադրել են Վահրամ և Ստեփանոս անունով իր լծակից ընկերները (թ. 54բ):

10. — № 5619 (930), թ. 3ա—4բ: Հովհաննեսի անկյունավոր թվերի երկու աղյու-

սակներն են առանց վերնագրի և առաջաբանի: Բացատրական տեքստը սկսում է «Ծոանկիւնտյն արմատն Ա. Ա. աճէ, իսկ շոբեքանկիւնի՝ Բ. Բ. ...»: Վերջում կրճատված է: Չեռագրի հիմնական մասը ընդօրինակված է 1176 թվին Ավետիս գրչի կողմից, սակայն, Հովհաննեսի անկիւնաւոր թվերի տեքստը ուշ շրջանի՝ ԺԳ դարու ընդօրինակութիւնն է, հավանական է 1351 թվի, որովհետև նույն ձեռագրում ընդօրինակված ժամանակագրութիւնը շարունակողը, որը նույն ձեռագրով է, նոր ժամանակի դեպքերի հիշատակութիւնը հասցրել է մինչև այդ թվականը:

11.— № 8716, թ. 51ա—52ա: Հատված Հովհաննեսի Անկյունավոր թվերի «կոճատք», «դարք», «քուայք» և «Գ. ապատիկ» թվերի և բացատրական համառոտված տեքստը (Հմմտ. № 8973 ձեռագրի ընդօրինակութիւն): Չեռագրին արիթարք է, ընդօրինակված ԺԳ դարում:

12.— № 8973, թ. 79ա: Չոնի վերնագիր: Սկսում է Հովհաննեսի վերջին պատառիկից, որը տարբերվում է մյուս ընդօրինակութիւններից: Շարունակութիւն մեջ ընդօրինակված են «Ծոանկիւնի՝նների ընդարձակ աղյուսակները գեղեցիկ ձևավորութիւնով, իսկ վերջում՝ «բողոք» թվերի աղյուսակն է և բացատրական տեքստը համառոտված: Չեռագիրն ընդօրինակել է Օգսենդ գրիչը Կաֆայում, ՊՂԴ (1445) թվին, Ս. Անտոնի վանքում, Կաֆայի աթոռակալ Սարգիս վարդապետի պատվերով (թ. 58բ)¹⁹:

13.— Երուսաղեմի Հայոց Ազգային Պատրիարքարանի Ս. Հակոբյանց Մատենադարանի № 157, թ. 208բ—212ա: Վերնագրված է «Հովհաննու Բանանայի Յաղագս անկիւնաւոր թուոց»: Սկսում է «Զի ի յուսումնասէր մանկանց...»: Վերջը՝ «...բաական տուալ քեզ վասն այսոցիկ» (թ. 212ա): Ամբողջական տեքստն է, աղյուսակների հետ միասին: Ընդօրինակել է Սարգիս գրիչը ՌՄ է (1758) թվին: Ընդօրինակութիւնն նախագաղափար օրինակի գրիչն է հանդիսացել Վահրամ սարկավազը, իսկ պատվիրատուն հայ գրչութիւն հայրանի դեմքերից մեկն է՝ Ստեփանոս քահանա Գույններիցանցը (ժամանակը՝ ԺԳ դար):

14.— Բրիտանական թանգարանի հայկական ձեռագրաց ժողովածուի № 136 ձեռագիրը, թ. 229բ—232բ: Վերնագրված է «Հովհաննու Բանանայի Յաղագս անկիւնաւոր

թուոց...»: Ամբողջական տեքստն է և աղյուսակները: Ընդօրինակել է Պոլսում Աստվածատուր գրիչը ՌԿ (1611) թվին²⁰:

Դժբախտաբար, մենք ձեռքի տակ չունենք և ոչինչ ասել չենք կարող Կ. Պոլսի Ազգային Մատենադարանի № 69 և № 254 ձեռագրերի մասին, որոնք հիշում է Բ. Վ. Կյուլեսերյանը իր «Հայ տղու առաջին դասագիրքը» վերնագրով վերև նշված հոդվածում: Ոչինչ չենք կարող ասել նմանապես Վենետիկի այն ընդօրինակութիւն մասին, որից օգտվել են «Հայկազյան բառարան»ի կազմողները:

Բերված ընդօրինակութիւնների համառոտ նկարագրութիւններից երևում է, որ մեզ հասած Հովհաննեսի «Յաղագս անկիւնաւոր թուոց»ի տասներեք ընդօրինակութիւններից միայն երեքն են ամբողջական (№ 1770, № 2595 և Երուսաղեմի № 157), իսկ մնացած յոթը՝ այս կամ այն չափով թերի են:

Եթե մեզ հասած այս տասը ձեռագրերը դասավորելու լինենք ըստ նրանց ընդօրինակութիւն հնութիւն, ապա հնագույնը կհանդիսանա Ստեփանոս գրչի ընդօրինակութիւնը, որն ունի 1276 թվի գրչութիւն: Բայց եթե նկատի ունենանք նաև որոշ ձեռագրերի նախագաղափար օրինակները, որոնց մասին կոնկրետ փաստացի հիշատակութիւնները ունենք, ապա ամբողջական տեքստերից հնագույնը Երուսաղեմի ձեռագիր ընդօրինակութիւնն է, որի նախագաղափար օրինակը, ինչպես ասել ենք վերևում, 13-րդ դարում ապրող մատենագիր Ստեփանոս Գույններիցանցի պատվերով է ընդօրինակված: Նույն ընդօրինակութիւնից սկիզբ է առնում նաև Բրաբիտոն գրչուհու 1789 թվի ձեռագիրը, ոչի նախագաղափար օրինակը, ինչպես երևում է նախկին հիշատակարանից, 1298 թվից է: Ընդհանրապես ամբողջական ձևով մեզ հասած երեք ձեռագրերն էլ՝ № 1770, № 2595 և Երուսաղեմի № 157, ընտիր ընդօրինակութիւններ են: Չենք տեսել և ոչինչ ասել չենք կարող Բրիտանական թանգարանի օրինակի մասին:

Հովհաննեսի «Յաղագս անկիւնաւոր թուոց» աշխատութիւն տեքստը և աղյուսակները ձեռագրերում մեզ հանդիպում են տարբեր կառուցվածքով և խառնված ուշ շրջանի ընդմիջարկութիւնների հետ:


Ո՞րն է Հովհաննեսի հարազատ տեքստը և ի՞նչպիսի կառուցվածք է ունեցել նա: Նախապես անհրաժեշտ ենք համարում այդ մասին մի քանի խոսք ասել:

19. Նշված ձեռագրերից 6-ի նկարագրութիւնը արբված է Կարինյան ցուցակում, սակայն այնտեղ ոչ մի հիշատակութիւն չկա Հովհաննեսի Անկյունավոր թվերի մասին:

20. M. A. Conybeare, A. catalogue of the Armenian manuscripts in the British Museum, London, 1913, p. 328.

ՀՈՎՀԱՆՆԵՍԻ «ՅԱՂԱԳՍ ԱՆԿԻՆԱԻՈՐ ԹՈՒՈՑ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՃՅՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինքնագիր ձեռագիր



Հովհաննեսի «Յաղագս. անկիւնատր թուոց»ի տեքստը սկսվում է հեղինակի ներածական խոսքով, ուր նա հայտնում է, որ իր այդ աշխատությունը գրում է ուսումնասեր արջ մանուկների համար, որոնք ցանկանում են վարժվել թվերի մեջ՝ դյուրութուն ստեղծելով շարադրված ցանկի հիման վրա օգտվել նրանից. «Զի ի յուսումնասէր մանկանց, որք կամիցին և ախորժեն զվարժումն, որ ըստ բնութեան թուոց անաշխատք

որքան և կամենա. «Իսկ եթէ ախորժեսցէ որ շարժել եւս յառաջ, դիւրին է ի տուեցելոցդ, որքան եւ կամեսցի»:

Ներածականին հաջորդում է բացատրական մի տեքստ անկյունավոր թվերը կազմելու սկզբունքի մասին, որը պահել են միայն № 1770 և № 8973 ձեռագրերը: Նա սկսում է. «Յորժամ սկսանի զԹիւ, աւելով Ե.իցս Ե, լինի ԻԵ...» պարբերությամբ և վերջանում է

The image shows a manuscript page with a grid of numbers in Armenian script. The grid is organized into rows and columns, with numbers written in a cursive style. The page is aged and has some wear, but the text is clearly legible. The numbers appear to be arranged in a systematic way, possibly representing a multiplication table or a similar mathematical structure.

Հովհաննես Սարգսյանի «Անկյունավոր թվեր»ի հնագույն ձեռագրերի մի էջը (Հայկ. ՍՍԻ Պետ. Մատենադարանի № 4150 ձեռագրից):


եղիցին, յայնուսիկ եւ դիւրաւ հասցեն ըստ տուեցելոյ առաջի եղելոյ կանոնացդ, որում ախորժենն»: Այնուհետև, նա հայտնում է, որ շարադրված աղյուսակները երեք շարք ունեն. առաջին շարքի մեջ «արմատն» է և «բողբոջը»՝ եռանկյունի կազմած, իսկ մյուս երկուսը՝ առանձին առանձին իրենց արտադրյալներով:

Ներածականում նա նշում է նաև, որ ինքը եռանկյունի թվերը հասցրել է մինչ 26-ը, որից հետո ցանկություն ունեցողը, ըստ շարադրված սկզբունքի, կարող է շարունակել

«...որպէս ԻԵ, որ եղել բոլոր եւ քառանկյունի» պարբերությամբ:

Բացատրական այս տեքստին հաջորդում են արմատի և բողբոջների եռանկյունու աղյուսակները, որոնք ձեռագրերում մեզ հանդիպում են երկու տարբեր խմբագրությամբ: Խմբագրություններից մեկում եռանկյունիները շարադրված են լայնքով, իսկ մյուսում՝ երկարությամբ:

(Շարունակելի)



Ա. ՊՈՂՈՍՅԱՆ

(Ֆիլոսոփական գիտ. բեկնածու)

ԼԵԶՎԱԳԻՏԱԿԱՆ ՄԻ ԶՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

(«նի» մասնիկի» և «նի» մասնիկավոր բառերի մասին)



այագիտության և մասնավորապես հայ բարբառագիտության մեջ մինչև այժմ նի-ն ճանաչված է իբրև բառամաս-

նիկ, նախամասնիկ, նախադրություն, որը դրվելով բառերի սկզբից, ցույց է տալիս ներս, մի բանի ներսում լինելը, գտնվելը: Այսօրինակ բացատրությունը իր մեջ ճշմարտության հատիկներ պարունակելով հանդերձ, տառապում է միակողմանիությամբ: Ծիշտ է, նի-ն նախապես ձևացել է ներս, (ներքս) բառից, բայց հետագայում մաշվելով, ամբողջական բառից մնացել է երկու, և ավելի ուշ շրջանում՝ միայն մի հնչյուն, որի հետևանքով բառը կորցրել է ոչ միայն ֆորմալ կողմը, այլև փոխել, վերառել է իր նախնական նշանակությունը, բովանդակությունը, այդ պատճառով էլ այդ նի-ն դրվելով որոշ բառերի սկզբից կամ վերջից ստեղծում է զանազան բառահարաբերություններ, բառին տալով նոր երանգ, նոր իմաստ, այլ կերպ ասած՝ մի շարք ժողովրդական լեզուներում, ինքնուրույն ճանապարհով ամբողջական բառից առաջացել է նախածանց դարձող մասնիկ: Մեր կարծիքով նի ձևովը անցել է զարգացման հետևյալ ուղին՝ ներքև-ներս-նես-նի-ն: Մեր ասածները հաստատելու համար, բերենք նի մասնիկավոր բառերը և ցույց տանք յուրաքանչյուրի նշանակությունը:

Ա.— Նի ձևովը (մորֆեմա) բառասկզբից.

նի անել, նի ընգրենել, նի ըսենել կամ նի

հրսենել, նի քակել, նի թողել, նի ինիլ, նի խառվել, նի խրժկել, նի կյալ, նի կապել, նի կենալ, նի կոխել, նի հաճել, նի քնտանել, նի հետ տալ, նի մաշիլ, նի մընալ, նի եր տալ, նի ջարել, նի շրլալել, նի պրանել, նի պրծնել, նի վեր տալ, նի վրճաֆել, նի տալ, նի տրէդալ, նի ֆաշիլ, նի ֆիցիլ, նի ֆսել, նի օնել:

Բ.— Նի ձևովը բառավերջից. Արխընի, արտընի, երէսընի, ծըմակընի, հրդեննի, մըղակընի, շէնընի, պատընի և այլն:

1. Նի անել նշանակում է ներս անել. օրինակ՝ «Ուկերը նի արա գոմը» (ներս արա գոմը): Նի անել նշանակում է նաև հոգեկան ապրումները ներսում պահել, շարտահայտել և այդ ձևով տանջվել: Օրինակ՝ ասվում է՝ «Ենեղճը այնքան նի արավ, որ մահացավ», այսինքն՝ իր ապրումները այնքան շարտահայտեց՝ մահացավ:

2. Նի ընգրենել նշանակում է մեջ ընկնել, միջամտել որեւէ գործի:

3. Նի ըսենել կամ նի հրսենել նշանակում է՝ ա) տեղ հասնել. օրինակ՝ «Երկու օրում նի հրսա», բ) հարձակվել, ծեծել: Այսպես՝ «Նի հրսա, մի լավ տրէսա» (Հարձակվեցի, մի լավ ծեծեցի):

4. Նի քակել՝ վրա ծեծել. այսպես՝ «Այսօր լվացքը տանելու եմ գետում նի թակել» (Այսօր լվացքը տանելու եմ գետում լվամ. բառացի՝ վրան ծեծեմ):

Նի քակել գործածվում է նաև իբր հայհոյանք:

5. Նի թողել՝ աչքը հառել, սևեռել մի բանի, սպասել մի բանի. օրինակ՝ «Աչքս նի եմ թողել, թե ե՞րբ պիտի գաս»:

1) Ուտումասիրությունը կատարված է մի շարք հայ բարբառների և մասնավորապես Հարդութի բարբառի փաստական նյութերի հիման վրա:

6. Նի իճիլ (բառացի նշանակում է ներսում լինել, որևէ սուր, սրածայր իր, առարկա մի բանի մեջ մտնելը. օրինակ՝ «Փուշը նի իլավ ոտս», «Ասեղը նի իլավ մատս»:

Իճիլ՝ լինել բայն է, որից լ ձայնորդը ընկել է, իսկ ն-ից հետո եկող ե-ն էլ ազդվելով նախորդ ի-ից, դարձել է նույնպիսի ի և այսպիսով լիճել—իճիլ. սակայն անցյալի ձևերում նախահնչյուն լ-ն վերականգնվում է կորցնելով և ունգայինը, ի-ն էլ վերածվելով ա-ի՝ լիճել—իճիլ—լալ. օրինակ՝ «Գնացած էի լալ» (Գնացած էի եղել):

7. Նի խառվել՝ իրար խառնվել, խճճվել. օրինակ՝ «Նի են խառվել՝ շունը տիրոջը չի ճանաչում»: Այս բայահիմքից էլ կազմվում է նի խառվող ենթակայական դերբայը և ասվում է ասող-խոսող, նաև մեկի կյանքով հետաքրքրվող (դրական իմաստով) մարդկանց նկատմամբ:

8. Նի խրժկել՝ որևէ պինդ մարմնի, իրի, առարկայի ներսի կողմի վրա ծռելը. օրինակ՝ «Նոողովակը այնպես հուպ տվեց, սր նի խրժկեց»:

9. Նի կյալ. ա) կպչել, դիպչել մի բանի. օրինակ՝ «Նա լավ մարդ է. նրան նի մէ կյալ»: բ) վիրավորվել հոգեպես, ձանձրանալ տաղտկալի կյանքից. օրինակ՝ «Նա ջանից նի եկած է»: գ) հանդիպել. օրինակ՝ «Այսօր դնացել է նրան նի եկել և վերադարձել»:

10. Նի կապել. ա) փաթաթել, կապկպել. օրինակ՝ «Նրեխային օրօրոցի մեջ նի կապել» (կապկպել): բ) ձգել, շարտել մի կողմ. օրինակ՝ «Նյդ պետք չէ, նի կապիր կով-կով (շարտիր դեպի վեր):

11. Նի կեճալ. ա) վառվել. օրինակ՝ «Փայտը նի կացավ»: բ) բարկանալ, բորբոքվել. այսպես օրինակ՝ «Նա ո՞նց է նի կացել, իրեն ուտում է»: Այստեղից էլ նի կըցենլ նույն նշանակությամբ՝ «վառել, ջղայնացնել»:

12. Նի կոխել՝ ուժով խոթել, մտցնել. օրինակ՝ «Հացը նի կոխեց գրպանը»:

13. Նի հանել. ա) լցնել. օրինակ՝ «Պուպոկը նի հանեց քսակը»: բ) ուտել. օրինակ՝ «Նա շատ է նի հանում» (ուտում): Ուրիշ բարբառներում նի հանել նշանակում է նաև մի բան վեր հանել, բարձրացնել. օրինակ՝ «Քարը նի հանեց»: «Արձանագրութիւնս այս հրահրտան պատի վրայ նի հանողը եղել է Կոմիտաս կաթողիկոսը»¹⁾:

14. Նի հետ անել՝ ծածկել, փակել. օրինակ՝ «Դուռը նի հետ արա» (դուռը ծածկիր):

15. Նի հետ տալ՝ արագ քշել, մանավանդ կենդանիներին. օրինակ՝ «Ձին նի հետ տվեց գնաց» (քշեց գնաց):

16. Նի մաշիլ՝ սփսկ անել, հանդգնել, խիզախել մի դժվար բանի, իր ուժերին վստահ լինելով, որից էլ նի մաշող հանդգնող, խիզախող, խիզախ, հանդուգն նշանակությամբ:

17. Նի մըճալ. Ստ. Մալխասյանցը այս բառը բացատրում է այսպես՝ «Նի մնալ, ացի, չ. բ. սպասել: Նի մնացեք մինչև զամ»¹⁾:

Կեռնային Ղարաբաղի Ավտոնոմ Մարզի Հաղորդի շրջանի բարբառով, նի մնալ՝ սպասել չի նշանակում, այլ նախ՝ շվարել և երկրորդ՝ իբրև բացասական պատասխան բառ մեկի խնդրանքին կամ հրամանին: Այսպես օրինակ՝ «Մնո՞ւ. ես նի մնացել» (շվարել) կամ՝ «Գնա՞ մի քիչ շուր բեռ», պատասխանը լինում է՝ «Նի եմ մնացել», այսինքն՝ չեմ կարող:

18. Նի եր տալ նշանակում է մի բանի միջով ներքևից վերև անց կացնել, վերև տալ: Օրինակ՝ «Փայան (ձողափայտը) նի եր տուր»:

19. Նի շարել. նի-ն այստեղ ցույց է տալիս հաջորդականություն, օրինակ՝ «Մի ժամ շարունակ նի շարեց» (իրար հետևից շարեց):

20. Նի շըլվել, նի շըլվել՝ մի բանի մեջ փաթաթել, փաթաթվել: Համապատասխանում է ռուսերենն՝ окутать, окутывать, окутаться, окутываться բառերին: Օրինակ՝ «Նա նի շըլվեց վերմակի մեջ»:

21. Նի պրանել՝ ծեծել. օրինակ՝ «Այնքան նի պրանեց, որ մահացավ»:

22. Նի պրծնել՝ արագ ներս անցնել, խցկվել. օրինակ՝ «Ոձը նի պրծավ անցքը» (խցկվեց, արագ ներս մտավ):

23. Նի վեր տալ՝ ճիշտ նի եր տալ-ու հակառակ գործողությունը: Օրինակ՝ «Նոտը կտուրից նի վեր տուր» (ներքև տուր):

24. Նի վըճախել. ա) շոքս կողմից դեպի կենտրոնը հավաքել: բ) գործ է ածվում իբրև հայհոյանք:

25. Նի տալ. ա) կպչել, հպել, դիպչել. օրինակ՝ «Ձեռքը նի շտաս, թե չէ կփշացնես»: բ) ներս տալ. օրինակ՝ «Փայտը նի տուր վառարանը»: գ) ուտել. օրինակ՝ «Այնքան նի տվեց, ուտավ»:

26. Նի տըէնալ. ա) թափվել. օրինակ՝ «Ջուրը նի տըէնավ տուն»: բ) ներս դառնալ, մտնել. օրինակ՝ «Ուրբը նի տըէնան այգին»:

1) Այս օրինակը քաղել ենք Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանից», էջ 461:

1) Ստ. Մալխասյանց, «Հայերեն բացատրական բառարան», էջ 461:

Ուրիշ բարբառներում էի դառնալ նշանակում է՝ ա) հետ դառնալ. օրինակ՝ «Աղջկերբը եկան, նի դառան: Ընկան զորքի հտեկից, զորքը նի դառավ, շարդեց նրանց»: բ) վրա պրծնել. օրինակ՝ «Նի դառան հացին, կուշտ կերան»¹⁾:

27. Նի քաշիլ. ա) վեր բարձրացնել. օրինակ՝ «Նս նրան բան հարցրի, իսկ նա ուսերը նի քաշեց» (բարձրացրեց):

28. Նի քիցիլ՝ ներս գցել. օրինակ՝ «Էլը նի քիցի գտմը»:

29. Նի քսել՝ շոշափել, քսել, տրորել. օրինակ՝ «Էլվացքը այնքան նի քսեց՝ մաշվեց»:

30. Նի օնել. ա) վերցնել. օրինակ՝ «Գնա սաս՝, թող մի բաժակ ջուր նի օնի տաքեզ» (վերցնի):

բ) սկսել. օրինակ՝ «Նի անելուց (սկսելուց) մի ժամ առաջ դուրս եկավ»:

Նի օնել-ից էլ՝ էի կալավ. նշանակում է սկսեց անձրևել, անձրևում է: Այսպես կոչված՝ անդեմ բայ է, ինչպես ռուսերեն՝ Морозит, ֆրանսերեն՝ il pleut, գերմաներեն՝ es regnet և այլն: Ակադեմիկոս Ն. Մառը այս անդեմ բայերի մասին գրում է.

«Хотя все эти так называемые безличные глаголы: русский «меня лихорадит», французский l fait chaud «жарит», немецкий es reguet «он льет с неба» смущают теперь, как исключительные глаголы, ибо сообщая о состоянии здоровья или погоды, они оформлены, как действительные, вопреки ожиданию, нашего мышления, и это вынуждает составителей школьных грамматик назвать их «безличными», когда лицо субъект, «он», «она» или «оно» некогда производительный тотем: у русского глагола «меня лихорадит» это дух немощи, у француза в глаголе il fait chaud он жарит, это бог солнце, у немцев es regnet «он (бог-небо) льет воду» это—наследие того действительного бытия человечества, при том не от одной, а различных эпох, когда человечество было убеждено (мы теперь скажем еще верит), что болезни насыпают и погоду делают особые духи, божества и другие фетиши»²⁾.

Ն. Մառի այս մեկնաբանությունը վերաբերում է նաև հայերենի և առհասարակ որևէ լեզվի այսպես կոչված անդեմ բայերին, ինչպես՝ անձրևում է, շոգ է և այլն:

Նույնը պետք է ստել և բարբառային ձևերին, ինչպես՝ էի կալավ, ետ կալավ և այլն:

գ) պատել, շրջապատել, տարածել. օրինակ՝ «Մոսկուր նի կալավ տունը»:

դ) բռնել. օրինակ՝ «Ցավը նի կալավ շանը»:

31. Արխնի, ծրմակրնի, դուրնի, երեսընի, և այլն բառերի մեջ էի-ն ցույց է տալիս այն տեղը, ուր կատարվում է ենթակայի գործողությունը և նշանակում է՝ մի բանի մոտով, շուրջը, ափով, միջով: Այսպես՝ «առուների» նշանակում է՝ առվի եզրով, ափով, «արտերնի»՝ արտի միջով, «երեսընի»՝ դեմ, առաջ. օրինակ՝ «Գայլը դուրս եկավ երեսընի» (դեմը, առաջը), «դուրնի»՝ դռան առջև, վրայով. օրինակ՝ «Դուրնի կանգնել» (դռան առջև), «Աուն դուրնի գնաց» (դռան վրայով):

Այսպիսով էի ձևովը դրվելով բայասկզբին (ոչ բոլոր բայերի), կազմում է բաղադրությալ բայեր և ցույց է տալիս՝

1. Ներս (գրաբար՝ ներքս), ինչպես՝ նի անել, նի ինել և այլն:
2. Տեղ հասնել, ինչպես՝ «Երկու օրում նի հասա»:
3. Հարձակվել, ինչպես՝ «Նի հասա նրան ծեծեցի»:
4. Վրա ծեծել, ինչպես՝ նի թակել:
5. Աչքը հառել, սեեռել մի բանի, ինչպես՝ նի թողել:
6. Խառնվել, խճճվել, ինչպես՝ նի խառվել:
7. Մոել ներսի կողմի վրա, ինչպես՝ նի խժկել:
8. Կպչել, դիպչել, հպել, ինչպես՝ նի կյալ:
9. Փաթաթել, կապկապել, շպրտել, ինչպես՝ նի կապել:
10. Վառվել, բորբոքվել, ինչպես՝ նի կենալ:
11. Ուժով խոթել, ինչպես՝ նի կոխել:
12. Կցնել, ուտել, վեր հանել, բարձրացնել, ինչպես՝ նի հանել:
13. Մածկել, փակել, ինչպես՝ նի հետ անել:
14. Արագ քշել, ինչպես՝ նի հետ տալ:
15. Հանդգնել, խիզախել, ինչպես՝ նի մաշիլ:
16. Շվարել, վարանել (նաև սպասել), ինչպես՝ նի մընալ:
17. Հաջորդականություն, ինչպես՝ նի շարել:
18. Խցկվել, փաթաթվել, ինչպես՝ նի շըլիվել:
19. Մեծել, հարվածել, ինչպես՝ նի պրանել:
20. Հավաքել դեպի կենտրոնը, ինչպես՝ նի վըհաքել:
21. Թափվել, ետ դառնալ, վրա պրծնել, ինչպես՝ նի տըէնալ:
22. Բարձրացնել վեր, ինչպես՝ նի քաշիլ:

1) Ստ. Մալխասյանց, անդ. էջ 463:

2) Н. Я. Марр, Изб. работы. том III, стр. 91—92.

23. Շոշափել, տրորել, քսել, ինչպես՝ նի քսել:

24. Վերցնել, սկսել, պատել, շրջապատել, բռնել, ինչպես՝ նի օնել:

Մյուս դեպքում, եի ձևույթը կցվելով գոյականներին վերջից՝ ցույց է տալիս գործողության տարածությունը, տեղը և պահանջում է որոշյալ հայցականով խնդիր և որպես նախադասության անդամ, սովորաբար լինում է տեղի պարագա, ինչպես օրինակ՝ առումի՝ «առվի ափով», արտընի՝ «արտի միջով», երեսընի՝ «երեսին», դուռընի՝ «դռան առջև», «դռան վրայով» և այլն: Այսպիսով, եի-ն ո՛չ միայն մի կամ երկու նշանակություն ունի, ինչպես այդ ընդունված էր մինչև այսօր, այլ երեսունից ավելի իմաստային երանգավորումներ:

Եզրակացություն

Մեր կողմից տրվող կանոնները, սահմանումները չեն սպառում տվյալ հարցի բոլոր կողմերը:

Գիտության և տեխնիկայի նվաճումների օգնությամբ և մեր ամենօրյա ուսումնասիրությունների, հետազոտությունների ու գիտական պեղումների միջոցով, բացահայտվում են երևույթի նոր կողմեր, նոր հատկություններ, նոր գծեր, ուստի երեկվա բացառությունը (կամ բացառությունները) այսօր դառնում է օրինաչափություն, իսկ «անիմանալի» կամ այսպես կոչվող կանտյան «ինքնին իրերը» դառնում են իրեր մեզ համար, գիտության համար:

Այսպես օրինակ՝ մինչև այսօր մեր աշխարհաբար գրական լեզվի, ինչպես նաև ժողովրդական բանավոր լեզուների՝ բարբառների միավանկ բառերի հոգնակին կազմելու համար տրված է այսպիսի մի սահմանում՝ «Բոլոր մեկ և մեկ ու կես վանկանի բառերը, շնչին բացառությամբ, իրենց հոգնակին կազմում են եր մասնիկով», ինչպես՝ ծառ՝ ծառեր, պատ՝ պատեր, տուն՝ տներ, կամեն՝ կամներ, մոկն՝ մկներ»: Մինչդեռ մեր հետագա ուսումնասիրությունները ցույց տվին, որ այդպիսի սահմանումը թերի և միակողմանի է: Մեր տրամադրության տակ գտնվող փաստական հարուստ նյութի հիման

վրա, վերջերս մի քանի բարբառներում գտանք հարյուրավոր միավանկ բառեր, որոնք իրենց հոգնակին կազմում են հավասարապես՝ եր, էֆ, եե, ֆ, էն և այլն հոգնակիկերտ մասնիկներով:

Հոգնակիների կազմության խնդիրը թողնելով հետագային, վերադառնանք բննարկվող հարցին, ա՛յն հարցին, թե ի՛նչպես է բացատրությունը դառնում օրինաչափություն:

Դեռևս 1892 թվին, Ֆրանսիացի լեզվագետ հնդեվրոպաբան Անտուան Մեյեն իր մի հոդվածում գրում է, թե հայերենի ո-ն փակ վանկում մնում է ո(օ), իսկ բաց վանկում՝ ա: «Միակ արժեքավոր օրինակն է, — գրում է Մեյեն, — կով, թեպետ պետք է նշել, որ այ բառը պահպանվել է kaw, մինչդեռ սով, ծով մնացել են»: Մեյեն նկատի ունի պարզապես Ղարաբաղի բարբառը, ինչպես այդ երևում է հետևյալ տողերից . . . Encore il faut noter que ce mot se présente dans le dialecte du Karabagh sous la forme kaw, tandis que sov (սով) „faim“, dzov (ծով) „mer“ ont persisté“:

Մեյեն կարծում է, թե հայերենի ո-ն փակ վանկում չի կարող ա դառնալ և իբրև բացառություն բերում է կով բառը, իսկ սով և ծով բառերում, նրա կարծիքով, ո(օ)-ն մնում է ո:

Մեր ուսումնասիրությունը պարզեց, որ Մեյեի այդ սահմանումը միանգամայն սնանկ է և միակողմանի: Մեր մի քանի բարբառներում, և մասնավորապես Հաղրոթի բարբառում, իբրև օրինաչափություն, բոլոր բառերում վ-ից առաջ գտնվող ո-ն (լինի այդ միավանկ թե բազմավանկ) վերածվում է ա-ի:

Այսպես օրինակ, կով՝ կավ, հով՝ հավ, ծով՝ ծավ, սով՝ սավ, խորովել՝ խրավել, խոով՝ խռավ և այլն:

Եվ այդպես, ո՛րքան ավելի ենք թափանցում բնության և հասարակական երևույթների խորքերը, ա՛յնքան ավելի նոր հատկանիշներ, նոր կողմեր են բացվում մեր առաջ և առաջապես պրպտումներով ու պեղումներով շարժում գիտության անիվը:

1. M. A. Meillet, Notes Arméniennes, Paris, p. 4:





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

ՍԱՀԱԿ Ս. ՎԱՐԴԱՊԵՏ

ԱՎԱԳ ԾԱՐԱԲԸ ԵՎ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱՐՈՌՈՒՄ

Ավագ շաբաթվա Հայ Եկեղեցու հոգեպարար ժամերգութիւնը ունկնդրելու և աղոթելու համար մեծ բազմութիւն էր հավաքվել Մայր Տաճարում:

Ոտնալվալի, Ավետման և Քրիստոսի շարձարանաց և թաղման օրերը տաճարը յի էր հավատացյալներով: Բազմութեան մեջ մեկ մեկ երևում են նույնպես գույնզգույն տարազով և կրծքերը զարդարված եզիզիներ:

Ճրագալույցն է: Մեծ պահքի մեկամաղձոտ շարականներին փոխարինում են Քրիստոսի հարությունը փառաբանող ուրախ մեղեդիները: Պատարագին է Մայր Տաճարի դասապետ Տ. Խորեն ավագ քահանա Շուշանյանը: Վառվում են էլեկտրական ջահերը, կանթեղները, աշտանակները. ժողովրդի վառած մոմերի ջերմութիւնից կարծես աշտանակները ուզում են հալվել:

Վեհափառը վեհօրեն կանգնած է կաթողիկոսական ամպհովանու տակ: Ահա և դուրս են գալիս Սեղանից և վարագույրի առջ կանգնում «Դանիել» կարդացողները՝ շքեղ ժամաշապիկներով և վառած մոմերով: Միաժամանակ բացվում են բոլոր Սեղանների վարագույրները:

Հնչում է մեծ ավետիքը, այն ավետիքը, որին հավատացյալը հիսուն օր սպասում է ծոմ ու աղոթքով — «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»: Այդ վարկյանին ամբողջ ժողովուրդը մի հոգի ու մի մարմին դառած, աղոթում է հոգեպարար ջերմեռանդութեամբ:

Ս. Պատարագը վերջանալու վրա է: Ապաշխարութեամբ, խոստովանութեամբ ամբողջ օրը ծոմ պահած բազմութիւնը խոնարհվում է Ավագ Սեղանի առջ և հաղորդվում: Խոսուն բազմութեան միջով, միաբանու-

թյանը հազիվ հաշոդվում է Վեհափառ Հայրապետին ուղեկցել մինչև Վեհարան:

Ժողովուրդը հետզհետե ցրվում է:

Արշալույսը բացվում է: Դեռ վաղ առավոտից, տակալին ժամերգութեան զանգերը շողանշած, հավատացյալները խմբերով դալիս են տաճար: Վերջանում է առավոտյան ժամերգութիւնը: Ժողովուրդը չի ցրվում, այլ սպասում է Ս. Պատարագին: Շարանշարան գալիս են տղա-աղջիկ, մեծ ու փոքր: Տաճարի գավիթը լցվում է ժողովրդով:

Ժամը 11-ին ղողանջում են Մայր Տաճարի քաղցրահնչուն զանգերը: Ժողովուրդը խոնկում է Տաճար: Օրվա պատարագին է Թեհրանի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Ռուբեն արքեպիսկոպոսը: Երգվում է «Խորհուրդ խորին»: Խորանի դռները բացվում են: Գերաշնորհ հայրը փառաճեղ զգեստավորված, իր պարթեմ հասկով, լուրջ ու խոհեմ հայացքով, շրջապատված երիտասարդ սարկավազներով (Հոգեվոր Ճեմարանի յսարանական բաժնի սաներ), երևում է խորանի դռներ: Հավատացյալ բազմութեան հայացքն անմիջապես ընկնում է սրբազանի վրա: Դպիրների երգած «Խորհուրդ խորին» խորհրդավոր տպավորություն է թողնում:

Համրաքայլ, աղոթքների ու սաղմոսների պարզ ու հոգեկան ապրումներով զգացված, սրբազանի ամեն մի խոսքը շեշտակի ընկնում է ամեն մի հավատացյալի սիրտը:

Կարդացվում է ճաշու դիրքը: Միաբանութիւնը գնում է Վեհարան՝ Վեհին տաճար ուղեկցելու: Ժողովուրդը սպասում է Վեհին: Ամեն միմը նախօրոք իրեն համար պահանջվել է այնպիսի հարմար տեղ, որ կարողանա

մի անգամ ևս տեսնել Վեհին և համբուրել նրա Ս. աչքը:

Զատկի օրը Վեհին տաճարում տեսնելու տենչանքը տեղի է տալիս և ճանապարհը բացվում է: Տաճարի ավագ դասից սկսած՝ Ս. Իշման Սեղանի երկու կողմից մինչև Վեհարանի դարպասը, կանգնում է հավատացյալ ժողովուրդը: Մեծ ու փոքր, գլուխացի ու քաղաքացի, կին ու աղջիկ, բոլորի հայացքն էլ լուրջ է ու սպասողական:

Մի պահ՝ և դարպասից երևում են կարմրազգեստ շափրենները՝ գայիսոնները ձեռքին, վարդապետները, տարկավազները, քահանաները: Ահա և Վեհափառ Գեորգ Զ. Սրբազնագույն Կաթողիկոսը: Արևի ճառագայթների տակ, շողշողում է Վեհի վեղարի աղամանդյալ խաչը:

Ո՞ր հավատացյալն է, որ այդ պահին հոգեկան մխիթարություն չի ստանում, տեսնելով Ս. Գրիգոր Լուսավորչի հաջորդի, քաներորդ դարի մեծագործ հայրենասեր Հայրապետի բարի, հայրական հայացքը, աչքերը գետին հառած, Հայրապետական «ասասն» (գավազան) ձեռքին, պարթև հասակով, համբաքալլ գնալիս, շրջապատված իր ծերունի և երիտասարդ միաբաններով:

Երբերթը կանգնում է Ս. Իշման Սեղանի մոտ: Ժողովուրդը, լուռ, նայում է Վեհին:

Ինչո՞ւ Ամենայն Հայոց ձերունագրող Հայրապետը աղոթում է: Երթունքները աղոթք են մրմնջում: Անշուշտ, ամեն միևնուրեքն հարց է տալիս, թե ի՞նչ է աղոթում, ի՞նչ խոսքեր է մրմնջում Վեհափառը:

Ոչ ոք չի կարող ասել, բայց ինձ թվում էր, թե այդ պահին Վեհը խնդրում է «Աստծուն»՝ «Միշտ անշարժ պահեա զաթոռ Հայկազանայց» և առաջնորդվում դեպի իր գահը:

Ս. Պատարագը շարունակվում է: Սարկավազների և դպիրների խմբի քաղցրահնչյուն մեղեդիները աղիքանման տարածվում են տաճարի կամարների տակ և հավատացյալ մարդու սրտի լարերին զարնում:

Կանգնած է Վեհը. գահը պարապ է, չի նստում: Ինչո՞ւ, մի՞թե 82-ամյա ձերունին իրեն հոգնած չի զգում: Ո՛չ, նա հոգնած չէ: Նա կանգնած՝ դարձյալ շարունակում է իր աղոթքը: Ո՞ւմ համար: Զէ՞ որ նա իր ամբողջ կյանքում աղոթել է: Զէ՞ որ իրեն սիրող աղոթարար ժողովուրդն էլ իրեն շրջապատել է:

Հայրապետական գավազանը ձեռքիս, կողքին կանգնած եմ: Հայացքս ուղղել եմ Վեհին, ուզում եմ դեմքին վերա մի գիծ գտնել Վեհի սպրումների: Նա աղոթում է: Մտածում եմ, անշուշտ նա աղոթում է իր հավատացյալ հայ տարագիր ժողովրդի համար, որոնք հեծում են իրենց Մայր Հայրենիքից, Լուսավորչի հիմնած Մայր Տաճարից հեռու, օտար երկնակամարի տակ, օտար հողում, օտար ազգերի մեջ և թերևս կորցնում իրենց հայկական հոգին, մայրենի լեզուն և հայությունը:

Պատարագիչ Սրբազանը խաչը ձեռին դառնում է դեպի ժողովուրդը և խրոխտ ձայնով ասում՝ «Նաղաղութի՛ն ամենեցուն»,

Վեհափառի դեմքին նկատում եմ շղային շարժում: Ուզում եմ ենթադրել, որ հենց այդ խոսքերը, որ մոտ երկու հազար տարի կրկնվում են, տակավին մարդկության համար մարմին և արյուն չի դառել, խաղաղություն չի բերել: Եվ այսօր ամբողջ քաղաքակիրթ աշխարհի լավագույնները ձգտում են այդ խաղաղության, որը մշտապես քարոզվել է Հայաստանյայց Ս. Նկեղեցու բեմից:

Նաղաղության ձայնն է, որ այժմ հուժկու կերպով հնչում է ամեն կողմից: Նաղաղություն է, որ պահանջում են մարդկության լավագույնները, խաղաղությունն են պահանջում կանայք, խաղաղության կողմնակիցները, խաղաղության քարոզիչները:

Եվ սխալված չեմ, որ այդ խաղաղության համար էր աղոթում Վեհափառ Հայրապետը: Տե՛ր, լսի՛ր հայ ազգի հովվապետի աղոթքը:

Տե՛ր, բազմացրո՛ւ խաղաղության կողմնակիցների թիվը:

Տե՛ր, տո՛ր մարդոց այն խաղաղությունը, որը ինքդ ես քարոզել:

Տե՛ր, բոլոր ազգերին դարձրո՛ւ «մի հոտ և մի հովիվ»:

Տե՛ր, մրմնջում է Հայրապետը. «Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի եւ հաստատութեան Սրբոյ Նկեղեցւոյ, զՏէր աղաչեսցուք»:

Ահա Ս. Պատարագը հասնում է «Հայր մեր»ին:

Պատարագիչ Գերաշնորհ Տ. Ռուբեն արքեպիսկոպոսը վերցնում է խաչն ու գավազանը, երեսով դառնում դեպի ժողովուրդը: Բոլորի հայացքներն ուղղվում են Սրբազանին: Մի պահ, և ահա Սրբազանը սկսում է քարոզը: Նա խոսում է իրեն հատուկ հոնտորություններ, ասածի կատարյալ համոզմունքով, բացատրում է Հայրության վսեմ գաղափարը և իր բովանդակալից քարոզով մագնիսացնում ժողովուրդին:

Վերջանում է Ս. Պատարագը: Վեհը իջնում է գահից: Միաբանները շրջապատում են ձերունագրող Հայրապետին, Բայց ո՞ր ճանապարհով դուրս գնալ: Զորս կողմից մարդկանց կենդանի պատ է շարվել: Հազիվ հազ մի նեղ շերտ է բացվում և միաբանները ուղեկցում են Վեհափառին դեպի Վեհամար:

Մտտ կես ժամի չափ տևում է շքերթը տաճարից դեպի Վեհարանի դարպասը, որտեղ Վեհը շրջվելով օրհնում է հավատացյալ ժողովրդին:

Շարունակվում է հայ ժողովրդի հին ավանդական սովորությունը: Տղա-աղջիկ ձեռք

ձեռքի տված՝ յայլիներով ու երգերով թընդացնում են օդը: Մերունիները կանգնած, դիտում են երիտասարդների ճարպիկ շարժումները, մտաբերելով իրենց ջահելությունը և հրձվում:

Շատ ուշ, ժողովուրդը ցլվում է:

ՍՍՐԿԱՎԱԳ

ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՆԻ ՕՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

1950 թվի մարտի 12-ի օրը ոսկե տառերով կարճանագրվի պատմության մեջ: Այդ օրը կհիշվի որպես Սովետական Միության երջանիկ աշխատավորների համաժողովրդական տոնի օր:

Ավելի քան երկու ամիս, ամբողջ Սովետական Միությունում, նախապատրաստական աշխատանքներ էին տարվում, պատվով ու փառքով դիմավորելու ՍՍՄԿ Գերագույն Սովետի ընտրությունները: Ժողովուրդը պատրաստվում էր ընտրելու կառավարական իր բարձրագույն օրգանը: Առաջադրվում էին թեկնածուներ Միության կազմակերպության Սովետների համար: Աշխատավորները մեծ փանդավառությամբ էին դիմավորում թեկնածուների առաջադրությունը:

Ամբողջ երկիրը հուզեռի մեջ է, ամենուրեք պատրաստվում են, ամենուրեք սպասում ընտրության օրվան:

ՍՍՄԿ Գերագույն Սովետի ընտրություններին լավ են նախապատրաստվել բոլորը: Լավ էին նախապատրաստվել նաև Ս. Էջմիածնի Մայր Աթոռի միաբանությունը և Հ. Ճեմարանի ուսանողությունը:

Ընտրությունները սկսվելուց առաջ, միաբանությունը և ուսանողությունը ծանոթացել էին Գերագույն Սովետի ընտրությունների անոնսդրության և առաջադրվող թեկնածուների անձնավորության հետ:

Եկավ վերջապես մարտի 12-ի բաղձալի օրը: Առավոտյան ժամը 6-ն է: Յուրաքանչյուր ոք ուզում է ինքը առաջինը ընտրել, առաջինը քվեատուփի մեջ իջեցնել ընտրական թերթիկները:

Լսվում են մայրաքաղաքի ժամացույցից ուժգին զարկերը: Պետական հիմնի նշյունների տակ սկսվում է ընտրությունը, կրախ նվագում է նվագախումբը:

Նրևանի աշխատավորները, ինտելիգենտիան, բոլորը մեկը մյուսի հետևից, պարտքի լիվ գիտակցությամբ մոտենում են քվեատուփերին: Նրանք զգում են իրենց կատարած որժի մեծությունը և պատասխանատվու-

թյունը: Ամենուրեք լսվում են ուրախության ձայներ, երգի ու պարի, հրձվանքի աղմուկ: Ուրախ է մեր ժողովուրդը, ուրախ՝ որ ընտրում է իր բարձրագույն օրգանը:

Ժամը 6-ից սկսվել են ընտրությունները էջմիածնում: Ամենուրեք տիրում է կարգապահություն, ամենուրեք ուրախություն է ու հրձվանք:

Ժամը 11-ին հնչում են Մայր Աթոռի Տաճարի զանգերը: Օդը լցվում է զանգահարության ախորժեղի թրթռոցով, որը տարածվում է հեռու, շատ հեռու:

Սկսվում է Ս. Պատարագը: Ներկա է նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսը: Տաճարը լիքն է խուռներամ բազմություններ:

Պատարագից հետո, Վեհարանի բակում հավաքվում են Մայր Աթոռի միաբանությունը, Հ. Ճեմարանի ուսանողությունը, Ճեմարանի ուսուցիչները և ուրիշները, որոնք բոլորն էլ անհամբեր սպասում են Վեհի իջնելուն: Բոլորը հագել են իրենց տոնական զգեստները մաքուր, կոկիկ: Քահանաներն ու վարդապետները գցել են իրենց լանջախաչերը և կազմ ու պատրաստ սպասում են վեհին:

Ահա իջնում է Վեհափառը. Թափորը ճամբա է ընկնում: Կարճ տարածություն անցնելուց հետո, արդեն երևում է էջմիածնի ընտրական օկրուզի ընտրական տեղամասի շենքը, զարդարված պլակատներով, լողունգներով և առաջնորդների նկարներով: Թափորը տեղ հասնելով, կանգ է առնում շենքի դռների երկու կողմերում: Վեհը, հայրապետական ասան ձեռքին, մտնում է ընտրական տեղամասի շենքը: Նրա դեմքը այսօր հուզումնալից է: Մուտքի մոտ, նրան ողջունում են ընտրական հանձնաժողովի անդամները: Բարձրանում է Վեհը աստիճաններով:

Բոլորը արգեն վերևում են: Բոլորը ստանում են ընտրական թերթիկներ և գնում են դեպի քվեատուփ: Առաջինը քվեատուփին է մոտենում Վեհափառը. նույն րոպեին նկա-

րոմ են նրան: Սպասում է մի ընդհանուր վեհաժողով: Նա զգում է վայրկեանի վեհաժողովը: Նա գիտե, որ այսօր, սովետական ժողովուրդը իր ձայնը տալով իր ընտրելիներին, ապահովում է խաղաղությունը համայն աշխարհում, մի գործ՝ որի գլուխն է անցել խաղաղության հզոր պատվար՝ Սովետական Միությունը:

Այսօր հայ հոգեվորականը իր իրավունքների լիիրավ տերն է: Նա կատարում է իր քաղաքացիական սրբազան պարտքը: Բոլորը դուրս են գալիս նույն կարգով, Ռաիորը շարժվում է առաջ: Չանցած մի քանի օր, բարձրախոսը հայտարարում է. «Սովետական Երկրի բոլոր



Նորին Ս. Օծուբյուն Տ. Տ. Գեորգ Զ. փվեստուսի մոտ մի խումբ միաբանների հետ

նա գիտակցում է, որ այնքան թանկ գնով ձեռք բերած խաղաղությունը աշխարհի ժողովուրդները կպահեն, իրենց ձեռքում:

Գցում է վեհը թերթիկը փվեստուսի մեջ և օրհնում: Գալիս են իրար հետևից միաբանները, ուսանողները, բոլորը ըստ կարգի ու աստիճանի: Հայ հոգեվորականը լավ է գիտակցում, որ այսօր, առավել քան երբեք, պաշտպանված են իր շահերը, իր բարեխնամ կառավարության կողմից: Միայն Սովետական Միության մեջ է որ ընտրությունները կատարվում են առանց ազգության, կրոնի և ռասասայական խտրությունների:

ընտրողների 99,98 տոկոսը մասնակցել է ընտրություններին: Միության Սովետի դեպուտատների ընտրություններին մասնակցած ընտրողների 99,73 տոկոսը և Ազգությունների Սովետի դեպուտատների ընտրություններին մասնակցած ընտրողների 99,72 տոկոսը ձայն տվին կոմունիստների և անպարտիականների ստալինյան բոլոր թեկնածուների օգտին:

Ուրախությունը կատարեալ է: Երկիրը ընտրել է կառավարական իր բարձրագույն օրգանը՝ ՍՍՌՄ Գերագույն Սովետը:





ՓԱՅՆԱԿ ԾԻԱԾԱՆ
(Ք. Լաւրանի ուսանող)

Ն Ո Ր Կ Յ Ա Ն Ք

Նկել եմ ես օտար երկրից անհյուրընկալ ու հեռավոր,
Մտնիս մեջ՝ խիւնդ, շրթներիս՝ երգ, անհուն կարոտ՝ հագուստ խորում,
Վերջացել է իմ կյանքը հին արցունքներովն իր բլուրավոր,
Բախտ եմ գտել ազատ երկրի աշխատանքի ջերմ ցովքերում...:

էլ չե՛մ տանջվում կյանքի մաշող սև կարիքի մագիլներից,
Աչքերս վառ էլ չե՛ն տեսնում վարձողներին դեմքը մոայլ,
Ապրում եմ ես իմ մե՛ծ երկրում, երջանկության գիրկն անբախիժ,
Սիրտս բացած իմ ներկայի վառ շողերին հանանչափայլ...:

Անգործությանն էլ չի՛ կարող ինձ սպառնալ, անվերջ ընկնել,
Չի սասանի ոտներս տակ Հայրենիքիս հողը ամուր,
Չի՛ խորտակվի օջախն իմ սուրբ հաստատանքիմ և ամրակուր,
Ես կհասնեմ վառ գալիքիս՝ ուղիներովն այս անարգել...:

Արևը թո՛ղ հավերժ շողա իմ հայրենի երկնի վրա,
Թո՛ղ միշտ հեղէ ինձ տուն կանչող, ինձ կյանք տվող ձայնը բարի,
Թո՛ղ մեր գալիքն առավոտող կարմիր աստղը հար շողշողա,
Կեցցե՛ հավետ երկիրն իմ մեծ, հանգրվանը մեծ հույսերի...:



ՌՈՒՔԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
(Բ. Լսարանի ուսանող)

ԷՔՍԿՈՒՐՍԻԱ ԴԵՊԻ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՍԱՐԺԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՏԵՐ

Մի քանի օր առաջ Հ. Ճեմարանի վարչու-
թյունը որոշել էր ուսանողությունը տանել
մոտակա պատմական վայրերը:

Ապրիլի 16-ին, Պատարագից հետո, ամ-
բողջ Հ. Ճեմարանի ուսանողությունը, վերա-
կացու Յ. Բոռչանյանի և պատմության Կա-
սախանների հետ կազմ ու պատրաստ, նըս-
տում են վանքի ավտոմեքենան: Ըստ նա-
խապես մշակված ծրագրի, պիտի լինեինք
կարմիր բլրում և ծանոթանալինք այնտեղ
կատարված պեղումների հետ, այնուհետև
պիտի այցելեինք հայ գրողների պանթեոնը՝
տեսնելու մեծանուն Կոմիտասի գերեզմանը,
և ապա, վերադարձին, կանգ առնեինք
Զվարթնոցում, և դասախոսություն լսեինք
նրա ճարտարապետական նշանակության
մասին:

Մեքենան ճանապարհ է ընկնում: Առջևում
ձգվում է լայն ու երկար ասֆալտապատ
ճանապարհը: Գարնանային դուրեկան զե-
լիլուր շլոյում է դեմքերը: Հնչում է ուսանող-
ների զրնգուն, ուրախ երգը. նրանք երգում
են մեր սիրելի մայրաքաղաքին՝ ձոնված եր-
գը՝ «Երևան իմ, իմ հարազատ, սիրուն ան-
ուման...» Քամին տանում է երգի հնչյունները
հեռու, շատ հեռու: Ծանապարհին կանգ-
նում են մարդիկ և ուրախ հայացքով նայում
մեր մեքենային:

Ծանապարհի եզրերին երևում են հայրե-
նադարձների նորակառույց գեղեցիկ տները,
որոնք տեսնելով, մարդ զգում է որ հայրենի
կառավարությունը ամեն կերպ օգնում է իր
հարազատ քաղաքացիներին՝ ստեղծելու բա-
րեկեցիկ և երջանիկ կյանք: Մարդը որքան
գնահատվում է մեր հարազատ երկրում:

25 րոպե հետո, նախքան Երևան հասնելը,
մեքենան շեղում է իր ճանապարհը զառի-
վայրով ցած, անցնում է պատմական Հրազ-
դանը — Զանգուն — որը թրի պես կտրելով
սպառնեցրը, առաջ է վազում, ժամ առաջ
գնալ հասնելու իր կարոտած սիրատուրը քո-
չը՝ Արաքսին: Զանգուից անցնելուց 15 րոպե
հետո, մեքենան կանգ է առնում ծիրանի նոր
ծաղկած ծառերի տակ: Մենք արդեն Կարմիր
բլրում ենք: Բոլորը անհամբեր վայր են իջ-
նում և շտապում դեպի բուրբ, պեղումների
վայրը:

Վերջապես բոլորի աչքի առաջ բացվում են
կատարված պեղումները. երևում են թրծած
աղյուսից շարված սենյակներ, հղկած քա-
րեր, կարասներ: Ուսանողները հավաքվում

են դասախոսների շուրջը և լսում նրանց բա-
ցատրությունները: Նրանք պատմում են՝ թե
ի՞նչպես մեր թվարկությունից ?—6 դար ա-
ռաջ, Կարմիր բլրի ամրոցը ուրարտական
փոխարքաների ռեզիդենցիաներից մեկն է ե-
ղել Անդրկովկասում, պատմում են բազմա-
թիվ այն կոհվների մասին, որ տեղացիները
մղել են ասորեստանցիների դեմ: Դասա-
խոսները կոնկրետ փաստերով ցույց են տա-
լիս՝ թե ի՞նչպես բլրի ամրոցը կործանվել է
հանկարծակի. սենյակների պատերի վրա
երևում են հրքեհի հետքերը: Պարզվում է, որ
ուրարտական այս ամրոցը մինչև 1935 թիվը
հայտնի չի եղել գիտության մեջ: 1935 թվին
երկրաբան Պաֆենհոլցի գտած մի սեպագիր
առիթ է ստեղծում ուշադրություն դարձնել
բլրի վրա և սկսել պեղումները, որոնք շա-
րունակվում են մինչև օրս: Հայկական ՍՍՌ-
Գիտությունների ակադեմիայի անմիջական
նախաձեռնությամբ, Պրոֆ. Պիոտրովսկու ղե-
կավարությամբ, ամեն տարի Կարմիր բլրից
հանում են նորանոր հարուստ նյութական
կուլտուրայի մնացորդներ:

Ուսանողները մանրամասն ուսումնասի-
րում են հողից մաքրված սենյակները: Ահա
հսկայական այդ սենյակներից մեկը, որի
երկարությունը թաղված են խոշոր կարաս-
ների մի ամբողջ շարան, Ուրարտական իշ-
խանի մոտանն է. այստեղ կարասների մեջ
լցրել են Արարատյան դաշտի բարիքը: Ու-
սանողները ուշադիր դիտում են հղկված քա-
րերը, որոնք հայտնաբերվել են հողի տակից.
սրանք անվիճելի ապացույց են Հայաստա-
նի նախաքննիկների զարգացած քարակոփու-
թյան: Դասախոսները պատմում են պեղում-
ների ժամանակի այստեղ հայտնաբերված
գործիքների, հացահատիկի և յլլնի մասին,
որից երևում է, որ ուրարտացիների օրով Հա-
յաստանում զարգացած են եղել գյուղատըն-
տեսությունը, անասնապահությունը և զա-
նազան արհեստները: Այստեղից հայտնա-
բերվել են բրոնզե և պղնձե վահաններ, նի-
զակներ, նետեր, առօրյա գործածական իրեր,
որոնք և այժմ գտնվում են Պետական պատ-
մական թանգարանում: Ուսանողները լուռ
լսում են դասախոսների բացատրությունը:
Մարդ մտովի մի րոպե պանում է 2,500 տա-
րի առաջ՝ թե մարդիկ ի՞նչպես էին ապրում
աղյուսից շինված այս սենյակներում, ի՞նչ-
պես կռվում թշնամու դեմ ու պաշտպանվում:
Շատ դաժան է եղել հին ժամանակներում.

հազարավոր ուղղափառների ստորուկներ են աշխատել այս սենյակների և բերդերի վրա...: Բերդից դուրս նույնպես կան պեղված սենյակներ, որտեղ ապրել է հասարակ ժողովուրդը: Դասախոսների այս բացատրություններից հետո, տասնյակ հարցեր են տրվում հետաքրքրվող ուսանողների վողմից՝ թե ի՞նչպես են ջուրը բերդ տարել, բերդը քանի՞ պարիսպ է ունեցել, մարդու կմախք շե՞ն հանել, հաղորդակցություն ի՞նչպես են հաստատել ուրիշ տեղերի հետ և այլն և այլն: Դասախոսները մեկ մեկ պատասխանում են բոլոր հարցերին:

Էքսկուրսիան Կարմիր բլրում վերջանալուց

պատ ծառերի ու թփուտների միջով: Ամենուրեք զգացվում է գարնան բույրն ու հրապուրանքը:

Ներս ենք մտնում այգին: Մեր աչքի առջև երևում են մի շարք շիրմաքարեր: Դրանցից ամենաաչքի ընկնողը սև մարմարիոնյա մեծադիր մի շիրիմ է. դա Կոմիտասինն է: Բուլոլը մի բույս շրջապատում են աննման երաժշտագետի գերեզմանը, դիտում լուռ ու ակնապիշ: Բացատրելու, խոսելու կարիք չկա. ո՞վ չի ճանաչում նրան, ո՞վ չգիտե նրա գեղեցիկ երգերը, ո՞վ չի հուզել նրա «Կալի երգը», «Անտունի» և մյուս երգերը. ո՞վ չգիտե այն անլուր տառապանքները, որ քաշել



Ճեմարանի մի խումբ ուսանողներ Զվարթնոցի խոյակներից մեկի մոտ

հետո, մեքենան շարժվում է դեպի մայրաքաղաք: Բուլոլը մի անգամ ևս նայում են բլրին՝ հնարարյան գաղտնիքների պարունակող այդ մեծ գանձարանին:

Շուտով մեր մեքենան մտնում է մայրաքաղաք, սլանալով Բերիայի անվան ասֆալտապատ պողոտայով և կանգ է առնում Ստալինի անվան այգու առաջ: Իջնում ենք մեքենայից և դնում տեանելու երգի խոշորագույն վարպետ, հանձարեղ Կոմիտասի գերեզմանը: Ճանապարհը անցնում է կանաչա-

է հայ ժողովրդի այդ մեծ զավակը...: Բուլոլի աչքի առջևից անցնում է կինոժապավենի պես մեծանուն երաժշտագետի ամբողջ կյանքը, սկսած մանկությունից մինչև մահը, մի կյանք, որը նվիրված է եղել միայն ու միայն իր ժողովրդին: Ստկայն Կոմիտասն անմահ է: Նա ապրում է իր երգերով յուրաքանչյուրի սրտում, մանուկից մինչ ծերունին...:

Ուսանողները դասախոսների հետ նկարվում են Կոմիտասի գերեզմանի մոտ, շրջում են մյուս տապանաքարերը, ուր թաղված են

պատմաբան կենն, արձակագիր Շիրվանզադեն, բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը և ուրիշները:

Անցնում ենք Երևանի լայն, ընդարձակ փողոցներով, հոյակապ երեք շորս հարկանի տուֆաշեն գեղեցիկ շենքերի առջևով, որոնց առջև տարածվում են պուրակներն ու այգիները: Շատ ժամանակ չէ, որ տեսել ենք Երևանը, բայց այդքան կարճ ժամանակում ինչքա՞ն է փոխվել նա...:

Էջմիածնի խճուղով Երևանից վերադառնում ենք տուն: Իրար հետևից թողնում ենք այգիները, նոր կանաչող բարդիները, տները: Ահա երևում են Ս. Էջմիածնի Մայր Տաճարի գմբեթները, Հռիփսիմեն: Ահա և Զվարթնոցը: Չնայած բոլորն էլ մի քանի անգամ տեսել են այդ հոյակապ հուշարձանը, բայց նորից ուզում են տեսնել հայկական ճարտարապետության այդ գլուխ գործոցը: Զվարթնոց տանող ճանապարհը եզերված է ծառերով, իսկ շորս կողմը այգիներ են: Մեքենան թեքվում է մի փոքր աջ և կանգ առնում: Ուսանողները իջնում են մեքենայից և սկսում դիտել հուշարձանը: Այստեղ նրանց դիմավորում է հնուվիճակների պահպանման պետական կոմիտեի գիտական աշխատակից Պարույր Սահակյանը, որը սկսում է բացատրել Զվարթնոց եկեղեցու հուշարձանների մասին: Ուսանողները դիտում են արծվանիչ և կողովածև խոյակները, քանդակազարդ կամարները, որոնք ներկայացնում են իրենցից Արարատյան դաշտի նուռն ու խաղողը: Նայում են տաճարի սեղանի ու գլորոցի ավերակները, տաճար կառուցող վարպետների բարձրաքանդակները, տաճարին հարակից շինուվիճակները և այլն:

Ուսանողները լինում են նաև մոտիկ թանգարանում և տեսնում են մի շարք էքսպոնատներ հանված Զվարթնոցի ավերակներից՝ հումարեն արձանազրուվյուններ, արևի ժամացույց, կերամիկաներ, մոզայիկներ: Թանգարանի պատերին կախված են ճարտարապետ Թ. Թորամանյանի տաճարի ուսուցիչները մի քանի գծագիրները, պատկերներ և տեղեկություններ, Ցավելով մարդ տեսնում է, որ դարերի ավերիչ ձեռքը քանդել է հայ ժողովրդի այդ հրաշակերտ հուշարձանը: Նրա ամեն մի քարը խոսում է

քեզ հետ, դարերի խավարի միջից պատմում քեզ, թո շինարար ու աշխատասեր նախնիքների մասին, որոնք աննման հիշատակ են թողել գալիք սերնդին, որը երախտամոռ չէ և գիտե ըստ հարկին գնահատել արվեստի գեղեցիկ հուշարձանները: Կանգնած Զվարթնոցի ավերակների մեջ, մարդ ապամ մտածում է այն մասին, թե որքա՞ն ուրիշ Զվարթնոցներ պիտի շիներ ստեղծագործ հայ ժողովուրդը, եթե ենթարկված չլիներ օտար բռնակալների բարբարոս ու ավերիչ արշավանքներին: Միաժամանակ համոզվում ես նորից՝ թե որքա՞ն լավատես ու ճկուն է եղել հայ բազմաշարչոր ժողովուրդը, որ այդքան անլուր հալածանքներից հետո, նորից ոտքի է կանգնել, հառնել է մոխիրների միջից և կերտել է ու կերտում է նորանոր հրաշալիքներ...:

Նորից ու նորից դիտելով ավերակները, հուզմունքով ու հիացումով դուրս ենք գալիս Զվարթնոցից, ափսոսալով որ շղատով պիտի հեռանանք նրանից:

Դրսում, կանաչ խոտերի վրա, ուսանողները սեղան են բաց անում: Բոլորը ուտում են, խմում, կատակներ անում, երգում և պարում:

Օրը երեկոյանում է. ժամանակ է վերադառնալու Բոլորը նստում են իրենց տեղերը և մեքենան ճանապարհ է ընկնում:

Վերջին անգամ հայացքով մնաս բարև ենք ասում Զվարթնոցին: Չանցած մի քանի րոպե, արդեն էջմիածնում ենք:

Այսպես արդյունավոր անցավ էքսկուրսիան: Որքա՞ն նոր տեղեկություններով հարուստացրին իրենց գիտելիքները ուսանողները:

Հայրենի երկիրը քաղցր է ամեն ինչից. նրա ամեն մի քարը, հողը, թուփը, խոստով են քեզ հետ, պատմում մեր հերոսական անցյալի մասին, պատմում քեզ մեր նոր, լուսապայծառ արշալույսի մասին, մեր նոր, Սովետական շքեղ ու գեղածիծաղ Հայրենիքի մասին:

Եվ այդ բոլորից հետո, երգվում ես՝ սիրելի, սիրելի անհուն սիրով թո մեծ, հզոր ու երջանիկ Հայրենիքը, նրա փառավոր ու հերոսական անցյալը և նրա նոր ու լուսաշող ապագան:





Մ Ա Յ Ր Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ո Ւ Մ

1. ԱՃԵՄՅԱՆ

ՍՍՈՒՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՆ ԱՌԹԻՎ

Մարտի 12-ը տոնական անմոռանալի օր էր սովետական ժողովրդի համար: Այդ օրը տեղի պիտի ունենային ՍՍՈՒՄ Գերագույն Սովետի՝ Սովետական Գերագույն մարմնի ընտրությունները: Օրերե, շաբաթներե ի վեր պատրաստություններ կտեսնվեին այդ նպատակով, բացատրություններ կտրվեին, որպեսզի ժողովուրդը ընտրություններու օրը դիտակցարար օգտվի կոնստիտուցիայի իրեն շնորհած իրավունքին:

Այդ ընտրությունները, ինչպես նշեցին բոլոր թերթերը, տեղի ունեցան ժողովուրդներու հայրենասիրական անօրինակ վերելքի ու քաղաքական ակտիվության պայմաններու մեջ, հանդիսանալով սովետական ժողովրդի բարոյա-քաղաքական միասնության սքանչելի ցույց: Այն իրողությունը, որ այս ընտրություններուն մասնակցեցավ 111.000.000 անձ, և Գերագույն Սովետի դեպուտատներու ընտրության մասնակցելու իրավունք ունեցողներու 99,73 տոկոսը ու Ազգություններու Սովետի դեպուտատներու ընտրության մասնակցելու իրավունք ունեցողներու 99,72 տոկոսը, ձայն տալով կոմունիստներու և անպարտիականներու թլոկի թեկնածուներու օգտին, ցույց կուտա թե Սովետ Միության Գերագույն այս մարմինը և կառավարությունը ամբողջովին կհիմնվին ժողովրդի միասնական, ամբակուռ կամքին վրա. բան մը, որուն նմանը ո՛չ եղած է և ո՛չ ալ գոյություն ունի ուրիշ ժողովուրդներու կյանքին մեջ:

Ամեն մեկ սովետ քաղաքացիի խոր համոզումն է՝ թե քվեարկելով առաջադրված թեկնածուներուն ի նպաստ, քվեարկած կըլ-

լա Սովետ Հայրենիքի հզորության և անպարտելիության, անոր արդյունաբերության, գյուղատնտեսության և կուլտուրայի նոր վերելքի, սովետ ժողովուրդներու անխախտ բարեկամության և անոնց բարոյա-քաղաքական միասնության ի նպաստ: Ամեն մեկ սովետ քաղաքացիի խոր համոզումն է նաև, թե քվեարկելով առաջադրված թեկնածուներուն ի նպաստ, քվեարկած կըլլա Ստալինյան արտաքին իմաստուն քաղաքականության ի նպաստ, նաև ժողովուրդներու միջև տևական խաղաղության, թշվառությանց ամոքումի և մարդկային ապագա բարօր կյանքին ի նպաստ:

Այս բոլորեն զատ, դրամական փոփոխությունը, քարտերու դրության շնչումը, ապրանքներու գներու իջեցումը երեք անգամ, ռուբլիի արժեքի վերահաստատումը և ամին կարգի ապրանքներու խանդավառիչ առատությունը սովետ երկրներու մեջ, իրողություններ են, որոնք սիրով և երախտագիտությամբ կլեցնեն բոլոր սրտերը, անձնությունների զգացումով կզեղուն բոլոր հոգիները: Ահա՛ գաղտնիքը ընտրություններու այսքան փայլուն հաջողության:



Մարտի 12-ի առավոտը երկինքը իր ժրպտուն երեսը բացած էր մեր գլխուն վերևը, ու արևը իր մեղմ ճառագայթներով կզգվեր փողոցները լեցնող բազմություններու ճակատները: Ժողովուրդը ոգևորված էր իր առաջադրած թեկնածուներով, որոնց մեջ կզանվեին հայ ժողովրդի մեծ բարեկամ Ստալին և մեր ժողովրդի մեծանուն զավակ-

ները՝ Ա. Միկոյան, Գ. Հարությունյան, Ս. Կարապետյան, Մ. Պապյան, Վ. Համբարձումյան և ուրիշներ:

Հայ ժողովուրդը, սովետական մյուս բոլոր ժողովուրդներու հետ ու անոնց պես, այդ օրը միահամուռ մասնակցեցավ քվեարկության, ցույց տալով անսահման նվիրվածություն իր Հայրենիքին, իր Մեծ Առաջնորդին, ցույց տալով քաղաքական հասունություն, միասնություն և անթերի կարգապահություն: Որովհետև այն բոլոր տեսակետները, մտածումներն ու զգացումները, որ սովետաշխարհի մյուս ժողովուրդներուն են, մտածումներն ու զգացումներն են՝ նաև մեր ժողովուրդին: Մեր շահերը հաշտ ու համերաշխ են սովետական մյուս ժողովուրդներու շահերուն հետ և կկազմեն այն հզոր ազդակը, որ մեզ այնքան մտտիկ կպահե մյուս բոլորին:

Ու մինչ մարտի 12-ի առավոտը գարնան անուշ արևով ողողված փողոցներեն անցնելով իմիներու հետ, կմտանայի քվեատուփին, նոր, խանդավառող զգացումներու հորդություն մը կընցներ սիրտս, խանդավառող՝ անօր համար, որ աշխարհի ամենահզոր պետության, — որ իմ հարազատն է ու պաշտպանը, — Գերագույն մարմնի ընտրություններուն մասնակցելու պատիվը կներշնչեր ինձի: Միաժամանակ կհիշեմ, որ դեռ հարյուր հազարավոր տարագիր հայեր կան դուրսը, որոնք պիտի ուզեին մասնակից ըլլալ այդ պատիվին ու շին կրնար, որոնք հոգիով մեզի հետ են, բայց մարմնով հեռու...

Ու հետո, սա մտածումը՝ ի՞նչ էինք երեկ և ի՞նչ ենք այսօր: Այդ ահավոր երեկը, երբ կործանումի ու անհետացումի դուռն էինք հասած, պարտության ամոթը ճակատնուս, ու այսօր՝ հավասարազոր անդամն ենք աշխարհի ամենազորավոր պետությունը կազմող Սովետ Միության, մեր սեփական երկրով, մեր սեփական կառավարությամբ, մեր արդյունաբերությամբ և մշակութային կյանքով: Երեկ ճշմարիտ վայաստանի էր փոխ-

ված մեր Հայրենիքը, ուրկե ամեն մարդ կաշխատեր խուլս տալ. այսօր ծաղկուն ու բարգավաճ Հայաստանն է ան, որ իրեն կքաշե մեր բոլոր տարագիրները, Հայրենիքի սիրով տանջվողները: Ու մենք բախտ ունեցանք տեսնելու ուրախառիթ վերադարձը հազարներուն, որոնք մարտի 12-ին, հպարտության նույն զգացմունքով մոտեցան քվեատուփերուն, իրենց ձայնը տալու համար այն մեծանուն մարդու օգտին, որմե կսպասվի իրագործումը մեր բոլոր երազներուն...



Սովետ Գերագույն մարմինը այժմ ընտրված է: Եվ այդ ընտրություններու ընթացքն ու արդյունքը անշուշտ ունին համաշխարհային նշանակություն: Եթե ան, ներքին տեսակետով անգամ մը ևս ցույց տվավ սովետ բազմազգ ժողովուրդներու միջև տիրող եղբայրական հարաբերությունն ու համերաշխությունը, նաև անվերապահ համամշտությունը, անոնց և կառավարության միջև, արտաքին աշխարհի համար ան ստացավ հանգամանքը հզոր ցույցի մը երկու հարյուր միլիոննոց ժողովրդի մը միասնականության, կազմակերպվածության. ան եղավ ցուցադրությունը սովետական անխորտակելի ուժին:

Նույն տեսակետներն ու նույն զգացումներն ունին նոր դեմոկրատիայի երկիրները, ինչպես նաև միլիոնները մնացյալ մարդկության հառադդիմական տարրերուն, որոնց համար Սովետ Միությունը խաղաղության և բարօր կյանքի երաշխիք մըն է: Մեծ է հմայքը սովետական կառավարության:

Հայ ժողովուրդը բախտավոր է, որ անցյալի մեջ այնքան դառնություն և արհամարհանք տեսած, այսօր անդամ է Սովետական Հզոր Միության, ա՛յն Միության, որ խաղաղության ամրակուռ պատվարն է:

Չէ՞ որ դարերե է վեր մեր աղոթքը եղած է՝ ճերկրի վրա խաղաղություն և մարդոց միջև հաճություն...»



Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

ՍՏԱԼԻՆՅԱՆ ՄՐՅԱՆԱԿԻ ԼԱՌԻՆԱՏՆԵՐԸ

1943 թվին Հայաստանում ստեղծվեց գիտությունների Խոշորագույն օջախ՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիա: Այստեղ կենտրոնացվեցին ռեսպուբլիկայի լավագույն գիտնականները: Սովետական Միության ալլ տեղերից հրավիրվեցին նշանավոր հայ գիտնականներ: Աճեց ընդունակ, շնորհալի երիտասարդ գիտնականների մի հրաշալի սերունդ: Նրանք Ակադեմիայի տասնչափ գիտահետազոտական հիմնարկներում, ինստիտուտներում, սեկտորներում, լաբորատորիաներում և փորձադաշտերում կատարում են այնպիսի գիտական աշխատանքներ, որոնք առաջ են տանում գիտությունը, արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը:

Ամեն տարի հայտնի է դառնում, թե այդ գիտական աշխատանքներից ո՞րն է արժանացել Ստալինյան մրցանակի: Երբ հրապարակվում են մեր գիտնականների լավագույն աշխատանքների գնահատման արդյունքները, հասարակայնությունը ապրում է ցնծության օրեր: Ամեն տարի Ստալինյան մրցանակի շնորհումը դարձել է ավանդական տոն, որը խնդրվում ու բերկրություն է բերում ժողովրդին:

Այս տարի էլ ժողովրդի արժանավոր զավակները ցույց տվեցին իրենց բարձր հայրենասիրությունը, մեծ կարողությունները: Ժողովրդը պարծենում է Ստալինյան մրցանակի նոր լաուրեատներով: Այս տարվա Ստալինյան մրցանակի լաուրեատների թվում կան մեծ թվով հայեր, որոնց մեջ ուշագրավ են՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ, աստրոֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանը, Բյուրականի աստրոֆիզիկական աստղադիտարանի ավագ գիտական աշխատակից Բենիամին Մարգարյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամներ Կոնստանտին Պաֆենհոլցը, Ի. Մաղաքյանը, Հայկական ՍՍՌ Պետպլանի նախագահ Տ. Մովսիսյանը, Ակադեմիայի Երկրաբանական ինստիտուտի ավագ գիտական աշխատակից Ս. Մկրտչյանը, Հայկական ՍՍՌ Երկրաբանությունից վարչության պետ Գ. Հարությունյանը: Ստալինյան մրցանակներ են շնորհվել նաև Երևանի Գ. Սունդուկյանի անվան դրամատիկ թատրոնի մի խումբ արտիստների՝ Ժողովրդական արտիստներ Ա. Գուլակյանին, Դ. Մալյանին, վաստակավոր արտիստներ Գ. Գարրիելյանին, Հ. Ավար-

յանին, արտիստներ Գ. Խաժակյանին, Յ. Դովլաթյանին, Մ. Սիմոնյանին: Ստալինյան մրցանակի լաուրեատների թվում է նաև Հայկական ժողովրդական երգի-պարի ասամբլի զեղարվեստական ղեկավար, ռեսպուբլիկայի ժողովրդական արտիստ Թաթուլ Ալթոնյանը:

Գիտության, կուլտուրայի և գյուտարարության ասպարեզում 1949 թվականի աչքի ընկնող աշխատությունների համար Ստալինյան մրցանակներ շնորհելու մասին հրապարակված ցուցակի մեջ, առաջինը կարողում ենք Վիկտոր Համբարձումյանի և Բենիամին Մարգարյանի անունները, որոնք արժանացել են Ստալինյան առաջին աստիճանի մրցանակի և 200.000 ռուբլի դրամական պարգևի: Նրանց կատարած աշխատանքը խոշոր ներդրում է ո՛չ միայն սովետական գիտության, այլև համաշխարհային գիտության մեջ. նրանք հայտնաբերել և ռառանասիրել են նոր տիպի աստղային սխտեմներ՝ աստղային ասոցիացիաներ:

Նշանավոր աստրոֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանի անունը վաղուց ի վեր հայտնի է ամբողջ աշխարհին. նա մեր երկրի խոշորագույն գիտնականներից մեկն է: Դեռևս 1924 թվին, երբ 16-ամյա Համբարձումյանը ընդունվեց Լենինգրադի համալսարանի Ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետը, իր վրա գրավեց աստրոֆիզիկոսների, մաթեմատիկոսների և ֆիզիկոսների ուշադրությունը: Նրանք ընդունակ պատանու մեջ նկատեցին ասպագա մեծ գիտնական դառնալու տվյալներ և նրա նկատմամբ հատուկ հոգատարություն ցույց տվեցին: Հենց պատանեկան տարիներից, Համբարձումյանը շփվեց ռուս խոշորագույն գիտնականների հետ, յուրացրեց իր նրանց առաջավոր դպրոցների սկզբունքները, օգտագործելով ռուսական աստղագիտության հարուստ փորձը: Ավարտելով Պուլկովոյի Աստղադիտարանին կից ասպիրանտուրան, Համբարձումյանը հավասարապես խորանում է և՛ աստղագիտության, և՛ աստրոֆիզիկայի, և՛ մաթեմատիկայի մեջ: Տակավին երիտասարդ, Համբարձումյանը վաստակեց նշանավոր գիտնականի համբավ, նրա աշխատությունները գրվեցին խոշոր մասնագետների ուշադրությունը: 25 տարեկան հասակում նրան տվեցին պրոֆեսորի կոչում, իսկ մեկ տարուց հետո՝ դոկտորի գիտական աստիճան: Վ. Համբարձումյանի աշխատությունների առաջին շար-

քը վերաբերում է գազային միզամածությունների ֆիզիկային: Հիմնվելով ատոմային ֆիզիկայի նվաճումների վրա, Համբարձումյանը բացահայտեց այսպես կոչված միզամածությունների բնույթը, այսինքն ուժեղ լիցքավորված այն գազային կուտակումների բնույթը, որոնք գտնվում են վերին աստիճանի բարձր ջերմություն ունեցող աստղերի ճառագայթման տակ:

Այսպիսով Համբարձումյանը իր այդ հետազոտությունների արդյունքներով նոր լույս է սփռում միզամածությունների առաջացման պրոբլեմի վրա և ճիշտ ուղղություն տալիս երիտասարդ աստղաֆիզիկոսներին՝ աշխատելու այդ պրոբլեմի վրա:

Համբարձումյանի աշխատությունների երկրորդ խումբը վերաբերում է աստղային սիստեմաների զարգացմանը: Առաջինը նա է սովել աստղային սիստեմաների ֆիզիկական աստատիկայի հիմունքները և իր սեփական մեթոդների հիման վրա լուծել մի շարք խնդիրներ կրկնակի և եռակի աստղերի համար:

Համբարձումյանը ցույց է տվել, որ աստղային սիստեմաների մի մասի զարգացման համար ժամանակը հազարավոր անգամ փոքր է, քան այդ ենթադրում էին առաջ: Պարզվել է, օրինակ, որ Գալակտիկան, այսինքն միթյարի աստղային սիստեմը, որի մեջ են մտնում արևը և նրան շրջապատող մոլորակները, մի քանի միլիարդ տարուց մեծ չէ:

Սովետական աստրոֆիզիկայի նշանակալից նվաճումներից է պղտոր միջավայրում լույսի տարածման հարցի լուծումը: Գիտություն այս խոշոր նվաճումը նույնպես կապված է Վիկտոր Համբարձումյանի անվան հետ: Նկատի ունենալով այդ պրոբլեմի լուծման մեծ կարևորությունը, նրա լայն կիրառումը պրակտիկայում, ՍՍՌԿ կառավարությունը ըստ արժանվույն գնահատեց Համբարձումյանի այդ հայտնագործությունը և 1946 թվին նրան արժանացրեց Ստալինյան մրցանակի լաուրեատի կոչման:

Համբարձումյանի կատարած նոր հետազոտությունները՝ աստղային ասոցիացիաների վերաբերյալ, նույնպես բարձր գնահատականի արժանացան մեր կառավարության կողմից: Համբարձումյանը հայտնաբերել է գերհսկա աստղերի խմբեր, որոնք լինելով անկայուն սիստեմաներ, ներկայումս գտնվում են անկայունության հասակում, և լեռնա շեն տրոհվել: Հետազոտությունները ցույց են տվել, որ այդ ասոցիացիաների հասակը մի-

լիոնավոր, կամ ծայրահեղ դեպքում տասնյակ միլիոնավոր տարի է:

Բանի որ հայտնաբերված աստղային ասոցիացիաների հասակը համեմատաբար փոքր է, ուստի Վ. Համբարձումյանը և Բ. Մարգարյանը հանգում են այն եզրակացության, որ աստղերի կազմավորումը Գալակտիկայում կատարվում է և ներկա ժամանակներում:

Բ. Մարգարյանը՝ Համբարձումյանի անհեղինակ շնորհալի երիտասարդ կադրերից է. նրա խիզախ հետազոտությունների արդյունքը պսակվեց Ստալինյան մրցանակով: Մարգարյանը իր կատարած այդ հայտնագործությամբ մտավ սովետական նշանավոր գիտնականների շարքը: Նա աշխատում է մեծ գիտնական Համբարձումյանի հետ, նրա ղեկավարությամբ և ունի նորանոր խիզախումների նկատելի հետանկարներ:

Մենք ունենք անվանի երկրաբաններ, որոնցից շորան այս տարի մեծ փառքի արժանացան: Նրանցից մեկը՝ Կոնստանտին Պաֆենհոլցը Ստալինյան մրցանակ ստացավ իր «Հայաստանի երկրաբանությունը» գիտական խոշոր աշխատության համար: Բազմավաստակ այդ փիտնականը, որը Հայաստանի Ակադեմիայի իսկախան անդամն է, 25 տարի աշխատում է Հայաստանում, հմտությամբ ռուսմասերել է Հայաստանի երկրաբանությունը, պատրաստել է երիտասարդ երկրաբաններ, որոնցից երկուսը, Ակադեմիայի իսկական անդամ Ի. Մաղաքյանը և Ս. Մկրտչյանը, նույնպես արժանացան Ստալինյան մրցանակի լաուրեատի պատվավոր կոչմանը:

Նրանք Ստալինյան մրցանակի են արժանացել օգտակար հանածոների հանքավայրերի հայտնաբերելու և նրանց երկրաբանական հետազոտության համար: Ստալինյան մրցանակի արժանացած մյուս երկրաբանները աչքի ընկնող գործ են կատարել գյուտերի և արտադրության աշխատանքների մեթոդների արմատական կատարելագործումների ուղղությամբ:

Սովետական Միության գիտահետազոտական հիմնարկներում, արտադրական ձեռնարկություններում աշխատում են հայ անվանի գիտնականներ, ինժեներներ, գյուտարարներ և նորարարներ: Նրանցից շատ մարդիկ այս տարի դարձան Ստալինյան մրցանակի լաուրեատներ: ՍՍՌ Միության Գիտությունների Ակադեմիայի թղթակից անդամ Նվան Կոնյանցը, Խոստիտուտի բաժանմունքի պետ Աշոտ Հարությունյանը բարձր

մրցանակի արժանացան թոճեղներ անցկացնելու համար մեքենայացված վահան մշակելու և կիրառելու համար: Պատիկ Սահակյանը Հանքային հովանի համամիութենական ինստիտուտի դիրեկտորն է. նա արմատական կատարելագործում է մտցրել արտադրության աշխատանքի մեթոդները մեջ: Երվանդ Սարգսյանը նշանակալից աշխատանք է կատարել գյուղատնտեսության բնագավառում, մշակել է գյուղատնտեսական դեզելային տրակտորի կոնստրուկցիաներ, որոնք ներդրված են արտադրության մեջ: Ալեքսանդր Ռոտինյանը, աշխատանքի ղեկավար, ինստիտուտի ավագ գիտական աշխատող է. նա մշակել է մետաղի արդյունաբերական ստացման տեխնոլոգիական պրոցես, որը յուրացված է արտադրության կողմից: Մեծ ու արդյունավետ աշխատանք է կատարել հայ ինժեներ՝ Վարդան Ամյանը, որը մշակել է նավթի հանույթի ավելացման նոր մեթոդ, որն արդեն գործադրվում է արտադրության մեջ: Մոսկվայի Ս. Օրշոնիկիձեի անվան ավիացիոն ինստիտուտի պրոֆեսոր Գրիգոր Աթարբեկյանը, գլխավոր կոնստրուկտոր Աշոտ Բալայանը Ստալինյան մրցանակի են արժանացել տեխնիկայի բնագավառում կատարած աշխատանքների համար: Ակիմ Աստվածատրյանին Ստալինյան մրցանակ է շնորհված բնական զազի նոր հանքավայրեր հայտնաբերելու համար: Մ. Ի. Կալինինի անվան գործարանի գլխավոր ինժեներ Վախտանգ Զանփուրայանը այգեբանության բնագավառում տրակտոր և նրան կցվող գյուղատնտեսական մեքենաներ ստեղծելու և արտադրության մեջ արմատավորելու համար արժանացավ Ստալինյան մրցանակի: Ստալինյան բարձր պարգևի են արժանացել նաև հայ այլ գիտնականներ, որոնց անունները մեկ առ մեկ թվարկել հնարավոր չէ:

Այս տարի նշանակալից իրադարձություն տեղի ունեցավ հայ կուլտուրայի բնագավառում: Մեր թատրոնի 7 լավագույն աշխատողներ դարձան Ստալինյան մրցանակի լատերեստներ: Նրանք Ստալինյան մրցանակի են արժանացել Ա. Ղարաբաղյանի և Գ. Տեր-Գրիգորյանի «Այս աստղերը մերն են» պիեսի բեմադրության համար: «Այս աստղերը մերն են» պիեսի բեմադրությունը սովետահայ թատերական կուլտուրայի տեղծագործական հաղթանակն է: Պիեսում է բեմադրության մեջ ռեալիստական մեծ շնչով ցույց են տրված գիտության խիզախումների փորձեր մեր ուսանողության կողմից:

Մատկերված է ուսանողության առօրյան, Պոլիտեխնիկ ինստիտուտ ընդունված հայրենադարձ օրիորդի կենսախիռն կյանքը: Այս պիեսի բեմադրությունը ջերմ ընդունելության արժանացավ մեր թատերասեր հասարակայնության կողմից, իսկ նրա բեմադրողը՝ թատրոնի գեղարվեստական ղեկավար, ՍՍՄԳ Գերագույն Սովետի դեպուտատ Արմեն Գուլակյանը, ռեսպուբլիկայի ժողովրդական արտիստ Դավիթ Մալյանը, վաստակավոր արտիստներ Գուրգեն Գաբրիելյանը, Հովհաննես Ավագյանը, արտիստներ Գարուշ Խաժակյանը, Ֆրոնտիկ Դովլաթյանը և Մետաքսյա Սիմոնյանը արժանացան Ստալինյան երկրորդ աստիճանի մրցանակի:

Յոթը արտիստների Ստալինյան մրցանակի լատերեստների կոչում շնորհելը ստեղծագործական նոր եռանդ ու լիցք է հաղորդել Գ. Սոնդրակյանի անվան դրամատիկ թատրոնի կոլեկտիվին, նրա վրա դրել է ավելի մեծ պարտականություն՝ է՛լ ավելի բարձրացնել բեմադրությունների, դերակատարումների որակը, տալ ժողովրդի բարձր ճաշակը բավարարող ներկայացումներ:

Հայկական ժողովրդական երգի ու պարի անսամբլը գոյություն ունի 13 տարի: Այդ ժամանակամիջոցում նա գեղարվեստական ղեկավար Թ. Ալթունյանի հմուտ ղեկավարության շնորհիվ ու ջանքերով ամրապնդվեց, ձևավորվեց, դառնալով Սովետական Հայաստանի ինքնատիպ համերգային միավորներից մեկը:

Հայկական ժողովրդական երգի ու պարի անսամբլը սնվել ու աճել է հայկական երաժշտության անուշահամ հյութերով, միշտ էլ մոտ է կանգնած եղել նրա ակունքներին:

Անսամբլի ստեղծման առաջին իսկ օրից նրա գեղարվեստական ղեկավարն է ժողովրդական արտիստ Թ. Ալթունյանը, որի կատարած աշխատանքը արժանացավ կոնսերվատիվ թատրոնի գնահատմանը: Եստ մեծ է Ալթունյանի կատարած աշխատանքը հայ ժողովրդական գեղեցիկ երգերի ու պարերի տարածման գործում, դրանք ամբողջ հայ ժողովրդի սեփականությունը դարձնելու գործում:

Արվեստի ասպարեզում 1949 թվին իրենց կատարած փայլուն աշխատանքի համար Ստալինյան մրցանակի արժանացած կոմպոզիտորների թվումն է նաև հայ նշանավոր կոմպոզիտոր, ժողովրդական արտիստ Արամ Խաչատրյանը: Նա այդ բարձր պարգևին արժանացավ «Բեռլինի անկումը» (առաջին և երկրորդ սերիաներ) գունավոր կինոկարի երաժշտության համար:

Ներկայումս մայրաքաղաքի գիտական, կուլտուրական, ուսումնական հիմնարկներում, արտադրական ձեռնարկություններում տեղի են ունենում ջերմ հանդիպումներ Ստալինյան մրցանակի լաուրեատների հետ: Մեր աշխատավորները և ուսանողները հնարավորություն են ունենում մոտիկից ծա-

նոթանալու գիտության և կուլտուրայի առաջավորների կյանքին և ստեղծագործությանը: Ստալինյան մրցանակի արժանացած գիտնականներին և դերասաններին իրենց մոտ են հրավիրում կոլեկտիվները, որոնք հետաքրքրվում են սովետական գիտության նվաճումներով:

ԱՐՄԵՆ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ՄԱՆԸ

Երկարատև հիվանդությունից հետո, փետրվարի 10-ին, Թբիլիսի քաղաքում վախճանվեց անմահ «Անուշ» օպերայի կախարհող վարպետ Արամեն Տիգրանյանը:


Արամեն Տիգրանի Տիգրանյանը ծնվել է Ալեքսանդրապոլ (ներկայումս Լենինական) քաղաքում 1879 թվին: Նա իր երաժշտական կրթությունը ստացել է Թբիլիսիում ուսուցչության կոմպոզիտոր Ն. Կլինովսկու մոտ:

1902 թվին Տիգրանյանը հաստատվում է իր ծննդավայրում, ուր և կազմակերպում է քառաձայն երաժշտական խումբ: 1907 թվին Տիգրանյանը ձեռնամուխ է լինում իր ստեղծագործությունների պոլիս գործոցի՝ «Անուշ»ի ձայնագրմանը, որը և առաջին անգամ, հատվածաբար, սիրողների ուժերով, ներկայացվում է Ալեքսանդրապոլում: Հետագա տարիներին նա նորից անդրադառնում է իր այս աշխատությանը և ավելի մշակում ու կատարելագործում:

Տիգրանյանը ավելի ժողովրդականացավ և իր փառքի բարձրությանը հասավ սովետական տարիներին, երբ նրա «Անուշ» օպերան, որպես ժողովրդից սիրված մի գործ, սկսեց հաճախակի բեմադրվել Սովետական Հայաստանի և հարևան հանրապետությունների թատրոններում:

Հայրենական պատերազմի տարիներին, Տիգրանյանը աշխատել է «Դավիթ բեգ» հերոսական օպերայի վրա և ավարտել այն:

Այդ օպերան կներկայացվի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում:



ԱՐՄԵՆ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Տիգրանյանն իր երաժշտական հարուստ և բարձրարժեք ժառանգությամբ անմահ կմընա սերունդների հիշողության մեջ:

2. ԱՐԱՄՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ
ՀԱՐԱՃՈՒՆ ՎԵՐԵԼՔԸ

Սովետական Հայաստանում և Սովետական երկրում ժողովուրդն ամեն օր, ամեն րոպե զգում է իր հարազատ պետության հայրական հոգատարությունը: Ժողովուրդի նյութական բարեկեցությունը, կրթական և կոպտուրական բոլոր պահանջները՝ պետության մշտաբերուն ուշադրության և հոգածության առարկա են: Եվ սրանով է բացատրվում շարունակական և վառ օպտիմիզմը, որ բնորոշում է սովետական մարդկանց՝ իրենց հարազատ պետության ձեռնարկումների նկատմամբ:

1947 թվականի աշնանը, երբ Հայրենիք հասանք, դեռևս շարունակվում էր պատերազմի տարիներին հաստատված պարենավորման քարտային դրությունը, և կյանքը զգալիորեն թանկ էր: Բայց հայրենական ժողովուրդը վառ լավատեսությամբ սպասում էր տնտեսական դրության բարելավման. բուլոբը, համոզումով և հավատքով, կրկնում էին, որ քարտային դրությունը շուտով կվերացվի, կյանքը՝ կաժանանա և պարենային ու արդյունաբերական ապրանքների գները կհավասարվեն նախապատերազմյան գներին: Այդ խոստացել էին կառավարության ղեկավար մարդիկ և ինքը՝ Առաջնորդը:

Սովետական Հայաստանում և Սովետական երկրում, առնասարակ, հավատի շափ ուժեղ է այն համոզումը, և համոզումի շափ ուժեղ է այն հավատը, որ կառավարության ղեկավար մարդիկ զուր խոստում չեն տա, և եթե մի խոսք ասեն, ապա ուրեմն գործը անվրեպ պիտի հետևի խոստմանը:

Եվ, իրոք, երկար շապասեցինք՝ տեսնելու այդ խոստման հոյակապ կենսագործումը:

Հայրենի երկիր մեր հասնելուց ընդամենը երկու և կես ամիս հետո, 1947 թվի դեկտեմբերի 14ին, ողջ Սովետական երկրով մեկ ռադիոներն ու թերթերը ազդարարեցին, թի սկսվալ հաջորդ օրվանից, ղեկտեմբերի 15-ից, վերացվում է պարենային և արդյունաբերական ապրանքների քարտային սխտեմը և ապրանքների գները իջեցվում են զգալի տոկոսներով:

Համատարած ցնծություն էր բովանդակ երկրում, և իրավամբ:

Ժողովուրդի նյութական բարեկեցությունը զգալի աճ էր ունենում, պատերազմի վախ-

ճանից հազիվ երկու տարի անցած, այնպիսի պատերազմի, որի մեծագույն ծանրությունը ընկել էր սովետական հերոս ժողովուրդի ուսերին:

Ամենաճշգրիտ տվյալներով, գների այդ առաջին իջեցումից, ժողովուրդը մեկ տարվա ընթացքում ապահովեց 86 միլիարդ ռուբլու շահույթ:

Ամեն ոք զգում էր, թե սա դեռ իջեցման առաջին փուլն է, և թե չեն ուշանա գների իջեցման հետագա նոր փուլերը:

Եվ մարդիկ չէին սխալվում.

1949 թվականի մարտի 1-ին, ընդունվեց և կենսագործվեց պետական նոր որոշում՝ պարենային և արդյունաբերական ապրանքների պետական մանրածախ գների նոր իջեցման մասին: Գները իջնում էին այնպիսի մակարդակի, որ ժողովուրդը մեկ տարում ապահովում էր 71 միլիարդ ռուբլու լրացուցիչ շահույթ, և նույն համեմատություններով բարձրանում էր նրա նյութական բարեկեցության մակարդակը: Ենթահավալության նոր հորձանքներ բարձրանում էին ժողովրդից դեպի հարազատ պետությունը, որ այնքան հայրորեն հոգատար էր դեպի ժողովուրդը:

— Ուրախ եք, բարեկամներ, — հարց էին տալիս հայրենաժին հայրենակիցներ իրենց հայրենադարձ հարազատներին, և, առանց պատասխանի սպասելու, որովհետև ակներև էր պատասխանը, շարունակում էին. — Սա էլ դեռ վերջակետ չէ. սա մի նոր փուլ է միայն. շուտով կլինի գների երրորդ իջեցումը...:

Իսկ վաղուցվա քաղաքացիների շափ լավատես դարձած նոր քաղաքացիները նույնքան հավատքով և համոզմամբ սպասում էին երրորդ իջեցմանը:

Ահա 1950 թվականի մարտի 1-ից տեղի ունեցավ գների նոր իջեցում, շատ ավելի կարևոր տոկոսներով¹⁾ քան նախորդ

1) Նկատի ունենալով այն հանգամանքը, որ տոկոս բառը արևելահայերենի և արևմտահայերենի մեջ տարբեր իմաստ ունի, Սփյուռքի մեր հայրենակիցներին ևս ավելի հասկանալի լինելու համար ասենք, թե տոկոս մեզ մոտ նշանակում է առ հարյուր. երբ ասում ենք, թե տվյալ ապրանքի գինը իջել է 30 տոկոսով, պիտի հասկանալ, որ, օրինակ, 10 սուբլի արժող ապրանքը այժմ արժե 5 սուբլի. — հմբ.

երկու փուլերում: Փետրվարի 28-ի երեկոյան, բոլոր քաղաքացիները իրենց տներում կամ հասարակական վայրերում և հրապարակներում, ռադիո-ընդունիչների մոտ էին փութացել, նախազգալով, որ կլսեն ցնծալի լուր: Նախ, 1949 թվի մարտի 1-ը խոստմնալից էր դարձնում 1950 թվի մարտի 1-ը, և, երկրորդ, ցերեկվանից, պետական մեծ ու փոքր մթերային խանութներում ակնհայտ էր ինչ որ խոստմնալից շարժում, խանութները ստանում էին ամեն տեսակի ապրանքներ, նոր մթերքներ: Այդ օրը, որոշ մեկ ժամից սկսյալ, ոչինչ չէին վաճառում. դռները փակ էին, իսկ ներսում, ապակեփեղկերից տեսանելի էր ծառայողների եռուզեռը... «Ապրանքների վրա նշանակված գները փոփոխում են,— ստում էին մարդիկ միմյանց.— ռադիոն, երևի, այս երեկո ևեթ կհաղորդի մի լավ լուր...»:

Արդարև, երեկոյան ռադիոն, իսկ հաջորդ առավոտյան թերթերը տվեցին պետական նոր որոշումը՝ գների նոր իջեցման մասին:

Եվ այդ որոշումը ամենալավատես ակնկալություններից ավելի լավ դուրս եկավ:

Պարենային և արդյունաբերական համարյա բոլոր տեսակի ապրանքների գները, պետական որոշումով, իջել էին չափաաված տոկոսներով, բաղադրամբ դեռ մի օր առաջ ընթացիկ գներին:

Հրատարակվել էր ամեն ապրանք ընդգրկող ցուցակ և նշանակված էր, թե յուրաքանչյուրի գինը ի՞նչ տոկոսով իջեցվում է:

Նշանակելի, և գնող մասսայի համար առավել ուրախալի է այն, որ մինչ բոլոր տեսակի ապրանքների գները իջեցվել են, միջին հաշվով, շուրջ 21 տոկոսով, առաջին անհրաժեշտություն, մասսայական ամենալայն սպանում ունեցող ապրանքների գների իջեցումն համեմատությունները առավել խոշոր են: Որո՞նք են այդ ապրանքները. իհարկե՝ հացը, միսը, կենդանական յուղը, օճառը և այլն:

Այժմ տեսնենք, թե ի՞նչ տոկոսներով են իջեցվել այդ ապրանքների գները. հացի և ալյուրի գները իջեցվել են 25—30 տոկոսով, մսերի գները՝ 24—35 տոկոսով, յուղերի գները՝ 30—35 տոկոսով, աղի և օճառի գները՝ մինչև 50 տոկոսով:

Տարակույս չկա, որ այս որոշմամբ լայն չափերով բարելավվում է ժողովրդական մասսաների նյութական բարեկեցությունը և բարձրանում է նրանց կենսամակարդակը:

Բայց ավելի կոնկրետ նայելով գների իջեցմանը, ի՞նչ է ստացվում:

Անդամ, բայց շատ արտահայտիչ տողերով այս հարցին պատասխանում է գների իջեց-

ման մասին հրապարակված պետական որոշումը.

«... Գների իջեցումից ընակշտության ընդհանուր շահումը կկազմի առնվազն 110 միլիարդ ռուբլի:

Տարակույս չկա, որ գների նոր իջեցման հետևանքով,

1. նորից զգալիորեն կբարձրանա ռուբլու գնողական ուժը.

2. սովետական ռուբլու կուրսն է՛լ ավելի կբարելավվի օտարերկրյա վալյուտաների կուրսի համեմատությամբ.

3. տեղի կունենա բանվորների և ծառայողների ռեալ աշխատավարձի հետագա լուրջ բարձրացում.

4. լրջորեն կբարելավվի կենսաթոշակառուների և թոշակառուների դրուժյունը, քանի որ գների իջեցումով անփոփոխ են մնում կենսաթոշակների և թոշակների չափերը:

5. տեղի կունենա գյուղացիների եկամտաների հետագա լուրջ բարձրացում՝ էժանացած արդյունաբերական ապրանքների գնման համար գյուղացիական ծախսերի զգալի կրճատման հետևանքով և այն բանի շնորհիվ, որ անփոփոխ են մնում հողագործության և անասնաբուծության մթերքների մթերման պետական գները»:

Ժողովրդի ընդհանրությունից անցնելով անհատ տնտեսություններին, տեսնենք, թե նոր որոշումը ի՞նչ անդրադարձում է ունենում նրանց կյանքում: Վերցնենք մի տնտեսություն, որի ամսական եկամուտն է, ասենք, 1000 ռուբլի: Միջին հաշվով, բոլոր ապրանքների գներն իջած ընկելով շուրջ 21 տոկոսով, այնպես է ստացվում, որ այդ տնտեսության ամսական եկամուտը բարձրացած է լինում 1210 ռուբլու, շնորհիվ այն բանի, որ բարձրանում է ռուբլու գնողունակությունը: Իսկ եթե այդ տնտեսությունը այնպիսին է, որ կարող է, կամ ցանկանում է հրաժարվել ոչ անմիջական անհրաժեշտություն ներկայացնող ապրանքներից, ինչպիսիք են, օրինակ, օրեկուրնը, դաշնամուրը, որսորդական հրացանը և նման իրեր և բավարարվի առաջին, ամենօրյա անհրաժեշտություն ներկայացնող ապրանքներով, ապա ուրեմն կատացվի այնպես, որ իր եկամուտը ամսական բարձրացած է 300-ից 400 ռուբլով:

Պետական հայրական հոգատարության այս ջերմ արտահայտությունը, հասկանալի է, որ ժողովրդի կողմից պիտի դիմավորվեր ցնծության համատարած արտահայտություններով և հարազատ պետության նկատմամբ շնորհակալության համատարած ար-

տահայտութիւններով, Ամենուրեք, մայրաքաղաքներից մինչև ծայրամասային ավանները, բանվորները, գյուղացիները, ինտելիգենցիան գումարեցին բազմամարդ ժողովներ և իրենց վառ շնորհակալութիւնը հայտնեցին հայրախնամ պետութեանը:

Բայց սովետական մարդիկ չբավարարվեցին միայն շնորհակալութեան խոսքերով և ճատերով: Նրանք խոստացան բարձրացնել աշխատանքի արտադրողականութիւնը, իջեցնել ապրանքների ինքնարժեքը: Սովետական ժողովրդի և Սովետական Պետութեան միջև շահերի խզում չկա և չի կարող լինել: Եվ այդ հասկանալի է. չէ՞ որ Սովետական Պետութիւնը սովետական ժողովրդի կողմից ընտրված և նրա կամքը արտահայտող հառադատ նրկայացուցչութիւնն է:

Գնեք իջեցման առաջին օրը հիշատակելի կմնա շատերի համար: Ժողովուրդը լցված էր պողոտաները, հրապարակները, խանութները: Մեծ էր ճուղեմը հատկապես խանութներում, որտեղ ապրանքների անմիջական կարիք շունեցողները մինչև իսկ կատարում էին գնումներ, ասես նոր, ցածր գներով ապրանքների համը նայելու համար: Ետերի ձեռքերում և շուկայի պայուսակներում նկատելի էին գինու և այլ խմիչքների շիշերը: Ասես, բոլորը խոսք մեկ էին արել, որ երեկոյան իրենց տներում նշանավորեն այդ օրը:

Ինքս էլ չկարողացա զերծ մնալ ընդհանուր տրամադրութիւնից և վերադարձաւ տուն՝ բեռնավորված մեր Արարատ տրեստի «Վարդապետ» շիշերով... Գիշերը, ընտա-

նիքս և մերձավոր ազգականներս, հավաքվել էինք հայրենական բարիքներով լիքը սեղանի շուրջը, բերկրալից և երջանիկ:

— Դե՛, մի լավ երգ,— դիմեցի Պետական օպերայի մենեթրուհի քննուա՝ Արմինե Քոթոնջյանին,— բայց այսօր թո՛ղ օպերային արիաները, և երգի՛ր ցնծութեան, գինու, խրախճանքի մի երգ, ժողովրդի սրտից ժայթքած մի լավ երգ:

— Սիրո՛վ,— պատասխանեց նա,— լըցրե՛ք բաժակները:

Բաժակները հորդում էին «Վարդապետ»ով, իսկ մեր սրտերը՝ ցնծությամբ: Արմինեն երգեց մի երգ, որ այդ րոպեին ավերի էր համապատասխանում մեր հոգեկան վիճակին.

...Շողա՛, հայրենի՛ք, շողա՛ հարազատ,
Ի՛նչ լավ է ապրել երկրում քո ազատ...
Խմե՛նք կենացը մեր հայրենիքի...:

Վեց տարեկան երեխաս հանկարծ բաց արեց ուղիտ-հաղորդիչը: Պետական ուղիտկայանից, զարմանալի գուգաղիպութեամբ, հնչում էր նույն երգը, Օֆելիա Համբարձումյանի կատարմամբ...:

Ինձ թվաց, թե ողջ եթերը այդ գիշեր թրթռում է նույն երգով և բոլորի սրտերում ծփում է հարազատ հայրենիքում, հարազատ պետութեան, հայրական հովանու տակ ապրելու երջանկութեամբ:

Շողա՛, հայրենի՛ք, շողա՛ հար ազատ,
Ի՛նչ լավ է ապրել երկրում քո ազատ...:



Հ Ա Մ Ա Ռ Ո Տ Լ ՈՒՐ ԵՐ

ՎԱՐԿ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Հայաստանի կոմունալ բանկը անհատական բնակարանային շինարարության համար այս տարի Ռեսպուբլիկայի աշխատավորությանը բաց է թողնելու հարյուր միլիոն ռուբլու երկարատև վարկ: Երևան քաղաքում անհատական բնակարաններ կառու-

ցողներին տրվելու է հիսուն միլիոն ռուբլու երկարատև վարկ: Այդ նպատակով մի քանի տասնյակ միլիոն ռուբլի է հատկացվելու նաև Լենինականի, Կիրովականի, Բերիայի և Ռեսպուբլիկայի այլ քաղաքների ու շրջանների աշխատավորությանը:

ՆՊԱՏՆԵՐ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ՄԱՅՐԵՐԻՆ

Այս տարվա հունվար և փետրվար ամիսներին, Երևան քաղաքի Ստալինյան ուղյակի բազմադասակ և միայնակ մայրերը պե-

տությունից ստացել են ավելի քան 250 հազար ռուբլու նպաստ:

ԼԱՅՆ ՍՊԱՌՄԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ

Երևանի Քաղաքային Սովետի ձեռնարկությունները այս տարի կարտադրեն ավելի շատ լայն սպառման ապրանքներ, քան 1949 թվականին: Այդ նպատակով վերականգնվում և ընդարձակվում են ձեռնարկությունները, կազմակերպվում են նոր ցեխեր, տեղադրվում են նոր սարքավորումներ:

Քան անցյալ տարի: Զգալիորեն ընդարձակվում է հայելու, կերոսինականի, թիթեղյա վառարանների արտադրությունը: Տարվա ընթացքում բնակչությանը կվաճառվի մոտ 3 միլիոն ռուբլու կահույք, մեծ քանակությամբ կոշիկեղեն, ներքնակի երեսացու և լայն սպառման այլ ապրանքներ: Քաղսովետի Գործկոմի Տեղարդ բաժինը, կահույքի, կոշիկի, հագուստի և տնային իրերի նորոգման արհեստանոցներ է բացելու քաղաքի բոլոր թաղամասերում:

Անցյալ տարվա համեմատությամբ, լայն սպառման իրերի արտադրությունը ավելանում է 16 տոկոսով: Քաղսովետի ձեռնարկությունները թողարկելու են ավելի շատ մահճակալներ և էլեկտրական արդուկներ,

ԱԿՈՒՄԲԱ-ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՑԱՆՅԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Կոպտուր-Լուսավորական հիմնարկների գործերի կոմիտեն այս տարի Ռեսպուբլիկայի շրջաններում բացելու է կոլխոզային 35 նոր ակումբ և 72 գրադարան: Երևան քաղաքի արվարձաններում, նոր Զեյթունում, Սարի

թաղում, Նորքում, Արաբկիրում, նոր Արեշում բացվելու են 3 նոր ակումբ և 7 գրադարան: Ռեսպուբլիկայի մատայական և կոլխոզային գրադարաններին այս տարի հատկացվելու է ավելի քան 3 միլիոն ռուբլի, գրականություն ձեռք բերելու համար:

ԴԱՍԱՏՈՒՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

1950 թվականի ընթացքում Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրության Ուսուցիչների կատարելագործման Ինստիտուտը կազմակերպում է դասընթացներ ուսուցիչների և գրականության, հայոց լեզվի և

գրականության, պատմության, աշխարհագրության և այլ առարկաների ուսուցիչների համար: Մինչև տարվա վերջը կվերապատրաստվեն 2,500 մարդ:

ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Կոլտուր-Լուսավորական հիմնարկների կոմիտեն Ռեսպուբլիկայի շրջաններում կազմակերպել է ակումբավարների, գրադարանավարների, ֆիզկուլտուրայի բնագավառում աշխատողների պատրաստման և որակավորման կարճատև դասընթացներ և սեմինար պարապմունքներ:

Ապրիլի մեկից երևանում բացվեցին ակումբա-գրադարանային աշխատողների պատրաստման մեկամսյա դասընթացներ: Մինչև այս տարվա վերջը դասընթացներում ռեսպուբլիկայի շրջաններից սովորելու և որակավորվելու են 750 մարդ:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիան տպագրության համար պատրաստում է «Կոմիտասի երկերի լիակատար ժողովածու»ի առաջին հատորը: Այս հատորում տրվում են մեծ կոմպոզիտորի կենսագրությունը և նրա ստեղծագործությունների վերլուծությունը հայերեն և ռուսերեն լեզուներով: Այս տարի հրատարակվելու են նաև Ալ. Սպենդիարյանի երկերի լիակատար ժողովածուի երկրորդ և երրորդ հատորները, Սպ. Մելիքյանի «Հայկական ժողովրդական երգերի ազգագրական ժողովածու»ի երկրորդ գիրքը, «Սովետահայ և ժողովրդական և գու-

սանական երգերի ժողովածու», որի մեջ տեղավորվելու է 200 երգ, ինչպես և վերջին տարիներում Նոր Բայազետի և Ապարանի շրջաններում հատուկ էքսպեդիցիայի միջոցով հավաքված ու ձայնագրված ֆոլկլորային նյութեր:

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիան հանրամատչելի սերիայով հրատարակում է գրքուկներ Ալ. Սպենդիարյանի, Ռոմանոս Մելիքյանի, Ալեքսանդր Թամանյանի, Թորոս Թորամանյանի և քանդակագործ Անդրեաս Տեր-Մարտիկյանի մասին:

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ՏԱՆԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Վերջերս Մոսկվայի Հայկական Կոլտուրայի Տանը տեղի ունեցավ գրական երեկո՝ նվիրված հայկական կոլտուրայի տան գրական ստուգիայում սովորող երիտասարդ հայ գրողների նոր ստեղծագործություններին: Ներածական խոսք ասաց գրող Բ. Վ. Կավերինը: Նա նշեց այն հաջողությունները, որ ձեռք է բերել գրական ստուգիան մեկ տարվա ընթացքում: Այնուհետև կայացավ գրական համերգ, որին մասնակցեցին ստուգիայում սովորող երիտասարդ հայ գրողները և Մոսկվայի ֆիլհարմոնիայի արտիստները:

Երեկոյին հանդես եկան բանաստեղծներ Գ. Հմինը և Ս. Կապուտիկյանը՝ Մոսկվայում գրած իրենց նոր ստեղծագործություններով: Մ. Մարգարյանի բանաստեղծությունները

և մի հատված Պ. Զոթյանի «Գերված աղջիկ» վեպից կարդաց դերասանուհի Լիլիթ Գարազաշյանը: ՌՄՖՍՌ վաստ. Արտիստուհի Տ. Ս. Օգանեզովան կարդաց Արամ Գրիգորյանի «Մոսկվա, Մոսկվա» շփածո նովելը՝ ռուսերեն լեզվով: Գրամատուրգներ Ա. Բաբայանը և Վ. Շողերյանը կարդացին իրենց ստեղծագործություններից: Գեղարվեստական խոսքի վարպետ Բ. Գ. Մորզանովը կարդաց Վ. Շողերյանի «Հայրենիքի կարոտ» մեկ գործողությամբ դրաման ռուսերեն լեզվով: Ռուս բանաստեղծուհիներ Վ. Զվայգինցյան և Պետրովիխր կարդացին Ս. Կապուտիկյանի և Գ. Հմինի գործերից իրենց կատարած թարգմանություններից:

Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՏՈՒՆ-ՔԱՆԳԱՐԱՆԸ

Երևանի Լենինի անվան պողոտայի վերջում, բարձունքի վրա, այս տարի կառուցվելու է հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանը: Ենթիվ նախագիծը կազմված է Թումանյանի Թբիլիսիում

ապրած տան նմանությամբ: Երկհարկանի շենքը երեսպատվելու է սպիտակ քարով: Տուն-թանգարանը պողոտայի հետ կապվելու է աստիճաններով, որոնց եզրերին դրվելու են ցայտադրյալներ:

ԱՆԱՍՏԱՍ ՄԻԿՈՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԵՐԵՎԱՆԻ ՍՏԱԼԻՆՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕԿՐՈՒԳԻ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Մարտի 10-ին, Օպերայի և Բալետի թատրոնում տեղի ունեցավ սովետական պետության ականավոր գործիչ Անաստաս Իվանովիչ Միկոյանի հանդիպումը իր ընտրողների հետ:

Դահլիճում ներկա էին մայրաքաղաքի արդյունաբերական կենտրոն Ստալինյան ուսյունի գործարանների և ֆաբրիկաների պատվիրակները՝ քանվորներ, ստախանովականներ, ինժեներներ, գիտություն և արվեստի

գործիչներ, պարտիական և սովետական աշխատողներ և այլն: Դահլիճում հավաքվածները երկարատև ծափահարություններով դիմավորեցին իրենց թեկնածու Ա. Ի. Միկոյանին: Ելույթ ունեցան մի շարք անձինք և դրվատեցին թեկնածուի մեծ արժանիքները: Ժողովի վերջում հանդես եկավ Միկոյանը, որին դահլիճը դիմավորեց բուռն օվացիայով, ջերմ սիրով և նվիրվածությամբ և հրճվալից բացազանչություններով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԻՆ ԵՎԱՐԻՉՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Արվեստի աշխատողների տանը բացված է կին նկարիչների ստեղծագործությունների ցուցահանդեսը, որն ընդգրկում է լավագույն

բոլոր այն գործերը, որոնք ստեղծել են նրանք վերջին տարիների ընթացքում:

ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ԲԱՐԵՎԱՐԳՈՒՄԸ

Այս գարնանը շրջկենտրոնում և նրա շրջակայքում տնկված է մի քանի հարյուր հազար ծառ: Հողամասերը նախապատրաստված են: Քաղաքի կենտրոնական այգում արդեն ծաղիկները ցանկած են և ծառատնկումը

կատարված: Արագորեն կառուցվում և ծառազարդվում է նաև քաղաքի երկրորդ այգին:

Քաղաքի բարեկարգման, ծառատնկման ու կանաչապատման համար բաց է թողնված մեծ գումար:

ԳՊՐՈՑԱԿԱՆ ՆՈՐ ՇԵՆՔԵՐ

Արմավիր գյուղում ներկա ուսումնական տարում ավարտվել է միջնակարգ դպրոցի երկհարկանի շենքի կառուցումը: Շրջկենտրոնում

լուծում այս տարի կառուցվում է 2-րդ միջնակարգ դպրոցի երկհարկանի շենքը:

ԱՐԱՍ ԽԱԶԱՏՐՅԱՆԻ ՆՈՐ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ստալինյան մրցանակի լաուրեատ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը աշխատում է «Սպարտակ» նոր բալետի երաժշտության ստեղծման վրա: Բալետի թեման է հին Հռոմի ստրուկների ապստամբությունը: Բալետը բեմադրվելու է Լենինգրադի Ս. Մ. Կիրովի անվան օպերայի և բալետի թատրոնում:

Միաժամանակ կոմպոզիտորը գրում է հայկական երգերի մի ցիկլ Աշուտ Գրաշու տեքստերի հիման վրա:

Մոսֆիլմ Կինոստուդիան հանձնարարել է Ա. Խաչատրյանին գրել «Գաղանի միսիա» կինոնկարի երաժշտությունը: Նույն ստուդիայի պատվերով կոմպոզիտորը աշխատելու է ուսս մեծ ճանապարհորդ Պրոխվալսկին նվիրված ֆիլմի երաժշտության վրա:

ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ

Արհեստագործական կոոպերացիայի «Աղյուսագործ» արտելը Երևանում սկսեց կըղմինդրի-աղյուսի նոր գործարանի կառուցումը, որը տարեկան արտադրելու է երկու մի-

լիոն կըմինդր և մեծ քանակությամբ աղյուս: Գործարանը, որը սարքավորված կլինի նոր տեխնիկայով, լրիվ շահագործման է հանձնվելու ընթացիկ տարվա վերջին:

ՌԵՍՊՈՒՐԵՆՏԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԸ ՆՇՈՒՄ ԵՆ Վ. ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒ ՄԱՇՎԱՆ 20-ԱՄՅԱԿԸ

Ռեսպուրիկայի աշխատավորությունն ամենուրեք արժանավայել կերպով նշեց մեծ բանաստեղծ Վլ. Մայակովսկու մահվան 20-ամյակը: Գործարաններում, ֆաբրիկաներում, կոլխոզներում, ուսումնական հաստատություններում տեղի ունեցան զեկուցումներ և զրույցներ՝ նվիրված Վլ. Մայակովսկու կյանքին և ստեղծագործությանը:

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Կուլտ-Լուսավորական Հիմնարկների գործերի Կոմիտեի կենտրոնական դասախոս-

նական բյուրոն, Երևան քաղաքում և Ռեսպուրիկայի շրջաններում կազմակերպեց մի շարք զեկուցումներ: Դպրոցներում աշակերտության համար կազմակերպվեցին զրույցներ՝ նվիրված Մայակովսկու կյանքին և ստեղծագործությանը: Գրողները և գրականագետները ուսումնական հաստատություններում կարդացին զեկուցումներ մեծ բանաստեղծի կյանքի և ստեղծագործության մասին:

Վ. Վ. ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒ ՄԱՇՎԱՆ 20-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԵՐԵՎՈ ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ

Ապրիլի 14-ին Լենինականի ֆիլհարմոնիայի դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր երեկո, նվիրված սովետական դարաշրջանի լավագույն և ամենատաղանդավոր բանաստեղծ Վլադիմիր Վլադիմիրովիչ Մայակովսկու մահվան 20-ամյակին: Մեծ քաղաքացու և մեծ պոետի հիշատակը հարգելու էին եկել ստախանովականներ, ուսանողներ, գիտության, գրականության և արվեստի գործիչներ:

Երեկոն բացեց Հ. Ս. Գ. Միովյան Լենինականի բաժանմունքի պատասխանատու քարտուղար Անդրանիկ Հովսեփյանը:

Վ. Մայակովսկու կյանքի և ստեղծագործության մասին զեկուցեց փիլիսոփայական գիտությունների թեկնածու Շավարշ Ազնա-

ուրյանը: Նա հանգամանորեն կանգ առավ պոետի կյանքի հիմնական շրջանների վրա՝ վերլուծելով նրա ստեղծագործությունը, բացահայտեց նրա բացառիկ ու վիթխարի դերն ու նշանակությունը սովետական գրականության պատմության մեջ:

Մայակովսկու ստեղծագործություններից արտասանեցին Մայակովսկու անվան արական միջնակարգ դպրոցի աշակերտները, ասմունքի վարպետ, վաստակավոր դերասան Փ. Էլոյանը և ուրիշները:

Վերջում Մայակովսկուն ձոնված բանաստեղծությունների արտասանությամբ հանդես եկան երիտասարդ բանաստեղծ-բանաստեղծուհիներ՝ Ռ. Պետրոսյանը, Շահբաղյանը և Աղունիկ Խաչատրյանը:





Ս Փ Յ ՈՒ Ռ Ք ՈՒ Մ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԿԻՈ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՐՈՒՍԱԿԵՄՈՒՄ

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոս 1948 նոյեմբեր 2-ին օղային ճարով մեկնեցավ Ամման, ընկերակցութեամբ Աղեքսանդրիո Առաջնորդական Փոխաստորդ Հոգեշատրճ Պատկ Կարդապետի, հոնկե մինչև Երուսաղեմ, անձամբ նախագահելու համար Երուսաղեմի Պատրիարք Հոգեւոյս Տեր Կյուրեղ Բ. Արքեպիսկոպոսի թաղման թափորին և ապա Երուսաղեմի մեջ թաղմանական կարգին:

Վեհապատ Գարեգին Կաթողիկոսի ինքնաբոլս այս ժեստը անգամ մը ևս կուզար ապացուցանելու թե Աթոռներու միջև ատեղծված է խոր և զնահատելի միասնականութիւն մը, զոր ամբիւրով և դրապես կուզար հաստատել Վեհ. Գարեգին Կաթողիկոսի Ամման մեկնումն մեկ օր վերջ հասած Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ.ի 1949 նոյեմբեր 1 թվակիր հեռագիրը անպիտան լեզվով:

Գարեգին Կաթողիկոսը, հակառակ 80-ամյա ծերութեան, ո՛չ միայն Անթիլիասեն Ամերիկյան հիվանդանոց քանիցս այցելութեան զնաց հանգուցյալ Պատրիարքին, ո՛չ միայն անձամբ նախագահեց Անթիլիասի Ս. Լուսավորիչ Մայր Տաճարի մեջ կատարված թաղմանական կարգին և կատարեց վերջին օծումը Հանգուցելույն, ապա նաև օրի ճամբով մինչև Ամման և հոնկե ցամաքի գծով մինչև Երուսաղեմ զնաց ու անձամբ նախագահեց թաղմանական թափորին և կարգին, որու ընթացքին քարոզեց և հոգևորապես մխիթարեց սգավոր և գաղթական հայ ժողովուրդն ու որբացած միաբանութիւնը և

միանգամայն Տեղապահի ու նոր և արժեքավոր Պատրիարքի մը ընտրութեան համար ներկայացուց իր և իր սգակից միաբանութեան բարեմաղթութիւնները:

Վեհապատ Հայրապետը տասը օր Երուսաղեմ կմնա և առիթը կունենա այցելելու Երուսաղեմի փոխարքա Ռդբ Նաշաշիբի Փաշայի և հայ գաղթականներու, անոնց համար հայցելով Աստուծո գթառատ ողորմութիւնն ու խաղաղութիւնը:

Սրբաղան Հայրապետի Երուսաղեմ գտնված օրերուն կզուգալիսի Գյուտ խաչի տոնախմբութիւնը, որ մեծ շուքով կկատարվի Ս. Հարութեան տաճարին կից՝ հայոց Ս. Լուսավորիչ տաճարին մեջ, որմե տասնյակ աստիճաններ վարը կգտնվի Գյուտ խաչի խակական վայրը, ուր Ս. Հեղինե թաղուհին գրտավ Քրիստոսի Ս. խաչը:

Նորին Սրբութիւնը հայրապետական զգեստավորութեամբ կնախագահե օրվան մեծաշուք թափորին Ս. Հարութեան տաճարի մեջ, Քրիստոսի պերեզմանի շուրջը:

Վեհապատ Հայրապետը 1949 նոյեմբեր 11-ին կանցնի Ամման, ընկերակցութեամբ նորընտիր Պատրիարքական Տեղապահ Գեր. Տ. Եղիշե Վարդապետ Տերտերյանի, Միաբանական Ընդհանուր Ժողովի Ատենապետ Հոգեշատրճ Տ. Սերովբե Վարդապետ Մանուկյանի, Աղեքսանդրիո Առաջնորդական Փոխաստորդ Հոգեշատրճ Տ. Պատկ Կարդապետ Թումայանի և Հայֆայի հոգևոր հովիվ Հոգեշատրճ Տ. Հարութիւն Վարդապետ Մուշյանի:

(«Հասկ», պաշտօնաթերթ Կիլիկիո կաթողիկոսութեան)

ԴԱՄԲԱՆԱԿԱՆ

ԽՈՍՎԱԾ ՆՈՐԻՆ Ս. ՕՍՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՂՄԻՑ,
 ԵՐՈՒՍԱԿԱՆՍԻ ԶՆՈՑ ՊԱՏՐԻԱՐԿ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԿՅՈՒՐԵՂ Բ.Ի
 ԴԱԳԱՂԻ ՎՐԱ, 1949 ԹՎԻ ԶՈԿՏ.Ի 30-ԻՆ:

«Մտայք անպիտան եմք, զոր ինչ պարտեք էր առնել, արարաք»: (Գով., ԺԵ, 10):

Գերմանական նշանավոր փիլիսոփա Կանտը տիեզերքի մեջ երկու բարձրագույն գեղեցկություն էր տեսնում՝ աստղազարդ երկինքը և մարդկային հոգու մեջ պարտքի զգացումն ու փիտակցությունը:

Արդարև, ի՞նչ ավելի գեղեցիկ է, հմայիչ ու խորհրդավոր, քան աստղազարդ երկինքը յուր բազմաթիվ փայլուն աստղերով, ցրված պայծառ ու կապույտ երկնակամարի վրա: Փիլիսոփան այդ գեղեցկության մեջ տեսնում էր բարձրագույնը, որի հայտարարն է աստղազարդ կապույտ երկինքը:

Իրոք, որքան էլ գեղեցիկ է պայծառ ու աստղազարդ երկինքը, որ կարծես խոսում է իր մեն մի աստղով, բայց և երկրորդ մի գեղեցկություն, որ մեղանից հետո չէ, այլ մեր մեջ իսկ է, մարդկային հոգու մեջ, նրա ներքին աշխարհքում, դա պարտքի գիտակցությունն ու նրա կատարումն է, որ այնքան գեղեցիկ է, որքան աստղազարդ երկինքը:

Արտաքին տիեզերքը տեսնում, վայելում ենք նրա գեղեցկությունը և սքանչանում նրա ներքին իմացականությամբ: Ներքին տիեզերքի երկնակամարի ամենափայլուն աստղերից մեկը՝ պարտքի փիտակցությունն է, որովհետև դա մեր կենդանության ծաղիկն է և նպատակը մեր հոգևոր գոյության: Նրանով մեր նյութական մարմինը զգնում է Աստուծո գործակից լինելու շնորհք: «Բուք էք տաճար կենդանի Աստուծոյն» և գործակից նրան, ասում է Ս. Պողոս Առաքյալը:

Սիրելիք, մեր Տերը աշխարհ եկավ ոչ թե պաշտվելու, այլ պաշտելու համար: Նա ծառայություն չսպասեց, այլ ծառայեց տնանկներին, ջանալով ազնվացնելու նրանց հոգին և հոգևորապես բարձրացնելու նրանց: Պարտքի փիտակցությունը ունեցողի կատարյալ արտահայտություն է գործի կատարումից հետո ասել. «Մտայք անպիտան եմք, զոր ինչ պարտն էր առնել, արարաք»: Այս կոչմամբ և զգացումով, մարդը կբարձրանա

հոգևով, իբրև Աստուծո պատկերը երեսին վրա կրող մի արարած:

Հանգուցյալը, եթե նկատի չառնենք նրա անցյալ տարիներին մատուցած ծառայությունները և կյանքի կարճ տևողությունը, և մեր աչքի առաջ ունենանք միայն նրա վերջին մի քանի տարիները, երբ իբրև պատրիարքը Երուսաղեմի, պարտքի խորը փիտակցությամբ ծառայեց իր Ազգին, Եկեղեցվուն և մարդկության, արժանի է մեր հարգալից վերաբերմունքին: Ակնարկում եմ Պաղեստինի փոթորակից և արհավիրաց օրերին, երբ նա իր պատրիարքական աթոռի վրա մնաց և ժողովրդին հետ մնաց, զարժանն տնորինելով իր միաբանության հետ: Նա իսկական զոհն է իր պարտականության փիտակցության:

Այժմ, Աստուծո կամքով թողնում է. այս աշխարհը և բաժանվում մեզանից: Չեմ ուզում երկարել — մեր շարականները այնքան երկար են, որ հոգնել էք ամենքդ — մաղթում եմ, որ աստված ուղեկից լինի նրան լուսեղեն այն ճամբին, որտեղից նա պիտի գնա առ Արարիչն յուր:

Թող Աստված օրհնե և պահպանե Հայաստանյայց Եկեղեցին, որ դարբերի ընթացքին կուրծք է տվել փոթորիկներին: Հանգուցյալը իր Աթոռը թափուր է թողնում, բայց մենք հավատացած ենք, որ Աստված «իբարանցս յայացանէ կարող է որդիս Աբրահամու յարուցանել»:

Աստված անսասան պահե Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Կիլիկիո Կաթողիկոսությունը, Երուսաղեմի Պատրիարքությունը, նաև Կ. Պոլսո Աթոռը:

Աստված առաջնորդե մեր քայլերն ի բարին: Աստված լուսավորե հոգին հանգուցելուն և նրա դուզն ծառայությունը ընթրունի որպես Աքելի պատարագը:

Շնորհք Տեսնն եղիցին ընդ ձեզ: Ամեն:

(«Կոռուկ», 16 դեկտեմբերի 1949 թ.)

ՎԱԶԳԵՆ Ս. ՎԱՐԴԱՊԵՏ

ՄԵՐ ՀԱՐԱՋԱՏ ԼԵԶՈՒՆ

«Թող բարձր և խրոխտ հեշե հայ լեզուն ամենուրեք»: («Էջմիածին» ամսաթերթ)

Հայ գաղթաշխարհի ամենալուրջ ուշադրության արժանի հողված մը լույս տեսավ մեր Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին»ի մարտ-ապրիլ 1949-ի համարին մեջ, «Մի ծանրակշիռ խնդրի շուրջ» խորագրով, հայ լեզուն գաղտնիքներու մեջ կենդանի պահելու անհրաժեշտության, վերաբերյալ, Ամերիկայի Հայոց Առաջնորդարանի «Հայաստանյայց Եկեղեցի» հանդեսին մեջ, 1948 թվի հողվածի մը հրատարակության արժիքով:

Տրված ըլլալով խնդրույն կենսական կարևորությունը Սփյուռքի հայության համար, և որովհետև վերջերս Նորեն մամուլի նյութ դարձավ այս հարցը, Ամերիկայի Առաջնորդ Գեր. Տիրան Եպիսկոպոսի հայտարարության արժիքով, որ ի միջի այլոց էր օրինակ բերած է նաև ուսմանահայության պարտքան, պարտք կզգանք թուղթին հանձնելու քանի մը ճշտումներ և դատումներ, հայ լեզուն արտասահմանի մեջ կենդանի պահելու նվիրական գործին նկատմամբ:

Ռումանահայ գաղութը ևս մտահոգված է մայրենի լեզվի պահպանման խնդրով, մանավանդ տր իր աչքին առջև տնի Տիրան Սրբազան Հոր ակնարկած հին ուսմանահայության— Անիի գաղթականության— տխուր պատմությունը, որ թեև մինչև 80—100 տարի առաջ քանի մը տասնյակ հազարներու հասնող ժողովուրդ մը կկազմեր, իր եկեղեցիներով, կապիվածներով, նշարկութային-բարոյական հաստատություններով, սակայն վերջին հարյուրամյակի ընթացքին այդ ժողովուրդը ուժացավ, հալեցավ և կորսվեցավ: Այսօր կգտնենք միայն անտնց մնացորդները — քանի մը հարյուր հոգի, ցրված երկոտասնյակ մը քաղաքներու մեջ— որոնք խտրվածի հայ ծագում ունենալու գիտակցություն ունին և ինքզինքին կկոչեն «չտասնորդական ուսմաններ», որոշ կապ պահելով մեր Եկեղեցիին հետ:

Ակնհերև է սակայն թե, եթե Ռումանիո մեջ չլիներ ներկայությունը նոր թրքահայ գաղթականության, այդ հին հայության մնացորդներն ալ կորսված կըլլային ատանց հետքի:

Մուրավիո երեմնի հայաշատ կեդրոններու մեր տասնյակ եկեղեցիները, վանքերը, եկեղեցիներու շենքերը—այսօր պրեթե դատարկ և անկենդան—միակ վկաններն են հին հայության անցյալ փառքին: Մնացյալը խոր լուռություն է...:

Պատմությունը մեզի կտվեցնե, թե այս իրողության պատճառներն գլխավորներն հետևյալներն են.

ա. Մայր երկրի, հայ Վայրենիքի հեռու կենդանի կապի պակասը.

բ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնին բաժնվելը կամ անոր հետ սերտ հարաբերությանց պակասը.

գ. Հայ լեզվի կորուստը: Կհաստատնի և Տրանսիլվանիո հոծ թվով հարությունը իր հոգին, իր լեզուն: և դիմագծությունը կորսնցուց իբրև ուղղակի հետևյալնք Մայր Աթոռին, Հայաստանյայց Եկեղեցիին բաժնվելուն և պարսկական անհարազատ եկեղեցիին գիրկը իյնալուն:

Հայ Եկեղեցին և ժողովուրդը երբ կտրեցին կապերը Մայր Երկրին և Մայր Աթոռին, այլևս անզոր դարձան պահելու հայ ժողովուրդի ազգային ինքնուրույնությունը:

Պապական, եկեղեցին իր սխալ հասկցած համաբարստոնեական միություն ստեղծելու կոսմոպոլիտ գաղափարախոսությանը, սպանեց մեր ժողովուրդի ազգային ոգին:

Մուրավիո և Բուրովիայի հայությունը դիմադրեց 19-րդ դարու դավանափոխության հասանքին և մնաց հավատարիմ Ս. Էջմիածնին: Այս կերպով ան պահեց իր ինքնությունը, իր լեզուն և մշակույթը մինչև գրեթե 19-րդ դարու վերջերը: Սակայն ինչ ինչ պատճառներու բերմամբ, այդ շրջանին չկրցավ իր կապը պահպանել Մայր Աթոռի հետ, չունեցավ թեմակալ ատաղնորդներ,— թեև բոլոր եկեղեցիները շեն և պարծառ վիճակի մեջ եղան միշտ, քաղմաթիվ քահանաներով,— չկրցավ պահել իր վարժարանները, չկրցավ մանավանդ կենդանի պահել մայրենի լեզուն և կորսնցուց իր ազգային դիմագիծը:

Արդ, եթե կկամենանք որ մեր այսօրվան գաղտնիքները նույն վախճանի շունենան, ամեն գնով և բոլոր միջոցներով պետք է պահպանենք հայ լեզվի կենդանի գործածությունը Հայաստանյայց Եկեղեցի մեջ և եկեղեցիին դուրս մեր առօրյա կյանքին մեջ, հայկական հայրենասիրության ոգիով առաջնորդված:

Հետև մեզմե այն մուրույնությունը, թե ատանց հայ լեզվի կրճանք հայությունը կենդանի պահել միայն կրոնքով ու եկեղեցական պաշտամունքով:

Ժողովուրդի մը կյանքին մեջ, լեզուն լոկ

«Իբր անդրուվար ծառայող» գոյություն մը չէ: Լեզուն՝ կենդանի մարմին մըն է, — օրգանիզմ մը, — ժողովուրդի հույզերեն և մտածումներեն ծնած, զարգացած ու ծաղկած, ան մշտատև կենդանություն և աճման մեջ գտնվող և ինքն ալ իր կարգին այդ ժողովուրդին յուրահատուկ զգայնությունը, մտածելու կերպը, հոգեկան նկարագիրը պահելու պաշտոնն ունեցող կենդանի ուժն է:

Ամեն անհատ կզգա ու կմտածե այն լեզվով, զոր կխոսի իբր մայրենի լեզու: Ամեն անհատ իր ազգակիցներու հետ կընա հասկերցվի մանավանդ մայրենի լեզվով:

Հողին, գիտակցությունը անկախ չեն խոսված լեզվին: Այս վերջինը իր դրոշմը, իր գույնը, իր կազմապարները, իր շունչը կպարտադրե մտածումին և զգացումին:

Լեզուն ժողովուրդի մը հոգեծին որդին է, որ հաստատություն հասնելով, իր ծնողը կպահանջ, կպահպանե և կառաջնորդե:

Հայաստանյայց Եկեղեցին անշուշտ որ գաղութներուն մեջ վճռական դեր ունի հայապահպանման գործին մեջ, պայմանով անկախ, որ հայ լեզուն կենդանի պահվի անոր մեջ և անոր կողքին: Վասնզի եթե լեզուն մոռցվի, ինքը Եկեղեցին ալ կուծանա, անարյուն իրականության կվերածվի ազգային տեսակետի: Առանց մայրենի լեզվի, հայ հավատացյալը անխուսափելի կերպով կկորսնցնե իր հայտ հոգին, ազգային ուրույն դիմագիծը ու ինքնուրույնությունը:

Լեզուն հավիտենական ճշմարտությունն է, կենդանի ուժ և արժեք ան իմաստով որ կապահովե ժողովուրդի հավիտենականությունը:

Մանոթ է բոլորին, թե ի՛նչպես Ֆրանսահիբ հպարտությամբ կըսեն. «Ֆրանսան՝ այդ ֆրանսերեն լեզուն է»:

Լեզուն կենդանի իրականություն մըն է, որ կյանք կառնե ժողովուրդեն և կյանք կուրա անոր. այդ՝ ան կրնա մեռնիլ, բայց իր նետ կթաղե և այդ ժողովուրդը որպես ազգային ամբողջություն, կթաղե նաև անոր ճշակույթը:

Եթե Ե. դարու մեր երջանկահիշատակ Թախիբ հայ Եկեղեցին շտախն սեփական եզու, գիր ու գրականություն, մեր Եկեղեցին վստահաբար շատոնց ի վեր կորսրուուցած կըլլար իր ազգային նկարագիրը, իր անկախությունը և իր գոյությունն իսկ:

Ահա թե ի՛նչ կզրե այս մասին մեր վեպիստ Հայրապետը, «Հայոց Եկեղեցին» որվածին մեջ. «Հայ Եկեղեցին, որ իր առաջնական ծագմամբ ինքնազգրովի է, դարավ իրատարելապես ազգային, երբ ներսնս

Մեծի որդին՝ Սահակ կաթողիկոս և Մեսրոբ Մաշտոց հայ առաքելը հնարեցին, Ս. Գիրքը հայերենի թարգմանեցին և հետզհետ ստեղծվեցավ Ե. դարի հայ կլասիկ գրականությունը: Այդ օրվանից հայ լեզվի և Հայ Եկեղեցու ուղիները միահյուսվեցին և նրանք համընթաց քայլեցին»:

Խորքին մեջ ժողովուրդը, հայրենիք, սեփական լեզու և մշակույթ մեկ անբաժանելի ամբողջություն կկազմեն, կարելի չէ երկար ժամանակ մեկը պահել առանց մյուսին: Ամեն ժողովուրդ այն չափով է ժողովուրդ, ինչ չափով որ ան ո՞՞նի սեփական երկիր, սեփական լեզու, մշակույթ և ինքնավար հավաքական կյանք:

Երջանկությունն է մեզ բոլորիս համար հաստատել թե այսօր, երկար ու մտալ ալեկոծ պատմության մը հորձանքներեն վերջապես աղատագրված հայ ժողովուրդը, իր նորաստեղծ, հարազատ պետության՝ Սովետական Հայաստանի մեջ, վերստեղծ է և ամուր կերպով հաստատած իր ազգային կյանքի ու զարգացման բոլոր հիմնական պայմանները:

Հայ ժողովուրդը փրկված է այլևս, կմնա Սփյուռքի մեջ ցրված մեր ժողովուրդի զավակներու պահպանման և փրկության հարցը:

Տարակույս պեսք չէ ունենալ, թե Մայր Հայրենիքեն դուրս, գաղութային պայմաններու մեջ, անվճար է հայր հայ պահել տեմակամորեն և յրիվ կերպով, սակայն մինչև մեր ժողովուրդի ամբողջական վերադարձը դեպի Մայր Հայրենիք, բոլորիս սեպուհ պարտականությունն է մեր Եկեղեցիներու կողքին հիմնել հայրենասիրական մշակութային հաստատություններ և մեր նախահայրերու հավատքին հետ միասին և նույն սրբության զգացումով պահել ու այսրեցնել մեր մայրենի մեծասքանչ լեզուն, զոր նախրի Զարբան արդար հպարտությամբ կիրչե, «Հերոսական լեզուների հերոս երբայր, հայոց լեզու»:

Այսօր մանավանդ, երբ հայ ժողովուրդը իր վերածնած, հասակ նետող և օրեօր աճող սեփական Հայրենիքը ունի, սովետական մեծ ու ազատ եղբայրության աշխարհի մեջ, Սփյուռքի մեջ հայ լեզուն, հայ հոգին, հայ հայրենասիրությունը կենդանի ու վառ պահելու նվիրական գործը Հայ Եկեղեցիին ու անոր բոլոր սպասավորներուն թե՛ կրտսմական սեպուհ պարտականությունն է և թե՛ անոնց ազնիվ հպարտությունը:

(«Հայաստանյան Ճակատ»):

ԿՈՄԻՏԱՍԻ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻ ՑԵՐԵԿՈՒՅԹԸ ՍՈՐԲՈՆԻ ՄԵՋ

Կիրակի, փետրվարի 26-ին, Սորբոնի մեծ ամփոփատրոնի մեջ տեղի ունեցավ Ֆրանսա-հայ Մշակութային Միութեան ցերեկույթը, նվիրված հայ մեծ երաժշտագետ Կոմիտաս վարդապետի ծննդյան 80-ամյա տարեդարձին:

Հայ ժողովրդական երգի այս մեծ վարպետի ծննդյան 80-ամյակը տոնելու ձեռնարկները Հայաստանի մեջ սկսվել են Գարիգի հայ պաղովթը, որ շուշաղյալի քաղաքում հարգանքներով մեծ Կոմիտասի հիշատակին, մանավանդ որ անոր կյանքը, ինչպես իր լավ, նույնպես և իր վատ օրերուն, շատ հիշատակներով կապված է այս քաղաքին հետ:

Բանախոսություններով և հուշերով, հան-

դես եկող ազգայիններ հետաքրքիր դրվագներ պատմեցին մեծ երաժշտագետի կյանքին և պատշաճ ձևով արժեքավորեցին անոր դերը հայ երաժշտության պատմության մեջ:

Գեղարվեստական բաժնեն վերջ, խոսք առավ Արտավազը Սրբազան և դրվատեց մեծ Կոմիտասի անմահ երաժշտությունը, նշելով որ՝ «Կոմիտասի երգած արորի և մահկալի դերը կկատարին այսօր Հայաստանի մեջ տրակտորը և անոր մեքենավարը, որոնք կերպեն թե՛ Կոմիտասի երգերը և թե՛ Հայրենիքի նոր ստեղծագործներուն հորինած երգերը»:

(Քաղված Փարիզի «Ազատ խոսք» թերթի 1950 թվի մարտի 1-ի համարից):

ԴՈՎՏՈՐ ԱՍԱՏՈՒՐ ԱԼԹՈՒՆՅԱՆԻ ՄԱՆԸ

96 տարեկան հասակին, 1950 հունվար 4-ին, Հալեպի մեջ ի Տեր հանգյալ միշաղյալին համբավի տեր «վիրաբույժ հսկան» դոկտ. Ասատուր Ալթունյան:

Համանուն հիվանդանոցին հիմնադիր դոկտ. Ալթունյան ծանոթ էր Մերձավոր Արևելքի բոլոր ժողովուրդներուն:

Հանգուցյալ բժիշկը կատարած էր ավելի քան 20,000 գործողություն, փրկելով կյանքը հազարավոր անհույս հիվանդներու:

«Ալթունյան հիվանդանոց և Հալեպ» տարիների ի վեր կարծես հոմանիշ դարձած են:

Հալեպի Ազիզիե փարթամ թաղին մեկ մասը գրավված է Ալթունյան հաստատություններով — հիվանդանոց, դեղարան, բնակարան, մոտը ժողովարան, որուն շինության բերած էր իր կարևոր մասնակցությունը:

Հալեպի բարեխնամ կառավարությունը ի պատիվ իրեն, Ազիզիե թաղին մեկ պողոտային անունը դրած է «Ալթունյան պողոտա»:

Հանգուցյալ դոկտ. Ալթունյան իր կապը կտրած չէր հայութենեն, կամասակցեր հանդիսությանց, բարեսիրական ձեռնարկներու, հայկական հավաքույթներու, կբանախոսեր հայերեն: Սյուրիո և Լիբանանի հայության անունով մասնակցած էր Փարիզի Ազգային Պատվիրակությանց...

Շուրջ թեթև գա թու թարմ շիրմիդ վրա, հայ անվանի բժիշկ:

Մաշթոց քահանա Ոսկերիչյան (ձրաբեր», 23 փետրվարի 1950 թ.)

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

Խաղաղ կյանքը բնածին քաղձանք մը եղած է մարդ էակին համար քոլոր ժամանակներու ընթացքին: Այդ բաղձալի, խաղաղ և բնականոն կյանքի փառագարտը, անհատական կամ զանազանության բախտամներով, ծնունդ առած և գործադրված է անհատի կամ անհատներու ընչաքաղց ակարիքներուն՝ համապատասխան: Հարձակման ենթակա կողմերը իրենց կարգին, ինքնապաշտպանության արմարական կոխով մղած են, ա-

նոնք ևս, իրենց կարիքներուն համար, սակայն արդարության, իրավունքի և բարոյական ըմբռնումներու սկզբունք-կանոններու վրա հենված:

Բոլոր ժամանակներու պատերազմները, մարտկալի պատմության զարգացման զուգընթաց, զարգացած ընչաքաղց հոգեբանության տեր բազմերանդ դասակարգերու շահահետ ձեռնարկները եղած են: Քսաներորդ դարու երկու համաշխարհային պատերազմ-

ները, ազգի և հայրենիքի անուճով մղված դասակարգի մը ընշաքաղցության հազուրդ տալու նպատակով տեղի ունեցան, և անոնց կերտվորությունները, ի պին բազմամիլիոն կյանքերու կորուստին և անասելի կործանումներուն, ծնունդ տվին ընկերային արդար մեթոդներու հաղթանակովը հառաջացած, նարդու խաղաղ և արդար ապրելու բնածին սողձանքի զորացած բարոյականություն:

Այսօր, այդ զորացած բարոյականությունը յուրացուցած բազմամիլիոն մասսաները, տարբեր լեզուներով և գույներով, կցցվին պատերազմի հրձիգներուն դեմ՝ կանխելու համար ատելության և կործանումի մրրիկը: Եկեղեցին, հավատարիմ նազրովրեցիի մարտասիրական սկզբունքներուն, պետք չէր անտարբեր մնար, իր հոտին և քարոզած արդապետության պաշտպանության համար: Այսպես չի պատահիր դժբախտաբար ակայն, Քրիստոսի վարդապետությունը քաղցող բոլոր եկեղեցիներն ներս և անոնց պաշտպանությանց մեջ: Մեր նպատակը չէ ի առ մի թվել բոլոր եկեղեցիներու դիրքաորումը, պատերազմի և խաղաղության մի և տեղի ունեցող վտախ մեջ:

Հայ ժողովուրդի ազգային եկեղեցին, իր այրագուն Պատրիարք-Կաթողիկոսի գլխաորությունամբ, նորին Սրբության պաշտառատ և կորովի հայտարարությամբ, իր դիրք ճշդած է պատերազմի հրձիգներուն դեմ, անուն արդարության, իր դավանած սկզբունքներու և իր հոտի պաշտպանության:

«Այսօր, երբ դեռ լիովին չեն բուժվել պատերազմի հասցրած վերքերը ու նոր պատերազմի սպառնալիքը կանխել է մարդկության գլխին, Հայ եկեղեցին չի կարող չբարձրացնել իր բողոքի ձայնը նոր պատերազմի հրձիգների դեմ, և չի վարող բարձրաձայն չհայտարարել որ ինքը, իր հավատացյալ հոտով հանդերձ, կողմնակից ու պաշտպան է հանդիսանում խաղաղության և դեմ՝ պատերազմին»:

«Մենք այսօր իրավունք չունենք լռելու, այլ պարտավոր ենք հանդես գալու ուժգնապես բողոքելու պատերազմի դեմ, որը հակասում է համարյա ամբողջ մարդկության դավանած կրոնների սիրո և եղբայրության գաղափարին, մարդկության դավանած բարոյական սկզբունքներին ու շահերին»:

Իցիվ թե բոլոր եկեղեցիներն ու անոնց պետերը հանդուգն ձայն բարձրացնեն և իրենց հավատացյալ հոտը առաջնորդին խաղաղության և եղբայրության ուղի են, խնայելու համար մարդկության նոր պատերազմի գեհներ:

Իր հայրենական աշխարհի և Սփյուռքի մեջ խաղաղության ձգտող ժողովուրդը, հրպարտ է իր ազգային եկեղեցիով և անոր բազմախառակ մեծ առաջնորդով:

(«Հայ Մամուլ», 11 փետրվարի 1950 թ.)



ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐՄԵՆ ՄԻՆԱՍՅԱՆ

ՔԱՐԿԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՔԱՆԴԱԿՆԵՐԸ 4—7-ՐԴ ՊԱՐԵՐՈՒՄ

ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ, 1949 թ., 119 էջ:

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հրատարակությամբ լույս է ընծայվել պատմական գիտությունների թեկնածու Բարկեն Առաքելյանի «Հայկական պատկերաբանությունները 4—7-րդ դարերում» խորագրով աշխատությունը:

Մենագրական այս աշխատանքը մի փորձ է ի մի հավաքելու մեզ հասած հայտնի հրեանագույն հայկական քանդակները, որոշելով նրանց տեղն ու դերը հայկական կուլտուրայի պատմության մեջ:

Հայկական պատկերաբանրակը, չնայած մինչև այժմ առանձնահատուկ ձևով ոչ ոքի կողմից չի ուսումնասիրված, բայց նրա հետ կապված որոշ խնդիրներ քննվել և լուսաբանվել են հայագիտության մեջ: Առանձնապես մեծ արժեք ունեն ակադեմիկոս Ն. Յա. Մառի, ինչպես և Անիի պեղումներին մասնակցող նրա աշխատակիցներ՝ Ի. Ա. Օրբելու և ճարտարապետ Թորոս Թորամանյանի ուսումնասիրությունները:

Արտասահմանում ևս լույս են տեսել հայկական արվեստին նվիրված մի քանի ուսումնասիրություններ, որոնց մեջ բավականաչափ խոսվում է և նյութ է հավաքված հայկական ճարտարապետության, ինչպես և քանդակագործության մասին, Սակայն վերջին հեղինակների աշխատություններում իշխում է արևմտյան, կրոնական գիտնականների շրջանում լայն տարածում գտած ձևական-տեղագրական համեմատական մեթոդը, ազդեցությունների և պարզ փոխառությունների տեսությունը, ըստ որի հայկական արվեստը դիտվում է ոչ որպես ինքնուրույն արվեստ, այլ կցորդ Իրանի, Բյուզանդիայի և դրացի այլ երկրների:

«Հայկական պատկերաբանությունները 4—7-րդ դարերում» աշխատության հեղինակը մանրամասն քննելով հին հայկական քանդակագործությունը, կրկնրեստ փաստերի հիման վրա ժխտում է այն գիտնականների պնդումը, ըստ որի, իբր թե, հայկական քանդակագործություն գոյություն չի ունեցել և եղած մի քանի նմուշները հազվագյուտ բացառություններ են: Հեղինակը ցույց է տալիս, որ հայերն ունեցել են սյուսետային

քանդակագործություն, և պատկերաբանականները Հայաստանում 4—7-րդ դարերում եղակի չեն և ոչ էլ բացառություն, այլ նրանք բավականին տարածված են եղել և ունեցել են որոշակի տեղ:

Հեղինակն իր այս աշխատության 1—2-րդ գլուխներում պարզաբանում է քանդակագործության և արվեստի հարակից ճյուղերի ընդհանուր վիճակը 4—7-րդ դարերում, քանի որ պատկերաբանականները պայմանավորվում են մշակույթի և արվեստի զարգացման տվյալ աստիճանով:

Բ. Առաքելյանը հայ կուլտուրայի պատմության մեջ 4—7-րդ դարերը բնորոշում է որպես տեղական կուլտուրայի նոր աստիճանի ձևավորման և զարգացման շրջան, երբ հայկական կուլտուրան ունեցավ ուշագրավ նվաճումներ և հասավ զգալի բարձրության: Հայկական մշակույթի այդպիսի աննախընթաց վերելքը համընկնում է երկրում ավատական հարաբերությունների փոքրացման, հայ ժողովրդի ապստամբության հզոր ալիքի և պարսկական տիրապետության դեմ նրա ծավալած հերոսական պայքարի հետ (450—451, 481—484, 570—572 թ. թ.):

Շնորհիվ այդ ապստամբությունների, պարսիկների տիրապետությունը Հայաստանում զգալիորեն թուլացավ: Այս հանգամանքը նախադրյալներ ստեղծեց և նշանակալից դեր խաղաց 5—7-րդ դարերի Հայաստանի տնտեսական և կուլտուրական վերելքի համար: Հեղինակն այս ժամանակաշրջանը համարում է հայկական կուլտուրայի զարգացման նշանակալից շրջան: Նրա կարծիքով, այդ կուլտուրան դրսևորվում է որպես ինքնուրույն, ինքնատիպ կուլտուրա:


Իր աշխատության մեջ հեղինակը մանրամասն տեղեկություններ է տալիս հայկական նշանավոր ճարտարապետական հուշարձանների մասին: Դեռ հին ժամանակներից ժանաչափ քարակոփությունը և շինարարական արվեստը հնարավորություն էին տալիս հայերին աչքի ընկնող կառուցումներ կատարել: Դվինի, Ոձունի, Պտղնի, Ավանի, Հոփսի, Թալինի, Իրինդի և բազմաթիվ այլ հուշարձաններ, և 7-րդ դարի հայկա-

կան ճարտարապետության գլուխ գործոց հանդիսացող Զվարթնոց եկեղեցու ճարտարապետական հուշակապ կառուցումները հարդարվում էին բազմազան զարդաքանդակներով, որոնք հիացմունք են առաջացնում իրենց արտահայտչությամբ, փառահեղությամբ և, առաձին ղեպքերում, նաև իրենց ռեալիզմով:

Աշխատության 3-րդ գլխում դասավորված և ընդհանուր գծերով քննության են առնված դամբարանների և մահարձանների մի քանի

Աշխատության հիմնական մասն են կազմում 4-րդ, 5-րդ և 6-րդ գլուխները:

4-րդ գլխում («Կրոնական պատկերաքանդակների դերի ու նշանակության, քանդակների հնագույն՝ 4—5-րդ դարերի խմբի, մահարձանների վրա հանդիպող քանդակների և 6—7-րդ դարերի եկեղեցիների վրա գտնվող կրոնական քանդակների և քրիստոնեական պատկերաքանդակների մասին: Քննարկելով 4—7-րդ դարերի քրիստո-



Բ. Առաքելյանի աշխատության իլյուստրացիայից (Ցուլ-Մպեի)

նեական, որոնք մինչև այժմ կա՛մ ուղղամասիրված չեն, և կա՛մ ուղղամասիրվել են միջանկյալ ձևով: Կատակոմբայից տեսակի դամբարանների (ամենանշանավորը ըջակունյաց դամբարանն է Արագածի լանջին, Աղց գյուղում), սյունանման քառակող թժողների, Աղուղի (Միսիանի շրջան) և Օռնի (Գուգարք) մահարձանների քննությունը հեղինակը կատարել է աշխատության նման կազմող քանդակների համեմատաբան ուղղամասիրության հիման վրա: Այդ քանդակները ունեն քրիստոնեական-կրոնական բովանդակություն: Պատկերված են Հին Նոր Կտակարանների զանազան տեսանկյուններ և հարկական որոշ ավանդություններ:

նեական պատկերաքանդակները, հեղինակը գալիս է հետևյալ եզրակացության.

ա.—Հայաստանն ունեցել է կուլտուրական սերտ կապ հարևան երկրների հետ, որը և արտացոլվել է նրա քանդակագործության մեջ:

բ.—Վաղ-քրիստոնեական ընդհանուր սյուժեներում, հայերը ազգային արվեստի առանձնահատկությունները դրեցին ո՛չ միայն ձևի, այլ նաև կառուցվածքի մեջ:

գ.—Այն քանդակները, որոնք ունեն քրիստոնեական բովանդակություն, համեմատաբար, պրիմիտիվ են: Սա բացատրվում է ո՛չ միայն քանդակագործության զարգացման ցածր աստիճանով, փորձի և տվորությունների պակասով, այլ և սյուժեների նկատ-

մամբ ունեցած վերաբերմունքով, քանի որ քրիստոնեական եկեղեցու համար կարևոր էր ոչ այնքան կամարման վարպետությունը, որքան քրիստոնեական բովանդակությունը: Ըստ որում, կրոնական բովանդակություն ունեցող քանդակներում մենք հանդիպում ենք Հայաստանի ժողովրդական աշխարհիկ և հեթանոսական պատկերացումներին:

Աշխատության 5-րդ գլխում քննարկված են աշխարհիկ սյուժեները: Թեպետ նրանց թիվը մեծ չէ, այնուհանդերձ, այդ փոքրաթիվ քանդակները իրենցից ներկայացնում են բացառիկ հետաքրքրություն:

Աշխարհիկ սյուժեներում արտացոլված են ազնվականների կենցաղի մի քանի կողմեր (գազանների որսը, իշխանի շքերթը) և աշխատավոր բնակչության զբաղմունքը (այգեկույթ, կառուցող վարպետներ և այլն):

Ազնվականների կենցաղը պատկերող քանդակների և Մասանյան քանդակների միջև հեղինակը տեսնում է որոշ նմանություն, որը հեշտ է բացատրել, ի նկատի ունենալով ան, որ հայ ազնվական վերնախավը ո՛չ միայն ընդհանուր կապեր ուներ պարսկական վերնախավին հետ, այլ և համա՛նման գաղափարախոսություն և կենցաղ:

Հեղինակը կոնկրետ օրինակներ է բերում թե ո՛րքան կատարյալ և արվեստի տեսակետից բարձր են այն քանդակները, որոնց մեջ արտացոլվում է աշխատավոր ժողովրդի կյանքը:

Աշխատության 6-րդ գլուխը նվիրված է առասպելական և խորհրդանշական (սիմվոլիկ) բնույթի քանդակներին:

Այս երեք գլուխներում հեղինակն աշխատել է, ըստ էության, քննության ենթարկել այլաբանական-առասպելական սյուժե ունեցող քանդակները, պարզել նրանց նշանակությունը, բացահայտել նրանց պատմական արժեքը, ժամանակը և քանդակների այս երեք տեսակները ենթարկել ոճական վերլուծման:

Հեղինակը, սակայն, չի բավարարվել այս ամենով: Նա ցույց է տալիս քանդակագործության զարգացումը, նրա միճակը, տեղական ինքնուրույն, նոր ոճի առաջացումը և նրա կապերը հարևան երկրների քանդակագործության հետ: Բ. Առաքելյանը կանգ է առել նաև իշխանների և աշխատավոր ժողովրդի կենցաղի, ճաշակի վրա և այլն:

Աշխատության 7-րդ գլխում («Արհեստ և արվեստ») խոսվում է արհեստների և արվեստների կապի մասին: Հեղինակը փաստերով ապացուցում է, որ ելնելով լեզվի, նյութական կուլտուրայի տվյալներից, կարելի է ենթադրել, թե որոշ արվեստների և արհեստների բաժանումը 4—7-րդ դարնե-

րում արդեն սկիզբ էր առել և առանձին բնագավառներում բավականաչափ առաջ էր գնացել:

Աշխատության վերջում Բ. Առաքելյանն անդրադառնում է հայկական քանդակագործության ակունքներին և արմատներին: Հեղինակի կարծիքով, քանդակագործությունը 4—7-րդ դարերում ունեցել է երեք հիմնական ակունք. առաջինը՝ հայերի հեթանոսական անցյալը և նրանից ժառանգված կուլտուրան, հասկացողությունները, պատկերացումներն ու սովորությունները, երկրորդ՝ քրիստոնեական կրոնը, իր ըմբռնումների և ավանդությունների ընդհանրությամբ վաղ-քրիստոնեական աշխարհի հետ, և, երրորդ՝ հարևան ժողովուրդների կուլտուրաներից յուրացված տարրերը:

Հեղինակը համոզիչ փաստեր է բերում թե ի՛նչպես էր ժողովուրդը զարգացնում իր կուլտուրան, ի՛նչպես էր իր ճաշակն ու ըմբռնումները մտցնում քանդակների մեջ, ի՛նչպես էր օգտագործում բոլոր հնարավորությունները՝ դրսևկորելու իր արվեստը ժողովրդական հարգատ և բովանդակությամբ:

Քանդակագործական արվեստի այնպիսիս բնագավառ, ինչպիսին էր բուսական և երկրաչափական ձևերի քանդակագործությունը, ինչպես և ժողովրդական ավանդություններն ու պատկերացումներն արտահայտող բազմազան և բազմաթիվ քանդակներ, ավելի փարթամորեն ծաղկեցին և զարգացան 4—7-րդ դարերում:

Հայկական քանդակագործության մյուս ակունքը՝ հարևան ժողովուրդների կուլտուրաներից յուրացված տարրեր էին: Հեղինակը ցույց է տալիս, որ ընդարձակ և սերտաբան եղել հայկական կուլտուրայի և հարևան ժողովուրդների կուլտուրական կապերը:

Այս կապակցությամբ, Բ. Առաքելյանը, իրավացիորեն, քննադատում է և ևրոպական ա՛յն գիտնականներին, որոնք միտումնավոր կերպով հայկական կուլտուրան և արվեստը համարում են որպես ասորական, իրանական, բյուզանդական կամ արաբական կուլտուրաների և արվեստի ազդեցության հեմատևանք, կես կցորդ, ինչպես և տեղական գիտնականներից նրանց, ովքեր հայկական արվեստն անջրպետում էին, բացառում էին նրա սերտ կապը հարևան երկրների արվեստի հետ՝ դրսևկորելով իրենց սահմանափակ վածությունը:

Իրականում, ստեղծելով և զարգացնելով իր սեփական կուլտուրան, հայ ժողովուրդը ո՛չ միայն չմեկուսացավ իր արևելյան և արևմտյան հարևաններից ու նրանց կուլտուրաներից, այլ առավել ընդարձակեց իր կապերը՝ հանդես գալով որպես ավելի ակտիվ

մասնակից հարեան ժողովուրդների հետ ունեցած փոխհարաբերության մեջ՝ կուլտուրական ստեղծագործության լուրջ ներդրումներով հարստացնելով կուլտուրայի ընդհանուր գանձարանը:

Հայկական ճարտարապետության և քանդակագործության շատ ձևեր անցել են հարեան երկրներ և ավերի հեռուն. հայկական ծագում ունեցող վարազի հետ մենամարտի

զանդական կուլտուրայի, արվեստի և, մասնավոր, ճարտարապետության մեջ:

Ինչ վերաբերում է հայոց, վրաց և աղվանից կուլտուրաներին, ապա նրանք զարգացել են ամենասերտ ու հարստե կապակցության մեջ, փոխադարձաբար նպաստել և հարստացրել կուլտուրան:

Հին հայկական քանդակագործության և, մասնավորապես, պատկերաքանդակների մասին դրված այս արժեքավոր աշխատությունը ցույց է տալիս, որ քանդակագործությունը 4—7-րդ դարերում Հայաստանում հասավ բարձր զարգացման, ստեղծվեցին բարձրարժեք գեղարվեստական ձևեր, հատկապես երկրաչափական և բուսական դժբանքների (օրնամենտների) բնագավառում:

Մենք այստեղ շենք ուզում կանգ առնել փիճելի մի քանի հարցերի վրա, որոնք կապված են պատկերաքանդակների բնույթի, խմբավորման, զարգացումը խթանող պատճառների և նեղ մասնագիտական այլ հարցերի հետ, որոնց վերաբերմամբ մենք այլ կարծիք ունենք:

Շուրջ 170 Վշեր ամփոփող այս աշխատությունը շարադրված է խնամքով: Նյութը տրված է պարզ, յուրաքանչյուրի համար հասկանալի կերպով:

«Հայկական պատկերաքանդակները 4—7-րդ դարերում» աշխատությունը կարելի է հանձնարարել ինչպես պատմաբաններին ու արվեստագետներին, այնպես և հայ ժողովրդի բազմադարյան կուլտուրայով ու արվեստով հետաքրքրվող յուրաքանչյուր անձնավորության:

Գիրքը հրատարակված է խնամքով, լավ տպագրությամբ, վրա: Նկարիչ Լ. Սադոյանի գլխավորությամբ, վերնագրերը, գրչանկարները և կաղմի ձևավորումը արտահայտիչ կերպով կապվում են շարադրանքի բովանդակության հետ:

Աշխատության վերջում, որպես հավելված, տրված են 4—7-րդ դարերի հայկական քանդակագործության առավել նշանավոր հուշարձանների լուսանկարները, թվով 81 հատ:



Պատկերաքանդակ՝ մենամարտը վարազի հետ

առասպելական սյուժեին անցել է Եվրոպա, բյուզանդական սրբապատկերների և նրանց միջոցով ևրոպականի մեջ անցած մի քանի ձևերի աղբյուրը (օրինակ՝ Տիրամայրը գահուլքի և բարձի վրա նստած, քանդակների արևելյան զգեստավորումը և այլն) նույնպես պետք է փնտռել Հայաստանում և, ընդհանրապես, Կովկասում:

Մեծ է հայերի և Կովկասյան մյուս ժողովուրդների կուլտուրական ազդեցությունն ու ստեղծագործական մասնակցությունը բյու-



ՍՓՅՈՒՌՔԻՑ ԱՍԱՑՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամենայն Հայոց Հայրապետի և Հոգևոր ճեմարանի անունով ստացվել է արևմտահայ գրող Լևոն Մեսրոպի նոր վեպը՝ «Կախարդող լեռը և ներգաղթող ձին» խորագրով, որը լույս է տեսել Փարիզում, անցյալ տարի վեպը նվիրված է մեծ Ստալինի ծննդյան յոթանասուներորդ տարեդարձին Այս առթիվ հեղինակը, տիտղոսաթերթից հետո, տեղավորել է հետևյալ ձևերը. «Եր ճեղքյան յարանատներոց խորհրդածին աղբիվ, Հայրենիքիս ավառաբար ՄԻՈՒ ՍՏԱԼԻՆԻՆ կնկիրեմ այս աշխատությունս խիտ ճիացունավ և անսանձանք երախտագիտությամբ: Լևոն Մեսրոպ»:

Վեպն ունի «Նախաբան», որն անհրաժեշտ ենք համարում բերել այստեղ.

«Գրական կյանքիս մեջ տարիներով փայփայել եմ մեծ փառասիրություն մը. գրել, գրեն մեկ պատմվածք, հոգ չէ՞ գոնե մեկ էջ, որ ներշնչված ըլլա մեր հայրենի լեռնաշխարհին և հայ ժողովուրդին հարազատ կյանքին:

Անկարելի երազ, բանի որ չէի տեսած, չէի ճանչցած, ոչ մեկը, ոչ մյուսը:

Նկավ պատերազմն իր աննախընթաց զարհուրանքով, բայց նաև՝ հաղթությունը, մեր ազգային պատմության մեջ աննախընթաց մեկ կրեությունով:

Ներգաղթ...

Պատերազմը հազիվ վերջացած, ներգաղթող կարավանները ծայր տվին աշխարհի յոթը ժովերուն վրա տարտղնված, ապրելու ամեն հույսե զուրկ հայ գաղութներուն:

Այդ օրերում, Բեյրութ հրատարակվող ֆրանսերեն թերթ մը լուրերու բաժնին մեջ կհաղորդեի թե իր հայրերուն երկիրը պիտի վերագառնա Սյուլեյման Հարրարի անուն երիտասարդ մը:

Սյուլեյմանը, Միջագետք տարագրված հայու զավակ, փոքր տարիքին կորզեգրվի բնավին շեյխի մը կողմն և կմեծնա անտեղյակ իր հայրության, մինչև այն օրը, երբ շեյխը կմեռնի:

Այս լուրը, որուն կցված էին մեկ քանի մանրամասնություններ ալ, երկարորեն մտածել տվավ՝ և վերջապես խանդավառեց զիս: Որոշեցի Սյուլեյման Հարրարին վեպի մը գլխավոր դեմքը դարձնել և սկսա ծրագրել մշակել մտքիս մեջ: Պիտի փոխեի հերոսին անունը, զարգացնեի դեպքը և ավելցնեի տարագրյալ հայերու

կյանքին առնված պատկերներ, առանց, սակայն, դիպչելու բուն իրականության որ ինքնին ապրված վեպ էր: Գործողությունը պիտի վերջանար Բեյրութի բարափին վրա, ուր հայ բնովիներ շոգենավ պիտի նստեր ուրիշ ներգաղթողներու հետ:

Ժիշտ այդ միջոցին, Հայաստանի Սովետական Գրողներու Բ. Համագումարին հրավեր ստացա: Անսպասելի բախտավորություն, որ տարիներու երազս կիրականացներ:

Երկու ամսեն ավելի մնացի Երևան: Տեսա մեր շորս հազարամյա Հայրենիքը, մեր խրոխտ լեռները, մեր նախահայրերուն դարավոր ձեռագրատները, մեր երկրին մեջ կատարված աշխատանքն ու շարունակվող վերելքը և հայ ժողովուրդը իր հարազատ դիմագծով:

Պետհրատը ցանկություն հայտնեց, որ մեր Հայրենիքին նվիրված վեպ մը գրեմ: Վերագրված Փարիզ և սկսա գրել այս վեպը բոլորովին նոր ծրագրով և նոր ներշնչումով:

Չեմ կրնար մոռնալ որ կյանքիս մեծ նպատակին հասա շնորհիվ սովետական ժողովուրդներու անհաշիվ ղոհողությամբը ձեռք բերված հաղթանակին:

Երախտագիտության ոլարտը ունիմ ուսա մեծհոգի և քաջարի ժողովուրդին, որ իմ փոքրիկ Հայրենիքս պաշտպանեց:

Երախտագիտություն՝ հաղթանակը դարբնող և խաղաղության առաջնորդ Մեծ Ստալինին որ փրկեց հայ ազգը ստույգ և ահավոր աղետե մը:

Շնորհակալ եմ Սովետական Հայաստանի պետական վարիչներուն, Սովետական Գրողներու Միության, Արտասահմանի հետ Կ. Կապի Ընկերության, արվեստագետներու, պատերազմեն վերագրված ռազմիկներու, Միության Հերոսներու և Արարատյան դաշտի գյուղացիության, որոնք ամեն դյուրություն ընծայեցին ուսումնասիրելու և հավաքելու համար այս վեպին նյութերը:

Լ. Մ.

Փարիզ, Սեպտ. 1949 թ»:

Գիրքը տպագրված է լավորակ թղթի վրա: Բաղկացած է 394 էջերից: Վերջում կցված է հեղինակի լույս տեսած և անտիպ երկերի ցանկը: Գինն է 550 ֆրանկ:



ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեացակաւեյան Ար., Գերմանա-թյուրքական զավթիչների գործակալության ձախողումը Կովկասում առաջին համաշխարհային պատերազմի նախորդակին: Հայպետհրատ, Երևան, 1948 թ., 203 էջ, տիրաժ 3.000:

Մերեզուլյան Արամ, Խաչատուր Աբովյան (երգ, նոտագրված, նվիրված մեծանուն գրող Խ. Աբովյանին), խոսք Սարմենի: Հայպետհրատ, Երևան, 1949 թ., տիրաժ 1.000:

Մելիքյան Թովմանու, Զառ-Վառ (նոտագրված երգեր), խմբագրություն Գ. Բուզադյանի: Հայպետհրատ, Երևան, 1949 թ., 100 էջ, տիրաժ 2.000:

Հայ ժողովրդական հեֆիաքներ, կազմեց և խմբագրեց Արամ Դանալանյան: Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 566 էջ, տիրաժ 4.000:

Թումանյան Հովհաննես, Երկերի ժողովածու, հատոր 3-րդ, Պատմվածքներ և հեքիաթներ: Հայպետհրատ, Երևան, 1949 թ., 543 էջ, տիրաժ 5.000:

Գուլբանյան Վ. Հ., Ի. Վ. Միշուրինի և Տ. Գ. Լիսենկոյի ուսմունքի լայն կիրառման համար: Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1949 թ., 87 էջ, տիրաժ 3.000:

Թովմասյան Ս., Մի էջ Կովկասի հերոսական պաշտպանությունից (նյութեր հայրենական պատերազմի պատմության): Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1950 թ., 95 էջ, տիրաժ 2.500:

Ղարիբյան Արարատ, Հայոց լեզվի քերականության դասագիրք (հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն), 8-րդ հրատարակչություն: Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 319 էջ, տիրաժ 40.000:

Գրիգորյան Վահան, Սանասարը գնաց սարը (պոեմ փոքր տարիքի համար), Մանկապատանեկական գրական բաժին, Հայպետհրատ, Երևան, 1949 թ., 23 էջ, տիրաժ 6.000:

Մկրտչյան Հարություն, Միքայել Նալբանդյան (ծննդյան 120-ամյակի առթիվ), Հայպետհրատ, Երևան, 1949 թ., 64 էջ, տիրաժ 3.000:

Արևյան Գարիել, Որոնումներ գեանի տակ (պատմվածքների ժողովածու), Հայպետհրատ, Երևան, 202 էջ, տիրաժ 4.000:

Վարդանյան Ան., Պիեսներ, Հայպետ-

հրատ, Երևան, 1949 թ., 268 էջ, տիրաժ 3.000:

Մելիքյան Լ. և Կարմենյան Վ., Ի. Վ. Ստալինի աշխատությունների հայերեն հրատարակությունների բիբլիոգրաֆիա (Սովետական շրջան), Հրատարակչություն Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Կենտրոնական գրադարանի, Երևան, 1950 թ., տիրաժ 2.000:

Պիեսների ժողովածու, Պատասխանատու խմբագիր՝ Ս. Սողոմոնյան, հրատարակչություն Կուլտ-Նուա հիմնարկների գործերի կոմիտեի, Երևան, 1950 թ., 116 էջ, տիրաժ 2.000:

Կարազյուզյան Ս., Բամբակագործություն (ձեռնարկ), Հայպետհրատ, Երևան, 1949 թ., 150 էջ, տիրաժ 2.000:

Սևակ Գուրգեն, Հայոց լեզվի շարահյուսության դասագիրք միջնակարգ դպրոցների 7-րդ դասարանների համար: 8-րդ հրատարակչություն, Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 171 էջ, տիրաժ 13.000:

Բաֆֆի, Երկերի ժողովածու, 2-րդ հատոր, բովանդակություն՝ «Ոսկի աքաղաղ», «Սալբի», «Մինն այսպես, մինն այնպես»: Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 620 էջ, տիրաժ 10.000:

Շալխով Միխայիլ, Խաղաղ Դոն, վեպ, գիրք 2-րդ, Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 492 էջ, տիրաժ 5.000:

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Տեղեկագիր, 10-րդ գիրք, Հասարակական գիտություններ, հրատարակչություն Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի, 1949 թ., 128 էջ, տիրաժ 500:

Բովանդակություն. — Հայ ժողովրդի նամակը Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինին: Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ ընկեր Վ. Համբարձումյանի ճառը: Վ. Հ. Գուլբանյան՝ Ի. Վ. Ստալինը և սովետական գիտությունը: Վ. Պարսամյան՝ Ի. Վ. Ստալինը և Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեղուցիայի հավթանակը Անդրկովկասում: Աս. Ասատրյան՝ Ի. Վ. Ստալինի կերպարը սովետահայ գրականության մեջ: Գր. Գրիգորյան՝ Ի. Վ. Ստալինի կերպարը սովետահայ բանահյուսության մեջ: Մ. Մուրադյան՝ Լենինի և Ստալինի կերպարները սովետահայ կրածշատկան ստեղծագործության մեջ:

